ԳԱՆՁԵՐԻ ԿՂԶԻՆ

ՊՈՏԼՐԱՏ

82 Ս
Ս-88

Ս 2049
ՀՏ-Ա
ՀԱՄ
Ա-38
-6 NOV 2011

ՌՈԲԵՐՏ ԼՈՒԻԶ ՍՏԻՎԵՆՍՈՆ

ԳԱՆՁԵՐԻ ԿՂԶԻՆ

Ռուսերենից թարգմանեց
Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

0 6 AUG 2013
1056

ԳԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՍՊ-ԱԳՄ ԵՐ
Հ. Ա. Մանասյան
անվան գրադարան
60471-67

ԾԵՐ ԾՈՎԱՇԵՆԸ

ԳԼՈՒԽ I

ԾԵՐ ԾՈՎԱՅԻՆ ԳԱՄՓՈՒԸ «ԾՈՎԱԿԱԼ ԲԵՆԲՈՒԻ» ՊԱՆԴՈԿՈՒՄ

Աղնվական կալվածատեր Տրելոնին, բժիշկ Լիվսին և ուրիշ ջենտլմեններ խնդրել են ինձ գրել այն բոլորը, ինչ վոր գիտեմ Դանձերի կղզու մասին։ Նրանք ցանկանում են, վոր յես պատմեմ վողջ պատմությունն սկզբից մինչև վերջ, չթաքցնելով վոչ մի մանրամասնություն, բացի կղզու աշխարհագրական դիրքից։ Մատնանշել, թե վորտեղ է գտնվում այդ կղզին ներկայումս դեռ անկարելի յե, վորովհետև կան գանձեր, վոր մենք այնտեղից դեռ չենք դուրս բերել։

Յեվ ահա ներկա 17... թվին յես գրիչ եմ վերցնում և մտքով վերադառնում դեպի այն ժամանակը, յերբ հայրս «Ծովակալ Բենբոու» անունով պանդոկ ուներ և այդ պանդոկում բնակվեց մի ծեր արևակեզ ծովագնաց, յերեսին՝ սրի սպի։

Յես հիշում եմ, կարծես այդ յերեկ եր, թե ինչպես նա ծանր քայլերով հասավ մեր դռանը, իսկ նրա սնդուկը բերում եյին ձեռնասայլով։ Դա մի բարձրահասակ, ուժեղ, ծանրամարմին, մութ շագանակագույն դեմքով տղամարդ եր։ Կուպրոտ ծամիկը կախ եր ընկած նրա յուղոտ կապույտ բաճկոնի ոձիքի վրա։ Ձեռները խորդուբորդ եյին, վրան ինչ վոր կտրվածքներ և քերծվածքներ, յեղունգները սև, կոտրված, իսկ դեմքի սպին կեղտոտ, բոսորագույն—սպիտակագույն։ Հիշում եմ, ինչպես անծանոթը շվշվացնելով նայեց մեր ծովախորշը և հանկարծ բարձր ձայնով յերգեց մի հին նավաստիական յերգ, վորը հետո այնքան հաճախ յերգում եր։

Տասնհինգ մարդ մեռելի սնդուկի վրա,
Յո-խո-խո և մի շիշ ռոմ։

Նրա ձայնը ծերունու ձայնի նման եր, դուդոան, վնգվնգան, ինչպես նավի խարիսխի ճռնչացող լծակները։

Նրա ձեռնափայտն ել յերկաթե լծակի նման եր։ Այդ ձեռնափայտով նա խփեց մեր դռանը և յերբ հայրս դուրս յեկավ ու կանգնեց շեմքի վրա, նա կոպիտ կերպով մի բաժակ ռոմ պահանջեց։ Յերբ ռոմը տվին, նա գիտակ մարդու նման սկսեց առանց շտապելու համտես անել յուրաքանչյուր կումը։ Խմելիս նա նայում եր յերբեմն ժայռերին, յերբեմն պանդոկի ցուցանակին։

—Հարմար ծովախորշ է, —ասաց նա վերջապես։—Պանդոկի համար վատ տեղ չե։ Շատ մարդ է հաճախում, բարեկամ։

Հայրս պատասխանեց, թե վոչ, դժբախտաբար շատ քիչ մարդ է հաճախում։

—Ինչ վոր է, —ասաց ծովագնացը։—Այս փոքրիկ սենյակն իսկ և իսկ ինձ համար է... Եյ, բարեկամ,— ձայն տվեց այն մարդուն, վորը նրա յետևից գլորում եր ձեռնասայլը։—Մոտեցիր և ոգնիր, վոր սնդուկը հանեմ... Յես միառժամանակ կապրեմ այստեղ, —շարունակեց նա։—Յես հասարակ մարդ եմ։ Ռոմ, ապխտած խոզի միս և ձվաձեղ—ահա այն բոլորը, ինչ վոր ինձ հարկավոր է։ Ահա այն ժայռը, վորտեղից յերևում են ծովով անցնող շոգենավերը։ Ինձ ինչպես անվանել։ Ինչ կա վոր, անվանեցեք Նավապետ։ Եհե, յես տեսնում եմ, թե դուք ինչ եք ուզում։ Ահա։

Յեվ նա շպրտեց շեմքի վրա յերեք թե չորս դրամ։

—Յերբ սրանք կվերջանան, կարող եք գալ և ասել,— մոայլ կերպով արտասանեց նա և իշխանավորի պես նայեց հորս։

Յեվ իսկապես. թեև նրա հագուստը վատ եր, և խոսակցության ձևը կոպիտ, սակայն նա հասարակ նավաստու նման չեր։ Ավելի շուտ նրան կարելի յեր համարել ղեկապետ կամ շկիպեր, վորը սովոր է, վոր իրեն յենթարկվեն։ Զգացվում եր, վոր նա սիրում է իր բռնցքին իրավունք տալ։ Ձեռնասայլի տերը պատմեց մեզ, վոր անծանոթը յերեկ առավոտյան փոստային կառքով յեկավ «Գեորգ թագավորի հյուրանոցը» և սկսեց հարց ու փորձ անել ծովի մոտ գտնվող բոլոր իշխանների մասին։ Մեր պանդոկի մասին լավ կարծիքներ լսելով, և, իմանալով, վոր պանդոկը գտնվում է գյուղից դուրս, նավապետը վորոշեց բնակվել մեզ մոտ։ Ահա այն բոլորը, ինչ վոր մեզ հաջողվեց իմանալ մեր կենվորի մասին։



Նա լռակյաց մարդ եր։ Ամբողջ որերով թափառում եր ծովախորշի շուրջը կամ բարձրանում եր ժայռերը, պղնձե հեռադիտակը ձեռքին։ Յերեկոները նա նստում եր ընդհանուր սենյակի անկյունում, կրակի մոտ, ոռմը խառնում ջրի հետ և խմում այդ թունդ խառնուրդը։ Յերբ նրա հետ խոսում եյին, նա չեր պատասխանում։ Միայն կատաղի հայացք եր գցում մարդկանց վրա և քթով սուլում ինչպես նավի շոգեշչակը մառախուղի մեջ։ Շուտով մենք և մեր այցելուները սովորեցինք նրան հանգիստ թողնել։ Ամեն որ, զրոսանքից վերադառնալուց հետո, նա տեղեկանում եր թե՝ մեր ճանապարհով վորևե ծովագնացներ չեն անցել արդյոք։ Սկզբում մենք կարծում եյինք թե նա կարիք ունի այնպիսի հարբեցողների, ինչպես ինքն է։ Բայց վերջում սկսեցինք հասկանալ, վոր նա ցանկանում է այդպիսիներից հեռու լինել։ Յեթե վորևե ծովագնաց ծովափնյա ճանապարհով անցնելով դեպի Բրիստոլ, կանգ եր առնում «Ադմիրալ Բենբոուում», նավապետը նախ դիտում եր նրան դռան վարագույրի յետևից և այն ժամանակ եր միայն դուրս գալիս ընդհանուր սենյակը։ Նման մարդկանց ներկայությամբ նա միայն պես լռակյաց եր։

Յես գիտեի, թե բանն ինչումն է, վորովհետև նավապետն ինձ պատմել եր, թե ո՛ւմից է վախենում։

Մի անգամ նա ինձ մի կողմ տարավ և խոստացավ յուրաքանչյուր ամսի մեկին վճարել ինձ չորսական արծաթ պենս, յեթե յես «ուշադիր նայեմ թե վորևե տեղում չի հայտնվում արդյոք մի վոտանի ծովագնաց», և իսկույն հայտնեմ նրան, յերբ տեսնեմ։ Յերբ ամսի մեկը գալիս եր և յես դիմում եյի նրան, վոր խոստացած ռոճիկը տա, նա միայն քթով խռռացնում եր և կատաղի հայացք գցում վրաս։ Սակայն մի քանի որից հետո, այնուամենայնիվ, փողը բերում եր և կրկնում հրամանը «մի վոտանի ծովագնացին» աչքաթող չանել։

Այդ մի վոտանի ծովագնացը հետապնդում եր ինձ մինչև անգամ յերազում։ Փոթորկալից գիշերները, յերբ քամին տատանում եր մեր տան բոլոր չորս անկյունները, իսկ ալեկոծությունը մոնչում եր ծովախորշում, հասնելով մինչև վերին ժայռերը, նրան հազար տեսակ տեսնում եյի յերազում, սարսափելի, վորպես հազար սատանա։ Նրա վոտը կտրված եր յերբեմն ծնկից, յերբեմն մինչև ազդրը։ Յերբեմն նա ինձ թվում եր ինչ վոր սարսափելի հրեշ, վորի միակ վոտը բուսել եր մարմնի մեջտեղից։ Այդ միակ վոտի վրա նա վազում եր իմ յետևից, թռչելով ցանկապատերի և առուների վրայով։

Յես հեշտ չեյի ձեռք բերում յուրաքանչյուր ամիս չորս պենսը. նրանց փոխարեն յես վճարում եյի այդ տանջող յերազները։

Բայց վորքան սարսափելի յեր ինձ համար մի վոտանի ծովագնացը. նավապետից յես շատ ավելի քիչ եյի վախենում, քան մնացած մարդիկ։ Մի-մի յերեկո նա այնքան ռոմ եր խմում, վոր գլուխը պտտվում եր։

Այս դեպքում նա յերկար ժամանակ մնում եր պանդոկում և յերգում եր հին, վայրենի, դաժան յերգեր, ներկա յեղողներից վոչ մեկի վրա ուշադրություն չդարձնելով։ Պատահում եր նաև, վոր նա բոլորին հրավիրում եր իր սեղանի մոտ և բոլորի համար բաժակներ եր պահանջում։ Հրավիրվածները յերկյուղից դողում եյին, իսկ նա ստիպում եր նրանց կամ լսել իր սարսափելի պատմվածքները ծովային արկածների մասին, յերբեմն էլ խրոմական յերգեր յերգել։ Այն ժամանակ մեր տան պատերը ցնցվում եյին «Յո-խո-խո և մի շիշ ռոմ» յերգից, վորովհետև բոլոր այցելուները, վախենալով նրա մահացու զայրույթից, աշխատում եյին մեկը մյուս ձայնը խլացնել և յերգել վորքան կարելի յե բարձր, վոր նավապետը գոհ մնա, վորովհետև այդպիսի ժամերին նա անզուսպ և զարհուրելի յեր, յերբեմն բռունցքով խփում եր սեղանին և պահանջում, վոր բոլորը լռեն, կամ սաստիկ կատաղում եր, յերբ վորևե մեկը, ընդհատելով նրա խոսքը, վորևե հարց եր տալիս, յերբեմն ընդհակառակը, կատաղում եր, յերբ հարց չեյին տալիս, վորովհետև նրա կարծիքով, դա ցույց եր տալիս, վոր իրեն ուշադրությամբ չեն լսում։ Յեվ վոչ վոքին պանդոկից դուրս չեր թողնում։ Ներկա յեղողները կարող եյին հեռանալ միայն այն ժամանակ, յերբ նա ննջում եր և տատանվելով քաշ գալիս դեպի իր անկողինը։

Բայց իրանից սարսափելի նրա պատմվածքներն եյին։ Սարսափելի պատմվածքներ կախաղանների, տանջանքների, ալեկոծությունների, Կարիբյան ծովի ծովայինների, ավազակաբների և ավազակային քաջագործությունների մասին։ Նրա պատմվածքներից յերևվում եր, վոր իր ամբողջ կյանքն անց է կացրել հոչակավոր չարագործների մեջ։ Իսկ հայհոյանքը, վոր յուրաքանչյուր խոսքից հետո դուրս եր թռչում նրա բերանից, վախեցնում եր մեր գյուղական պարզամիտ մարդկանց վոչ պակաս, քան այն հանցագործությունները, վորոնց մասին նա խոսում եր։

Հայրս շարունակ պնդում եր, թե պետք է փակել պանդոկը, վորովհետև նավապետը մեր բոլոր այցելուներին կցրի։ Ո՞վ կուզենար յենթարկվել այդպիսի ծաղրանքի և առուն դառնալիս սարսափից դողալ։ Այնուամենայնիվ յես կարծում եմ, վոր նավապետն ընդհակառակը մեզ ոգուտ եր բերում։ Ճիշտ է, այցելուները վախենում եյին նրանից, սակայն մի որից հետո, կրկին գալիս եյին։ Հանգիստ, խուլ կյանքի մեջ նա հաճելի հուզմունք եր մտցրել։ Մինչև անգամ յերիտասարդների մեջ նավապետը յերկրպագուներ ուներ, վորոնք հայտնում եյին, թե հիացած են նավապետով։ «Իսկական ծովային գամփռ է, վորին աղել է ծովը», բացականչում եյի նրանք։ Նրանց ասելով հենց այդպիսի մարդիկն են Անգլիային ծովերի ամպրոպ դարձրել։

Սակայն, մյուս կողմից, այդ մարդն իսկապես մեզ վնաս եր տալիս։ Շաբաթ շաբաթի յետևից, ամիս ամսի յետևից անցնում եյին։ Այն գումարը, վոր նա տվել եր մեզ իր գալու որը, վաղուց ծախսվել եր, նոր գումար չեր տվել։ Իսկ հայրս չեր համարձակվում պահանջել։ Հենց վոր հայրս ակնարկում եր վարձի մասին, նա սկսում եր այնպիսի կատաղությամբ փնչացնել, վոր փնչոցը դառնում եր մռնչոց և հայրս սարսափած սենյակից դուրս եր թռչում։ Յես նկատում եյի, թե ինչպես այդ դեպքից հետո, նա հուսահատորեն ջարդում եր իր ձեռքերը։ Յես չեմ կասկածում, վոր այս վրդովմունքներն ու յերկյուղը չափազանց արագացրին հորս վշտալի և անժամանակ մահը

Մեզ մոտ յեղած ժամանակ նավապետը միշտ միևնույն հագուստն եր հագնում, միայն մի քանի զույգ գուլպա յեր ձեռք բերել։ Գլխարկի մի ծայրը կախվել եր։ Նավապետն այդպես էլ թողել եր, թեև ուժեղ քամու ժամանակ շատ անհարմար եր։ Յես շատ լավ հիշում եմ, թե ինչպիսի պատառոտված բաճկոն ուներ նա. վորքան էլ կարկատում եր իր բաճկոնը վերևում, իր սենյակում, վերջ ի վերջո ցնցոտիներ դարձավ։ Նա յերբեք վոչ մի նամակ չեր գրում և վոչ մի տեղից չեր ստանում։ Վոչ վոքի հետ չեր խոսում։ Խոսում եր միայն այն ժամանակ, յերբ ոստիկ հարբած եր լինում։ Վոչ վոք մեզանից յերբեք չի տեսել, վոր նա բացի իր սնդուկը։

Միմիայն մի անգամ համարձակվեցին հակաճառել նավապետին և այդ տեղի ունեցավ վերջին որերը, յերբ դժբախտ հայրս հիվանդացավ մահացու հիվանդությամբ։

Մի անգամ յերեկոյան բժիշկ Լիվսին յեկավ հիվանդի

մոտ։ Նա քննեց հիվանդին, շտապով ճաշեց, վորին հյուրասիրեց մայրս, իջավ ընդհանուր սենյակը ծխամորճ ծխելու և սպասելու, վոր ձին բերեն։ Ձին մնացել եր վերևում, գյուղում, վորովհետև ծերունի «Բենբոուն» ձիու համար շենք չուներ։

Դեպի ընդհանուր սենյակը նրան առաջնորդեցի յես և հիշում եմ, թե ինչպես այդ գեղեցիկ, հիանալի հագնված, սպիտակ կեղծ ծամով, սեվաչյա, հրաշալի դաստիարակված բժիշկն ապշեցրեց ինձ իր տարբերությամբ գյուղական այն հարբեցողներից, վորոնք այցելում եյին մեր պանդոկը։ Հատկապես սաստիկ տարբերվում եր նա մեր գորշ խրտվիլակից, կեղտոտ, մռայլ, ծանրամարմին ծովահենից, վորը հարբում եր ռոմով և արմունկներով ընկնում սեղանի վրա։

Հանկարծ նավապետը բարձր ձայնով յերգեց իր մշտական յերգը։

Տասնհինգ մարդ մեռելի սնդուկի վրա,
Յո-խո-խո և մի շիշ ռոմ,
Խմիր և սատանան քեզ մինչև վերջը կհասցնի,
Յո-խո-խո և մի շիշ ռոմ։

Սկզբում յես կարծեցի, թե «մեռելի սնդուկն» այն սընդուկն է, վորը վերևում, նավապետի սենյակումն է։ Իմ սարսափելի յերազների մեջ այդ սնդուկը հաճախ կանգնում եր իմ առաջ մի վոտանի ծովագնացի հետ միասին։ Սակայն հետզհետե մենք այնպես ընտելացանք այդ յերգին, վոր նրա վրա ուշադրություն դարձնելուց դադարեցինք։ Այդ գիշեր յերգը նորություն եր միայն բժիշկ Լիվսի համար և, ինչպես նկատեցի, նրա վրա հաճելի տպավորություն չթողեց։ Նա բարկացած նայեց նավապետի վրա, ծերունի Տեյլոր այգեպանի հետ հոդացավի բուժման նոր ձևերի մասին խոսակցությունն սկսելուց առաջ։ Այնինչ նավապետը, հետզհետե բորբոքվելով իր սեփական յերգից, բռունցքով խփեց սեղանին։ Սա նշանակում եր, վոր նա լռություն է պահանջում։ Բոլոր ձայները միանգամից լռեցին։ Միայն բժիշկ Լիվսին շարունակում եր բարեսիրտ և բարձրաձայն խոսակցությունը։

Նավապետն ուշադրությամբ նայեց նրան, հետո նորից բռունցքով խփեց սեղանին, ապա նայեց ավելի ուշադիր և հանկարծ գոռաց, իր խոսքերին անվայել հայհոյանք ավելացնելով։

—Ե՛յ, դուք, տախտակամածի վրա, լռեցեք։

—Դուք ինձ եք դիմում, պարոն,—հարցրեց բժիշկը։

Նավապետը պատասխանեց, թե հենց նրան է ասում և կրկին հայհոյեց։

—Այդ դեպքում, պարոն, յես ձեզ միայն մի բան կասեմ, —պատասխանեց բժիշկը, — յեթե չդադարեցնեք հարբեցողությունը, դուք կազատեք աշխարհը ամենազարշելի սրիկաներից մեկից։

Նավապետը կատաղեց։ Նա թռավ վոտքի վրա՝ դուրս հանեց և բաց արավ իր նավաստու ծալվող դանակը և ափի մեջ տատանելով, սպառնաց բժշկին, թե նրան կմեխի պատին։

Բժիշկը տեղից չշարժվեց ել։ Նա շարունակեց խոսակցությունը, առանց գլուխը շրջելու նույն ձայնով, միայն մի քիչ բարձր, վոր սենյակում գտնվողները կարողանան լսել... հանդարտ և հաստատուն ձայնով նա արտասանեց։

—Յեթե դուք իսկույն այդ դանակը ձեր գրպանը չդնեք, պատվով եմ յերդվում, վոր դուք, մեր շրջիկ դատարանի առաջին իսկ նստաշրջանից հետո, կճոճվեք կախաղանի վրա։

Նրանց աչքերի միջև մենամարտություն սկսվեց։ Սակայն նավապետը շուտով անձնատուր յեղավ։ Նա իր դանակը պահեց և ծեծված շան պես մռմռթալով, ընկավ աթոռի վրա։

—Իսկ այժմ, պարոն,—շարունակեց բժիշկը,—վորովհետև ինձ հայտնի յեղավ, վոր իմ շրջանում նման անձնավորություն կա, յես գիշեր ու ցերեկ ձեզ վրա ամենախիստ հսկողություն պետք է ունենամ։ Յես միայն բժիշկ չեմ, յես այստեղի դատավորն եմ։ Ցեվ յեթե մի ամենափոքր բողոք կհասնի ինձ թեկուզ այն մասին, վոր դուք վորևե մեկի հետ կռվիտ եք վարվել...այ, ինչպես քիչ առաջ, յես խիստ միջոցներ ձեռք կառնեմ, վոր դուք պատշաճ պատիժ ստանաք։

Շուտով բժիշկ Լիվսիի ձին բերին և նա սլացավ։

Իսկ նավապետն ամբողջ յերեկոն հանգիստ ու մեղմ եր և հետևյալ յերեկոներին ել այդպես մնաց։

ԳԼՈՒԽ II

ՍԵՎ ԳԱՄՓՈՐ ԳԱԼԻՍ Ե ՈՒ ԳՆՈՒՄ

Շուտով պատահեց առաջինն այն առեղծվածային դեպքերից, վորոնց միջոցով մենք, վերջապես, ազատվեցինք նավապետից։ Սակայն ազատվելով նրանից, ինչպես կտեսնեք, մենք չազատվեցինք նրա հոգսաշատ գործերից։

Յուրաքանչյուր ձմեռ եր, յերկար ճոճռան սառնամանիքներով և կատաղի քամիներով։ Ցեվ հենց սկզբից պարզվեց, վոր իմ խեղճ հայրը հազիվ թե գարունը տեսնի։ Որեցոր նրա դրությունը վատանում եր։ Պանդոկում աշխատում եյինք յես ու մայրիկս։ Մեր գործը շատ շատ եր և մենք քիչ եյինք ուշադրություն դարձնում մեր անհաճո կենվորի վրա։

Հունվարի սառնամանիքոտ առավոտ եր։ Ցեղյամից ծովախորշը վողջ մոխրագույն եր։ Թեթև ալեծածանումը լիզում եր առափնյա քարերը։ Արևը դեռ չեր դուրս յեկել, այլ միայն իր ճառագայթները գցել եր բլուրների կատարների և ծովի հեռուների վրա։ Նավապետը սովորականից շուտ զարթնեց և ուղղվեց դեպի ծովը։ Նրա մաշված բաճկոնի լայն փեշերի տակ տատանվում եր բարակ թուրը։ Կռան տակին հեռադիտակ կար։ Գլխարկը քաշել եր ծոծրակի վրա։ Յես հիշում եմ, նրա բերանից գոլորշի յեր դուրս գալիս և ծխի նման քուլա-քուլա ոդը բարձրանում։ Յես լսեցի, թե ինչպես նա զայրույթով փնչացրեց, մեծ ժայռի յետևը մտնելով։ Յերևի դեռևս չեր կարողանում մոռանալ իր ընդհարումը բժիշկ Լիվսիի հետ։

Մայրիկս վերելումն եր, հորս մոտ, իսկ յես, մինչև նավապետի դալը, նախաճաշի սեղանն եյի պատրաստում։

Հանկարծ դուռը բացվեց և սենյակը մտավ մի մարդ, վորին յես առաջ յերբեք չեյի տեսել։

Նա գունատ եր, յերեսը պսպղում եր, կարծես ճարպ եր քսված։ Ձախ ձեռքի յերկու մատը պակաս եր։ Թեև նրա գոտկից թուր եր կախված, բայց վոչ մի բանով զինվորականի նման չեր։ Յես շատ լավ հետևում եյի յուրաքանչյուր ծովագնացի, լինի նա մի, թե յերկու վոտանի և հիշում եմ, վոր այդ մարդն ինձ շատ մտահոգություն պատճառեց։ Նա ծովագնացի քիչ եր նման, բայց այնուամենայնիվ, յես զգում եյի, վոր նա ծովագնաց է։

Յես հարցրի, թե նա ինչ է ուզում։ Նա ռոմ պահանջեց։ Յես վազեցի, վոր դուրս գամ սենյակից նրա հրամանը կատարելու, բայց նա նստեց սեղանի մոտ և ինձ կրկին իր մոտ կանչեց։ Յես կանգնեցի անձեռոցիկը ձեռքիս։

—Այստեղ արի, վորդիս,—ասաց նա,—մոտ արի։

Յես մոտեցա։

—Այս սեղանը պատրաստել եք իմ ընկերոջ, ղեկապետ Բիլլիի համար,—հարցրեց նա քմծիծաղ տալով։ Յես պատաս-

խանեցի, թե վոչ մի ղեկապետ Բիլլի չեմ ճանաչում և վոր սեղանը պատրաստված է մեր մի կենվորի համար, վորին մենք նավապետ ենք կանչում։

— Դե, ինչ կա վոր, — ասաց նա, — իմ ընկեր ղեկապետ Բիլլին էլ կարելի է նավապետ անվանել։ Այդ դրությունը չի փոխում։ Նրա յերեսին սպի կա և շատ հաճելի վերաբերմունք ունի, հատկապես յերբ նա հարբած է։ Ահա թե ինչպիսին է ղեկապետ Բիլլին։ Ձեր նավապետն էլ յերեսին սպի ունի, իսկ և իսկ աջ այտին։ Ուրեմն ամեն ինչ կարգին է։ Այդպես չէ՞։ Յես կուզենայի իմանալ. ապրում է արդյոք այստեղ, այս տանն իմ սիրելի ընկեր Բիլլին։

Յես պատասխանեցի, վոր նա գնացել է զբոսնելու։

— Վո՞ր ճանապարհով, վորդիս, վո՞ր ճանապարհով է գնացել։

Յես ցույց տվի այն ժայռը, վորի վրա ամեն որ լինում եր նավապետը և ասացի, վոր նա յերևի, շուտով կվերադառնա։

— Բայց յերբ։ Մի՞ ժամից։ Յերկո՞ւ ժամից։

Ելի մի քանի զանազան հարցեր տալուց հետո, վերջում ասաց։

— Այո՛, իմ ընկեր Բիլլին ինձնով կուրախանա, ինչպես խմիչքով։

Այնուամենայնիվ այս խոսքերն ասելիս նրա դեմքը մռայլ եր և յես հիմք ունեցի կարծելու, վոր նավապետը նրան հանդիպելով, այնքան էլ ուրախ չի լինի։ Բայց յես իսկույն ինքս ինձ ասացի, վոր այդ ինձ չի վերաբերում։ Բացի դրանից, այդ պայմաններում վորևե բան ձեռնարկել դժվար եր։ Անծանոթը, մուտքի մոտ տափ արած, ակնապիշ հետևում եր դռանը, ինչպես կատուն մկանը։ Յես ուզում եյի բակը դուրս գալ, բայց նա իսկույն կանչեց ինձ։ Յես նրան միանգամից չհպատակվեցի և նրա ճարպոտ յերեսը զայրույթից հանկարծ այնպես այլանդակվեց և նա սկսեց այնպիսի հայհոյանք տալ, վոր յես վախից յետ թռա։ Բայց հենց վոր վերադարձա, նա սկսեց ինձ հետ առաջվա պես խոսել, շողոքորթելով, թե ծաղրելով, ուսիս խփեց, ասաց, վոր յես հիանալի տղա յեմ և վոր ինքը միանգամից սիրեց ինձ։

— Յես մի տղա ունեմ, — ասաց նա, — և դու նման ես նրան, ինչպես ջրի յերկու կաթիլ։ Նա իմ ծնողական սրտի հպարտությունն է։ Բայց տղաների համար ամենագլխավորը հնազանդ լինելն է։ Այո, վորդյակ, հնազանդությունն է։

Յեվ յեթե դու Բիլլիի հետ նավով ճանապարհորդած լինեյիր, այն ժամանակ քեզ յերկու անգամ կանչելու կարիք չեր լինի։ Բիլլին յերբեք իր հրամանները չեր կրկնում։ Վո՛չ, Բիլլին ուրիշ կարգ ու կանոն ուներ։ Ահա և նա, իմ սիրելի ղեկապետը, Բիլլին, հեռադիտակը կոնատակին, ասված որհնի նրան։ Արի թագնվենք դռան յետևում, հանկարծ դուրս գանք՝ Բիլլիին ուրախացնենք, ասված որհնի նրան։

Այս խոսքերից հետո նա ինձ քշեց ընդհանուր սենյակի անկյուններից մեկը և իր մեջքի յետևում թագցրեց։ Բաց դուռը մեզ յերկուսիս էլ ծածկում եր։ Ինձ համար թե անհաճելի յեր և թե քիչ յերկյուղալի, մանավանդ յերբ նկատեցի, վոր անծանոթն ինքն էլ է վախենում։ Նա ազատեց իր թրի կոթը, մի քիչ շեղբից հանեց և ամբողջ ժամանակ այնպիսի շարժողություններ եր անում, վոր կարծես թե կոկորդում մնացած բանն է կուլ տալիս։

Վերջապես սենյակը ներս ընկավ նավապետը, դուռը շրջկացրեց և առանց շուրջը նայելու, ուղղվեց դեպի սեղանը, վորտեղ նրան սպասում եր նախաճաշը։

— Բիլլի՛, — գոչեց անծանոթը, աշխատելով տալ իր ձայնին ամրություն և համարձակություն։

Նավապետը թափով յետ նայեց։ Նա կանգնած եր ուղիղ մեր առաջին։ Նրա դեմքի արևայրուկը կարծես անցավ, մինչև անգամ քիթը կապտեց։ Նա այնպիսի տեսք ուներ, վոր կարծես թե ուրվականի է պատահել։ Յեվ, ճիշտն ասած, յես խղճացի նրան, վոր նա միանգամից դարձավ ծեր ու թառամած։

— Մի՞թե դու ինձ չես ճանաչում, Բիլլի։ Մի՞թե դու չես ճանաչում քո հին ընկերոջը, Բիլլի, — ասաց անծանոթը։

Նավապետը բերանը բացեց, կարծես շնչել չեր կարողանում։

— Սեվ Դամփո, — գոչեց նա հանկարծ։

— Նա ինքն է, — պատասխանեց անծանոթը, քիչ աշխուժանալով։ — Սեվ Դամփոը յեկել է տեսնելու իր հին բարեկամին, իր սիրելի Բիլլիին, վորն ապրում է «Ծովապետ Բենբոու» պանդոկում։ Ա՜խ, Բիլլի, Բիլլի։ Վորքան ջուր է անցել այն որից, յերբ յես զրկվեցի իմ յերկու ճանկերից, — բացականչեց նա, բարձրացնելով իր այլանդակված ձեռքը։

— Լավ, — ասաց նավապետը, — դու հետևեցիր ինձ և յես քո առաջն եմ։ Ասա, ինչու՞ յես յեկել։

— Ճանաչում եմ քեզ, Բիլլի, — պատասխանեց Սեվ Դամփոը։

— Դու ճիշտ ես ասում, Բիլլի։ Այս հիանալի տղան, վորին յես այնքան սիրեցի, մի բաժակ ռում կբերի ինձ համար։ Մենք քեզ հետ կնստենք, յեթե ուզում ես, և կխոսենք առանց այլաբանության, ուղղակի, ինչպես հին ընկերներ։ Այնպես չէ՞։

Յերբ վերադարձա և շիշը բերի, նրանք արդեն նստել եյին սեղանի մոտ։ Սեվ Գամփոը դռան մոտ եր նստել, նստարանի ծայրին և մի աչքով նայում եր իր հին բարեկամին, իսկ մյուս աչքով՝ դռանը, վոր նա փախչել չկարողանա։

Նա հրամայեց ինձ, վոր գնամ և դուռը բաց թողնեմ։

— Դու, վորդիս, բանալու ծակից չնայես, — բացատրեց նա։

Յես նրանց թողի և վերադարձա հաշվեսեղանի մոտ։

Յերկար ժամանակ, չնայած իմ ջանքերին, յես, բացի շշուկից, վոչինչ չլսեցի։ Բայց հետզհետե ձայները բարձրացան և վերջապես ինձ հաջողվեց մի քանի խոսք լսել, գլխավորապես հայհոյանք, վորը դուրս եր գալիս Նավապետի բերանից։

Վերջապես Նավապետը գոչեց.

— Վոչ, վոչ, վոչ, վոչ։ Բավական է այդ մասին։ Լսում ես։

Յեվ հետո կրկին.

— Յեթե բանը կախաղանի հասնի, թող նրա վրա ճոճվեն բոլորը։

Հետո հանկարծ հայհոյանքի սարսափելի տարափ և այլ անսպասելի ձայներ, սեղանն ու աթոռները դղրդյունով շրջվեցին հատակի վրա, գրնգաց շեղբերի պողպատը, մեկը ցավից գոռաց և մի բոպեյից հետո յես տեսա Սեվ Գամփուին, վորը վոտների բոլոր ուժով դեպի դուռն եր վազում։ Նավապետը հետևում եր նրան։ Նրանց սրերը մերկացված եյին։ Սեվ Գամփոի ձախ ուսից արյուն եր հոսում։ Հենց դռան մոտ Նավապետը սուրը թափահարեց և ուզում եր փախչողին ելի մի ամենասարսափելի հարված հասցնել, բայց սուրը դիպավ մեր «Նավապետ Բենբոու»-ի մեծ ցուցանակին։ Ցուցանակի տակ, շրջանակի վրա, մինչև այժմ ել կարելի յե հետքը տեսնել։

Սրանով ել կռիվը վերջացավ։

Ճանապարհը դուրս թռչելով, Սեվ Գամփոը, չնայելով իր վերքին, սլացավ այնպիսի արագությամբ, վոր կես բոպեյից հետո անհայտացավ բլրի յետևում։ Նավապետը խելագարի պես կանգնել նայում եր ցուցանակին։ Հետո մի քանի անգամ ձեռքը քսեց աչքերին և տուն դարձավ։

— Ջիմ, — հրամայեց նա։ — Ռոմ։

Այս խոսքերն ասելիս նա թեթև տատանվեց և ձեռքով հենվեց պատին։

— Դուք վիրավորված եք, — գոչեցի յես։

— Ռոմ, — կրկնեց նա։ — Յես պետք է հեռանամ այստեղից։ Ռոմ։ Ռոմ։

Յես վազեցի ռոմ բերելու, բայց հուզմունքից բաժակը կոտրեցի և տակառի ծորակը ցեխոտեցի։ Յեվ մինչև ամեն բան կարգի եյի բերում և ուրիշ բաժակ լցնում, հանկարծ լսեցի, թե ինչպես ընդհանուր սենյակում ինչ վոր մի բան թրմփաց հատակի վրա։ Յես ներս մտա և տեսա Նավապետին, վորն իր ամբողջ յերկարությամբ ձգված եր հատակի վրա։ Մայրիկս, աղմուկից ու կռվից անհանգստացած, ցած իջավ ինձ ոգնելու։ Մենք բարձրացրինք նավապետի գլուխը։ Նա շատ բարձր և ծանր եր շնչում։ Աչքերը ծածկված եյին, դեմքը՝ շառագունած։

— Աստված իմ, — գոչեց մայրիկս։ — Ի՞նչ խայտառակություն է մեր պանդոկի համար։ Իսկ քո խեղճ հայրը, կարծես դիտմամբ, հիվանդ պառկած է։

Մենք չգիտեյինք, թե ինչպես ոգնեյինք Նավապետին և համոզված եյինք, վոր անծանոթի հետ մենամարտելուց առաջացած նրա վերքը մահացու յե։ Յես ռոմ բերեցի և փորձեցի լցնել նրա բերանը։ Սակայն նրա ուժեղ ծնոտները սեղմված եյին, կարծես յերկաթից լինեյին։

Բարերախտաբար դուռը բացվեց և սենյակը մտավ բժիշկ Լիվսին, վոր յեկել եր հորս տեսնելու։

— Բժիշկ, ոգնեցեք, — բացականչեցինք մենք։ — Ի՞նչ անենք։ Վիրը տեղն է վիրավորված։

— Վիրավորված, — ասաց բժիշկը։ — Նա այնպես է վիրավորված, ինչպես դու կամ յես։ Նա կաթվածահար է յեղել։ Դե, տիկին Գոկինս, յետ դարձեք վերեվ, ձեր ամուսնու մոտ և, յեթե կարելի յե, վոչինչ մի ասացեք նրան։ Իսկ յես կփորձեմ ազատել այս յերիցս անպետք կյանքը։ Ջիմ, մի թաս բեր։

Յերբ թասը բերեցի, բժիշկն արդեն քշտել եր Նավապետի թևը և մերկացրել նրա մեծ, մկանոտ ձեռքը։ Ձեռքը շատ տեղերում կտրատված եր։ Ուսի և արմունկի միջև կապտին եյին տալիս հետևյալ մակագրությունները՝ «բախտավոր յեղիր», «բարեհաջող քամի», «Թող իրականանան Բիլլի Բոնսի յերազանքները»։ Հենց ուսի մոտ նկարված եր կախաղան, վորի վրա

ՀՍՍՌ-Ի ԳԻՏ. ԱԿԱԴ. Մ. Գորկու անվան գրադարան

մի մարդ եր ճոճվում։ Այս նկարը, ինչպես ինձ թվաց, նկարված եր վարպետորեն։

—Մարգարեական նկար է,— նկատեց բժիշկը, ձեռքը դնելով նկարին։

—Իսկ այժմ, պարոն Բիլլի Բոնս, յեթե իսկապես ձեզ այդպես են կանչում, մենք կտեսնենք, թե ինչ գույնի յե ձեր արյունը։ Ջիմ,— դիմեց նա ինձ,— դու արյունից չես վախենում։

—Վոչ, պարոն,— ասացի յես։

—Շատ լավ,— ասաց բժիշկը։— Այն ժամանակ բռնիր թասը։

Նա վերցրեց նշտարը և յերակը բացեց։

Նավապետից շատ արյուն հոսեց, մինչև վոր նա աչքը բացեց և մռայլ հայացքով նայեց մեզ։ Նա բժշկին ճանաչեց և ունքերը կիտեց։ Հետո նկատեց ինձ և կարծես մի քիչ հանգըստացավ։ Ապա հանկարծ կարմրեց և, ցանկանալով վեր կենալ, գոչեց։

— Վորտեղ է Սեվ Դամփոը։

— Այստեղ վոչ մի շուն չկա, բացի ձեզանից,— ասաց բժիշկը։ —Դուք չափազանց շատ ռոմ եք խմել։ Ցեվ ահա ձեզ կաթված է խփել, ինչպես յես նախագուշակել եյի։ Ցեվ յես, իմ ցանկությյան հակառակ, հանեցի ձեզ գերեզմանից։ Դե, պարոն Բոնս...

— Ցես Բոնս չեմ,— ընդհատեց նավապետը։

— Կարևոր չե,— ասաց բժիշկը։— Ցես մի ծանոթ ծովահեն ունեմ, վորին Բոնս են կանչում և յես այդ անունը տվել եմ կարճ լինելու պատճառով։ Հիշեցեք, ինչ վոր ասեմ ձեզ. մի բաժակ ռոմը ձեզ, իհարկե, չի սպանի, բայց յեթե մի բաժակ խմեք, կցանկանաք ելի ու ելի խմել։ Ցեվ յերդվում եմ ձեզ իմ կեղծ ծամով, վոր յեթե խմելը չթողնեք, դուք շատ շուտով կմեռնեք։ Հասկանալի յե։ Կվերադառնաք յերկինքը, ինչպես ասված է ավետարանում։ Դե, փորձեցեք վեր կենալ։ Ցես կոդնեմ ձեզ, վոր հասնեք ձեր անկողնին։

Մեծ դժվարությամբ նավապետին քաշ տվինք վերև և պառկեցրինք անկողնում։ Գլուխը թուլությունից ընկավ բարձի վրա։ Նա համարյա թե անզգա յեր։

— Ցեվ այդպես, հիշեցեք,— ասաց բժիշկը,— յես ձեզ մաքուր խղճով եմ ասում. ռոմ և մահ բառերը—ձեզ համար միևնույն նշանակությունն ունեն։

Իմ ձեռքից բռնելով նա ճանապարհ ընկավ իմ հիվանդ հոր մոտ։

— Դատարկ բան է,— ասաց նա, հենց վոր դուռը փակեցինք։— Ցես նրանից այնքան արյուն բաց թողի, վոր նա յերկար ժամանակ հանգիստ կլինի։ Մի շաբաթ կպառկի անկողնում, իսկ դա ոգտակար է թե նրա և թե ձեզ համար։ Իսկ յերկրորդ կաթվածի ժամանակ նա կենդանի չի մնա։

ԳԼՈՒԽ III

ՍԵՎ ՆՇԱՆԸ

Կեսորին մոտ յես նավապետի սենյակը մտա, տանելով զովացուցիչ խմիչք և դեղ։ Նա պառկած եր նույն դրության մեջ, ինչպես թողել եյինք, միայն մի քիչ բարձր։ Նա ինձ չափազանց թույլ թվաց և միաժամանակ շատ վրդովված։

—Ջիմ,— ասաց նա,— այստեղ լավը միայն դու յես։ Ցեվ դու գիտես, վոր յես միշտ բարի յեմ յեղել դեպի քեզ։ Ամեն ամիս յես քեզ չորս պենս եյի տալիս։ Տեսնում ես, բարեկամ, իմ դրությունը վատ է, յես հիվանդ եմ և բոլորի կողմից մոռացված։ Ցեվ դու, Ջիմ, ինձ համար մի գավաթ ռոմ կբերես։ Այնպես չե։

— Բժիշկը...—սկսեցի յես։

Բայց նա թույլ ձայնով, սակայն չափազանց բարկացած, սկսեց հայհոյել բժշկին։

—Բոլոր բժիշկները կեղտաշոր են,— ասաց նա։— Իսկ ձեր այստեղի բժիշկն ի՞նչ հասկացողություն ունի ծովագնացների մասին։ Ցես յեղել եմ այնպիսի յերկրներում, վորտեղ տաք է ինչպես յեռացող ձյութի մեջ, վորտեղ մարդիկ մեռնում եյին դեղին տենդից, իսկ յերկրաշարժները ճոճում եյին ցամաքն ինչպես ծովի ալիքը։ Ի՞նչ գիտե ձեր բժիշկն այդ վայրերի մասին։ Ցեվ յես ապրել եմ միայն ռոմով։ Այո, ռոմով։ Ռոմն ինձ համար և՛ միս եր, և՛ ջուր, և՛ կին, և՛ բարեկամ։ Ցեթե այժմ ռոմ չխմեմ, յես կլինեմ ինչպես ալեկոծությունից ափ նետված հին նավ։ Ցեվ իմ մահվան պատճառը դու կլինես, Ջիմ, և այն կեղտաշորը, բժիշկը։

Նա կրկին սկսեց հայհոյել։

—Նայիր Ջիմ, թե ինչպես են դողդողում մատները,— շարունակեց նա խղճալի ձայնով։— Ցես չեմ կա՛ կանգնեցնել նրանց, վոր չդողդողան։ Այսոր յես վոչ մի

կաթիլ բերանս չեմ դրել։ Այդ բժիշկը հիմար է, հավատացնում եմ քեզ։ Եթե ոմն չխմեմ, Ջիմ, աչքիս սարսափելի բաներ կերևան։ Մի քանի բաներ արդեն յերևացել են, ասուած վկա։ Յես տեսա ծերունի Ֆլինտին, ահա այստեղ, անկյունում, մեջքիս յետևը կանգնած։ Տեսա նրան պարզ, ինչպես կենդանի։ Իսկ յերբ աչքիս այդպիսի սարսափելի բաներ են յերևում, յես գապան եմ դառնում։ Ձեր բժիշկն ինքն ասաց, վոր մի բաժակն ինձ չի սպանի։ Յես քեզ կտամ մի վոսկե գինեյ[1]) մի գավաթ ոմի համար, Ջիմ։

Նա այնքան համառորեն եր խնդրում և այնքան վրդովված եր, վոր յես վախեցա, թե հայրիկս կլսի։ Հորս դրությունն այդ որը հատկապես վատ եր և նա լրիվ հանգստության կարիք ուներ։ Միաժամանակ ինձ ույժ եյին տալիս բժշկի խոսքերը, թե մի բաժակը նրան չի վնասի։

— Ձեր փողն ինձ պետք չե,— պատասխանեցի յես, վորովհետև առաջարկած կաշառքն ինձ շատ վիրավորեց։ — Ավելի լավ է վճարեցեք այն, ինչ վոր հորս պարտ եք։ Յես ձեզ համար մի բաժակ ոմ կբերեմ, բայց դա կլինի վերջինը։

Յես մի բաժակ ոմ բերեցի։ Նա ագահաբար վերցրեց ու դատարկեց։

— Ա՛յ, հիմա լավ է,— ասաց նա,— յես միանգամից առողջացա։ Լսիր, բարեկամս, բժիշկը չի՞ ասել, թե վորքան ժամանակ պետք է պառկեմ այս մահճակալի վրա։

— Առնվազն մի շաբաթ,— ասացի յես, — վոչ պակաս։

— Վորտա՞ ու կայծակ,— բացականչեց նավապետը։— Մի շաբաթ։ Եթե յես մի շաբաթ պառկեմ, նրանք ժամանակ կունենան ինձ սեվ նշան ուղարկելու։ Այդ մարդիկ արդեն հոտ են առել, թե վորտեղ եմ յես, այդ վատնիշներն ու դատարկաշրջիկները, վորոնք չկարողացան պահել իրենցը, այժմ աչք են տնկել ուրիշի ունեցածի վրա։ Իսկական ծովագնացները սիրթե այդպես են վարվում։ Ահա յես, որինակ. յես խնայող մարդ եմ և յերբեք փողերը դես—դեն չեմ շպրտել և չեմ ցանկանում վատնակոծս կորցնել։ Յես ելի կխաբեմ այդ մարդկանց։ Յես կհեռանամ այս սատրջրյա ժայռից և նորից նրանց բոլորին հիմարացած կթողնեմ։

Այս խոսքերն ասելով, նա սկսեց կամաց բարձրանալ անկողնից, հենվելով իմ ուսի վրա այնպիսի ուժով, վոր յես քիչ

[1]) Գինեյ — անգլիակ. դրամ (մոտավորապես 10 ռուբլի)։

մնաց ցավից աղաղակեի Ծանր, ինչպես կոճղեր, նրա վոտները ինձանից հատակի վրա։ Յեվ նրա կրակոտ խոսակցությունը բոլորովին չեյին համապատասխանում հազիվ լսելի ձայնին։

Մահճակալի վրա նստելուց հետո, նա յերկար ժամանակ չեր կարողանում վոչ մի բառ արտասանել։ Վերջապես ասաց։

— Հոգիս հանեց այդ բժիշկը... Ականջներս կարծես յերգ են ասում։ Ոգնիր, վոր պառկեմ...

Բայց մինչև ձեռքս նրան պարզելը, նա կրկին ընկավ անկողնի վրա և միաժամանակ լուռ պառկած եր։

— Ջիմ,— ասաց նա վերջապես,— դու այսոր տեսար այն ծովագնացին։

— Սեվ Գամփռին,— հարցրեցի յես։

— Այո՛, Սեվ Գամփռին,— ասաց նա։— Նա շատ վատ մարդ է, բայց նրանք, ովքեր նրան ուղարկել են, ավելի վատն են։ Լսիր. յեթե ինձ չհաջողվի այստեղից հեռանալ և նրանք ինձ սեվ նշան ուղարկեն, իմացիր, վոր ուզում են ձեռք գցել իմ անդուկը։ Այն ժամանակ դու ձի նստիր — չե՞ վոր լավ ես ձի նստում, այնպես չե՞ — այն ժամանակ դու ձի նստիր և սլացիր... Այժմ ինձ համար միևնույն է... Սլացիր թեկուզ այն անիծված բժշկի մոտ, այն կեղտաշորի մոտ, և ասա, վոր տախտակամածի վրա հավաքի բոլոր նավաստիներին— բոլոր յերդվյալներին ու դատավորներին — և հանկարծակի բռնի իմ հյուրերին «Ադմիրալ Բենբոուզ»-ի վրա, Ֆլինտի հին ավազակախումբը, բոլորին, մինչև վերջինը, քանիսը վոր կենդանի յեն մնացել։ Յես առաջին ղեկապետն եմ։ այո՛, ծերունի Ֆլինտի առաջին ղեկապետը և յես միայն գիտեմ թե վորտեղ է գտնվում այն տեղը։ Նա ինքն ինձ հաղորդեց Սավաննայում, յերբ ընկած եր մերձիմահ, ինչպես յես եմ այժմ պառկած, տեսնում ես։ Բայց դու վոչինչ մի անի, մինչև վոր ինձ սև նշան չուղարկեն կամ մինչև վոր կրկին չես տեսնի Սեվ Գամփռին կամ մի վոտանի ծովագնացին։ Այդ մի վոտանուց, Ջիմ, բոլորից շատ զգուշացիր։

— Բայց այդ ի՞նչ սեվ նշան է, նավապետ,— հարցրի յես։

— Դա կոչ է, բարեկամս։ Դատարան հրավիրող ծանուցագրի նման։ Ցերբ ուղարկեն, յես քեզ կասեմ։ Դու միայն նրանց ձեռքից բաց մի թողնի, սիրելի Ջիմ, յես բոլորը քեզ հետ կկիսեմ, աղնիվ խոսք եմ տալիս։

Նա սկսեց խոսել և նրա ձայնը գնալով թուլանում եր։ Յես նրան դեղ տվի, նա յերեխայի պես ընդունեց։

—Դեռևս վո՛չ մի ծովագնաց այնքան դեղի կարիք չի ունեցել, որքան յես։

Շուտով նա ծանր ինքնամոռացման մեջ ընկավ և յես նրան մենակ թողի։

Զգիտեմ, ինչպես կվարվեյի յես, եթե ամեն ինչ լավ վերջանար։ Ցերևի ամեն բանի մասին կպատմեյի բժշկին, որովհետև յես սաստիկ վախենում եյի, որ նավապետը կզղջա իր անկեղծության մասին և կպանի ինձ։ Բայց դրությունն ուրիշ կերպ դասավորվեց։ Ցերեկոյան իմ խեղճ հայրը հանկարծակի մեռավ և մենք ամեն բան մոռացանք։ Այն ժամանակ յես այնպես եյի կլանված մեր վշտով, հարևանների այցելությամբ, թաղում կազմակերպելով և պանդոկի աշխատանքով, որ ժամանակ չունեյի վոչ նավապետի մասին մտածելու և վոչ էլ նրանից վախենալու։

Հետևյալ առավոտ նա իջավ ներքև այնպես, որ կարծես թե վոչինչ չի պատահել։ Կերավ սովորական ժամերին, բայց վոչ ախորժակով, և, վախենում եմ, սովորականից ավելի խմեց, որովհետև ինքն եր լցնում ու խմում։ Խմելիս նա այնպես բարկացած եր փնչացնում ու փսփսում, որ վոչ վոք չեր համարձակվում արգելել նրան, որ ավելորդ չխմի։ Թաղման որվա նախորյակի յերեկոյան նա սովորականի պես հարբած եր։ Զզվելի յեր լսել նրա սանձարձակ, վայրի յերգը մեր տխուր տնում։ Թեև նա շատ թույլ եր, սակայն մենք սաստիկ վախենում եյինք նրանից։ Միակ մարդը, որ կարող եր նրա բերանը փակել, բժիշկը, հեռու յեր. նրան հրավիրել եյին մի քանի կիլոմետրի վրա մի հիվանդի մոտ, և հորս մահից հետո վոչ մի անգամ մեր տան մոտ չեր յերևում։

Ցես ասացի, որ նավապետը թույլ եր։ Ցավ իսկապես, նա վոչ միայն չեր առողջանում, այլ կարծես թե ավելի թուլանում եր։ Հազիվհազ եր բարձրանում սանդուխքով և տատանվելով, կաղալով մոտենում մեր վաճառասեղանին։

Ցերբեմն նա քիթը դռնից հանում եր՝ ծովի ոդը շնչելու, բայց այդ ժամանակ բռնում եր պատից։ Նա շնչում եր ծանր և արագ, այն մարդու նման, որ սարն ի վեր է բարձրանում։

Նա այլևս ինձ հետ չեր խոսում և, ըստ յերևույթին, մոռացել եր իր անկեղծության մասին, բայց չնայելով իր թուլության, ավելի դյուրագրգիռ եր դարձել։ Հարբելով, հանում եր թուրը և աուաջը դնում, սեղանի վրա և այդ ժամանակ հարյա մարդկանց չեր նկատում, կարծես խորասուզված եր իր մտքերի և ցնորքային տեսիլքների մեջ։

Մի անգամ նա մինչև անգամ սկսեց ինչ որ գյուղական տիրահարական յերգ շշշվացնել, որը յերևվի յերգել եր պատանի ժամանակ, ծովն ուղևորվելուց առաջ։ Այդ բանը մեզ շատ զարմացրեց։

Այդ դրությյան մեջ եյին գործերը, յերբ թաղման մյուսորը—որն ամպամած եր, մառախլապատ և սառնամանիքոտ—ցերեկվա ժամի յերեքին, յես դուրս յեկա և կանգնեցի շեմքին։ Վիշտն ինձ տանջում եր։

Հանկարծ տեսա մի մարդ, որը կամաց գալիս եր ճանապարհով։ Ցերևի նա կույր եր, որովհետև ճանապարհը փնտռում եր ձեռնափայտով։ Նրա աչքերի և քթի վրա կտնաչ վահանակ եր կախված։ Ծերությունից, կամ հիվանդությունից կուրացած, նա ամբողջովին փաթաթված եր մի հին, պատառոտված նավաստու թիկնոցում, որը թագցնում եր նրա մարմնի գծագրությունը։ Իմ կյանքում յես յերբեք այդպիսի սարսափելի մարդ չեյի տեսել։ Նա պանդոկի մոտ կանգնեց և բարձր, տաքրինակ ձայնով արտասանեց, դիմելով դատարկ տարածությանը.

—Չի՞ ասի արդյոք վորևվե բարերար մարդ խեղճ կույրիս, որը կորցրել է իր թանկագին տեսողությունն իր հայրենիքը քաջությամբ պաշտպանելիս, թե ներկայումս վորտեղ է գտնվում նա։

—Դուք գտնվում եք «Ադմիրալ Բենբոու» պանդոկի մոտ, Սեվ Ֆայրի ծովախորշում, բարի մարդ,— ասացի յես։

—Ցես լսում եմ մի ձայն,— ասաց ծերունին,— և յերիտասարդ ձայն։ Տվեք ինձ ձեր ձեռքը, բարի յերիտասարդ, և առաջնորդեցեք ինձ դեպի այդ տունը։

Ցես ձեռքս պարզեցի և այդ սարսափելի անաչք եյակը, այնպիսի քաղցրավուն ձայնով ճանկեց ձեռքս, որ կարծես աքցանով բռնեց։ Ցես այնպես վախեցա, որ ուզում եյի փախչել։ Բայց կույրն ինձ դեպի իրեն քաշեց։

—Իսկ այժմ, տղա,—ասաց նա,—տար ինձ նավապետի մոտ։

—Պարոն,—ասացի յես,— աղնիվ խոսք, յես չեմ համարձակվում։

—Չե՞ս համարձակվում,— քմծիծաղ տվեց նա։— Ա՞յ թե ինչ։ Չե՞ս համարձակվում։ Տար ինձ իսկույն, թե չե ձեռքդ կկոտրեմ։

Ցավ նա այնպես շրջեց իմ ձեռքը, որ յես ճչացի։

— Պարոն, — ասացի, — ես մտածում եմ վոչ թե իմ մասին, այլ ձեր մասին։ Նավապետն այժմ այնպիսին չէ, ինչպես միշտ։ Նա նստած է սուրը ձեռքին։ Մի ուրիշ մարդ արդեն յեկել է նրա մոտ և...

— Շուտ, քայլեր, — ընդհատեց նա։

Ցեսս յերբեք այդպիսի կատաղի, սառը, զզվելի ձայն չեյի լսել։ Այդ ձայնը ցավից ավելի ուժեղ վախեցրեց ինձ։ Ցեսս հասկացա, վոր պետք է յենթարկվեմ և նրան տարա ընդհանուր սենյակը, վորտեղ նստած եր մեր հիվանդ ծովահենը, ոսմով թմրած։ Կուլրը կառչեց ինձ իր յերկաթե մատներով։ Նա ճնշում եր ինձ իր ամբողջ ծանրությամբ և ես հազիվ եյի վոտքի վրա կանգնում։

— Տար ինձ ուղիղ նրա մոտ և յերբ նա ինձ կտեսնի, ձայն տուր. «Ահա ձեր բարեկամը, Բիլլի»։ Յեթե ձայն չտաս, ահա թե ինչ կանեմ։

Յեվ այնպես սեղմեց իմ ձեռքը, վոր քիչ եր մնում գիտակցությունս կորցնեյի։ Այնպես եյի վախենում կուլր մուրացիկից, վոր մոռացա իմ սարսափը նավապետի առաջ, և բաց անելով ընդհանուր սենյակի դուռը, դողդողջուն ձայնով գոչեցի այն բառերը, վոր կուլրը հրամայել եր ասել։

Խեղճ նավապետը աչքերը վերեվ բարձրացրեց և միանգամից գգաստացավ։ Նրա դեմքը յերկյուղ չեր արտահայտում, այլ, ավելի շուտ, մահվան տանջանք։ Նա փորձեց կանգնել, բայց, յերեվի ուժը չպատեց։

— Վոչինչ, Բիլլի, նստիր, վորտեղ նստած ես, — ասաց մուրացիկը։ — Ցեսս չեմ կարող քեզ տեսնել, բայց ես լսում եմ թե ինչպես են դողդողում քո մատները։ Գործը գործ է։ Պարզիր ձախ ձեռքդ։ Տղա, բռնիր նրա ձախ ձեռքը և մոտեցրու իմ աջ ձեռքին։

Մենք յերկուսս ել հնազանդվեցինք։ Ցեվ ես տեսա, թե ինչպես նա իր այն ձեռքից, վորով ձեռնափայտն եր բռնել, ինչ վոր մի բան փոխադրեց նավապետի ափը։

— Գործն արված է, — ասաց կուլրը։

Այս ասելով, նա իմ ձեռքը բաց թողեց և կուլրի համար անսպասելի արագությամբ, ընդհանուր սենյակից դուրս թռավ ճանապարհը։ Ցեսս դեռ կանգնած եյի անշարժ, լսելով նրա ձեռնափայտի հեռավոր թխկոցները։

Բավականի ժամանակ անցավ, մինչեվ ես ու նավապետը

սթափվեցինք։ Այդ ժամանակ միայն լես զգացի, վոր դեռ բռնած եմ նրա ձեռքը։ Հանկարծ նա քաշեց իր ձեռքը և նայեց ափին։

— Ժամի տասին,— բացականչեց նա։— Վեց ժամ է մնում։ Դեռ ժամանակ կա։

Նա վոտքի յելավ, բայց խկուլն տատանվեց և կոկորդը բռնեց։ Այդպես տատանվելով կանգնեց մի քանի վայրկյան, հետո ինչ վոր տարորինակ ձայն հանելով, ամբողջ ծանրությամբ ընկավ հատակի վրա յերեսնիվայր։

Ցես արագ մոտեցա նրան և կանչեցի մորս։ Բայց ուշ եր։ Նավապետը հանկարծամահ յեղավ կաթվածահարությունից։ Ցեվ, տարորինակ է, ինձ այդ մարդը յերբեք դուր չեր յեկել, թեև վերջին ժամանակներս սկսել եյի խղճալ, բայց նրան մեռած տեսնելով, լաց յեղա։ Ցես յերկար ժամանակ լաց յեղա, արցունքներս հոսում եյին։ Սա յերկրորդ մահն եր, վոր տեղի յեր ունենում իմ աչքի առաջ և այն վիշտը, վոր պատճառել եր ինձ առաջին մահը, դեռ թարմ եր իմ սրտում։

ԳԼՈՒԽ IV

ՆԱՎԱՍՏՈՒ ՍՆԴՈՒԿԸ

Ցես, իհարկե, իսկույն պատմեցի մորս այն բոլորն, ինչ վոր դիտելի։ Դուցե, պետք է այդ մասին ավելի շուտ պատմեյի։ Մենք ծանր և վտանգավոր դրության մեջ ընկանք։

Դրամի մի մասը, նավապետի մահից հետո, յեթե միայն փող ուներ նա, անպայման պետք է պատկաներ մեզ։ Բայց հավիվ թե Սեվ Գամփռի և կույր մուրացիկի նման նրա ընկերները համաձայնվեյին հրաժարվել իրենց ավարից, հանգուցյալի պարտքերը վճարելու համար։ Նավապետի հրամանը, ձի նստել և գնալ բժիշկ Լիվսիի յետևից, յես կատարել չկարողացա. չեր կարելի մորս թողնել մենակ, անպաշտպան։ Այդ մասին մտածել ել հարկավոր չեր։ Մենք չեյինք համարձակվում յերկար ժամանակ մնալ տանը, մենք ցնցվում եյինք մինչև անդամ այն ժամանակ, յերբ մեր ոջախի ածուխներն ընկնում եյին յերկաթե ցանցի վրա։ Մենք վախենում եյինք մինչև անդամ ժամացույցի չրխչրխկոցից։ Ամեն տեղից ինչ վոր ձայներ եյինք լսում, կարծես թե մեկը մոտենում եր մեր տանը։

Ցերբ մտածում եյինք, թե հատակի վրա մեռած մարմին է ընկած և վոր մոտիկում, ինչ վոր տեղ թափառում է զզվելի կույր մուրացիկը, մազերս բիզ-բիզ եյին կանգնում։ Մի բոպե ուշանալ չեր կարելի։ Պետք է ինչ վոր բանի ձեռնարկեյինք։ Ցեվ մենք վորոշեցինք միասին ճանապարհվել դեպի մոտիկ գյուղը, ոգնության կանչելու։ Վորոշեցինք ու կատարեցինք։ Գլուխներս բաց սկսեցինք վազել սառնամանիքոտ մշուշի միջով։ Արդեն սկսել եր մթնել։

Գյուղը չեր յերեվում, սակայն մոտիկ եր, մի քանի հարյուր յարդ տարածության վրա հարևան ծովախորշի հակառակ կողմում։ Ինձ շատ արիացնում եր այն հանգամանքը, վոր կույր մուրացիկը հակառակ կողմով եր գնացել։ Մենք գնում եյինք, թեև վոչ յերկար ժամանակ, յերբեմն կանգ եյինք առնում և ականջ դնում։ Սակայն չորս կողմում սովորական ձայներն եյին. շաչում եր մակընթացությունը և անտառում ագռավներն եյին կռկռում։

Գյուղում արդեն մոմերը վառել եյին և նրանց դեղնավուն փայլը, դռներում և պատուհաններում, հանգստացնում եր մեզ։ Ցեվ սա միակ ոգնությունն եր, վոր մեզ հաջողվեց ստանալ։ Վոչ վոք գյուղի բնակիչներից չհամաձայնեց գալ մեզ մոտ «Ծովակալ Բենբոու»։

Վորքան շատ եյինք խոսում մեր հուզմունքի մասին, այնքան ուժեղ եյին այդ մարդիկ կռթնում իրենց անկյուններում։ Նավապետ Ֆլինտի անունը, վոր ինձ մինչև այդ ժամանակ անծանոթ եր, նրանցից շատերին ծանոթ եր և սարսափեցնում եր։ Նրանցից վոմանք հիշեցին, թե ինչպես մի անգամ, դաշտում, «Ծովակալ Բենբոու»-ի մոտ աշխատելիս, ճանապարհին ինչ վոր կասկածելի մարդիկ տեսան։ Անծանոթները նրանց մաքսանենգ թվացին և նրանք տուն շտապեցին, վոր իրենց դռներն ավելի ամուր փակեն։ Մեկն էլ նրանցից ծովախորշում տեսել եր մի փոքրիկ նավ, վոր կոչվում եր Լոդովո Կիտտա։ Այդ պատճառով էլ միայն հիշելը նավապետի մտերիմների մասին, սարսեցնում եր նրանց։ Գտնվեցին համարձակ մարդիկ, վորոնք համաձայնում եյին գնալ բժիշկ Լիվսիի յետևից, վոր ապրում եր մյուս կողմում, սակայն պանդոկի պաշտպանությանը վոչ վոք չեր ուզում մասնակցել։

Ասում են, թե վախկոտությունը վարակիչ է։ Սակայն վեճերը և հակաճառություններն ընդունակ են մարդուն քաջու-

թյուն ներշնչելու։ Ցերբ բոլորն էլ հրաժարվեցին մեզ հետ գալուց, մայրիկս հայտնեց, որ չի ցանկանում կորցնել այն գրությունը, որ պատկանում է իր որբացած որդուն։

— Դուք կարող եք, որքան ուզում եք վախենալ, բայց Ջիմը վախկոտներից չենք։ Մենք կվերադառնանք այն ճանապարհով, որով եկել ենք։ Ձեզ նման պնդակազմ, լայնաթիկունք մարդկանց համար պատիվ չի բերում ճոր սիրտ ունենալը։ Մենք այն սնդուկը բաց կանենք, եթե դրա համար մեռնելու էլ լինենք։ Ցես շատ շնորհակալ կլինեմ, տիկին Կրոսալի, եթե թույլ տաք վերցնելու ձեր պայուսակը, որ նրա մեջ լցնենք ու բերենք այն փողերը, որ որենքով մեզ են պատկանում։

Ցես, իհարկե, հայտնեցի, թե կգնամ մորս հետ և, իհարկե, բոլորը գոռացին, թե դա անմտություն է։ Այնուամենայնիվ աղամարդկանցից վոչ վոք չասաց, թե կգամ ճանապարհ դնելու։ Ոգնությունը սահմանափակվեց նրանով միայն, որ տվին ինձ մի լցրած ատրճանակ և խոստացան պատրաստ պահել թամքած ձիեր, որ եթե ավազակներն ընկնեն մեր յետևից, կարողանանք փախչել։ Իսկ մի յերիտասարդ սլացավ բժշկի մոտ զինված ուժ բերելու։

Իմ սիրտն ուժգին խփում եր, յերբ մենք ուղղվեցինք դեպի մեր վտանգավոր ճանապարհը։ Ցուրտ գիշեր եր։ Լրացած լուսինը դուրս յեկավ։ Նա արդեն բարձրացել եր հորիզոնի վրա և մշուշում կարմրին եր տալիս, յուրաքանչյուր բոպե ավելի պայծառ փայլելով։ Մենք հասկացանք, որ շուտով լույս կլինի այնպես, ինչպես ցերեկը, և մեզ վերադարձին նկատելը դժվար չի լինի։ Մենք կամացուկ անցնում եյինք ցանկապատերի յերկարությամբ, անձայն ու արագ և ճանապարհին վոչ մի սարսափելի բանի չհանդիպելով, վերջապես հասանք «Ծովակալ Բենբոու»-ին։

Տուն հասնելով, յես իսկույն փակեցի դուռը նիգով։ Ծանր շնչելով, մենք կանգնած եյինք մթության մեջ, մեն-մենակ դատարկ տան մեջ, որտեղ ընկած եր դիակը։ Հետո մայրիկս պանդոկից մոմ բերեց և ձեռք-ձեռքի բռնած, մտանք ընդհանուր սենյակը։ Նավապետն ընկած եր նույն դրությամբ, ինչպես թողել եյինք, մեջքի վրա, բաց աչքերով, մի ձեռքը յետ գցած։

— Վարագույրներն իջեցրու, Ջիմ,— շշնջաց մայրիկս։ Նրանք կարող են մեզ հետևել պատուհանից... Իսկ այժմ,

— ասաց նա, յերբ վարագույրներն իջեցրի,— պետք է վորոնել սնդուկի բանալին։ Բայց յես կուզենայի իմանալ, թե ով սիրտ կանի մեռելին ձեռք տալ։

Այս ասելիս, նա մինչև անգամ քիչ հեկեկաց։

Ցես չոքեցի։ Հատակի վրա, նավապետի ձեռքի մոտ, ընկած եր մի փոքրիկ թղթի կտոր մի կողմին սեվ դույն քսված։ Ցես չկասկածեցի, որ սև նշանը հենց սա յե։ Արագ վերցրի թուղթը և նկատեցի, որ մյուս յերեսի վրա, գեղեցիկ, պարզ թուղթը և նկատեցի, որ մյուս յերեսի վրա, գեղեցիկ, պարզ ձեռագրով գրված է՝ «ժամանակ ենք տալիս մինչև յերեկոյան ժամի 10»։

— Նրանք կգան ժամի 10-ին, մայրիկ, — ասացի յես։

Ցեվ հենց այդ վայրկյանին մեր հին ժամացույցն սկսեց խփել։ Այս հանկարծակի լսած ձայնն ստիպեց մեզ ուժեղ ցնցվել։ Բայց ուրախացրեց մեզ, վորովհետև ժամի վեցն եր միայն։ Բայց ուրախացրեց մեզ, վորովհետև ժամի վեցն եր միայն։

— Դե, Ջիմ,— ասաց մայրս,— վորոնիր բանալին։

Ցես նավապետի գրպանները մեկը մյուսի յետևից քրքրեցի։ Մի քանի մանր դրամ, մի մատնոց, թել ու հասամ ասեղ, մի կտոր ծայրը կծված ծխախոտ, ծուռ կոթ ունեցող մի դանակ, մի կտոր ծայրը կծված ծխախոտ, ծուռ կոթ ունեցող մի դանակ, գրպանի կողմնացույց, հրահան, ահա այն բոլորը, ինչ վոր գտա։ Ցես արդեն սկսեցի հուսահատվել։

— Կարելի յե վզին և,— ասաց մայրիկս։

Զվանքս հաղթահարելով, յես պատռեցի նրա շապկի ոձիքը։ Ցեվ իսկապես, յուղոտված թելի վրա, վորը յես իսկույն կտրեցի նավապետի սեփական դանակով, կախված եր բանալին։

Այս հաջողությունը մեզ հույս ներշնչեց և մենք շտապեցինք վերև, այն փոքրիկ սենյակը, վորտեղ այնքան յերկար ժամանակ ապրել եր նավապետը և վորտեղ, գալու որից, գտնվում եր նրա սնդուկը։

Արտաքինով դա մի սովորական նավատու սնդուկ եր։ Խուփի վրա յերևում եր Բ տառը, վորը փորագրված եր տաքացրած յերկաթով։ Անկյունները տրորված ու մաշված եյին, կարծես այդ սնդուկը յերկար ու դժվարին ծառայություն եր կատարել։

— Բանալին տուր,— ասաց մայրիկս։

Կողպեքը դժվար եր բացվում, այնուամենայնիվ հաջողվեց բաց անել և նա մի վայրկյանում խուփը յետ գցեց։

Ծխախոտի և կուպրի ուժեղ հոտ փչեց։ Ամենից առաջ մենք տեսանք մի նոր, լավ մաքրված ու արդուկված և, մորս ասելով,

վոչ մի անգամ չհագնված կոստյում։ Կոստյումը բարձրացնելով, մենք գտանք մի կույտ զանազան իրեր։ Յերկնային մարմինների բարձրությունը չափելու գործիք (կվադրանտ), մի թիթեղյա գավաթ, մի քանի կտոր ծխախոտ, յերկու զույգ գեղեցիկ ատբրճանակ, մի կտոր արծաթ, մի հին իսպանական ժամացույց, մի քանի եժանագին, բայց գլխավորապես արտաքսահանում արտադրած, մանր-մունր իրեր, մի զույգ կողմնացույց պղնձե շրջանակով և հինգ կամ վեց հրաշալի խեցի Հնդկաչինից։ Հետագայում յես հաճախ մտածում եյի, թե ինչու նավապետը, այդպիսի թափառական, վտանգավոր, հանցավոր կյանք ունենալով, քաշ եր տալիս իր յետևից այդ խեցիները։

Սակայն ուրիշ թանգարժեք առարկա, բացի արծաթի կտորից և մանր-մունր բաներից, մենք չգտանք։ Մեզ փողեր հարկավոր, միայն փող։ Անդուկի տակ գտնվում եր մի հին ծովային թիկնոց, վորն աղի ջրից օպիտակել եր։ Մայրիկ անհամբերությամբ յետ գցեց թիկնոցը և մենք տեսանք սընդուկում գտնվող վերջին իրերը. թղթի կապոցի պես մոմլաթում փաթաթված մի ծրար և քաթանի տոպրակ, վորի մեջ, ձայնից դատելով, վոսկի կար։

— Յես ցույց կտամ այդ ավազակներին, վոր ազնիվ կին եմ։ Յես կվերցնեմ միայն այնքան, ինչքան նա ինձ պարտեր, վոչ մի ֆարթինգ ավելի։

Յեվ նա սկսեց համրել փողը և լցնել այն պայուսակը, վոր յես բռնել եյի։

Սա դժվար և յերկար ժամանակ խլող գործ եր։ Այստեղ հավաքված և խառնված եյին զանազան տեսակի և յերկրների փողեր... և՛ դուբլոններ, և՛ լուիդորներ, և՛ գինեյներ, և՛ պիաստրներ*) և ելի ուրիշ փողեր, վորոնք ինձ անծանոթ եյին, գինեյները ամենից քիչ եյին, իսկ մայրիկս միայն գինեյներն եր հաշվել կարողանում։

Յերբ նա հաշվեց այն գումարի կեսը, վոր պարտ եր մեզ նավապետը, յես հանկարծ նրա ձեռքը բռնեցի։ Խաղաղ և սառնամանիքոտ ողում մի ձայն լսեցի, վորից արյունը սառավ իմ յերակներում — կույրի ձեռնափայտի թխկոցը սառած ճանապարհի վրա։ Թխկոցը մոտենում եր և մենք, շնչառությունս

*) Պիաստրը և դուբլոնն իսպանական փողեր են, լուիդորը՝ ֆրանսիական, Գինեյը՝ անգլիական։

պահած, լռում էինք։ Հետո լսվեց մի ուժեղ զարկ պանդոկի դռանը, դրանից հետո դռան բռնակը շարժվեց, նիգը զնգաց —ով վոր մեկը փորձում եր ներս մտնել։ Ներսում ու դրսում հանդարտություն տիրեց։ Յեվ վերջապես կրկին լսվեց ձեռնափայտի թխկոցը։ Թխկոցը հեռանում եր և շուտով էլ չլսվեց։ Այս հանգամանքը մեզ աննկարագելի ուրախություն պատճառեց։

—Մայրիկ,— ասացի յես,— վերցրու բոլորը, շուտով փախչենք։

Յես համոզված էյի, վոր նիգով փակված դուռը կույրին կասկածելի թվաց և վոր նա այստեղ կբերի իր վողջ իշամեղվի բունը։

Համենայն դեպս ինչ լավ է, վոր յես գլխի ընկա և դուռը նիգով փակեցի։

Սակայն մայրիկս, չնայած իր յերկյուղին, չեր համաձայնում վոչ մի կոպեկ ավելի վերցնել նրանից, ինչ վոր հասնում եր մեզ և միաժամանակ համառորեն չեր համաձայնում քիչ վերցնել։ Նա ասում եր, վոր դեռ ժամի յոթը չկա, վոր մենք շատ ժամանակ ունենք։ Նա գիտի իր բոլոր իրավունքները և վոչ վոքին չի զիջի։ Նա համառորեն վիճում եր ինձ հետ մինչև այն ժամանակ, յերբ հանկարծ յերկարատև հանդարտ շվոցի ձայն լսեցինք, վորը յեկավ հեռվից, բլրի վրայից։ Մենք միանգամից հակաճառությունը դադարեցրինք։

—Յես կվերցնեմ այն, ինչ վոր հաշվել եմ,— վոտի կանգնելով ասաց մայրիկս։

—Իսկ յես կվերցնեմ և այս, ուղիղ հաշվի համար,— ասացի յես, վերցնելով մոմլաթի մեջ փաթաթված թղթի կապոցը։

Մի բոպեյից հետո մենք արդեն ներքևում էյինք։ Մոմը մնաց դատարկ սնդուկի մոտ։ Յես դուռը բաց արի և մենք ճանապարհը դուրս յեկանք։ Վոչ մի բոպե կորցնել չեր կարելի։ Մշուշն արագ ցրվում եր։ Լուսինը սաստիկ փայլում եր։ Միայն հովտի խորքում և պանդոկի դռան մոտ միգոտ մշուշի յերերուն քող կար, կարծես նրա համար, վոր թաղցնի մեր փախուստի առաջին քայլերը։ Բայց արդեն ճանապարհի կիսին, քիչ վերև, բլրի ստորոտում, մենք անխուսափելի կերպով պետք և լուսնի լույսի շերտի մեջ ընկնելինք։

Հեռվից մենք լսեցինք մեկի արագ մոտեցող քայլերի ձայնը։ Մենք յետ նայեցինք և տեսանք մի թռչող լապտեր —ով վոր մեկը լապտերը ձեռքին գալիս եր։

—Սիրելիս,— ասաց մայրիկս,— փողերը վերցրու և փախիր։ Յես զգում եմ, վոր իսկույն կուշաթափվեմ։

«Յերկուսս էլ կորանք», վճռեցի յես։ Ինչպես էյի անիծում յես մեր հարևանների վախկոտությունը։ Ինչպես էյի բարկանում խեղճ մայրիկի վրա, նրա ազնվության, նրա համեստության և ներկայիս թուլության համար։

Բարերախտաբար անցնում էյինք մի ինչ վոր փոքրիկ կամրջի մոտով։ Յես մայրիկիս ոգնեցի, վոր ներքև իջնի։ Նա հառաչեց և ընկավ ուսիս վրա։ Զգիտեմ, թե վորտեղից յես ուժ առա, սակայն նրան քաշ տվի ներքև, առվակի մոտ։ Վախենում եմ վոր շատ կոպտորեն արած լինեմ այդ։ Կամուրջը ցածր եր և նրա տակ շարժվել կարելի յեր միայն չորեքթաթ արած։ Յես սողացի առաջ, կամարի տակ, բայց մայրս համարյա ամբողջովին տեսանելի յեր։ Մենք գտնվում էյինք պանդոկից մի քանի քայլ հեռավորության վրա։

ԳԼՈՒԽ V

ԿՈՒՑՐԻ ՎԱԽՃԱՆԸ

Պարզվեց, վոր իմ հետաքրքրությունը յերկյուղից ուժեղ եր։ Տեղումս նստել չկարողացա։ Զգուշությամբ դուրս յեկա կամրջի տակից և թաղնվեցի թփի յետևին։ Այստեղից յես պարզ տեսնում էյի պանդոկի դռան առջևի ճանապարհը։

Հենց վոր գրավեցի դիտարանը, իսկույն թշնամիները հայտնվեցին։ Նրանք յոթ կամ ութ հոգի էյին։ Նրանք, բարձր և անկանոն կերպով կոշիկները գետնին զարկելով, արագ մոտենում էյին։ Ձեռքին լապտեր ունեցող մարդը վազում եր առջևից։ Նրան հետևում էյին յերեք հոգի, ձեռք-ձեռքի տված։ Չնայած մշուշին, յես նկատեցի, վոր այս յեռյակի մեջտեղի մարդը կույր մուրացիկն է։ Հետո լսեցի նրա ձայնը և համոզվեցի, վոր նա յե։

—Դուռը ջարդեցեք,— աղաղակեց նա։

—Իսկույն, պարոն,— ձայն տվին յերկու թե յերեք հոգի։

Յեվ նրանք գրոհ տվին «Ծովակալ Բենբոու»-ի տան վրա։ Դռան մոտ նրանք կանգ առան և սկսեցին շշնջալով խորհրդակցել։ Յերևի, զարմացան, վոր դուռը փակված չե։ Հետո

կրկին լսվեցին կույրի հրամանները։ Նրա անհամբեր կատաղի ձայնը գնալով բարձրանում էր։

— Տունը մտեք։ Տունը մտեք։ Տունը մտեք,— գոչում էր նա, անիծելով նրանց դանդաղաշարժությունը։

Զորս թե հինգ հոգի տուն մտան, յերկուսը մնացին ճանապարհին սարսափելի կույրի հետ։ Հետո, մի քանի րոպե հանգստությունից հետո, զարմանքի ճիչ բարձրացավ և մեկի ձայնը ներսից աղաղակեց։

— Բիլլին մեռած է։

Սակայն կույրը կրկին հայհոյեց նրանց, վոր այդպես դանդաղում են։

— Խուզարկեցեք նրան, անարգ դատարկապորտներ։ Մնացածդ գնացեք վերև սնդուկը բերելու,— հրամայեց նա։

Կոշիկներով թրխթրխկացնելով, նրանք բարձրացան մեր հնացած սանդուխքով և նրանց դռփյունից վողջ տունը դողաց։ Հետո ելի զարմացման աղաղակներ լսվեցին։ Նավապետի պատուհանի փեղկերը բացվեցին և ջարդված ապակու կտորները զրնգալով ներքև թափվեցին։ Պատուհանից մի մարդ դուրս նայեց։ Նրա գլուխը և ուսերը, լուսնյակի լույսի տակ, լավ յերևում էին։ Նա ձայն տվեց կույր մուրացիկին, վոր կանգնած էր ներքևում, ճանապարհին։

— Պյոռ, այստեղ մեզնից առաջ մարդիկ են յեղել։ Սընդուկը տակից գլուխ խառնել են։

— Իսկ ինչ վոր մենք վորոնում ենք, տեղն է,— ընդհատեց Պյուն։

— Փողերն այստեղ են։

— Փողերը սատանան տանի,— գոչեց կույրը։— Ցեռ խոսում եմ Ֆլինտի թղթերի մասին։

— Թղթերը չեն յերևվում,— ձայն տվեց մարդը։

— Ե՛յ, դուք, ներքևում գտնվողներ, տեսեք մեռելի մարմնի վրա չե՞ն արդյոք,— կրկին գոչեց կույրը։

Մյուս ավազակը, յերևի նրանցից, վորոնք մնացել էին ներքևում նավապետի դիակը խուզարկելու, հայտնվեց պանդոկի դռանը։

— Բիլլին մինչև մեր գալը խուզարկել են,— ասաց նա,— մեզ համար վոչինչ չեն թողել։

— Մեզ թալանել են այստեղի մարդիկ։ Այն շան ձագը,— գոչեց Պյուն։— Ափսոս, վոր նրա աչքերը չհանեցի... Նրանք քիչ առաջ այստեղ էին։ Ցերը յես ուզում էի մտնել, դուռը նիգով փակված էր։ Վորոնեցեք նրանց, տղերք։ Վորոնեցեք բոլոր անկյուններում։

— Այո՛, նրանք այստեղ յեղել են, նրանք թողել են վառված մոմ,— ասաց պատուհանում գտնվող մարդը։

— Վորոնեցեք։ Վորոնեցեք։ Վողջ տունը տակնուվրա արեք —կրկնում էր Պյուն, ձեռնափայտը թրխթրխկացնելով։

Յեվ ահա մեր հինավուրց պանդոկում մի՝ սարսափելի խառնաշփոթություն սկսվեց։ Ամեն տեղ ծանր քայլերի ձայն լսվեց։ Թափվեցին ջարդոտված կահույքի կտորները, ներքևում լսվեց։ Թափվեցին ջարդոտված կահույքի կտորները, ներքևում և վերևում դռներն այնպես ուժգին փակվեցին, վոր մինչև անգամ շրջակայքի ժայռերն այդ կատաղի դղրդյունին ձայնակցեցին։ Բայց բոլորն իզուր անցավ. մարդիկ, մեկը մյուսի յետևից ճանապարհը դուրս յեկան և զեկուցեցին, վոր մեզ վոչ մի տեղ չգտան։

Այդ վայրկյանին հեռվից կրկին լսվեց այն շվոցը, վորն այնպես վախեցրեց ինձ և մայրիկիս, մեռելի փողերը հաշվելիս։

Այս անգամ յերկու շվոց լսվեց։ Առաջ յես կարծում էի, թե կույրն այդ շվոցով իր ընկերներին գրոհի յե կանչում։ Սակայն այժմ նկատեցի, վոր շվոցը լսվեց գյուղի կողմից և գլխի ընկա, վոր դա բանդիտներին վտանգից նախազգուշացնող ազդանշան է։

— Ելի Դերկն է,— ասաց մեկը։— Լսում եք, նա յերկու անգամ շվացրեց։ Պետք է փախչել, տղերք։

— Փախչե՞լ։ Ախ, դուք, տխմարներ։ Դերկը յեղել է միշտ հիմար ու վախկոտ։ Նրան լսելու կարիք չկա։ Նրանք այս մոտիկ տեղերում են։ Հեռու փախչել չեին կարող։ Դուք պետք է նրանց գտնեք։ Վորոնեցեք, շներ։ Վորոնեցեք բոլոր տեղերը։ Ո՞, սատանա,— բացականչեց նա,— յեթե յես աչքեր ունենայի։

Այս բացականչությունը վորոշ չափով աշխուժացրեց ավազակներին։ Նրանցից յերկուսն սկսեցին արագ փնտռել ծառերի պուրակում, բայց ակամա, հազիվ շարժվելով։ Ինձ թվաց, վոր նրանք ավելի շատ մտածում էին փախուստի, քան մարդ փնտռելու մասին։ Մնացածները շվարած կանգնած էին ճանապարհին։

— Ձեր ձեռքին հազարներ կան, իսկ դուք ապուշների նման դանդաղում եք։ Յեթե գտնեք այդ թուղթը, թագավորից հարուստ կդառնաք։ Այդ թուղթն այստեղ է, յերկու քայլի վրա՝ իսկ դուք վորոնելուց խուսափում և փախչելու առիթ եք փնտ-

ռում։ Ձեր մեջ մի համարձակ մարդ չգտնվեց, վորը վտանգն աչքի տակ առած, գնար Բիլլիի մոտ և նրան սև նշան տար։ Ելի յես տարա, կույրս։ Ձեր պատճառով յես այժմ կորցնում եմ իմ բախտավորությունը։ Յես պետք է սողամ չքավորության մեջ և գրոշներ խնդրեմ մի բաժակ խմելիքի համար, այնինչ կարող եյի կառքով ման գալ։

— Բայց չե՞ վոր փողերը մեզ մոտ են,— ասաց մեկը։

— Իսկ թուղթը, յերևի, նրանք՞ թաղցրել են,— ավելացրեց մյուսը։— Փողերը վերցրու, Պյու, և դիվոտելուդ վերջ տուր։

Պյուն, ճիշտ վոր, դեվի նման եր։ Ավազակների վերջին առարկությունները վերջնականապես կատաղեցրին նրան։ Սաստիկ զայրացած, նա բարձրացրեց իր գավազանը և կույր-կույր հարձակվելով իր ընկերների վրա, սկսեց նրանց պարզևատրել հարվածներով

Նրանք իրենց հերթին չարագործին պատասխանում եյին հայհոյանքներով, վորոնց հետևում եյին սարսափելի սպառնալիքները։ Նրան շրջապատած, փորձում եյին բաց անել մատները և խլել գավազանը նրա բռունցքից։

Այս վեճը մեզ համար փրկություն եր։

Յերբ նրանք կռվում եյին և իրար հայհոյում, բլուրներից, գյուղի կողմից սլացող ձիերի դոփյունն լսվեց։ Համարյա հենց նույն վայրկյանին ատրճանակի կրակոց լսվեց և կրակ փայլեց։ Այդ վերջին ազդանշաններ։ Դա նշանակում եր, վոր վտանգը մոտ է։ Ավազակներն այս ու այն կողմ ընկան — մեկը ծովախորշի ճանապարհով դեպի ծովը, մյուսները՝ բլրի լանջով դեպի վեր։ Կես րոպեյից հետո, ճանապարհին միայն Պյուն մնաց։ Կույրին մենակ թողեցին — դուցե յերկյուղից նրան մոռացան, դուցե և, դիտմամբ, հարվածների և հայհոյանքի համար վրեժ լուծեցին։ Մնալով մենակ, նա կատաղությամբ գավազանը խփում եր ճանապարհին և ձեռքերը պարզած կանչում ընկերներին, սակայն վերջնականապես մոլորվեց և՝ փոխանակ դեպի ծովը գնալու, վազեց գյուղի ուղղությամբ։

Նա սլանում եր ինձանից մի քանի քայլ հեռավորության վրա և լացակումած ասում։

— Ջոնսի, Սեվ Դամփ, Դերկ։ Չե՞ վոր դուք չեք թողնի ծերունի Պյուին, թանգագին ընկերներ, չե՞ վոր դուք չեք լքի ծերուն ի Պյուին։

Այնինչ ձիերի դոփյունը մոտենում եր։ Արդեն կարելի

յեր տեսնել հինգ կամ վեց ձիավոր, լուսնի լույսով լուսավորված։ Նրանք արագ բլրից ներքև եյին սլանում։

Այստեղ միայն կույրը գլխի ընկավ, վոր այնտեղ չի գնում, ուր հարկավոր է։ Աղաղակելով, նա շրջվեց, վազեց ուղիղ դեպի ճանապարհի մոտի առուն և ընկավ նրա մեջ։ Բայց իսկույն վոտի կանգնեց և ցնորվելով, դուրս մագլցեց ճանապարհը և ընկավ ամենից առաջ վազող ձիու վոտների տակ։

Ձիավորն ուզեց ազատել նրան, բայց արդեն ուշ եր։ Կույրի հուսահատ ճիչը կարծես թե պատռեց գիշերային խավարը։ Ձիու չորս սմբակները ճխլեցին և տրորեցին նրան։ Նա ընկավ կողքի վրա, կամաց շուռ յեկավ մեջքի վրա և այլևս չշարժվեց։

Յես վոտի կանգնեցի և ձիավորներին ձայն տվի։ Նրանք խմբվել եյին կույրի շուրջը, տեղի ունեցած դժբախտությունից վախեցած։ Յես իսկույն ճանաչեցի նրանց։ Ամենից վերջինն այն դեռահասն եր, վորը համաձայնեց գնալ բժիշկ Լիվսիի յետևից։ Մնացածները մաքսատան պահնորդներ եյին, վորոնց նա հանդիպել եր ճանապարհին։ Նրա խելքը կտրել եր ոգնության կանչելու նրանց։ Ինչ վոր մի նավի մասին Լոգովո Կիտտում լսել եր մաքսատան պետ պարոն Դենսը։ Ճանապարհը դեպի Լոգովո Կիտտն անցնում եր մեր պանդոկի մոտով և Դենսն իսկույն, իր խմբի ուղեկցությամբ, սլացավ այնտեղ։ Շնորհիվ այս բախտավոր պատահականության յես և մայրս ազատվեցինք անխուսափելի մահից։

Պյուն սպանված եր տեղնուտեղը։ Մայրիկիս տարանք գյուղը։ Այնտեղ հոտավետ աղ հոտ քաշել տվին, յերեսին սառը ջուր լցրին և նա սթափվեց։ Չնայած նրա կրած յերկյուղին, այնուամենայնիվ չեր դադարում գանգատվելուց, թե ժամանակ չունեցավ նավապետի փողերից վերցնել այնքան, վորքան իրավունքով պատկանում եր նրան։

Այդ ժամանակ մաքսատան պետ Դենսն իր խմբի հետ ճանապարհվեց Լոգովո Կիտտա։ Բայց վորովհետև պահնորդները վախենում եյին, վոր դարան մտած մարդիկ կարող են լինել, այդ պատճառով ել իջան առվակի ափը, ձիերից իջան և նրանց ոտանձերից քաշելով առաջ գնացին։ Յեվ բնական է. այն ժամանակ, յերբ նրանք վերջապես հասան ծովախորշին, նավն արդեն խարխսիը բարձրացրել եր, թեպետ և ափից հեռու չեր գտնվում։ Դենսը ձայն տվեց, վորին պատասխանեց մի ձայն, վորը խորհուրդ եր տալիս նրան խուսափել լուսնի լույսով լու-

սավորված վայրերից, յեթե չի ուզում իր մարմնի մեջ արճճի լավ բաժին ստանալ։ Ցեվ իսկույն նրա ուսից մոտ մի գնդակ սուլեց։ Շուտով նավն իր արագությունը կրկնապատկեց և անհայտացավ։ Պարոն Դենսը, ինչպես ինքն ասաց, վոր ինքը կանգնած եր ծովափին, ինչպես «ծովից դուրս շպրտված ձուկ»։ Նա իսկույն մարդ ուղարկեց Բ..., վոր իսկույն նավ ուղարկեն ծովը։

— Բայց, այնուամենայնիվ իզուր,— ասաց նա։— Նրանց ել հասնել չի կարելի։ Ցես ուրախ եմ, վոր պարոն Պյուշի կոշտը կոխ տվի։

Ցես նրա հետ վերադարձա «Ծովակալ Բենբոու»։ Դժվար է նկարագրել, թե ինչպիսի ավերում եր։ Բանդիտները, ինձ ու մորս վորոնելիս, մինչև անգամ պատի ժամացույցը պոկել եյին։ Ցեվ, թեև իրենց հետ վոչինչ չեյին տարել, բացի նավապետի փողի տոպրակը և մեր դրամարկղից մի քանի արծաթե դրամներ, ինձ համար միանգամայն պարզվեց, վոր մենք սնանկացել ենք։

Պարոն Դենսը յերկար ժամանակ վոչինչ չեր կարողանում հասկանալ։

— Ասում ես նրանք փող են վերցրել։ Բացատրիր ինձ, Գոկինս, ել ինչ եր նրանց պետք։ Նրանք ելի ուրիշ փող եյին վորոնում։

— Վոչ, պարոն, փող չեյին վորոնում,— պատասխանեցի յես։— Ինչ վոր նրանք փնտռում եյին, ինձ մոտ է, գրպանումս։ Ճշմարիտն ասած, յես կուզենայի այդ բանն ավելի ապահով տեղ դնել։— Ճշմարիտ է, տղա, ճշմարիտ է,— ասաց նա։— Յեթե ուզում ես, տուր ինձ։

— Ցես մտածում եյի տալ բժիշկ Լիվսիին...— սկսեցի յես։

— Ճիշտ է,— յեռանդով ընդհատեց նա։— Ճիշտ է։ Բժիշկ Լիվսին ջենտլմեն է և դատավոր։ Թերևս յես ել պետք է գնամ նրա, կամ կալվածատիրոջ մոտ և զեկուցեմ պատահած դեպքի մասին։ Ջե՞ վոր այսպես, թե այնպես, սպանություն է պատահել։ Ցես այդ մասին յերբեք չեմ ափսոսում, բայց կարող են գտնվել մարդիկ, վորոնք մեղքը կդցեն ինձ, թագավորական մաքսատան պետիս վրա։ Գիտես ինչ, Գոկինս, գնանք ինձ հետ։ Ցես քեզ հետս կտանեմ, յեթե ցանկանում ես։

Ցես շնորհակալություն հայտնեցի և մենք գնացինք գյուղը, վորտեղ ձիերն եյին գտնվում։ Մինչև վոր մնաս բարով եյի ասում մայրիկիս, բոլորն արդեն ձի եյին նստել։

— Դոգգեր,— ասաց պարոն Դենսը,— քո ձին լավ է, այս քաջ տղային դիր ձիուդ գավակին։

Հենց վոր յես նստեցի ձիու գավակին և Դոգգերի դոտին բռնեցի, մաքսատան պետը հրամայեց ճանապարհ ընկնել և խումբը սլացավ ճանապարհով դեպի բժիշկ Լիվսիի տունը։

ԳԼՈՒԽ VI

ՆԱՎԱՊԵՏԻ ԹՂԹԵՐԸ

Մենք արագ սլանում եյինք և վերջապես կանգ առանք բժիշկ Լիվսիի դռանը։ Տան ճակատը պատած եր խավարով։

Պարոն Դենսն ինձ հրամայեց ձիուց ցած թռչել և դուռը ծեծել։

Աղախինը դուրս յեկավ։

— Բժիշկ Լիվսին տանն է,— հարցրեցի յես։

— Վոչ,— պատասխանեց նա։— Նա կեսորից հետո տուն վերադարձավ, իսկ այժմ գնացել է կալվածատունը, ճաշելու և յերեկոն կալվածատիրոջ հետ անցկացնելու։

— Այդ դեպքում մենք գնում ենք այնտեղ,— ասաց պարոն Դենսը։

Կալվածատունը հեռու չեր։ Ցես մինչև անգամ ձի չնստեցի, այլ Դոգգերի ասպանդակից բռնած, ձիու կողքից վազեցի։

Գուրակի դարպասը յերևաց։ Ցերկար, անտերև, լուսնի լույսով լուսավորված ծառուղին տանում եր դեպի հեռվում սպիտակին տվող կալվածատունը, վորը շրջապատված եր հինավուրց այգով։ Պարոն Դենսը ձիուց ցած թռավ և ինձ տարավ կալվածատունը։ Մեզ իսկույն ներս թողին։

Ցերկար միջանցքով, վորի վրա գորգ եր փռված, ծառան մեզ տարավ տանտիրոջ առանձնասենյակը։ Առանձնասենյակի պատերի մոտ գրքի պահարաններ եյին դրված։ Ցուրաքանչյուր պահարանի վրա մի կիսանդրի կար։ Կալվածատերը և բժիշկը, պայծառ կրակի մոտ նստած, ծխում եյին։

Կալվածատիրոջն այդքան մոտիկից չեյի տեսել։ Նա մի բարձրահասակ, վեց ֆուտից ավելի յերկարություն ունեցող տղամարդ եր, հաստ, մռայլ դեմքով, յերկար ճաղամարդ եր, հաղթանդամ, հաստ, մռայլ դեմքով, յերկար ճանապարհորդության ժամանակ կոպտացած և քամահար դարձած։ Նա ուներ սեվ, շարժուն ունքեր, վորոնք արտահայտում եյին

վոչ թե չարութիւն, այլ բարձրամիտ և դյուրագրգիռ բնավորութիւն։

— Մտեք, պարոն Դենս,— ասաց նա հպարտութիւնամբ և ներողամտորեն։

— Բարի՞ յերեկո։

— Բարի՞ յերեկո, Դենս,— ասաց բժիշկը և գլխով արավ։ —Բարի՞ յերեկո, Ջիմ բարեկամ։ Այդ ի՞նչ բարեհաջող քամի՞ յե ձեզ այստեղ բերել։

Մաքսատան պետն ուղղվեց, ձեռները ցած պարզեց և, ինչպես սովորած դաս, պատմեց մեր բոլոր արկածները։ Դուք տեսնելիք, թե ինչ բաղմանշանակալից կերպով նայեցին իրար այդ յերկու ջենտլմենները, նրա պատմելու ժամանակ։ Նրանք այնպիսի հետաքրքրութիւնամբ եյին լսում, վոր մինչև անգամ ծխելը դադարեցրին։ Իսկ յերբ լսեցին, թե ինչպես մայրիկս գիշերով գնաց մեր տունը, բժիշկ Լիվսին իր ազդրին խփեց, իսկ կալվածատերը գոչեց «կեցցե» և կոտրեց իր յերկար ծխամորճը, բուխարու վանդակին խփելով։ Պարոն Տրելոնին (յեթե հիշում եք, այդպես եր կոչվում կալվածատերը) վաղուց եր թողել իր բազկաթոռը և շրջում եր սենյակում, իսկ բժիշկը, լավ լսելու նպատակով, գլխից վերցրեց իր դիմափոշոտ կեղծ ծամը։ Տարորինակ եր տեսնել նրան առանց կեղծ ծամի, սև, կարճ խուզած մազերով։

Վերջապես պարոն Դենսն իր պատմությունը վերջացրեց։

— Պարոն Դենս,— ասաց կալվածատերը,— դուք ազնիվ եք։ Դուք արիություն եք կատարել, ճղմելով ամենաարյունարբու չարագործներից մեկին։ Այդպիսիներին պետք է ճղմել, ինչպես ճղմում են ուտիճներին։ Գոկինս, յես տեսնում եմ, վոր դու էլ քաջ յերիտասարդ ես։ Այն զանգը զանգահարիր, Գոկինս։ Պարոն Դենսը պետք է գարեջուր խմի։

— Ուրեմն, Ջիմ,— ասաց բժիշկը,— ինչ վոր նրանք վորոնում եյին քեզ մոտ է։

— Ահա,— ասացի յես և պարզեցի մոմլաթում փաթաթած ծրարը։

Բժիշկը բոլոր կողմից դիտեց ծրարը։ Ըստ յերևույթին նա ուզում եր ծրարը շուտ բաց անել, բայց իրեն հաղթահարեց և հանդարտ ծրարը գրպանը դրեց։

— Կալվածատեր,— ասաց նա,— յերբ Դենսը գարեջուր խմի, պետք է վերադառնա իր ծառայության պարտականությունները կատարելու։ Իսկ Ջիմ Գոկինսը պետք է այս գիշեր ինձ մոտ քնի։ Յեթե թույլ կտաք, յես կխնդրեմ, վոր նրան ընթրիքին սառը մսակարկանդակ տան։

— Իհարկե, խնդրեմ, Լիվսի,— ասաց կալվածատերը։— Գոկինսն այսոր այդ բանին ավելի քան արժանացել է։

Իմ առաջ, փոքրիկ սեղաններից մեկի վրա, դրին աղավնու մսից կարկանդակի մի մեծ բաժին։ Յես դայլի նման քաղցած եյի և մեծ հաճույությամբ ընթրեցի։ Իսկ այդ ժամանակ Դենսը, շատ նոր գովասանքներ լսելով, հեռացավ։

— Դե, կալվածատեր,— ասաց բժիշկը։

— Դե, բժիշկ— ասաց կալվածատերը։

— Միաբերան,— ծիծաղեց բժիշկ Լիվսին։ Հուսով եմ, վոր —դուք այն Ֆլինտի մասին լսել եք։

— Լսե՞լ եմ արդյոք Ֆլինտի մասին,— բացականչեց կալվածատերը։— Դուք հարցնում եք, լսե՞լ եմ յես Ֆլինտի մասին։ Դա յերբեվիցե ծովի վրա լողացող ծովահեններից ամենաարյունարբուն է։ Սև Մորուքը նրա մոտ մանուկ է։ Իսպանացիներն այնպես եյին վախենում նրանից, վոր խոստովանում եմ, պարոն, յես յերբեմն հպարտանում եյի, վոր նա անգլիացի յե։ Մի անգամ Տրինինդադ կղզու մոտ յես տեսա նրա առագաստները, բայց մեր նավապետն այնպես վախեցավ, վոր իսկույն նավը շրջեց և վերադարձավ Պորտ-Ռոյ-Սպեն*)։

— Յես նրա մասին լսել եմ այստեղ, Անգլիայում։— Բայց ահա մի հարց. նա փող ունե՞ր արդյոք։

— Փող,— բացականչեց կալվածատերը։— Մի՞թե դուք չլսեցիք, թե ինչ եր պատմում Դենսը։ Բացի փողից, ուրիշ ի՞նչ կարող եյին փնտռել այդ չարագործները։ Բացի փողից ի՞նչ է հարկավոր նրանց։ Ինչո՞ւ համար, բացի փողից, նրանք վտանգի կենթարկեցին իրենց կաշին։

— Մենք իսկույն կիմանանք, թե ինչու համար են նրանք իրենց կաշին վտանգի յենթարկել,— պատասխանեց բժիշկը։ — Դուք այնպես բորբոքվում եք, վոր չեք թողնում յես խոսեմ։ Ահա թե ինչ կուզենայի պարզել։ յենթադրենք, թե, այստեղ, իմ գրպանում, գտնվում է մի բանալի, վորի ոգնությամբ կարելի յե իմանալ, թե Ֆլինտը վորտեղ է թաղցրել իր

*) Պորտ-Ռոյ-Սպենը Տրինիդադ կղզու մայրաքաղաքն է։

գանձը։ Արժե արդյոք ջանք գործ դնել և ձեռք բերել այդ գանձը։

— Ձեռք բերել, պարոն,— գոչեց կալվածատերը։— Արժե ձեռք բերել։ Լսեցեք։ Եթե իսկապես մեր ձեռքին գտնվում է մի բանալի, որի մասին դուք ասում եք, ես իսկույն Բրիստոլի նավաշինարաններում պատրաստել կտամ համապատասխան նավ, հետս կվերցնեմ ձեզ Գոկինսին և կգնամ ձեռք բերելու այդ գանձը, նույնիսկ, եթե վորոնելու լինելինք մի ամբողջ տարի։

— Հրաշալի յե,— ասաց բժիշկը։— Այդ դեպքում, եթե Ջիմը համաձայն է, եկեք ծրարը բաց անենք։

Եվ նա ծրարը դրեց իր առջև՝ սեղանի վրա։

Ծրարն ամուր կարված եր թելով։ Բժիշկը հանեց իր գործիքների արկղը և վիրահատության մկրատով թելերը կտրեց։ Ծրարի մեջ յերկու բան կար— մի տետր և մի կնքված ծրար։

— Նախ նայենք տետրը,— առաջարկեց բժիշկը։ Նա սիրալիր կերպով կանչեց ինձ իր մոտ, վոր կարողանամ մասնակցել գաղտնիքը բաց անելուն, և սկսեց տետրը թերթել։ Կալվածատերը և յես, նրա ուսի վրայից, հետաքրքրությամբ նայում եյինք։

Տետրի առաջին յերեսի վրա խզմզված եյին ամեն տեսակի տառեր։ Յերևում եր, վոր այդ գրերը գրել են պարապմունքից, կամ գրիչ փորձելու համար։ Ի միջի այլոց այստեղ կար և այն մակագրությունը, վոր նավապետը կտածել եր իր ձեռքի վրա. «Թող կատարվեն Բիլլի Բոնսի յերազանքները» և ուրիշները, որինակ. «Պարոն Վ. Բենս, զեկապետ», «Բավականի ռում», «Արմավենիների ծովափին նա ստացավ բոլորը, ինչ իրեն հասնում եր», կային և ուրիշ մակագրություններ, բոլորովին անհասկանալի, վորոնք բաղկացած եյին գլխավորապես մի բառից։ Ինձ շատ հետաքրքրեց, թե ով է յեղել նա, վորն ստացել է «ինչ իրեն հասնում եր» և ինչ եր նրան հասնում։ Գուցե գանակի զարկ մեջքին։

— Այս եջից շատ բան չես հասկանա — ասաց բժիշկ Լիվսին։

Տասը կամ տասներկու հետևյալ յերեսները լիքն եյին տարորինակ հաշվապահությամբ։ Գծի մի ծայրին գրված եր թվական, իսկ մյուս ծայրին՝ գումար, ինչպես սովորաբար հաշվապահական մատյաններում։ Բայց բացատրությունների փոխարեն մեջտեղին գրված եյին զանազան թվի խաչեր։ Որինակ 1746 թվի հունիսի 12-ի թվով, նշանակված եր յոթանասուն ֆունտ ստերլինգ, բայց բացատրության փոխարեն, թե վորտեղից է այդ գումարը, գրված եր վեց խաչ։ Յերբեմն, սակայն, ավելացված եր տեղի անունը, որինակ. «Կարակասի դիմաց» կամ ուղղակի նշված եր լայնությունն ու յերկարությունը, որինակ. «62° 17′ 20», «19° 2′ 40»։

Գրանցումները կատարվել եյին համարյա քսան տարի։ Մուտք արված գումարները գնալով խոշորանում եյին։ Յեվ վերջում, հինգ կամ վեց չնչված սխալ գումարներից հետո գումար եր տված և տակը գրված. «Բենսի բաժինը»։

— Յես վոչինչ չեմ կարողանում հասկանալ,— ասաց բժիշկ Լիվսին։

— Այնինչ լույսի պես պարզ է,— բացականչեց կալվածատերը։— Մեր առաջ դրված է այդ անարգ շան մուտքի մատյանը։ Խաչերով փոխարինվում են ջրասույզ արված նավերը և տյանը։ Թվերը ցույց են տալիս այդ հոգեսպանի թալանած քաղաքները։ Բաժինն ընդհանուր ավարից։ Այնտեղ, ուր նա վախեցել է անճշտությունից, մի քանի բացատրություններ է գրել, որինակ. «Կարակասի դիմաց»։ Դա նշանակում է, վոր Կարակասի մոտ թալանվել է վորևե դժբախտ նավ։ Այդ նավով գնացող խեղճ ծովագնացները վաղուց փտում են կորալների մեջ։

— Ճիշտ է,— ասաց բժիշկը։— Ահա թե ինչ է նշանակում ճանապարհորդ լինելը։ Ճիշտ է։ Յեվ նրա բաժինն ավելանում եր, վորքան նա բարձրանում եր աստիճանով։

Ուրիշ վոչինչ չկար այս տետրում, բացի մի քանի վայրերի անուններից, վորոնք գրված եյին մաքուր թերթերի վրա և անգլիական, իսպանական ու ֆրանսիական դրամների դարձվող փողերի վերածելու աղյուսակներ։

— Խնայող մարդ է,— բացականչեց բժիշկը։— Նրան հաշվի մեջ չես կարող խաբել։— Իսկ այժմ,— ասաց կալվածատերը,— տեսնենք, թե ինչ կա այստեղ։

Ծրարը մի քանի տեղից կնքված եր, իբրև կնիք ծառայում եր մի մատանի, յերևի այն մատանին, վոր գտա նավապետի գրպանում։ Բժիշկն զգուշությամբ կտրեց կնիքները և սեղանի վրա ընկավ մի ինչ վոր կղզու քարտեզ, լայնությունն ու յերկարությունը, ափերի մոտ ծովի ջրի խորությունը, բլուրները, նեղուցները հրվանդանները նշանակված։ Առհասարակ այստեղ կար այն բոլորը, ինչ կարող է հարկավոր լինել առանց

վանգի յենթարկվելու, մի անհայտ կղզու մոտենալու և խարիսխ ձգելու դեպքում։

Կղզու յերկարությունն եր ինեը և լայնությունը՝ հինգ մղոն։ Կղզին նման եր ծառս յեղած գեր վիշապի։ Մենք նկատեցինք յերկու նավահանգիստ, վորոնք ծածկված եյին փոթորիկներից, մեջտեղը մի բլուր, վորը կոչվում եր Հեռադիտակ։

Քարտեզի վրա հետագայում արված շատ հավելվածներ կային։ Ամենից սուր կերպով աչքի եյին ընկնում կարմիր թանաքով արված յերեք խաչ, յերկուսը կղզու հյուսիսային մասում, իսկ մեկը՝ հարավ արևմտյան։

Այս վերջին խաչի մոտ, նավապետի խզմզածին չնմանվող, ձանը, պարզ ձեռագրով գրված եր.

«Գանձի գլխավոր մասն այստեղ է»

Քարտեզի հակառակ յերեսի վրա կային նույն ձեռագրով գրված բացատրություններ։

Ահա այդ բացատրությունները,

«Մեծ ծառ Հեռադիտակի ուսին, ուղղությունը դեպի հ. հ. հ. — ա —թց։
Կմախքի կղզին ա. հ. — ա. յեվ. ա. վրա.
Տասը ֆուտ։
Արծաթի կտորները հյուսիսային փոսումն են։ Կգտնես արևելյան բարձունքի լանջին, Սեվ ժայռից տասը սաժեն դեպի հարավ, յեթե կանդնես յերեսդ դեպի Սեվ ժայռը։
Զենքերը գտնելը հեշտ է, ավազոտ բլրի մեջ հյուսիսային հրվանդանի հ. ծայրին, ուղղվի ա. վրա և քառորդ կողմնատ դեպի հ.

Դ. Ֆ.»

Ուրիշ վոչինչ։ Այս գրանցումներն ինձ բոլորովին անհասկանալի եյին թվում։ Սակայն, չնայելով իրենց համառոտության, գրանցումները բժշկին և կալվածատիրոջը հիացմունք պատճառեցին։

— Լիվսի,— ասաց կալվածատերը,— դուք պետք է իսկույն դեն ձգեք ձեր վողորմելի պրակտիկան։ Վաղը յես գնում եմ Բրիստոլ։ Յերեք շաբաթից հետո... վոչ, յերկու շաբաթից հետո... վոչ, տասն որից հետո, մենք մի լավ նավ կունենանք, պարոն, և նավաստիների ամենաընտիր խումբն Անգլիայում։ Գոկինսը կլինի նավի փոքրավոր։ Դու հիանալի փոքրավոր կլինես, Գոկինս։ Դու, Լիվսի, նավի բժիշկը կլինես, իսկ յես— ծովա-



կալ։ Մենք մեզ հետ կվերցնենք Ռեդրեսին, Զոյսին և Գենտերին։ Բարեհաջող քամին կսլացնի մեզ մինչև կղզին։ Այդ գանձերը գտնելը շատ հեշտ է։ Մենք այնքան փող կունենանք, որ կարող կլինենք ուտել, լողանալ նրանց մեջ, շեղակի ջուրը նետել։

— Տրելոնի,— ասաց բժիշկը,— յես գալիս եմ ձեզ հետ։ Ցերաշխավորում եմ, որ յես ու Ջիմը կարդարացնենք ձեր վստահությունը։ Բայց մի մարդ կա, որին յես վախենում եմ վստահել։

— Ո՞վ է,— բացականչեց կալվածատերը։— Տվեք այդ չար անունը, պարոն։

— Դուք,— պատասխանեց բժիշկը,— որովհետև դուք գաղտնիք պահել չգիտեք։ Միայն մենք չենք, որ գիտենք այդ թղթերի մասին։ Այն ավազակները, որոնք այսոր յերեկոյան տակն ու վրա արին պանդոկը, ինչպես տեսնում եք, շատ համաբձակ մարդիկ են, և այն ավազակները, որոնք մնացել են նավի վրա, կանեն, իհարկե, կանեն ամեն մի հնարավոր բան, որ տիրանան գանձին։ Մենք առանձին—առանձին վոչ մի տեղ չպետք է յերևանք, մինչև ափից հեռանալը։ Ցես Ջիմի հետ կմնամ այստեղ մինչև գնալը։ Դուք Զոյսի և Գենտերի հետ ճանապարհ ընկեք Բրիստոլ։ Ցեվ, որ ամենագլխավորն է, մեր գյուտի մասին վոչ վոքի չպետք է հայտնենք։

— Լիվսի,— պատասխանեց կալվածատերը,— դուք միշտ ճշմարիտ եք։ Ցես գերեզմանի պես լուռ կլինեմ։

ՆԱՎԻ ԽՈՇԱՐԱՐԸ

ԳԼՈՒԽ VII

ՑԵՍ ԳՆՈՒՄ ԵՄ ԲՐԻՍՏՈԼ

Ճանապարհ ընկնելու նախապատրաստության համար ավելի շատ ժամանակ հարկավորվեց, քան կարծում եր կալվածատերը։ Ցեվ առհասարակ մեր բոլոր նախնական պլաններն ստիպված եյինք փոխել։ Նախ և առաջ, բժիշկ Լիվսիի ցանկությունը չբաժանվել ինձանից, չիրագործվեց. նրան անհրաժեշտ յեղավ գնալ Լոնդոն, բժիշկ գտնելու, որը նրա բացակայության ժամանակ փոխարիներ իրեն։ Կալվածատերը Բրիստոլում շատ գործ ուներ։ Իսկ յես ապրում եյի կալվածատանը, ծերունի վորսորդ Ռեդրեսի հսկողության տակ, համարյա ինչպես գերի, յերազելով անծանոթ կղզիների և ծովային արկածների մասին։ Բարեբախտաբար ուսումնասիրության վրա յերկար ժամանակ գործադրեցի յես նա անգիր արեցի կալվածատան վարիչի սենյակում, կրակի մոտ նստած, յես մաքով մոտենում եյի կղզուն զանազան կողմերից։ Ցես ուսումնասիրում եյի նրա յուրաքանչյուր վերջակը, հազար անգամ բարձրանում եյի Հեռադիտակ կոչվող բարձր բլուրը և այնտեղից հիանում նրա զարմանալի, մշտապես փոփոխվող տեսարաններով։ Ցերբեմն կղզին վխտում եր վայրենիներով և մենք պետք է պաշտպանվեինք նրանցից։ Ցերբեմն կղզին լիքն եր լինում գիշատիչ գազաններով և մենք պետք է փախչեինք նրանցից։ Բայց այս բոլոր յերևակայական արկածները դատարկ բաներ են, համեմատած այն տարորինակ

և վողբերգական արկածների հետ, վորոնք իսկապես տեղի ունեցան

Շաբաթն անցնում եր շաբաթի յետևից։ Վերջապես մի դեղեցիկ որ նամակ ստացանք։ Նամակը հասցեագրված եր բժիշկ Լիվսիին, սակայն ծրարի վրա մակագրված եր. «Յեթե բժիշկ Լիվսին դեռ չի վերադարձել, նամակը թող բաց անի Թոմ Ռեդրեսը կամ յերիտասարդ Գոկինսը»։

Պատռելով ծրարը, մենք կարդացինք, ավելի ճիշտ յես կարդացի, վորովհետև վորսորդը ջոկում եր միայն տպված տառերը, հետևյալ կարևոր հաղորդագրությունը.

«Հինավուց խարիսխ» հյուրանոց, Բրիստոլ. 1-ին մարտի 17... թիվ։

Թանկագին Լիվսի.

Զգիտենալով, թե վորտեղ եք դուք գտնվում, կալվածատերը կամ դեռևս Լոնդոնում, միաժամանակ գրում եմ յեվ այնտեղ, յեվ այստեղ։

Նավը գնված և սարքավորված է։ Նա խարիսխ գցած, կանգնած է, պատրաստ ծով դուրս գալու։ Մեր նավից ավելի լավը պատկերացնել է չի կարելի։ Փոքրիկ յերեխան ել կարող է այդ նավը ղեկավարել։ Տարողությունը 200 տոնն է։ Անունը՝ «Իսպանոլա»։

Նավը ձեռք բերելուն ոգնեց ինձ իմ հին ծանոթ Բլենդին, վորը զարմանալի ճարպիկ գործարար դուրս յեկավ։ Այդ սիրելի մարդը սեամորթի նման աշխատեց ինձ համար։ Ասենք, յուրաքանչյուրը Բրիստոլում աշխատում եր ոգնել ինձ, հարկավոր եր միայն ակնարկել, թե մենք ուղեվորվում ենք մեր գանձի յետևից...»

— Ռեդրեսա,— ասացի յես, ընդհատելով ընթերցանությունը։ — Բժիշկ Լիվսիին այս բանը բոլորովին չի դուր գա։ Ուրեմն կալվածատերը բերանը ցրել է...

— Իսկ ոչ է կարևոր, կալվածատերը, թե բժիշկը,— ասաց վորսորդը։— Մի՞թե կալվածատերը պետք է լռի, ինչ վոր բժիշկ Լիվսիի սիրաշահելու համար։

Յես գիտեի, վոր վիճելն անոգուտ է, այդ պատճառով ել ոկսեցի կարդալ շարունակությունը.

«Բլենդին ինքը վորոնեց ու գտավ «Իսպանոլան» և նրա ճարպկությանն շնորհիվ, նավը շատ եժան ձեռք բերեցի։ Ճիշտ է, Բրիստոլում կան մարդիկ, վորոնք Բլենդլուն տանել չեն կարող։ Նրանք հանդգնություն ունեն հաստատելու, իբրև թե այդ ազնիվ մարդը նենգություն է քաշում միայն շահի համար, իբրև թե «Իսպանոլան» նրան է պատկանում և իբր թե յեռակի գնով է վաճառել։ Այս գրպարտության ստությունն ակնհայտնի յե։

Վոչվոք չի համարձակվում ժխտել, վոր «Իսպանոլան» հիանալի նավ է։

Յես այդպես, նավը յես շատ դյուրությամբ ձեռք բերեցի։ Ճիշտ է, բանվորները շատ դանդաղ են սարքավորում, սակայն ժամանակով բոլորը պատրաստ կլինի։ Ավելի շատ ժամանակ կորցրի նավաստիներ ընտրելու վրա։

Յես ցանկանում եյի քսան մարդ վարձել, վայրենիների, ծովահենների կամ անիծված ֆրանսիացիների պատահելու դեպքում պաշտպանվելու նպատակով։ Յես արդեն ուժասպառ եմ լեղել, բայց գտել եմ միայն վեց հոգի, սակայն հետո բախտը խղճաց ինձ և յես գտա մի մարդ, վորը միանգամից այդ բոլորը կարգի բերեց։

Յես պատահաբար խոսեցի նրա հետ նավահանգստում։ Պարզվեց, վոր նա հին ծովագնաց է։ Ապրում է ցամաքի վրա և գինետուն ունի։ Ծանոթ է Բրիստոլի բոլոր ծովագնացների հետ։ Ցամաքի կյանքը քայքայել և նրա առողջությունը, նա ցանկանում է կրկին ծով դուրս գալ և նավի խոհարարի պաշտոն է վորոնում։ Այդ առավոտ, ինչպես ասաց նա, նավահանգիստ եր դուրս յեկել միայն այն պատճառով, վոր շնչի ծովային աղի ոդը։

Այդ սերը դեպի ծովը ինձ հուզիչ թվաց, ձեզ ել անպայման կհուզեր։ Յես խղճացի նրան և հենց այդտեղ ել առաջարկեցի նրան, վոր մեր նավի խոհարարը լինի։ Նրան կանչում են Յերկարոտանակ Ջոն Սիլվեր։ Նա մի վոտանի է։ Յեվ յես դա ամենալավ հանձնարարականն եմ համարում, վորովհետև նա վոտը կորցրել է հայրենիքի համար կռվելիս, անմահ Գոկի ղեկավարությամբ։ Նա կենդ-

սաթոշակ չի ստանում, Լիվսի։ Տեսնում եք, թե ինչ սարսափելի ժամանակներում ենք ապրում։

Այո, պարոն, յես կարծում եյի, թե յես խոհարար եմ գտել, բայց պարզվեց, որ գտել եմ ծովագնացների մի ամբողջ խումբ։ Սիլվերի ոգնությամբ ինձ մի քանի որվա մեջ հաջողվեց իսկական, փորձված, ովկիանոսից աղոտված ծովագնացներ վարձել։ Նրանց արտաքինն այնքան էլ գրավիչ չէ, բայց դրա փոխարեն, դատելով նրանց դեմքից, նրանք բոլորն էլ շատ քաջ մարդիկ են։ Ծովագնացների այդպիսի խումբ ունենալով, մենք կարող ենք կռվել թեկուզ մի ամբողջ մարտական առագաստանավի հետ։

Ցերկարահասակ Ջոնը մինչև անգամ խորհուրդ տվեց ինձ արձակել այն վեց թե յոթ մարդկանցից վոմանց, որոնց յես առաջ վարձել եյի։ Նա մի բոպեյում ապացուցեց, որ նրանք քաղցր ջրի կեղտաշորեր են, որոնց հետ չարժե կապվել այն ժամանակ, յերբ վտանգավոր ճանապարհորդության են դուրս գալիս։

Ցես ինձ շատ լավ եմ զգում. ուտում եմ յեղան պես, քնում՝ դերանի պես։ Այնուամենայնիվ լիովին բախտավոր չեմ լինի, մինչև որ քամին չուրցնի մեր առագաստները։ Դեպի բաց ծով։ Սատանան տանի գանձը։ Գլուխս ծովն է պտտացնում և վոչ թե գանձը։ Ցեվ այդպես, Լիվսի, շուտով յեկեք։ Ցեթե ինձ հարգում եք, վոչ մի ժամ էլ մնք կորցնի։

Թողեք, որ յերիտասարդ Գոկինսը գնա մորը մնաս բարև ասելու։ Ռեդրեսը կարող է ուղեկցել նրան։ Հետո թող յերկուսն էլ, առանց ժամանակ կորցնելու, Բրիստոլ շտապեն։

Ջոն Տրելոնի

Հետ գրությունը։ Մոռացա ձեզ հայտնել, որ Բլենդլին, որը, ի դեպ ասած, խոստանում է մի ուրիշ նավ ուղարկել մեզ ոգնության, յեթե ոգոստոսին չվերադառնանք, մեզ համար մի լավ նավապետ է գտել։ Այդ նավապետը հինգալի մարդ է, բայց, դժբախտաբար, սատանայի նման համառ է։ Ցերկարահասակ Ջոն Սիլվերը մեզ համար գտել է մի գործին տեղյակ ղեկապետ, անունը՝ Երրոու։

Իսկ յես, Լիվսի, մի ավագ նավաստի յեմ վարձել, որը փող փչել գիտե։ Ինչպես տեսնում եք, մեր թանգագին «Իսպանոլայի» վրա ամեն ինչ կլինի, որպես իսկական ռազմական նավի վրա։

Մոռացա գրել, որ Սիլվերը հարուստ մարդ է։ Իմ ստացած տեղեկությունների համաձայն նա բանկում ընթացիկ հաշիվ ունի, այն էլ վոչ փոքր։ Գինեատունն իր բացակայության միջոցին հանձնելու յե կնոջը։ Նրա կինը սպիտակ ցեղին չի պատկանում։ Իսկ այդպիսի ամուրիների համար, ինչպեսին յես ու դուք ենք, ներելի յե կասկածել, որ կինը, և վոչ թե վատ առողջությունն է մղում նրան դեպի բաց ծով։

Ջ. Տ.

Հ. Գ. Գոկինսը կարող է մի զիշեր մնալ մորը մոտ։

Ջ. Տ.»

Դժվար չե պատկերացնել, թե ինչպես գրգռեց ինձ այդ նամակը։ Ցես հիացմունքի մեջ եյի։ Բոլոր սրտով ատում եյի Թոմ Ռեդրեսին, որը միայն փնփնթում եր։ Նրա փոխարեն յերիտասարդ վորսորդներից վորևե մեկն ուրախությամբ կգնար։ Սակայն կալվածատերը ցանկանում եր, որ Թոմ Ռեդրեսը գնա, իսկ կալվածատիրոջ ցանկությունը նրանց համար բոլորենք եր։ Վոչ վոք, բացի ծերունի Ռեդրեսից չեր համարձակվի նույնիսկ փնթփնթալ։

Հետևյալ առավոտ մենք յերկուսով վոտով ճանապարհ ընկանք դեպի «Ծովակալ Բենբոու»։ Մորս գտա կատարյալ առողջ։ Տրամադրությունը լավ եր։ Նավապետի մահվամբ նրա բոլոր անախորժությունները վերջացել եյին։ Կալվածատերն իր հաշվով նորոգել եր մեր տունը։ Նրա հրամանով պատերը և ցուցանակը կրկին ներկել եյին։ Նա մեզ նվիրել է ինչ վոր կոհույք, որոնց թվում մի հրաշալի բազկաթոռ, որ մայրիկիս համար վաճառասեղանի առաջ նստելը հարմար լինի։ Նրան ոգնելու համար մի տղա յեր վարձել։ Այդ տղան պետք է կատարեր այն պարտականությունները, որ առաջ յես եյի կատարում։

Տեսնելով այդ ոտար տղային պանդոկում, պարզ հասկացա, վոր յերկար ժամանակով հեռանում եմ հայրենի տնից։ Մինչև այժմ յես մտածում եյի միայն այն արկածների մասին, վոր սպասում են ինձ առաջիկայում և վոչ թե այն տան մասին, վորը յես թողնում եմ։ Տեսնելով իմ տեղը գրաված դանդաղաշարժ և անշնորք տղային, առաջին անգամ լաց յեղա։ Յես անխղճորեն տանջում և բռնանում եյի նրա վրա։ Նա դեռ սովոր չեր իր նոր տեղին, իսկ յես նրա վրա մի սխալը չեյի ներում և չարախնդում եյի, յերբ նա սխալվում եր։

Գիշերն անցավ, իսկ հետևյալ որը ճաշից հետո յես ու Ռեդրութը նորից ճանապարհ ընկանք։ Յես հրաժեշտ տվի մորս, ծովախորշին, վորի մոտ ծնվել եյի, հինավուրց բարի «Ծովակալ Բենբոու»-ին։ Պանդոկը ներկելուց հետո, կարծես ոտարացել եր և ավելի քիչ եր դուր գալիս ինձ, քան առաջ։ Հիշեցի և նավապետին, վորն այնքան հաճախ թափառում եր ծովափին, յեռանկյունի գլխարկ ծածկած, դեմքին թրի սպի, կոնատակին հեռադիտակ։ Մենք թեքվեցինք փողոցի անկյունից և իմ տունն անհայտացավ։

Արդեն մթնում եր, յերբ «Գեվորգ Թագավորի հյուրանոց»-ի մոտ նստեցինք փոստային հանրակառքը։ Ինձ նստեցրին Ռեդրութի և ինչ վոր հաստ ծերունու մեջտեղում։ Չնայելով արագ ընթանալուն և ցուրտ գիշերին, յես իսկույն քնեցի։ Մենք սլանում եյինք յերբեմն դեպի վեր, յերբեմն դեպի վար, իսկ յես քնած եյի ինչպես արջամուկ։ Ինձ զարթեցրեց մի հարված։ Աչքերս բաց արի։ Կանգնել եյինք քաղաքի փողոցի մի մեծ շենքի առաջ։ Արդեն վաղուց լույսը բացվել եր։

— Վորտեղ ենք մենք,— հարցրեցի յես։

— Բրիստոլում,— պատասխանեց Թոմը,— դուրս արի։

Պարոն Տրելոնին ապրում եր պանդոկում, վոր գտնվում եր նավաշինարանների մոտ, վորպեսզի հսկի նավի աշխատանքները։ Մենք պետք է ծովափով բավական յերկար ժամանակ գնայինք, զանազան մեծության նավերի և նավասարքերի մոտով։ Այդ հանգամանքն ինձ շատ ուրախացրեց։ Մի նավում աշխատում եյին ու յերգում։ Մյուսում նավաստիները բարձրայուներին գլխին կապում եյին այնպիսի պարաններ, վորոնք ներքևից երևում եյին սարդի վոստայնի հաստությամբ։ Թեև ամբողջ կյանքս ապրել եյի ծովափին, սակայն այս վայրն այնպես գրավեց ինձ, վոր կարծես առաջին անգամն եյի տեսնում։

Կուպրի և աղի հոտը նորություն եր ինձ համար։ Յես տեսա ովկիանոսի այն կողմում յեղած նավերի քթերին քանդակված ֆիգուրաներ։ Յես ագահությամբ նայեցի ականջներին ողոր ունեցող, վոլորուն բեխերով, կպրով հագեցված ծամերով ծեր ծովագնացներին։ Նրանք շրջում եյին ծովափին ծովային անճոռնի քալվածքով։ Յեթե նրանց փոխարեն ինձ ցույց տային թագավորներ կամ արքեպիսկոպոսներ, յես ավելի քիչ կուրախանայի։

Յես ել կճանապարհվեմ դեպի ծովը։ Կճանապարհվեմ նավով այն ավագ նավաստու հետ, վոր փող է փչում, այն նավաստիների հետ, վորոնք ծամ ունեն և յերգեր են յերգում։ Յես կճանապարհվեմ դեպի ծովը, յես կլողամ դեպի անհայտ կղզին, գտնելու գետնի մեջ թաղված գանձը։

Յես խորասուզված եյի քաղցր յերազանքների մեջ, յերբ վերջապես հասանք մի մեծ պանդոկի։ Մեզ դիմավորեց կալվածատեր Տրելոնին։ Նա կապույտ համազգեստ եր հագել։ Այդ տեսակ համազգեստներ սովորաբար հագնում եյին ծովային սպաները։ Նա դռնից դուրս յեկավ ժպտալով։ Նա գալիս եր տատանվելով, յեռանդուն կերպով, նմանվելով ծովագնացների ճոճվող քայլվածքին։— Ահա և դուք,— բացականչեց նա։— Իսկ բժիշկը դեռ յերեկ յերեկոյան յեկավ Լոնդոնից։ Հիանալի յե։ Այժմ վողջ խումբը պատրաստ է։

— Ո՞չ, պարոն,— գոչեցի յես,— յերբ ենք ճանապարհվում։

— Ճանապարհվում,— պատասխանեց նա։— Մենք ճանապարհվում ենք վաղը։

ԳԼՈՒԽ VIII

«ՀԵՌԱԴԻՏԱԿ» ՑՈՒՑԱՆԱԿԻ ՏԱԿ

Յերբ նախաճաշեցի, կալվածատերը տվեց ինձ մի գրություն, ուղղված «Հեռադիտակ» պանդոկը Ջոն Սիլվերին։ Նա բացատրեց, թե ինչպես պետք է գտնել Ջոնի պանդոկը։ Պետք է գնալ ծովափով մինչև վոր տեսնես մի դռան վրա մի մեծ փող, ցուցանակի փոխարեն։ Յես ուրախացա, վոր հնարավորություն կունենամ մի անգամ ել տեսնելու նավերը, նավաստիներին և իսկույն ճանապարհ ընկա։ Դժվարությամբ անցնելով

հոծ բազմության միջից, վոր խռնվել եր նավահանգստում, հակերի և սայլերի միջից, վերջապես պանդոկը գտա։

Պանդոկը փոքր եր և չափազանց հարմար. ցուցանակը նոր եր ներկված, պատուհաններին մաքուր, կարմիր վարագույրներ, հատակի վրա մաքուր ավազ ցանված։ Պանդոկը յերկու փողոցի վրա մուտք ուներ։ Դռները բաց եյին և ընդարձակ ցածրիկ սենյակը, չնայած ծխախոտի ծխի քուլաներին, բավականին լույս եր։

Սեղանների շուրջը ծովագնացներ եյի նստած։ Նրանք այնքան բարձր եյին խոսում իրար հետ, վոր յես մուտքի մոտ կանգնեցի և չեյի համարձակվում ներս մտնել։

Կողքի սենյակից մի մարդ դուրս յեկավ։ Յես իսկույն հասկացա, վոր դա Յերկարահասակ Ջոնն է։ Նրա ձախ վոտը մինչեվ ազդրը կտրված եր։ Ձախ թևի տակ նա պահել եր հենակը, վորն արտասովոր արագությամբ եր գործածում, թռչկոտելով ինչպես թռչուն։ Սա մի չափազանց բարձրահասակ և ուժեղ տղամարդ եր, ազդրի պես լայն, տափակ և գունատ, բայց խելոք և ծիծաղկոտ դեմքով։ Նա, թվում եր, վոր շատ ուրախ է։ Շվշըվացնելով շտապ անցնում եր սեղանների արանքով, կատակելով և իր ամենասիրելի հաճախորդների ուսին խփելով։

Մեզքս ինչ թագցնեմ, կալվածատիրոջ նամակի մեջ կարդալով Յերկարահասակ Ջոնի մասին, սարսափելով մտածեցի, թե, արդյոք դա այն մի վոտանի ծովագնացը չե՞, վորին այնքան հետամտել եյի հինավուրց «Բինբրոուզ»-ում։ Բայց հենց վոր նայեցի նրա վրա, բոլոր կասկածները ցրվեցին։ Յես տեսել եյի նավապետին, տեսել եյի Սեվ Գամփռին, կույր Պյուին և յենթադրում եյի, վոր գիտեմ, թե ինչ կերպարանք ունեն ծովային ավազակները։ Վո՛չ։ Այս մաքրասեր և բարի պանդոկապետը վոչնչով ավազակի նման չե։

Յես սիրտ առա, քայլեցի շեմքի վրայով և գնացի ուղղակի Սիլվերի մոտ, վորը հենակի վրա հենված, խոսում եր ինչ վոր այցելուի հետ։

— Դուք պարոն Սիլվերն եք,— ասացի յես պարզելով նրան գրությունը։

— Այո՛, տղա՛,— ասաց նա։— Իմ անունը Սիլվեր է։ Իսկ դու ո՞վ ես։

Բայց տեսնելով կալվածատիրոջ նամակը, նա միանգամից փայլեց։

— Ո՛,— բացականչեց նա ձեռքը դեպի ինձ պարզելով,— հասկացա։ Դու մեր նավի նոր փոքրավորն ես։ Ուրախ եմ, վոր տեսնում եմ քեզ։

Յեվ նա պինդ սեղմեց իմ ձեռքն իր լայն և ուժեղ ափում։

Այդ վայրկյանին մի ինչ վոր մարդ, վոր նստած եր հեռավոր անկյունում, հանկարծ տեղից վեր ցատկեց և դեպի դուռը վազեց։ Դուռը նրա կողքին եր և նա իսկույն փողոցում անհայտացավ։ Սակայն նրա շտապողականությունը գրավեց իմ ուշադրությունը և յես առաջին իսկ հայացքից ճանաչեցի նրան։ Դա այն յեռամատ, ճարպից պլպլան դեմքով մարդն եր, վոր գալիս եր մեր պանդոկը։

— Ե՛յ,— գոչեցի յես,— բռնեցեք դրան։ Դա Սեվ Գամփռն է, Սեվ Գամփռը։

— Թքեմ յես նրա անվան վրա,— բացականչեց Սիլվերը։— Բայց նա փախավ և իր խմածի գինը չվճարեց։ Հարբի, վազիր ու բռնիր նրան։

Դռան մոտ նստածներից մեկը վեր թռավ և ընկավ նրա յետևից։

— Յեթե նա թեկուզ ծովակալ Գոկն էլ լիներ, այնուամենայնիվ կստիպեի վճարել,— ասաց Սիլվերը։

Հետո, հանկարծ բաց թողնելով իմ ձեռքը, հարցրեց։

— Ի՞նչ է նրա անունը։ Դու ասացիր Սեվ... իսկ հետո։ Սեվ ի՞նչ։

— Գամփռ, պարոն։ Միթե՞ պարոն Տրելոնին չի պատմել ձեզ մեր ավազակների մասին։ Սեվ Գամփռը նրանց խմբից է։

— Ի՞նչ,— մռնչաց Սիլվերը։— Իմ տունը։ Վայ՛ը, բեն, և ոգ-

— Ի՞նչ,— մռնչաց Սիլվերը։— Իմ տունը։ Վայ՛ը, բեն, և ոգ-

Ելիր Հարրիին, վոր բռնի նրան։ Ուրեմն նա ավազակ է, նրանց խմբից մեկը։ Ե՛յ, Մորգան, դու կարծեմ սեղանի մոտ նրա կողքին ես։ Իր նստել։ Մի այստեղ արի։

Այն մարդը, վորին Մորգան անվանեց, ծեր, ալեհեր, արևավառ դեմքով մի ծովագնաց եր։ Նա ծխախոտ ծամելով, խոնարհաբար հոտեցավ նրան։

— Դե՛, Մորգան,— խստորեն հարցրեց Յերկարահասակը,— դու առաջ յերբևիցե տեսել ես այդ Սեվ... Ինչպե՞ս է... Սեվ Գամփռին։

— Յերբեք, պարոն,— պատասխանեց Մորգանը և գլուխ տվեց

— Անունն էլ չես լսել։

— Չեմ լսել, պարոն։

— Դե, քո բախտն է, Թոմ Մորգան,— բացականչեց պանդոկապետը։— Յեթե սկսես գործ ունենալ ամեն մի սրիկայի հետ, էլ վատ չես դնի իմ պանդոկը։ Նա քեզ հետ ինչի մասին էր խոսում։

— Լավ չեմ հիշում, պարոն,— պատասխանեց Մորգանը։

— Յեվ դու կարող ես այն, որ քո ուսերի վրա յես, գլուխ անվանել,— գոչեց Յերկարահասակ Ջոնը։— Լավ չի հիշում։ Կարելի յե դու հասկացողություն էլ չունես, թե ում հետ ես խոսում։ Դե, ասա, քեզ հետ ինչի մասին էր խոսում։ Դուք խոսում եյիք ծովային ճանապարհորդության, նավերի, նավապետների մասին։ Դե։ Շուտ։

— Մենք խոսում եյինք այն մասին, թե ինչպես մեզ մոտ, նավատորմիղում, մարդկանց պարանով բարձրացնում են նավի վողնուցի տակ,— պատասխանեց Մորգանը։

— Նավի վողնուցի տակ։ Քեզ համապատասխանող խոսակցություն։ Ա՜յ, դու։ Դե, նստիր տեղդ, Թոմ։

Յերբ Մորգանը նստեց սեղանի մոտ, Սիլվերը բարեկամաբար, որ ինձ շատ դուր յեկավ, կռացավ և իմ ականջին շշնջաց.

— Մաքուր տղա յե այդ Թոմ Մորգանը, բայց սարսափելի հիմար։ Իսկ այժմ,— շարունակեց նա բարձր ձայնով,— փորձենք հիշել Սեվ Գամփռ։ Չե, այդպիսի մարդու մասին յերբեք չեմ լսել։ Կարծես թե յես նրան մի տեղ տեսել եմ, նա հաճախ... Այո... Այո, գալիս էր այստեղ մի ինչ որ կույր մուրացիկի հետ։

— Այո, այո, կույրի հետ,— գոչեցի յես։— Յես այդ կույրին էլ եյի ճանաչում։ Նրա անունը Պյու էր։

— Ճիշտ է,— բացականչեց Սիլվերը,— այս անգամ չափազանց հուզված,— Պյու։ Հենց այդպես եյին նրան կանչում։ Տեսքով նա սրիկա յեր։ Յեթե այդ Սեվ Գամփռը մեր ձեռքն ընկնի, նավապետ Տրելոնին չափազանց գոհ կլինի։ Բենը հիանալի վոտեր ունի։ Հազվագյուտ ծովագնաց կարող է վազել Բենի նման։ Վո՛չ, Բենի առջևից փախչել չես կարող։ Նա ում ասես, կհասնի։ Ուրեմն նա խոսում էր այն մասին, որ ծովագնացներին պարանով բարձրացնում են։ Լավ, լավ, հենց նրան կբարձրացնենք մենք։

Սիլվերը թռչկոտում էր իր հենակի վրա, բռնցքով խփում սեղաններին և խոսում այնպիսի անկեղծ հուզմունքով, որ նույնիսկ ամենակասկածոտ դատավորն էլ կհավատար, որ նա անմեղ է։

Հանդիպումը «Հեռադիտակ»-ում Սեվ Գամփռի հետ իմ մեջ զարթեցրին իմ առաջվա բոլոր կասկածները և յես ուշադիր կերպով հետևում եյի խոհարարին։ Սակայն նա ինձ համար չափազանց խելոք էր, հնարագետ և ճարպիկ։

Վերջապես վերադարձան այն յերկուսը, որոնց ուղարկել էր Սեվ Գամփռի յետևից։ Ծանր շնչելով, նրանք հայտնեցին, որ Սեվ Գամփռին հաջողվեց անհայտանալ ամբոխի մեջ։ Պանդոկապետն սկսեց հայհոյել այնպիսի կատաղությամբ, որ յես վերջնականապես համոզվեցի որ Յերկարահասակ Ջոնն անմեղ է։

— Լսիր, Գոկինս,— ասաց նա,— ինձ համար այս պատմությունը կարող է վատ վախճան ունենալ։ Ի՞նչ կմտածի իմ մասին նավապետ Տրելոնին։ Այդ անիծված բանդիտը նստել է իմ տանը և խմել իմ խմելիքը։ Հետո դու գալիս ես և ասում, որ նա ավազակային խմբից է։ Բայց այնուամենայնիվ յես թույլ եմ տալիս, որ նա ծլկվի։ Դե, Գոկինս, նավապետ Տրելոնու մոտ ինձ պաշտպանիր։ Դու ջահել ես, բայց հիսար չես։ Քեզ չեն կարող խաբել։ Այո, այո, այո։ Յես այդ իսկույն նկատեցի։ Բայատրիր նավապետին, որ յես իմ հենակով վոչ մի կերպ չկարողացա վազել այդ սատանի գամփռի յետևից։ Յեթե յես առաջնակարգ ծովագնաց լինեյի, ինչպես հին ժամանակ, նա իմ ձեռքից չէր պրծնի, իսկ այժմ...

Նա հանկարծ լռեց և բերանը լայն բաց արավ, կարծես մի բան հիշեց։

— Իսկ փողը,— գոչեց նա։— Յերեք գավաթի համար։ Այ սատանա, իսկ փողի մասին յես մոռացել եմ։

Ընկնելով նստարանի վրա, նա հռհռաց ու հռհռաց մինչև այն ժամանակ, մինչև որ արցունքներ հոսեցին նրա դեմքի վրայով։ Նրա հռհռոցն այնպես վարակիչ էր, որ յես չդիմացա և սկսեցի նրա հետ հռհռալ, մինչև որ վողջ պանդոկը դղրդաց հռհռոցից։

— Յես թեև ծեր եմ, բայց ծովային հորթի դեր կատարեցի,— ասաց նա վերջապես աչքերը սրբելով։— Յես տեսնում եմ, Գոկինս, որ յես ու դու լավ զույգ կլինենք։ Չէ՞ որ յես այժմ ել հոգով նավի փոքրավոր եմ։ Այնուամենայնիվ պետք է գնալ։ Գործ կա, գործ, թանգագին ընկերներ։ Յես կգնեմ իմ յեռանկյունի գլխարկը և քեզ հետ կգնամ նավապետ Տրելոնու մոտ,

զեկուցելու նրան այն բոլորի մասին, ինչ վոր պատահել է։ Չէ՞ վոր գործը լուրջ է, Գոկինս, և պետք է խոստովանել, վոր այդ գործը պատիվ չե բերում վոչ քեզ, վոչ ինձ։ Վոչ, վոչ։ Վոչ ինձ, վոչ քեզ պատիվ չի բերում. յերկուսիս ել լավ ծաղրեցին։ Սակայն, սատանան տանի, վոնց խաբեց ինձ և փող չտվեց։

Նա նորից հոհռաց այնպես ուժգին, վոր թեև ծիծաղելու բան չկար, ստիպված եյի կրկին միանալ նրան։

Մենք գնացինք ծովափով և Սիլվերը շատ զրավիչ խոսակից դուրս յեկավ։ Յուրաքանչյուր նավի մասին, վորի մոտից անցնում եյինք, նա ինձ շատ տեղեկություններ եր հաղորդում. ինչպես են պատրաստված նրա առագաստները, վորքան բեռ կարող է վերցնել, վորտեղից է յեկել։ Նա բացատրեց այն աշխատանքի մասին, վոր կատարվում եր նավահանգստում. մի նավ բարձում են, մյուսը բեռնաթափում. իսկ այն, յերրորդը, խկուն բաց ծովն է դուրս գալիս։ Նավերի և ծովագնացների մասին նա ինձ ուրախ պատմություններ պատմեց։ Նա հաճախ զանազան ծովային խոսքեր եր գործածում և կրկնում մի քանի անգամ, վոր լավ հիշեմ։ Յես քիչ-քիչ սկսեցի հասկանալ, վոր Սիլվերից ավելի լավ ընկեր ծովային ճանապարհորդության համար, չես գտնի։

Վերջապես մենք յեկանք պանդոկը։ Կալվածատերը և բժիշկ Լիվսին դարեջուր եյին խմում և սպիտակ հացի բոված կտորներ ուտում։

Նրանք պատրաստվում եյին գնալ նավը, շտեսնելու, թե ինչպես են սարքավորում։

Յերկարահասակ Ջոնը պատմեց նրանց այն բոլորը, ինչ վոր պատահել եր գինետնում, սկզբից մինչև վերջ, չափազանց կրակոտ և միանգամայն ճշմարիտ։

— Չէ՞ վոր այդպես յեղավ, այնպես չէ՞, Գոկինս,— հարցնում եր ինձ ամեն բոպե։

Յես յես ամեն անգամ լրիվ հաստատում եյի նրա խոսքերը։ Յերկուսն ել չափազանց ափսոսում եյին, վոր Սեվ Դամփը կարողացել է փախչել։ Բայց ի՞նչ կարելի յեր անել։ Նրանց գոփասանքները լսելով Յերկարահասակ Ջոնը վերցրեց իր հենակը և դեպի դուռն ուղղվեց։

— Անձնակազմը պետք է լինի նավում ժամի 4-ին,— գոչեց կալվածատերը նրա յետևից։



— Լավ, պարոն,— պատասխանեց խոհարարը, միջանցքում կազի տալով։

— Պարզ ասած,— ասաց բժիշկ Լիվսին,— յես հավանություն չեմ տալիս ձեր արած դյուտերի մեծամասնությանը, սակայն այս Ջոնն իմ ճաշակի մարդ է։

— Հրաշալի տղա յե,— ձայն տվավ կալվածատերը։

— Ջիմն իսկույն մեզ հետ կգնա նավը, այնպես չե,— ավելացրեց բժիշկը։

— Իհարկե, իհարկե,— ասաց կալվածատերը։

— Գոկինս, գլխարկդ վերցրու. այս բոպելիս գնում ենք մեր նավը տեսնելու։

ԳԼՈՒԽ IX

ՎԱՌՈՂ ՑԵՎ ՋԵՆՔԵՐ

«Իսպանոլան» ափից բավական հեռու յեր կանգնած։ Նավին հասնելու համար, մենք նավակ նստեցինք և սլացանք նավերի արանքով։ Մեր առաջ բացվում եյին յերբեմն զանազան կերպարանքներով զարդարված նավի քթեր, յերբեմն՝ նավախելեր։ Նավերի ճոպանները ճռնչում եյին մեր վողնուցի վրա և կախվում մեր գլխին։ Նավեղրի վրա մեզ վողջունեց ղեկապետ պարոն Երբոուն, շիլ աչքով, արեվառ, ողերն ականջին մի ծեր ծովագնաց։ Նրա և կալվածատիրոջ միջև, ըստ յերևույթին, ամենամոտիկ և բարեկամական հարաբերություն կար։

Իսկ նավապետի հետ կալվածատերը պարզապես համբարձիս չեր։

Նավապետը մռայլ մարդ եր։ Նավում հասեն ինչ նրան գրգռում եր։ Իր անբավականության պատճառները նա իսկույն բաց արավ մեր առաջ։ Հենց վոր իջանք նավասենյակները, հայտնվեց մի նավատի և ասաց.

— Նավապետ Սմոլլեթտը, պարոն, ցանկանում ե ձեզ հետ խոսել։

— Ցես միշտ պատրաստ եմ ծառայելու նավապետին։ Խնդրիր, վոր բարեհաճի այստեղ,— պատասխանեց կալվածատերը։

Պարզվեց, վոր նավապետը կանգնած ե իր դեսպանի յետև։ Նա միանգամից նավասենյակը մտավ և դուռը փակեց։

— Դե, ինչ կասեք, նավապետ Սմոլլեթտ։ Հուսով եմ, վոր ամեն բան կարգին ե։ Նավը ճանապարհ ընկնելու պատրաստ ե։

— Ահա թե ինչ, պարոն,— ասաց նավապետը,— յես պետք ե խոսեմ անկեղծորեն, մինչև անգամ ռիսկ անելով համարձակվելու ձեզ հետ կռվել։ Այս արշավախումբն ինձ դուր չի գալիս։ Մեր նավաստիներն ինձ դուր չեն գալիս։ Ոգնականս ինձ դուր չի գալիս։ Ահա և բոլորը, կարճ ու պարզ։

— Կարելի յե, պարոն, ձեզ նավն ել չի դուր գալիս,— հարցրեց կալվածատերը, և յես նկատեցի, վոր նա չափազանց զայրացած ե։

— Նավի մասին յես վոչինչ չեմ կարող ասել, պարոն, մինչև ճանապարհին չտեսնեմ,— պատասխանեց նավապետը։— Թվում ե, թե նավը վատ չի կառուցված։ Սակայն այդ մասին դատելը դեռ վաղ ե։

— Այն ժամանակ, պարոն, կարելի յե ձեզ դուր չի՞ գալիս ձեր տերը—հարցրեց կալվածատերը։

Բայց այստեղ բժիշկ Լիվսին մեջ ընկավ։

— Սպասեցեք, սպասեցեք,— ասաց նա,— այդ ձևով բացի կռվից վոչինչ չի դուրս գա։ Նավապետը մեզ և՛ չափազանց շատ և՛ չափազանց քիչ բան ասաց, և յես իրավունք ունեմ նրանից բացատրություն խնդրելու։ Դուք, կարծեմ, ասացիք, նավապետ, վոր մեր արշավախումբը ձեզ դուր չի գալիս։ Ինչու՞։

— Ինձ հրավիրել են, պարոն, վոր յես նավը տանեմ այնտեղ, վորտեղ ցանկանում ե այս պարոնը և չեն հայտնել ճանապարհորդության նպատակը,— ասաց նավապետը։— Շատ լավ, յես ել վոչ մի բանի մասին հարցուփորձ չեմ արել։ Սակայն շուտով յես համոզվեցի, վոր ամենավերջին նավաստին ճանապարհորդության նպատակի մասին ավելի շատ գիտի, քան յես։ Իմ կարծիքով սա ճիշտ չե։ Իսկ ձեր կարծիքով ինչպե՞ս ե։

— Իմ կարծիքով ել նույնն ե,— ասաց բժիշկ Լիվսին

— Հետո,— շարունակեց նավապետը,— յեն իմացա, վոր մենք գնում ենք գանձ գտնելու։ Այդ մասին յես լսել եմ,— լավ լսեցեք— իմ սեփական ստորաբաժանումներից։ Գանձ վորոնել, առհասարակ, իմ մասնագիտությունը չե և յես վոչ մի հակում չեմ զգում դեպի նման զբաղմունքները, նամանավանդ յեթե այդ զբաղմունքները գաղտնի յեն, իսկ գաղտնիքը (ներողություն, պարոն Տրելոնի) թութակն ել գիտե։

— Սիլվերի թութակը,— հարցրեց կալվածատերը։

— Վոչ, դա առած ե,— բացատրեց նավապետը։— Դա նշանակում ե, վոր գաղտնիքն այլևս վոչ վոքի համար գաղտնիք չե։

չե։ Ինձ թվում է, որ դուք համաձայնության չեք յեկել, թե ինչպիսի դժվարին գործ եք ձեռնարկել և յես պետք է նախազգուշացնեմ ձեզ, որ ձեզ կռիվ է սպասում վոչ թե կյանքի, այլ մահի համար։

— Դուք միանգամայն ճշմարիտ եք,— պատասխանեց բժիշկը։— Մենք շատ մեծ ռիսկ ենք անում։ Բայց դուք սխալվում եք, յենթադրելով, որ մենք մեզ սպասող վտանգների մասին մեզ հաշիվ չենք տալիս։ Հետո դուք ասացիք, որ ձեզ դուր չի գալիս անձնակազմը։ Ի՞նչ է, ձեր կարծիքով, մենք վարձել ենք անբավարար չափով փորձված և անգործունյա ծովագնացներ։

— Նրանք ինձ դուր չեն գալիս,— պատասխանեց նավապետը։— Իսկ յեթե պարզ խոսենք, պետք է անձնակազմի ընտրությունը հանձնարարեյիք ինձ։

— Չեմ վիճում,— պատասխանեց բժիշկը։— Իմ բարեկամը, թերևս, անձնակազմը պետք է ընտրեր ձեզ հետ միասին։ Սա սխալ է, բայց հավատացնում եմ ձեզ, բոլորովին պատահական։ Այդտեղ վոչ մի կանխամտածված բան չկա։ Հետո, թվում է, որ ձեզ դուր չի գալիս պարոն Երրոուն։

— Դուր չի գալիս, պարոն։ Յես հավատում եմ, որ նա լավ ծովագնաց է։ Սակայն նավաստիներին յերես է տալիս։ Նա իր նավաստիների հետ մտերիմ է։ Նավի ղեկավարը պետք է իրեն նավաստիներից հեռու պահի։ Նա չի կարող նավաստիների հետ հարբեցողությամբ զբաղվել։

— Դուք ուզում եք ասել, թե նա հարբեցող է,— հարցրեց կալվածատերը։

— Վոչ, պարոն,— պատասխանեց նավապետը։— Յես միայն ուզում եմ ասել, որ նա իր մարդկանց շատ է յերես տալիս։

— Իսկ այժմ,— խնդրեց բժիշկը,— դուք պարզորոշ ասացեք, նավապետ, ինչ եք ուզում մեզանից։

— Դուք հաստատ վորոշել եք կատարել այս ճանապարհորդությունը, պարոններ։

— Այո, հաստատ,— պատասխանեց կալվածատերը։

— Շատ լավ,— ասաց նավապետը։— Բանի որ մինչև այժմ համբերությամբ լսեցիք ինձ, ելի լսեցեք։ Վառոդն ու զենքերը տեղավորում են նավի առաջին մասում, նավաստիներին մոտ։ Այնինչ շատ հրաշալի տեղ կա ձեր նավասենյակի տակ— ինչու այնտեղ չտեղավորել։ Սա առաջին։ Հետո, դուք ձեզ հետ չորս ծառա յեք վերցրել։ Նրանց, ինչպես ինձ ասացին, նույնպես ուզում են տեղավորել նավի առջևի մասում, նավաստիների հետ։ Ինչու՞ Նրանց համար մահճակալներ չգտնել ձեր նավասենյակի մոտ։ Սա յերկրորդ։

— Յերրորդն ել կա,— հարցրեց պարոն Տրելոնին։

— Կա,— ասաց նավապետը։— Զափազանց շատ են շաղակրատում։

— Այո, շատ են շաղակրատում,— համաձայնեց բժիշկը։

— Կասեմ միայն այն, ինչ վոր լսել եմ իմ ականջներով,— շարունակեց նավապետ Սմոլլեթը։— Ասում են, իբրև թե ձեզ մոտ մի ինչ վոր կղզու քարտեզ կա։ Իբրև թե այդ քարտեզի վրա խաչերով նշանակված են այն վայրերը, վորտեղ գանձեր են թաղված։ Իբրև թե այդ կղզին գտնվում է... Յեվ այստեղ նա ամենայն ճշտությամբ անվանեց մեր կղզու յերկարությունն ու լայնությունը։

— Յես այդ մասին վոչ մի մարդու չեմ ասել— բացականչեց կալվածատերը։

— Այնուամենայնիվ, յուրաքանչյուր նավաստի այդ գիտե, պարոն,— ասաց նավապետը։

— Այդ դուք եք ասել, Լիվսի,— աղաղակեց կալվածատերը։

— Կամ դու, Դոկինս։

— Այժմ արդեն միևնույն է, թե ով է ասել,— ասաց բժիշկը։

Յես նկատեցի, որ չնայած նրա արդարացումներին, վոչ նա և վոչ նավապետը չհավատացին պարոն Տրելոնուն։ Յես ել այդ ժամանակ չհավատացի, վորովհետև նա իսկապես հոչակավոր շաղակրատ եր։ Իսկ այժմ յես մտածում եմ, որ նա ճշմարիտ եր ասում և նավի անձնակազմն առանց մեզ ել գիտեր, թե վորտեղ է գտնվում Գանձերի կղզին։

— Յես, պարոններ, չգիտեմ թե ձեզանից վորի մոտ եգարնվում այդ քարտեզը,— շարունակեց նավապետը։— Յեվ յես պնդում եմ, որ ինձնից և պարոն Երրոուից թաղուն պահվի։ Հակառակ դեպքում յես պետք է խնդրեմ ձեզ, որ ինձ պաշտոնից ազատեք։

— Գիտեմ,— ասաց բժիշկը։— Առաջինը՝ դուք ցանկանում եք դադարեցնել ավելորդ խոսակցությունը։ Յերկրորդ՝ դուք ուզում եք բոլոր հուսալի մարդկանց հավաքել նավի յետևի մասը։ Ուրիշ խոսքով, դուք վախենում եք խռովությունից։

— Պարոն,— ասաց նավապետ Սմոլլեթը,— յես չեմ ուզում,

վոր դուք ինձ այնպիսի խոսքեր վերագրեք, վոր յես չեմ ասել։ Վոչ մի նավապետ չի համաձայնի ծով դուրս գալ, յեթե նա հիմք ունի վախենալու, թե խռովություն կլինի։ Յես համոզված եմ, վոր պարոն Երրոուն ազնիվ մարդ է։ Շատ նավաստիները ել ազնիվ մարդիկ են։ Գուցե նրանք բոլորն ել ազնիվ մարդիկ են։ Բայց յես պատասխանատու յեմ նավի ապահովության համար և նավի վրա գտնված յուրաքանչյուր մարդու կյանքի համար։ Յես տեսնում եմ, վոր շատ բան կատարվում է այնպես, ինչպես չպետք է կատարվի։ Թույլ տվեք նախազգուշական միջոցներ ձեռք առնել, կամ արձակեցեք պաշտոնից։ Ահա բոլորը։

— Նավապետ Սմոլլեթտ,— սկսեց բժիշկը, ժպտալով.— դուք լսել եք առածն այն սարի մասին, վորը մուկ է ծնել։ Ներեցեք, բայց դուք ինձ հիշեցրիք այդ առածը։ Յերբ դուք այստեղ յեկաք, յես պատրաստ եյի յերդվելու իմ կեղծ ծամով, վոր դուք մեզանից շատ ավելի բան կպահանջեք։

— Դուք շատ հնարագետ եք, բժիշկ,— ասաց նավապետը։ — Գալով այստեղ, յես ցանկանում եյի վերջնահաշիվ պահանջել, վորովհետև յես մի փոքրիկ հույս անգամ չունեյի, վոր պարոն Տրելոնին կհամաձայնի լսել գոնե իմ մի խոսքը։

— Ձեյի ել լսի,— աղաղակեց կալվածատերը։— Յեթե Լիվսին չլիներ, յես միանգամից ձեզ սատանայի մոտ կուղարկեյի։ Բայց այնուամենայնիվ, յես լսեցի ձեզ։ Յեվ կանեմ այն, ինչ վոր պահանջում եք։ Սակայն իմ կարծիքը ձեր մասին դեպի վատը փոխվեց։

— Ինչպես ձեզ համար հաճելի է, պարոն,— ասաց Նավապետը։— Հետո դուք կհասկանաք, վոր յես իմ պարտքը կատարել եմ։

Նա հեռացավ։

— Տրելոնի,— ասաց բժիշկը.— հակառակ իմ սպասածին, յես համոզվեցի, վոր դուք հրավիրել եք նավի վրա յերկու ազնիվ մարդ— Նավապետ Սմոլլեթտին և Ջոն Սիլվերին։— Սիլվերի վերաբերյալ յես ձեզ հետ համաձայն եմ,— աղաղակեց կալվածատերը.— իսկ այս անտանելի ստախոսի վարմունքը յես համարում եմ տղամարդին անվայել, ծովագնացին անվայել և, համենայն դեպս, անգլիացուն անվայել։

— Լավ,— ասաց բժիշկը,— կտեսնենք։

Յերբ վոր մենք դուրս յեկանք տախտակամածը, նավաստիներն արդեն սկսել եյին տեղափոխել զենքերն ու վառոդը։

Նրանք աշխատանքի ժամանակ յերգում եյին «Յո-խո-խո»։ Նավապետն ու պարոն Երրոուն կարգադրություններ եյին անում։

Ինձ շատ դուր յեկավ, վոր մեզ նոր ձեվով եյին տեղավորել։ Նավի առջևում վեց նավասենյակ եյին պատրաստել, վորոնք պահեստի մուտքով միանում եյին նավաստիների սենյակի և խոհանոցի հետ։ Սկզբում այդ վեց նավասենյակը հատկացրել եյին նավապետին, պարոն Երրոուին, Գենտերին, Ջոյսին, բժշկին և կալվածատիրոջը։ Բայց հետո, դրանցից յերկուսը տվին Ռեդրեսին և ինձ, իսկ պարոն Երրոուն և նավապետը տեղավորվեցին տախտակամածի վրա։ Այդ սենյակը թեև շատ փոքր եր, բայց, այնուամենայնիվ, յերկու ճոճացանց տեղավորվում եր։ Մինչև անգամ ղեկապետը, թվում եր, վոր բավական եր այդ տեղավորումից կարելի յե, նա ել չեր անձնակազմին հավատ ընծայում։ Սակայն սա իմ յենթադրությունն եր միայն, վորովհետև, ինչպես շուտով կտեսնեք, նա նավում յերկար ժամանակ չմնաց։

Մենք յեռանդով աշխատում եյինք, տեղափոխում եյինք վառոդը և սարքավորում մեր նավասենյակները, յերբ վերջապես ափից յեկան վերջին նավաստիները, Յերկարահասակ Ջոնի հետ։

Խոհարարը, կապկի ճարպկությամբ, նավը բարձրացավ և յերբ տեսավ, վոր մենք զբաղված ենք, ձայն տվավ.

— Ե՛յ, բարեկամներ, այդ ի՞նչ եք անում։

— Վառոդի տակառներն ենք փոխադրում,— պատասխանեց նավաստիներից մեկը։

— Ինչո՞ւ, սատանան տանի ձեզ,— գոչեց Յերկարահասակը։ — Այդպիսով մենք առավոտյան մակընթացության ժամանակ ճանապարհվել չենք կարող։

— Նրանք իմ հրամանն են կատարում,— ընդհատեց նրան նավապետը — Իսկ դուք, սիրելի, խոհանոցը գնացեք, վոր նավաստիները կարողանան ժամանակին ընթրել։

— Լսում եմ, պարոն,— պատասխանեց խոհարարը։

Յեվ ձեռքով բռնելով յեռանկյունի գլխարկը, խոհանոցի դռնով ներս խցկվեց։

— Ա՛յ, սա փառավոր մարդ է, նավապետ,— ասաց բժիշկը։

— Շատ կարելի յե, պարոն,— պատասխանեց նավապետ Սմոլլեթտը։— Զգուշ, զգուշ, տղերք։

քան չեյինք կարողանում հասկանալ։ Ցերը նրան այդ մասին հարցնում եյինք, յեթե հարբած եր լինում, միայն ծիծաղում եր, իսկ յերբ զգաստ եր լինում, հանդիսավոր կերպով յերդվում եր, որ իր վողջ կյանքում, ջրից բացի, վոչինչ չի խմել։

Ինչպես ղեկապետ, նա վոչ մի բանի պետք չեր և իր ստորադրյալների վրա վատ ազդեցություն եր թողնում։ Պարզ եր, որ նրա վերջը վատ կլիներ։ Ցեվ վոչ վոք չզարմացավ ու չխրեց, յերբ մի մութ, փոթորկոտ գիշեր, նա նավից անհայտացավ։

— Ջուրն ե ընկել,— վճռեց նավապետը։ — Ի՞նչ կա վոր, պարոններ, դա փրկեց մեզ նրան շղթայելու անհրաժեշտությունից։

Այդպիսով մենք մնացինք առանց ավագ նավաստու։

Պետք եր վորևե մեկին առայ քաշել այդ պաշտոնի համար։ Ընտրությունն ընկավ ղեկապետ Ջոբ Ենդերսոնի վրա։ Նրան առաջվա նման ղեկապետ եյին կանչում, բայց ավագ նավաստու պաշտոն եր կատարում։

Պարոն Տրելոնին, որը շատ ճանապարհորդություններ եր կատարել և ծովը լավ եր ճանաչում, նույնպես այդ գործի համար պետքական եր։ Լավ յեղանակին նա հերթապահություն եր անում։ Ներկրորդ ղեկապետ Իդրայել Գենդսը յեռանդուն, ժեր, փորձված ծովագնաց եր, որին ամեն գործ ել կարելի յեր հանձնարարել։

Նա, ի միջի այլոց, Ցերկարահասակ Ջոն Սիլվերի հետ շատ մտերիմ եր։ և, քանի որ հիշեցի Սիլվերին, նրա մասին մանրամասն պետք է պատմեմ։

Նավաստիները նրան Ազդր եյին կանչում։ Նա հենակը փոկով կապում եր վզին, որ ձեռքերն ազատ լինեն։ Մի տեսնելիք թե ինչպես նա, հենակով հենվելով պատին, տատանումը բոլորովին չզգալով, կերակուր եր յլվում, կարծես ամուր գետնի վրա կանգնած լիներ։ Սվելի հետաքրքրական եր տեսնել, թե ինչպես փոթորկոտ յեղանակին ճալկրելն ու արագ վազում եր տախտակամածով, բռնելով այն ճոպաններից, որոնք ավելի լայն տեղերում իջեցված եյին։ Այդ ճոպանները նավաստիներն անվանում եյին «Ցերկարահասակ Ջոնի զինտեր»։ Անցնելիս նա կամ բռնում եր այդ զինտերը, կամ գործի յեր դնում հենակը, կամ վոկից բռնած, հենակն իր յետևից քաշ եր տալիս։

Իսկ այն բոլոր նավաստիները, որոնք առաջ նրա հետ ճանապարհորդել եյին, շատ ափսոսում եյին, որ այլևս նա առաջվանը չե։

— Մեր Ազդրը հասարակ մարդ չե,— ասաց ինձ յերկրորդ ղեկապետը։— Ջահել ժամանակ նա դպրոցական ե յեղել և, յեթե ուզենա, գրքի նման կխոսի։ Իսկ ինչ քաջն ե։ Ալուծը մեր Ցերկարահասակ Ջոնի մոտ վոչինչ ե։ Ցես ինքս տեսել եմ, թե ինչպես նրա վրա, անզեն ժամանակ, չորս մարդ հարձակվեց, իսկ նա բռնեց նրանց և գլուխներն իրար զարկեց, նա, այդ անզեն կաղը։

Բոլորը հարգանքով եյին վերաբերվում դեպի նա և կատարում եյին նրա հրամանները։ Նա յուրաքանչյուրի հետ կարողանում եր խոսել, յուրաքանչյուրին՝ սիրաշահել։ Դեպի ինձ հատուկ սիրալիր վերաբերմունք ուներ։ Միշտ ուրախանում եր, յերբ յես խոհանոցն եյի մտնում, որը զարմանալի մաքուր եր պահում։ Ամանեղենը միշտ կանոնավոր կախված եր — մաքուր եր պահում։ Ամանեղենը միշտ կանոնավոր կախված եր — մաքուր և փայլուն։ Անկյունում կար մի վանդակ, որի մեջ՝ թութակ։

— Դոկտոր, — ասում եր նա ինձ։ —Յեկ Ջոնի մոտ զրուցելու։ Վոչ վոքի այցելությամբ յես այնքան չեմ ուրախանում, որքան քո այցելությամբ։ Նստիր՝ու լսիր։ Ահա նավապետ Ֆլինտը — յես իմ թութակի անունը նավապետ Ֆլինտ եմ դրել, հռչակավոր ծովահենի պատվին։ Ցեվ ահա նավապետ Ֆլինտը նախագուշակում ե, որ մեր ճանապարհորդությունը հաջողությամբ կվերջանա։ Ճշմարիտ ե, նավապետ։

Ցեվ թութակն սկսեց անհերևակայելի արագությամբ կրկնել։

— Պիաստրներ, պիաստրներ, պիաստրներ*)։

Ցեվ կրկնում եր մինչև այն ժամանակ, յերբ ուժից ընկնում եր, կամ մինչև որ Ջոնը թաշկինակը գցում եր նրա վանդակին։

— Այս թռչունը,— ասում եր նա,— յերևի յերկու հարյուր տարեկան ե։ Թութակներն անվերջ ապրում են։ Միայն սատանան ե իր կյանքում այնքան չարիք տեսել, որքան իմ թութակը։ Նա ճանապարհորդել ե Ինգլենդի հետ, հռչակավոր ծովահեն Նավապետ Ինգլենդի հետ։ Յեղել ե Մադագասկարում, Մալաբարում, Սուրինամում, Պրովիդենսում, Պորտո—Բելլոում

*) Պիաստրը յեգիպտական դրամ ե — մոտ 10 կոպ։ Ծ. Թ.

յում։ Նա տեսել է, թե ինչպես են վորսում բեռները խորտակված նավերից։ Ահա թե յերբ է նա սովորել «պիաստրները» գոչելը։ Յեվ զարմանալու բան չկա։ Այն որը վորսացել են 350 հազար պիաստր, Գոկինս։ Այս թութակը ներկա յե յեղել Վեստ — Ինդիայի փոխարքայի վրա հարձակվելիս, Գոայի մոտ։ Իսկ տեսքով կարծես մանուկ լինի։ Բայց դու վառոդի հոտ առել ես։ Այնպես չե՞, նավապետ

— Նավը մյուս կողմը թեքիր,— գոչեց թութակը։

— Իմ թութակը հիանալի ծովագնաց է,— ասաց խոհարարը և, գրպանից շաքարի կտորներ հանելով, տվեց թռչունին։

Թութակը կտցով խփում եր վանդակի ճաղերին և հայհոյում։

— Յեթե կուպրի մեջ ապրես, անպատճառ կկեղտոտվես, — բացատրեց Ջոնը։— Այս խեղճ ծեր անմեղ թռչունը հայհոյում է, բայց չի հասկանում, թե ինչ է ասում։ Ինչպես ասում են, նա աստծու առաջ էլ կհայհոյի։

Այս խոսքերն ասելիս Ջոնն այնպես հանդիսավոր կերպով ձեռք տվեց իր ճակատից կախված փունջ մազին, վոր յես նրան աչի արհիս ամենապնիվ մարդը համարեցի։

Կալվածատիրոջ և նավապետ Սմոլլետի հարաբերությունը առաջվա նման շատ լարված եր։ Կալվածատերն առանց քաշվելու նավապետի մասին ատելությամբ եր խոսում։ Նավապետը կալվածատիրոջ հետ յերբեք չեր խոսում, իսկ յերբ վերջինս վրեն բան եր հարցնում նավապետին, պատասխանը լինում եր սուր, կարճ և չոր Մի անկյունում կուչ յեկած նավապետը խոստովանել, թե սիալել է, վոր անձնատամի մասին վատ կարծիք է հայտնել։ Շատ նավաստիներ որինակելի աշխատանք եյին կատարում, իսկ վողջ անձնակազմն իրեն հրաշալի յեր պահում։ Իսկ նավի վրա նա ուղղակի սիրահարվել եր։

— Նա լսում է ղեկին այնպես, ինչպես լավ կինն իր մարդուն։ Բայց,— ավելացրեց նա,— մենք դեռ չենք վերադարձել և մեր ճանապարհորդությունը, առաջվա պես, ինձ դուր չի գալիս։

Այս խոսքերը լսելիս, կալվածատերը սեջքը դարձնում եր ղեկի նավապետը և, կզակը վեր ցցած, սկսում եր քայլել տախտակամածի վրա։

— Քիչ ժամանակից հետո,— ասում եր նա,— այս մարդը վերջնականապես ինձ համբերությունից կհանի։

Ճանապարհին փոթորիկ յեղավ, վորը միայն հաստատեց մեր «Իսպանոլայի» արժանիքը։ Թվում եր, թե անձնակազմը բավական եր իր կյանքից, և դա զարմանալի չեր։ Իմ կարծիքով, վոչ մի նավում անձնակազմին այդպան յերես չեյին տալիս։ Յուրաքանչյուր առիթից ոգտվում եյին, վոր նրանց փնջի կրկնակի բաժին տան։ Հարկավոր եր միայն, վոր կալվածատերը լսեր վորևե նավաստու ծննդյան մասին, նա իսկույն բոլորի համար տոն եր սարքում։ Տախտակամածի վրա միշտ մի տակառ խնձոր եր լինում, վոր ցանկացողը յերբ ուզենա, ուտի։

— Դրանից լավ բան չի դուրս գա,— ասում եր նավապետը բժիշկ Լիվսիին։— Դա նրան միայն փչացնում է։ Դուք ինձ հավատացեք։

Սակայն խնձորի տակառը, ինչպես կտեսնեք, մեզ հսկայական ծառայություն մատուցեց։ Միայն այդ տակառի շնորհիվ, մենք ժամանակին կանխեցինք վտանգը և դավաճանների ձեռքով չկործանվեցինք։

Ահա թե ինչպես պատահեց։

Մենք արդեն այդ կղզուց, ուր գնում եյինք, շատ հեռու չեյինք,— նրա ճիշտ տեղը յես հայտնելու իրավունք չունեմ։ Որ ու գիշեր նայում եյինք հեռուն, սպասելով, վոր կտեսնենք հորիզոնում։ Համաձայն հաշվի, մնում եր մեկ որ մեզ ճանապարհ գնալու։ Կամ այսոր գիշերը, կամ ամենաուշը, վաղը կեսորից առաջ, մենք պետք է տեսնեյինք Գանձերի կղզին։ Գնում եյինք դեպի հարավ-հարավ-արևմուտք Մեղմ քամի յեր փչում։ Ծովը հանդարտ եր։ «Իսպանոլան» առաջ եր սլանում, յերբեմն քիթն ալիքների մեջ թաղելով։ Ամեն ինչ լավ եր։ Բոլորն էլ լավ տրամադրության մեջ եյին, բոլորն էլ ուրախ եյին, վոր մեր ճանապարհորդության առաջին մասը վերջանում է։

Յերբ արևը մայր մտավ և աշխատանքս վերջացրի, յես ուղղվելով դեպի իմ մահճակալը, հանկարծ մտածեցի, վոր վատ չեր լինի, յեթե խնձոր ուտեյի։ Արագ դուրս թռա տախտակամածը։ Հերթապահները, նավի առաջին մասում կանգնած, նայում եյին ծովին և հույս ունեյին տեսնել կղզին։ Ղեկապետը, առագաստների քամահար անկյուններից դիտելով, կամաց շվիշտ

վացնում եր։ Ամեն ինչ հանդարտ եր, միայն ջուրը խփում եր նավի կողքերին։

Պարզվեց, որ տակառում միայն մի խնձոր կա։ Այդ խընձորը վերցնելու համար, յես պետք է տակառը մտնեյի։ Այնտեղ, մթության մեջ նստած, ջրի ծփյունի ներքից և նավի համաչափ տատանումից, քիչ մնաց,որ քնեյի։ Հանկարծ մեկը ծանր կերպով ընկավ տակառի կողքին։ Տակառը թեթև տատանվեց։ Մարդը մեջքը դեմ եր տվել տակառին։ Յես արդեն պատրաստվում եյի դուրս թռչել, յերբ մարդը հանկարծ սկսեց խոսել։ Յես ճանաչեցի Սիլվերի ձայնը և մինչև նա մի դյուժին խոսք ասեր, յես վորոշեցի, ինչ ուզում է լինի, տակառից դուրս չգալ։ Յես պառկել եյի տակառի հատակի վրա և դողալով, յերկյուղից ու հետաքրքրությունից շնչասպառ լինելով, լսում եյի։ Ցավ առաջին իսկ մի դյուժին խոսքերից յես հասկացա, որ նավի վրա գտնվող բոլոր աղնիվ մարդկանց կյանքն իմ ձեռքում է գտնվում։

ԳԼՈՒԽ XI

ԻՆՉ ԼՍԵՑԻ ՅԵՍ ԽՆՁՈՐԻ ՏԱԿԱՌԻ ՄԵՋ ՆՍՏԱԾ ԺԱՄԱՆԱԿ

— Վոչ, յես չեյի,— ասաց Սիլվերը։— Նավապետը Ֆլինտն եր։ Իսկ յես բնակարանապետ եյի, վորովհետև իմ վորը փայտե յե։ Յես վոտս կորցրի նույն գործում, ինչ գործում որ ծերունի Պյուն իր աչքերը։ Իմ վոտն անդամահատեց մի գիտնական վիրահատ։ Նա սովորել եր կոլեջում և վողջ լատիներենն անգիր գիտեր։ Այնուամենայնիվ կախաղանից ազատվել չկարողացավ։ Կորսո—Կասլեյում նրան շան նման կախեցին արևի տակ, որ չորանա... ուրիշների կողքին։ Այո։ Դրանք Ռոբերտսի մարդիկն եյին, որ փչացան, վորովհետև իրենց նավերի անունները փոխում եյին։ Այսոր նավը կոչվում եր «Թագավորական յերջանկություն», իսկ վաղը՝ ուրիշ բան։ Իսկ մենք, ինչ անուն որ տալիս ենք նավին, այն անունն էլ միշտ պետք է մնա։ Մենք չփոխեցինք «Կասանդրայի» անունը, այդ պատճառով մեզ Մալաբարից անփորձ տուն հասցրեց, այն ժամանակ, յերբ Ինգլենդը հափշտակեց Հնդկաստանի փոխարքային։ Իր անունը չփոխեց նաև «Մորժը», Ֆլինտի հին նավը, իսկ նրա վրա այնքան վոսկի կար՝ որ քիչ եր մնում ծովի տակը գնա։



— Ե՞խ,— լսեցի յես մեր նավաստիներից ամենայերիտասարդի հիացած ձայնը,— ինչ քաջ եր այդ Ֆլինտը։

— Ասում են, Դիվսը նրանից վատ չեր,— ասաց Սիլվերը։ — Բայց յես նրա հետ յերբեք չեմ ճանապարհորդել։ Առաջ յես ճանապարհորդում եյի Ինգլենդի, ապա՝ Ֆլինտի հետ։ Իսկ այժմ յես ինքս եմ ծով դուրս յեկել։ Յես ի՞նչ հարյուր ֆունտ ստերլինգ վաստակեցի Ինգլենդի մոտ, և յերկու հազար ֆունտ Ֆլինտի մոտ։ Հասարակ նավաստու համար սա վատ չե։ Փողը բանկումն է և լավ տոկոս է տալիս։ Վորտեղ են այժմ Ինգլենդի մարդիկ։ Չգիտեմ։ Վորտեղ են Ֆլինտի մարդիկ։ Մեծ մասամբ այստեղ, նավի վրա, և ուրախ ենք, վոր այստեղ ենք։ Շատերը նրանցից ապրում եյին ծովափին, վորպես վերջին սուրացիկներ։ Սովից մեռան։ ասված վկա։ Ծերունի Պյուն, լերբ կուրացավ, սկսեց տարեկան հազար յերկու հարյուր ֆունտ ծախսել, ինչպես պառլամենտի լորդ։ Վորտեղ է նա այժմ։ Մեռել է և գետնի տակ փտում է։ Բայց յերկու տարի առաջ նա ուտելու բան չուներ։ Նա վողորմություն եր խնդրում, գողանում եր, կռվորդը պատռում եր, այնուամենայնիվ կերակրվել չեր կարողանում։

— Դե, ծովահեն յեղիր դրանից հետո,— ասաց յերիտասարդ նավաստին։

— Այո, բայց հիմար եյ մի ,ինիր,— բացականչեց Սիլվերը։ — Սակայն խոսքը քո մասին չե։ Դու թեև յերիտասարդ ես, բայց հիմար չես։ Քեզ խաբել չի կարելի։ Վոչ։ Յես հենց վոր քեզ տեսա, իսկույն նկատեցի այդ և քեզ հետ պետք է խոսեմ, ինչպես տղամարդու հետ։

Կարող եք յերևակայել, թե ինչ զգացի, լսելով, թե ինչպես այդ ծեր սրիկան ասում է ուրիշին նույն հրապուրիչ խոսքերը, ինչ վոր ասել եր ինձ։ Յեթե կարողանայի, տակառի պատի միջից նրան կսպանեյի։

Այդ ժամանակ Սիլվերը խոսքը շարունակեց, չկասկածելով, վոր իրեն լսում են.

— Այդպես է ծովահենների կյանքը՝ ծանր կախաղանի յենթակա, բայց ուտում և խմում են ինչպես կռվող աքաղաղները կռվից առաջ։ Նրանք ճանապարհորդության են դուրս գալիս ունենալով հարյուրավոր պղնձե գրոշներ, բայց վերադառնում են հարյուրավոր ֆունտերով։ Ավարը ծախսված է հարբեցողության վրա, փողերը վատնված և ահա նորից դեպի ծով,

հագին միայն մի շապիկ։ Բայց յես այդպես չեմ վարվում։ Յես իմ բոլոր փողերը մաս-մաս հանձնում եմ զանազան բանկերի, վոր կասկածներ չլինեն։ Գիտցիր, վոր յես հիսուն տարեկան եմ։ Այս ճանապարհորդությունից վերադառնալով, յես պետք է ապրեմ այնպես, ինչպես ամենապատկական ջենտլմենները։ Բավական է, ասում ես։ Ի՞նչ կա վոր, յես վատ չեմ ապրել։ Վոչ մի բանից զուրկ չեմ մնացել։ Փափուկ տեղում եմ քնել, համեղ բաներ եմ կերել։ Սակայն ծովի վրա յերբեմն նեղություն եմ քաշել։ Իսկ ինչպե՞ս եմ սկսել։ Իրրև նավաստի— ինչպես դու։

— Բայց չե՞ վոր ձեր առաջվա փողերն այժմ կկորչեն,— ասաց յերիտասարդ նավաստին։— Դուք ինչպե՞ս կերևաք Բրիստոլում այս ճանապարհորդությունից հետո։

— Իսկ քո կարծիքով այժմ վորտեղ են իմ փողերը,— հարցրեց Սիլվերը հեգնորեն։

— Բրիստոլում՝ բանկերում և զանազան տեղերում,— պատասխանեց նավաստին։

— Այո, փողերս քո ասած տեղերումն եյին։ Սակայն մինչև այն ժամանակ, յերբ բարձրացրինք մեր խարիսխը։ Իսկ այժմ արդեն իմ պառավը վերցրել է փողերը։ «Հեռագրատակն» իր բոլոր փոր ու փսորով վաճառված է, իսկ պառավը հեռացել է և պայմանավորված տեղում սպասում է ինձ։ Յես կասեյի և պայմանավորված տեղը, վորովհետև սիանգամայն վստահում եմ քեզ, բայց վախենում եմ, վոր մյուսները վիրավորվեն, վոր նրանց չեմ ասում։

— Իսկ քո պառավին վստահում ես,— հարցրեց նավաստին։

— Ծովահենները,— պատասխանեց խոհարարը,— հազվադեպ են իրար վստահում և լավ են անում։ Բայց ինձ խաբելը հեշտ չե։ Ոչ վոր կփորձի բանսարկություն անել ծերը։ Ջոնին, այս աշխարհում յերկար չի ապրի։ Վոմանք վախենում եյին Պյուից, վոմանք՝ Ֆլինտից։ Իսկ ինձնից ինքը Ֆլինտն եր վախենում։ Վախենում և հպարտանում եր ինձանով... Նրա մարդիկը հանդուգն մարդիկ եյին։ Ինքը սատանան էլ չեր համարձակվի այդ մարդկանց հետ բաց ծովում կռվի դուրս գալ։ Դու ինձ ճանաչում ես, այդ պատճառով էլ յես գլուխս չեմ գովի, յես բարեհոգի և ուրախ մարդ եմ, իսկ յերբ բնակաբանապետ եյի, Ֆլինտի ծեր ծովահեններն ինձ վոչխարների

պես լսում էին։ Ո-հո-հո-հո, ինչ կարգապահություն կար ծերունի Ջոնի նավի մեջ։

— Ճշմարիտ եմ ասում ձեզ,— խոստովանեց նավաստին,— մինչև այս խոսակցությունը, Ջոն, ձեր գործն ինձ դուր չեր գալիս, իսկ այժմ, ահա իմ ձեռքը, ես համաձայն եմ։

— Դու քաջ ու խելոք տղա ես,— պատասխանեց Սիլվերը և այնպես ուժեղ սեղմեց նավաստու ձեռքը, որ իմ տակառը տատանվեց։— Դու այնպես լավ ծովահեն կդառնաս, որի նմանը ես դեռ յերբեք չեմ տեսել։

Ցես ակամայից վկա յեղա, թե ինչպես հրապուրեցին ազնիվ նավաստուն, որ մտնի ավազակախմբի մեջ, գուցե և նավի վերջին ազնիվ նավաստուն։ Սակայն ես իսկույն կարողացա համոզվել, որ այդ նավաստին միակը չե։ Սիլվերը կամաց շվայրեց և տակառի մոտ ելի մեկը նստեց։

— Դիկն արդեն մերն ե,— ասաց Սիլվերը։

— Ցես գիտեի, որ նա մերը կլինի,— լսեցի ես յերկրորդ ավազ նավաստի Իզրայել Գենդսի ձայնը։— Դիկը հիմար մարդկանցից չե։

Միաժամանակ նա լուռ ծամում եր ծխախոտը, ապա թքեց և դիմեց Ցերկարահասակ Ջոնին.

— Ասա, Ազդր, մենք յերկաթ պետք ե նպարավաճառի նավակի նման, շուռ ու մուռ գանք։ Ցերդվում եմ Վորոտով, որ նավապետն ինձ բոլորովին ձանձրացրել ե։ Բավական ե, որքան ինձ հրամաններ տվեց։ Ցես ուզում եմ.ապրել նավապետի սենյակում, նրանց նրբահամ կերակուրներն ու գինիներն ինձ պետք են։

— Իզրայել,— ասաց Սիլվերը,— քո գլուխը շատ եժան արժե , վորովհետև նրա մեջ յերբեք ուղեղ չի յեղել։ Բայց լսել կարող ես, ականջներդ յերկար են։ Ուրեմն լսիր։ դու առաջվա նման պետք ե քնես նավա.տիների սենյակում, դու պետք ե ուտես կոպիտ կերակուր, դու պետք ե լինես հնազանդ, պետք ե լինես քաղաքավարի և վոչ մի կաթիլ գինի չես խմի մինչև այն ժամանակ, մինչև յես քեզ անհրաժեշտ խոսքը չեմ ասի։ Ամեն բանում դու հույսդ ինձ վրա դիր, վորդիս։

— Միթե՞ յես հրաժարվում եմ,— մռմռաց յերկրորդ ավազ նավաստին։— Ցես միայն հարցնում եմ, յե՞րբ։

— Ցե՞րբ,— գոռաց Սիլվերը։— Լավ, յես կասեմ քեզ, թե յերբ։ Վորքան կարելի յե ուշ, ահա թե յերբ։ Նավապետ Սմոլլետտին առաջնակարգ ծովագնաց ե, մեր շահի համար ե նավը վարում։ Կալվածատերն ու բժիշկը մի քարտեզ ունեն, բայց յես գիտեմ արդյոք թե վորտեղ են թաղցնում այդ քարտեզը։ Դու ել չգիտես։ Թող կալվածատերն ու բժիշկը գանձը գտնեն և ոգնեն մեզ վոր նավը բարձենք։ Այն ժամանակ մենք կտեսնենք։ Ցեթե յես վստահելի այդպիսի հոլանդական ցեղի, վորպիսին դուք եք, ապա հնարավորություն կտայի նավապետ Սմոլլետտին մեզ յետ դարձներ մինչև ճանապարհի կեսը։

— Մենք ինքներս ել վատ ծովագնացներ չենք,— առարկեց Դիկը։

— Ուզում ես ասել վատ նավաստիներ չենք,— ուղղեց Սիլվերը։— Մենք կարողանում ենք ղեկը վարել։ Իսկ ուղղություն ո՞վ կ՝ուշվի։ Այդ բանին վոչ վոք հեզանից ընդունակ չե, պարոններ։ Ցեթե իմ կամքը լիներ, ապա յես թույլ կտայի նավապետ Սմոլլետտին վերադարձին հասցնել մեզ գոնե մինչև պասսատները։ Այն ժամանակ գոնե կիմանայի, որ ուղիղ ճանապարհով եմ գնում և որ ստիպված չենք լինի յուրաքանչյուրին որական մի գդալ անուշ ջուր տալ։ Բայց յես գիտեմ, թե դուք ինչ ժողովորդ եք։ Ստիպված կլինենք նրանց դատաստանն անել կղզու վրա, հենց վոր գանձը կտեղափոխեն այստեղ, նավը։ Շատ ափսոսալի յե։ Իսկ դուք գիտեք միայն ագահությամբ հարձակվել ոմիչի վրա։ Ճշմարիտն ասած, իմ սիրտը ցավում ե, յերբ մտածում եմ, որ պետք ե վերադառնամ ձեզ նման մարդկանց հետ։

— Կամաց, Ցերկարահասակ,— գոչեց Իզրայելը։— Ջե՞ որ քեզ հետ վոչ վոք չի վիճում։

— Միթե՞ յես մեծ նավեր քիչ եմ տեսել, որոնք իզուր խորտակվել են։ Միթե՞ յես քիչ եմ տեսել այնպիսի քաջեր, որոնց կախել են արևի տակ չորանալու,— բացականչեց Սիլվերը։— Իսկ ինչու։ Նրա համար, որ շտապել են, շտապել են։ Լսեցեք ինձ. յես ճանապարհորդել եմ ծովի վրա և իմ կյանքում շատ բան եմ տեսել։ Ցեթե դուք կարողանայիք նավ վարել և կռվել քամիների դեմ, դուք բոլորդ վաղուց կառքով ման կգայիք։ Բայց ինչ։ Ցես ճանաչում եմ ձեզ։ Ռում եք լակում և կախաղան բարձրանում։

— Բոլորին հայանի յե, Ջոն, որ դու հռչակավոր ճոռոմախոս ես,— առարկեց Իզրայելը։— Բայց յեղել են ուրիշները, որոնք նավ վարելը քեզնից պակաս չեն իմացել։ Բայց նրանք

իրենց հրամանատար չեն ձեացրել, իրենք քեֆ են արել, ուրիշներին էլ չեն խանգարել։

— Այո, — ասաց Սիլվերը։— Իսկ ո՞ւր են այժմ նրանք։ Այդպիսին էր Պյուն, որ մեռավ չքավորության մեջ, վոդոբմուության խնդրելով։ Ֆլինտն էլ այդպիսի ին էր, որ մեռավ ոսոմից Սավաննայում։ Այո, դրանք հաճելի մարդիկ էին, ուրախ... Միայն թե ո՞ւր են այժմ նրանք, ահա հարց...

— Ի՞նչ կանենք նրա ց, — հարցրեց Դիկը,— յերբ նրանց մեր ձեռքը կընկնեն։

— Ա՛յ, այս մարդն իմ ճաշակի մարդ է,— հիացմունքով բացականչեց խոհարարը։— Դատարկ բաների մասին չի խոսում, գործի մասին է խոսում։ Քո կարծիքով ի՞նչ պիտի անել նրանց։ Իջեցնել վորևե անմարդաբնակ ծովափ։ Այդպես կվարվեր Ինգլենդը։ Կամ մորթել ինչպես խոզերի։ Այդպես կվարվեր Ֆլինտը կամ Բիլլի Բոնսը։

— Այո, Բիլլին այդպիսի վարվելաձև ուներ,— ասաց Իզրայելը։— «Մեռելները չեն կծում», ասում եր նա։ Այժմ նա մեռած է և իր առածը կարող է փորձով ստուգել։ Այո, Բիլլին այդ գործերում վարպետ եր։

— Ճշմարիտ է,— ասաց Սիլվերը։— Բիլլին այդ գործերում կարիճ եր։ Վոչ վոքի չեր խնայում։ Իսկ յես ջենտլմեն եմ։ Սակայն տեսնում եմ, վոր գործը լուրջ գործ է։ Պարտքն ամենից առաջ, տղերք։ Յեվ յես ձայն եմ տալիս— սպանել։ Յես յերբեք չեմ ցանկանում, վոր ինձ վրա, յերբ յես պառլամենտի անդամ կդառնամ և վոսկեզոծ կառքով մեն կգամ, ընկնի, ինչպես սատանան վարդապետի վրա, այդ բարակավոտներից մեկը։ Հարկավոր է սպասել մինչև պտուղը հասնի։ Իսկ յերբ նա հասնի, հարկավոր է քաղել։

— Ջոն,— բացականչեց ավագ նավաստին,— դու հերոս ես, ասուած վկա։

— Այդ բանում դու կհամոզվես գործի մեջ, Իզրայել,— ասաց Սիլվերը — Յես միայն մի բան եմ պահանջում զիջեցեք ինձ կ։ լվածատեր Տրելոնուն։ Յես ուզում եմ իմ սեփական ձեռքերով կտրել նրա հորթի գլուխը... Դիկ,— ավելացրեց նա հանկարծ։ — Բարի յ։ղիր, թռիր տակառի մեջ և ինձ համար մի խնձոր հանիր, կարծես թե կոկորդս չորանում է։

Կարող ենք յերևակայել իմ սարսափը։ Յես դուրս կցատկեի և կսկսեի վազել, յեթե ուժերս ներեին, բայց սիրտս, վոտներս, ձեռներս միանգամից ինձ ծառայելուց հրաժարվեցին։ Դիկն արդեն վոտի յեր յ։ լել, յերբ հանկարծ նրան կանգնեցրեց Գենդսի ձայնը։

— Ինչո՞ւ յես ուզ։ մ փտած խնձորը ծծել, Ջոն։ Ավելի լավ է ոսոմ տուր մեզ։

— Դիկ, — ասաց Սիլվերը,— յես վստահում եմ քեզ։ Այստեղ, իմ սենյակում մի տակառ եմ թաղցրել։ Ահա բանալին։ Մի կուժ լցրու և բեր։

Զնայելով սարսափելի յերկյուղին, յես այնուամենայնիվ այդ բոպեին մտածեցի. «Ահա թե պարոն Երրոուն վորտեղից եր ոսոմ ճարում»։

Հենց վոր Դիկը հեռացավ, Իզրայելն ինչ վոր մի բան շշնջաց խոհարարի ականջին։ Յես միայն յերկու-յերեք խոսք լսեցի, բայց այդ էլ բավական եր։

— Մնացածներից վոչ վոք չի համաձայնում,— շշնջաց Իզրայելը։

Ուրեմն նավի վրա դեռևս մեզ հավատարիմ մարդիկ կան։

Յերբ Դիկը վերադարձավ, յերեքն էլ հերթով կուժը դերցրին ու խմեցին, մեկը «դրախտի կենացը», մյուսը՝ «ծերունի Ֆլինտի կենացը», իսկ Սիլվերը մինչև անգամ յերգեց.

Շահավետ քամու կենացը խմենք,
Բոլորս հարուստ և ուրախ լինենք։

Տակառի ներսը լուսավորվեց։ Վերև նայեցի և տեսա, վոր լուսինը բարձրացել և արծաթաջրել է կայմը և ծածանվող գլոշակը։ Այդ իսկ բոպեին տերթապահը ձայն տվեց.

— Ցամաք։

ԳԼՈՒԽ XII

ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Տախտակամածը դոփյունների դղրդաց։ Յես լսում եյի, թե ինչպես մարդիկ դուրս եյին գալիս սենյակներից։ Տակառից դուրս գալով, յես անցա առաջնակայմի յետևը, յերկու անգամ անցա նավի յետևի մասով, դուրս յեկա տախտակամածը և Գենտերի ու բժիշկ Լիվսիի հետ վազեցի նավի առջևի մասը։

Բոլորն արդեն այստեղ եյին։ Լուսնի յերևալուց հետո, մառախուղը միանգամից ցրվեց։ Հեռվում, հարավ-արևմտյան կողմում մենք տեսանք յերկու ցածր բլուր, իսկ նրանց

յետևից՝ յերբորդը ավելի բարձր, վորը դեռևս պատած եր մոխրագույն մշուշով։ Բոլոր բլուրներն ել կոնաձև եյին։

Յես նայում եյի նրանց վրա, վորպես յերազի մեջ— դեռևս սարսափից չեյի սթափվել։ Հետո յես լսեցի Նավապետ Սմոլլետի ձայնը, վոր հրամաններ եր տալիս։ «Իսպանոլան» մոտենում եր կղզուն արևելյան կողմից։

— Տղերք,— ասաց Նավապետը, յերբ նրա բոլոր հրամանները կատարված եյին,— ձեզանից վորևե մեկը տեսել է այս կղզին առաջ։

— Յես տեսել եմ, պարոն,— ասաց Սիլվերը։— Յերբ յես մի վաճառական նավում խոհարարի պաշտոն եյի կատարում, մենք այնտեղից անուշ ջուր վերցրինք։

— Յերևի խարիսխ ձգելու ամենահարմար տեղը հարավային կողմն է, այս փոքրիկ կղզու յետևում, այնպես չե՞,— հարցրեց Նավապետը։

— Այո, պարոն։ Այդ փոքրիկ կղզին կոչվում է Կմախքի կղզի։ Առաջ այստեղ միշտ կանգ եյին առնում ծովահենները և մեր նավից մի նավաստի գիտեր այն բոլոր անունները, վոր ծովահենները տվել եյին կղզու վրա գտնված տեղերին։ Այ, այն հյուսիսային կողմի սարը կոչվում է Առաջնակայմ, մյուսը՝ Միջնակայմ։ Միջնակայմը— այն բարձր սարը, վոր ծածկված է մշուշով, հաճախ անվանում են Հեռադիտակ, վորովհետև ծովահենները, յերբ այստեղ կանգնել, իրենց նավերն եյին նորոգում, նրա վրա դիտակյան եյին սարքել։ Նրանք, սովորաբար, այստեղ նորոգում եյին իրենց նավերը։ Ներողություն եմ խնդրում, պարոն։

— Յես քարտեզ ունեմ,— ասաց Նավապետը։— Նայեցեք, սա այն կղզի՞ն է։

Յերբ քարտեզն ընկավ Յերկարահասակ Ջոնի ձեռքը, նրա աչքերը փայլատակեցին։ Բայց հուսախաբությունը միանգամից շշմեցրեց նրան։ Սա այն քարտեզը չեր, վոր մենք գտել եյինք Բիլլի Բոնսի սնդուկում, նրա պատճենն եր, վորի վրա նշանակված եյին տեղերի անունները, ծովի ծանծաղուտներն ու խորությունները, բայց առանց յերեք կարմիր խաչերի և ձեռագիր դիտողությունների։ Այնուամենայնիվ, չնայած իր վրդովմունքին, Սիլվերն իրեն զսպեց և չմատնեց։

— Այո, պարոն,— ասաց նա։— Յեվ շատ լավ է նկարված։ Հետաքրքրական է իմանալ, թե ով կարող եր նկարել այս քարտեզը։ Ծովահենները անգրագետ մարդիկ են։ Ահա և նավապետ Կիդդի կայանը— այդպես է անվանել և իմ ընկեր Նավաստին։ Այստեղ ուժեղ հոսանք կա դեպի հարավ։ Հետո, արևմտյան ափին, հոսանքը շրջվում է դեպի հյուսիս։ Դուք ճիշտ եք արել, պարոն,— շարունակեց նա,—վոր բռնել եք ուղիղ քամու դեմ։ Յեթե դուք ուզում եք մտնել ծովախրշը, կանգնելու համար դրանից ավելի հարմար տեղ չեք գտնի։

— Շնորհակալ եմ,— ասաց Նավապետը։— Յեթե ինձ ոգնության կարիք լինի, յես կրկին ձեզ կդիմեմ։ Կարող եք գնալ։

Յես ապշեցի, թե ինչպես Ջոնն այդպիսի սառնասրտությամբ հայտնաբերեց իր կղզուն ծանոթ լինելը։ Ճիշտն ասած, յես վախեցա, յերբ տեսա, վոր նա մոտենում է ինձ։ Իհարկե, նա չգիտեր, վոր յես նստած եմ յեղել տակառի մեջ և բոլորը լսել եմ։ Այնուամենայնիվ, իր դաժանությամբ, յերկերեսանիությամբ և նավի անձնակազմի վրա ունեցած իշխանությամբ, նա այնպիսի սարսափ եր տարածել ինձ վրա, վոր յես չկարողացա չցնցվել, յերբ ձեռքը դրավ ուսիս։

— Այս կղզին վատ տեղ չե,— ասաց նա։— Վատ տեղ չե փոքրիկ տղայի համար։ Դու կլողանաս, ծառ կբարձրանաս վայրի այծեր կվորսաս։ Ինքդ ել այծի նման, կելնաս սարերի վրա։ Ճիշտ եմ ասում, վոր նայելով այս սարերին, ինքս ել յերիտասարդանում և իմ փայտե վոտի մասին մոռանում եմ։ Լավ է յերեխա լինել և վոտներին տասը մատ ունենալ։ Յեթե դու ցանկանաս գնալ և ծանոթանալ կղզուն, ասա ծերունի Ջոնին, նա քեզ համար նախաճաշ կը պատրաստի։

Յեվ բարեկամաբար խփելով ուսիս, կաղալով հեռացավ։

Նավապետ Սմոլլետը, կալվածատերը և բժիշկ Լիվսին նավի հետնամասի վրա խոսում եյին ինչ վոր բանի մասին։ Յես ցանկանում եյի վորքան կարելի յե շուտով հայտնել նրանց այն բոլորը, ինչ վոր ինձ հաջողվել եր լսել։ Սակայն յես վախենում եյի բոլորի ներկայությամբ ընդհատել նրանց խոսակցությունը։ Յես թափառում եյի նրանց շուրջը, մտածելով թե ինչ ձևով սկսեմ խոսել, յերբ հանկարծ բժիշկ Լիվսին ինձ իր մոտ կանչեց։ Նա իր ծխամորճը ժոռացմամբ թողել եր ներքևում և ուզում եր ինձ ուղարկել, վոր բերեմ, վորովհետև յերկար ժամանակ առանց ծխելու չեր կարողանում մնալ։ Բայց

մոտենալով նրան այնքան, որ վոչ վոք չկարողանա լսել, յես ՀՀՆՀՅՅՅ.

— Բժիշկ, յես ուզում եմ ձեզ հետ խոսել։ Թող նավապետը և կալվածատերը իշնեն նավասենյակը, հետո վորևե պատճառով կանչեցեք ինձ։ Յես ձեզ սարսափելի նորություններ կհայտնեմ։

Բժշկի դեմքը թեթևակի այլայլվեց, բայց իսկույն նա տիրապետեց իրեն։

— Շնորհակալ եմ, Ջիմ, հենց այդ եյի ուզում իմանալ, — ասաց նա, ձեռքնելով, իբր թե հենց իսկույն ինձ ինչ վոր հարց ե տվել։

Հետո դարձավ դեպի կալվածատերն ու նավապետը։ Նրանք շարունակում եյին միանգամայն հանդարտ խոսել, իրենց ձայնը չբարձրացնելով սակայն յես հասկացա, որ բժիշկ Լիվսին իմ ասածն արդեն հայտնել ե նրանց։

Հետո նավապետը հրամայեց Ջոբ Ենդերսոնին բոլոր մարդկանց տախտակամած կանչել։

— Տղերք, — նավաստիներին դիմելով, ասաց նավապետ Սմոլլետտը, — յես ուզում եմ խոսել ձեզ հետ։ Դուք ձեր առաջ տեսնում եք ցամաք։ Այդ ցամաքն այն կղզին ե, ուր մենք պիտի գայինք։ Դուք բոլորդ գիտեք, թե ինչ առատաձեռն մարդ ե պարոն Տրելոնին։ Նա ինձ հարցրեց, ճանապարհին լավ եյին աշխատում արդյոք նավաստիները։ Ցավ յես պատասխանեցի, որ յուրաքանչյուր նավաստի յեռանդով եր կատարում իր պարտքը ու յերբեք չեմ ցանկացել վոր նրանք ավելի լավ աշխատեն։ Պարոն Տրելոնին, յես և բժիշկը գնում ենք նավասենյակը, որ խմենք ձեր կենացը, ձեր հաջողության կենացը, իսկ ձեզ այստեղ կտան փունջ, որպեսզի դուք կարողանաք խմել մեր և մեր հաջողության կենացը։ Եթե դուք ուզում եք իմանալ իմ կարծիքը, ապա յես կասեմ, որ կալվածատերը, մեզ հյուրասիրելով, շատ սիրալիր վերաբերմունք ցույց տվեց։ Առաջարկում եմ նրա պատվին ուռա գոչել։

Տարորինակ չեր, որ բոլորն ել ուռա գոչեցին։ Սակայն այդ ուռան այնքան սրտալի ու միաբերան հնչեց, որ, խոստովանում եմ, յես հավիվ կարողացա այն բոպեյին հավատալ, որ այդ նույն մարդիկ պատրաստվում են մեզ բոլորիս սպանել։

— Ուռա նավապետ Սմոլլետտին, — աղաղակեց Ցերկարահասակ Ջոնը, յերբ առաջին ուռան լռեց։

Այս անգամ ել բոլորը միաբերան ուռա գոչեցին։

Յերբ ընդհանուր ուրախությունը յեռում եր, նավապետը, կալվածատերն ու բժիշկը նավասենյակ իջան։

Քիչ հետո նրանք մարդ ուղարկեցին, որ կանչեն Ջիմ Գոկինսին։

Յերբ ներս մտա, նրանք նստել եյին սեղանի շուրջը։ Նրանց առաջ դրված եր մի շիշ իսպանական գինի և մի ափսե չամիչ։ Բժիշկը, կեղծ ծամը ծնկների վրա բռնած, ծխում եր, իսկ դա ինչպես յես գիտեյի, նշանակում եր, որ նա շատ հուզված ե։ Տաք գիշեր յինելու պատճառով, պատուհանը բաց եր։ Լուսնի լույսի մի շերտ ընկած եր նավի յետևի մասում։

— Դե, Գոկինս, — ասաց կալվածատերը, — դու ուզում ես ինչ վոր բան հայտնել մեզ։ Խոսիր։

Յես համառոտ կերպով հաղորդեցի նրանց այն բոլորը, ինչ վոր լսել եյի տակառի մեջ նստած ժամանակ։ Նրանք ինձ չեյին ընդհատում, մինչև վոր վերջացրի։ Նրանք չեյին շարժվում, աչքերն իմ դեմքից չեյին հեռացնում։

— Ջիմ, — ասաց բժիշկ Լիվսին, — նստիր։

Նրանք ինձ նստեցրին սեղանի մոտ, մի բաժակ գինի տվին, բուռս չամիչ լցրին և բոլորն ել հերթով վողջունելով, խմեցին իմ կենացը, իմ բախտավորության, իմ քաջության կենացը։

— Այո, նավապետ, — ասաց կալվածատերը, — դուք ճշմարիտ եյիք։ Խոստովանում եմ, որ յես եշ եմ և սպասում եմ ձեր կարգադրություններին։

— Յես նույնպիսի եշ եմ, պարոն, — առարկեց նավապետը։ — Առաջին անգամն եմ այնպիսի անձնակազմ տեսնում, որը պատրաստվում ե ապստամբության և իրեն այնպես հնազանդ և որինակելի յե պահում։ Եթե ուրիշ անձնակազմ լիներ, յես վաղուց գլխի կընկնեյի և նախազգուշության միջոցներ ձեռք կառնեյի։ Բայց սրանք ինձնից խորամանկ դուրս յեկան։

— Նավապետ, — ասաց բժիշկը, — խորամանկությամբ գերազանցել ե ձեզ Ջոն Սիլվերը, նա հոչակավոր մարդ ե։

— Նա ավելի հոչակավոր կլիներ, յեթե առագաստափայտի վրա ճոճվեր, — առարկեց նավապետը։ — Սակայն այդ բոլոր խոսակցություններն այժմ ավելորդ են։ Բոլոր ասածներից յես մի շարք յեզրակացություններ եմ արել։ Եթե պարոն Տրելոնին թույլ տա, յես կասեմ։

— Դուք այստեղ նավապետ եք, պարոն, կարգադրեցեք, — վեհությամբ պատասխանեց պարոն Տրելոնին։

— Նախ և առաջ, — հայտնեց պարոն Սմոլլետը, — մենք պետք է շարունակենք այն բոլորը. ինչ որ սկսել ենք, որովհետև նահանջը կարված է։ Եթե յես վերադարձի մասին ծպտուն հանեմ, նրանք իսկույն կապստամբվեն։ Ցերկրորդը, մենք դեռ ժամանակ ունենք, առնվազն մինչև այն ժամանակ, մինչև կգտնենք գանձը։ Ցերրորդը, անձնակազմի մեջ դեռ կան մեզ հավատարիմ մնացած մարդիկ։ Վաղ, թե ուշ, մենք պետք է այդ ավազակախմբի հետ կռվի դուրս գանք։ Ցես առաջարկում են ցույց չտալ, որ նրանց մտադրությունը գիտենք, այլ հարձակվել նրանց վրա առաջինը, անակնկալ կերպով, յերբ նրանք այդ չեն սպասում։ Ինձ թվում է, որ մենք կարող ենք հույս դնել ձեր ծառաների վրա, այնպես չե՞, պարոն Տրելոնի։

— Ինչպես ինձ վրա, — հայտնեց կալվածատերը։

— Նրանք յերեք հոգի յեն, — ասաց նավապետը։ — Մենք ել յերեք, Գոկինսն ել — այ քեզ արդեն յոթ հոգի։ Իսկ անձնակազմից ՝ում վրա կարող ենք հույս դնել։

— Ցերևի նրանց վրա, որոնց ինքը, նավապետն է վարձել, առանց Սիլվերի ոգնությյան։

— Վոչ, — առարկեց Տրելոնին։ — Գենդսին ել յես եմ վարձել, այնին....

— Ցես ել լրիվ չափով չեմ վստահում նրան, — խոստովանեց նավապետը։

— Ցեվ բոլորն ել անգլիացի յեն, — բացականչեց կալվածատերը։ — Ճշմարիտ, պարոն, յես ցանկանում եմ նավը պայթեցնել։

— Ցեվ այդպես, պարոններ, — շարունակեց նավապետը, — ահա թե ինչ կարող եմ առաջարկել։ Մենք պետք է զգույշ լինենք և սպասենք հարմար դեպքի։ Համաձայն եմ, որ դա այնքան հեշտ չե։ Ավելի հաճելի կլիներ, յեթե նրանց վրա հարձակվեյինք իսկույն։ Սակայն մենք վոչ մի բան չենք կարող նախաձեռնել, մինչև չիմանանք, թե անձնակազմից ով է մեզ հավատարիմ։ Պետք է զգույշ լինել և սպասել — ահա բոլորը, ինչ որ կարող եմ առաջարկել։

— Այժմ ամենից շատ ոգուտ կարող է բերել մեզ համար Ջիմը, — ասաց բժիշկը։ — Նավաստիները նրանից չեն քաշվում, իսկ Ջիմը գիտող տղա յե։

— Գոկինս, յես քեզ միանգամայն վստահում եմ,— ավելացրեց կալվածատերը։

Խոստովանում եմ, որ յես շատ վախենում եյի, որ նրանց վստահությունը չարդարացնեմ։ Բայց դեպքերն այնպես դասավորվեցին, որ յես իսկապես փրկեցի նրանց կյանքը։

Քսանվեց մարդուց մենք առայժմ կարող ենք հույս դնել միայն յոթ հոգու վրա։ Յեվ յոթ հոգուց մեկը յես եյի—յերեխա։ Յեթե հայվենք միայն մեծահասակներին, մենք վեց հոգի եյինք, տասնինների դեմ։

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԻՄ ԱՐԿԱԾՆԵՐԸ ՅԱՄԱՔԻ ՎՐԱ

ԳԼՈՒԽ XIII

ԻՆՉՊԵՍ ՍԿՍՎԵՑԻՆ ԻՄ ԱՐԿԱԾՆԵՐԸ ՅԱՄԱՔԻ ՎՐԱ

Յերբ առավոտյան դուրս յեկա տախտակամածի վրա, կըղզին ինձ ուրիշ տեսակ յերևաց, քան յերեկ։ Թեև քամին հանդարտել եր, այնուամենայնիվ գիշերով բավականի առաջ եյինք գնացել և այժմ կանգնած եյինք արևելյան ափից կես ժղոն հեռու։ Կղզու մեծ մասը պատած եր մութ անտառով։ Միատեսակ մոխրագույն գունավորումը տեղ-տեղ, հովիտներում, կ՚ընդվում եր ավազոտ ափի դեղին շերտերով և ինչ որ սոճիների նման բարձր ծառերի կանաչ կատարներով։ Այս ծառերն աճում եյին յերբեմն մենակ, յերբեմն խմբով և բարձրանում եյին անտառի մակարդակից, սակայն կղզու ընդհանուր տեսքն այնուամենայնիվ շատ միապաղաղ ու մռայլ եր։ Յուրաքանչյուր բլրի գագաթին մերկ ու սուր ժայռեր եյին ցցված։ Այս բլուրներն իրենց գծագրության տարորինակ ձևով զարմացնում եյին ինձ։ Հեռայիտակը յերեք, թե չորս հարյուր ֆուտով բարձր եր մնացածներից և նույնպես ինչ որ տարորինակ եր՝ ուղղաձիգ լանջեր և արձանի պատվանդանի նման կտրված հարթ գագաթ։

Ոգկիանոսն այնքան ուժեղ եր ճոճում «Իսպանոլանդ», որ ջուրը տախտակամածին եր հասնում։ Ղեկը խփուած եր նավախելին յերբեմն ա , յերբեմն ձախ կողմից և վագլ նավը ցատկում եր, հառաչում, ճար ատում՝ որպես խաղալիք-նավ։ Աչքիս առաջ ամեն ինչ պտտվում եր։ Յես արդեն ընտելացել եյի ծովին, յերբ նավը վազում եր ալիքների վրայով, բայց

այժմ նավը խարիսխ եր ձգել և միևնույն ժամանակ շշի նման պտտվում եր ջրի մեջ։ Սրանից յես ինձ վատ եյի զգում, հատկապես առավոտները, յերբ ստամոքսս դատարկ եր։

Զգիտեմ, ինչ ազդեց ինձ վրա, արդյոք ալեկոծությունը, թե այն մոխրագույն տխուր անտառները, այն վայրի, մերկ քարերը, մակընթացության թնդյունը, սեպ ափերը, սակայն, թեև արեգակը փայլում եր պայծառ, թեև ծովային թռչունները շուրջս վխտում եյին և աղաղակելով ծովից ձուկ եյին վորսում, թեև յուրաքանչյուր վոք, բնականաբար, ուրախ կլիներ, վոր այնքան ժամանակ բաց ծովի վրա լինելուց հետո ցամաք ե տեսել, — իմ սիրտը վիշտն եր պատել։ Յեվ առաջին իսկ հայացքից յես ատեցի Դանձերի կղզին։

Այդ առավոտ մենք ծանր աշխատանք պետք ե կատարեյինք։ Վորովհետև քամի չկար, մենք պետք ե ցած թողնեյինք մակույկները, թիավարելով նավը տանեյինք յերեք թե չորս մղոն հեռու, հրվանդանն անցնեյինք և նավը մացնեյինք նեղ նեղուցը, վոր գտնվում եր Կմախքի կղզու այն կողմում։ Յես նրա տեսի մակույկներից մեկի մեջ, թեև այնտեղ յես անելու գործ չունեյի։ Արևն անտանելի կերպով այրում եր և նավաստիներն ամբողջ ժամանակ անիծում եյին իրենց ծանր աշխատանքը։ Մեր մակույկը վարում եր Ենդերսենը։ Փոխանակ ուրիշներին զսպելու, ինքն եր մրթմրթում և ամենից բարձր ձայնով հայհոյում։

— Դե լավ, — ասաց նա և հայհոյեց։ — Շուտով այս բոլորին վերջ կ։ինի։

«Վ։տ նշան ե» վճռեցի յես։ Մինչև այժմ մարդիկ աշխատում եյին յեռանդով և սիրով։ Սակայն միայն կղզին տեսնելը բավական եր, վոր կարգապահությունը թուլանա։

Յերկարահասակ Զոնը կանգնած եր ղեկապետի մոտ և ոգնում եր նրան, վոր նավը վարի։ Նա նեղուցը ճանաչում եր իր ափի նման և բոլորովին չեր վրդովվում, յերբ չափելուց յերկում եր, վոր ամեն տեղ խոր ե, քան նշանակված եր քարտեզի վրա։

— Այս նեղ անցքը փորել ե ովկիանոսի մակընթացությունը, — ասաց նա։ Ամեն անգամ մակընթացությունը բահի նման խորացնում ե։

Մենք կանգ առանք այնտեղ, վորտեղ քարտեզի վրա խարիսխ եր նկարված։

Մի ցերրորդական մղոն մեզ բաժանում եր գլխավոր կղզուց, մի յերրորդական մղոն ել Կմախքի կղզուց։ Հատակը մաքուր եր, ավազոտ։ Ընկնելիս, մեր խարիսխը թնդաց և թրոչունների յերամները, պտտվելով ու աղմկելով, բարձրացան անտառից։ Բայց մի բոպեյից հետո նրանք կրկին թաղնվեցին անտառի մեջ և ամեն ինչ լռեց։

Նեղուցն ամեն կողմից հիանալի կերպով փակված եր։ Նեղուցը թաղված եր խիտ անտառի մեջ։ Անտառը սկսում եր անմիջապես ափից։ Ափերը տափարակ եյին։ Իսկ հեռվում ամֆիթատրոնի նման բարձրանում եյին բլուրները։ Յերկու ճահճային գետ թափվում եյին նեղուցի մեջ, վորը հանդարտ լճակի յեր նման։ Այդ գետերի ափերի բուսականությունը ապշեցնում եր ինչ վոր թունավոր պայծառությամբ։ Նավից վոչ շենք եր յերևում, վոչ ցանկապատ — ծառերը նրանց առաջը բոլորովին փակել եյին և յեթե քարտեզը չլիներ, մենք կարող եյինք կարծել, վոր մենք առաջին մարդիկն ենք, վոր այցելել ենք այս կղզին, այն որվանից, յերբ նա դուրս ե յեկել ովկիանոսի խորքից։

Ոդը չեր շարժվում։ Միմիայն մի ձայն եր վրդովում անդորրությունը — մակընթացության հեռավոր աղմուկը, վոր զարնվում եր ժայռերին կղզու մյուս կողմում։ Տարորինակ նեխած հոտ եր բարձրանում նավի չորս կողմից — մգլած տերևների և փտող ծառերի ընների հոտ։ Յես նկատեցի վոր բժիշկն ամբողջ ժամանակ հոտոտում ե ու կնճռոտում, կարծես նրան հոտած ձու յեր ընկել։

— Զգիտեմ, կա այստեղ գանձ, — ասաց նա, — սակայն, յերդվում եմ իմ կեղծ ծամով վոր ջերմ ու տենդ կա։

Մակույկի մեջ յեղած մարդկանց տագնապալի վարքը, նավը վերադառնալուց հետո, սպառնական դարձավ։ Նավաստիները տախտակամածի վրա շրջելով, խոսում եյին ինչ վոր բանի մասին։ Ամենահասարակ հրամաններն ել նրանք դժկամությամբ եյին լսում և կատարում չափազանց տհաճորեն։ Մինչև անգամ խաղաղ նավաստիներին ել անբավականության վարակն եր պատել և վոչ վոք չկար, վոր նրանց կարգի հրավիրեր։ Խռովությունը, ահավոր ամպի նման, հավաքվում եր մեր գլխին։

Միայն մենք, նավասենյակի բնակիչներս չեյինք, վոր նկատել ելինք վտանգը։ Յերկարահասակ Զոնը մի խմբից մյուսն

անցնելով, ամբողջ ուժով աշխատում եր կարգ պահպանել, մերթ հաժոզելով, մերթ որինակ տալով։ Նա կաշվից դուրս եր գալիս, աշխատելով լինել սիրալիր և պատրաստակամ։ Նա ժպտում եր բոլորի դեմքին։ Յերբ վորևե հրաման եր տրվում, Ջոնն իր փայտե վոտով առաջինն եր գնում կատարելու, ուրախ գոռալով.

— Պատրաստ ե, պատրաստ ե, պարոն։

Իսկ յերբ անելու գործ չկար, մեկը մյուսի յետևից նա յերգեր եր յերգում, վոր մյուսների դժկամությունն այնքան ել նկատելի չլինի։

Այս չարագուշակ որվա մեջ կատարված դեպքերից ամենաչարագուշակը մեզ թվում եր Յերկարահասակ Ջոնի վարմունքը։

Մենք հավաքվեցինք նավասենյակը խորհրդի։

— Պարոն,— ասաց նավապետը,— յեթե յես թեկուզ մի հրաման տամ, վողջ նավը մեզ վրա կթափվի։ Դուք տեսնում եք, պարոն, թե ինչ ե կատարվում։ Բոլորն ամեն քայլափոխում կոպիտ վերաբերմունք են ցույց տալիս։ Յեթե նրանց կոպտությանը պատասխանեմ, մեզ կտոր-կտոր կանեն։ Իսկ յեթե չպատասխանեմ, Սիլվերը կարող ե նկատել, վոր ինչ վոր վատ բան կա և խաղը տանուլ տված կլինենք։ Ջե՞ վոր հիմա մենք կարող ենք հույս դնել միայն մի մարդու վրա

— Ո՞ւմ վրա,— հարցրեց կալվածատերը։

— Սիլվերի վրա, պարոն,— պատասխանեց նավապետը։ — Նա գործը հարթելու մեզանից քիչ ցանկություն չունի։ Նա կաշվից դուրս ե գալիս, վոր ժամանակից առաջ խռովություն չանեն։ Յես առաջարկում եմ հնարավորություն տալ նրան, վոր համոզի նրանց ինչպես պետքն ե։ Արձակենք նավաստիներին, վոր գնան ափն զբոսնելու։ Յեթե նրանք կգնան բոլորը միասին, մենք նավը կգրավենք։ Յեթե նրանցից վոչ վոք չգնա, մենք կփակվենք նավասենյակում և կպաշտպանվենք։ Իսկ յեթե կգնան միայն մի քանի հոգի, հավատացեք ինձ, վոր Սիլվերը յես կբերի նավը վոչխարների պես հնազանդ։

Այդպես ել վորոշեցինք։ Հուսալի մարդկանց լցված ատրճանակներ բաժանեցինք։ Գենտերին, Ջոյսին և Ռեդրետին հայտնեցինք մեր պլանների մասին։ Իմանալով այդ, նրանք այնքան ել չզարմացան և մեր հաղորդումն ընդունեցին ավելի հանգիստ,

քան մենք սպասում եյինք։ Հետո նավապետը տախտակամածը դուրս յեկավ և դիմեց անձնակազմին.

— Տղերք,— ասաց նա,— այսոր շատ աշխատանք կատարեցինք և բոլորս ել սաստիկ հոգնած ենք։ Ափում զբոսնելը վոչ վոքի վնաս չի տա։ Մակույկներն իջեցված են։ Ավուզում ե, թող ափը գնա։ Կարող եք ձեզ հետ թիանավակ տանել։ Արևի մայր մտնելուց կես ժամ առաջ յես թնդանոթ կարձակեմ։

Յերևի, այդ հիմարները կարծեցին, թե գանձը կգտնեն, հենց վոր ափը դուրս գան։ Նրանց դժկամությունը միանգամից չքացավ։ Նրանք այնքան բարձր ուռա գոռացին, վոր արձագանքը տարածվեց հեռավոր բլուրների մեջ և վախեցած թռչունները կրկին պտույտներ կատարեցին մեր կայանի վրա։

Նավապետը շատ խելացի վարվեց։ Նա իսկույն հեռացավ, հանձնարարելով Սիլվերին, վոր ափ դուրս գալը դադարեցնի։ Ուրիշ ի՞նչ կերպ կարող եր վարվել։ Ջե՞ վոր յեթե ճնար տախտակամածի վրա, նա չեր կարող ձևանալ, վոր չգիտի, թե ինչ ե կատարվում։ Ամեն ինչ որվա պես պարզ եր։ Ավազակներն այժմ ուրիշ նավապետ ունեյին — Սիլվերը— և միայն նրա կարգադրություններն եյին լսում։ Իսկ խաղաղ նավաստիները — շուտով հայտնաբերվեցին, վոր գտնվում եյին նավի վրա և այդպիսիները— բոլորովին հիմար դուրս յեկան։ Կարելի յե, այնուամենայնիվ, վոր բոլոր նավաստիներին մեր դեմ եյին դուրս բերել առաջնորդները սակայն նրանք շատ հեռու գնալ չեյին ցանկանում։ Անհնազանդությունը, ծուլությունը, տրտունջալը մի բան ե, իսկ նավ գրավելը և բոլորովին անմեղ մարդկանց սպանելն ուրիշ բան։

Յերկար ժամանակ վիճելուց հետո, նավաստիները բաժանվեցին այսպես. վեց հոգի մնացին նավի մեջ, իսկ մնացած տասներեք հոգին, այդ թվում նաև Սիլվերը, սկսեցին նստել մակույկների մեջ։ Ահա այս ժամանակ յես հանկարծ վորոշեցի մի հանդուգն քայլ անել։ Այդ քայլը հետագայում մեզ մահից փրկեց։ Յես դատեցի այսպես։ Մենք չենք կարող նավը գրավել, քանի վոր Սիլվերն իր ավազակներից վեց հոգի թողել ե նավի վրա։ Մյուս կողմից, քանի վոր նրանցից մնացել են ընդամենը վեց հոգի, ուրեմն, նրանք չեն պատրաստվում իսկույն հարձակվել մեզ վրա։ Հետևապես նավի վրա յես պետք չեմ։ Յես վորոշեցի ափ դուրս գալ։ Մի ակնթարթում յես թռա նավեզրից և մակույկն իջա, վորն իսկույն ճանապարհվեց։

Վոչ վոք ինձ վրա ուշադրություն չդարձրեց, միայն առջևի թիավարն ասաց.

— Այդ դու՞ ես, Ջիմ, Գլուխդ ցած պահիր։

Սակայն Սիլվերը, վոր նստած եր առջևի մակույկի մեջ, ուշադրությամբ նայեց մեր մակույկին և ձայն տվեց, համոզվելու համար, վոր իսկապես ես եմ։ Այդ ժամանակ ես ափսոսեցի, վոր հեռացա նավից։

Մակույկները դեպի ափն եյին սլանում։ Բայց այն մակույկը, վորի մեջ ես եյի նստած, ավելի թեթև եր և թիավարներն ել՝ ամենալավերը։ Մենք միանգամից մյուս մակույկից առաջ ընկանք։ Հենց վոր մակույկի քիթն ափին դիպավ, ես մի ճյուղ բռնեցի, դուրս թռա ու մտա անտառը։ Իսկ Սիլվերն ու իր ընկերները հարյուր յարդի չափ յետ մնացին։

— Ջիմ, Ջիմ, — կանչեց նա։

Բայց, հասկանալի յե, վոր ես նրա կանչի վրա վոչ մի ուշադրություն չդարձրի։ Առանց յետ նայելու, թռչկոտալով, թփերը ջարդելով, խոտերի մեջ սուզվելով, ես վազում եյի առաջ ու առաջ, մինչև վոր ուժասպառ եղա։

ԳԼՈՒԽ XIV

ԱՌԱՋԻՆ ՀԱՐՎԱԾԸ

Գոհ, վոր ազատվեցի Յերկարահասակ Ջոնից, ես ուրախացա և սկսեցի հետաքրքրությամբ դիտել անծանոթ վայրը։

Սկզբում ես ընկա ճահճի մեջ, վորտեղ բուսել եյին ուռիներ, յեղեգն և ինչ վոր ինձ անծանոթ տեսակի ծառեր։ Հետո դուրս յեկա բաց ավազոտ հարթությունը, վորը մի մղոնի չափ յերկարություն ուներ, վորտեղ աճում եյին փիչ թվով սոճիներ և վոլորված ինչ վոր ծուռ ու մուռ ծառեր, կաղնու նման, սակայն բաց դույնի տերևներով, ինչպես ուռենին։ Հեռվից յերևում եր մի յերկգագաթ սար, վորի զույգ տարորինակ ժայռոտ կատարները արևի տակ փայլում եյին։

Առաջին անգամ ես զգացի անհայտ յերկրներ հետազոտողների ուրախությունը։ Կյանքն անմարդաբնակ եր։ Այն մարդիկ, վորոնք յեկել եյին ինձ հետ միասին, մնացել եյին հեռվում, յետևում և վոչ վոքի չեյի կարող հանդիպել բացի վայրի գազաններից և թռչուններից։ Ցեսը զգուշությամբ անցնում եյի ծառերի միջով։ Այստեղ, այնտեղ տեսնում եյի անծանոթ բույսեր ու ծաղիկներ, այստեղ, այնտեղ հանդիպում եյի ոձերի։ Նրանցից մեկը նստել եր ժայռի ճեղքում։ Ոձը գլուխը բարձրացրեց և տարորինակ, պտտվող հոլի ձայնով ճչաց։ Իսկ ես պատկերացում ել չունեյի, վոր դա հոչակավոր բոժոժավոր ոձն ե, վորի խայթոցը մահ ե պատճառում։

Վերջապես մտա կաղնու նման ծառերի մի խիտ անտառ։ Հետագայում իմացա, վոր դրանք մշտադալար կաղնի յեն կոչվում։ Նրանք աճում եյին ավազի մեջ, շատ ցածր, ինչպես տատասկենու թփերը։ Նրանց հանգուցավոր ճյուղերը հրաշալի կերպով ծռված եյին, տերևները խիտ եյին, ինչպես հարդե տանիք։ Այդ ծառերի թփուտներն ավելի ու ավելի բարձրանալով, ավազոտ զառիվայրից իջնում եյին լայն, յեղեգն աճած ճահճի մեջ, վորի միջով անցնում եր նեղուցը թափվող գետակներից մեկը։ Ճահճից գոլորշի յեր բարձրանում և Հեռադիտակի ուրվագծերը դողդողում եյին տոթ ամառվա մեջ։

Հանկարծ յեղեգնը խշշաց։ Կռնչալով թռավ մի վայրի բադ, նրա յետևից մի ուրիշը և շուտով ճահճի վրա թռչունների մի ահագին ամպ կախվեց, վորն աղաղակելով պտտվում եր ոդում։ Ցեսը իսկույն գլխի ընկա, վոր մեր նավաստիներից վորևե մեկը ճահճի մոտ ե գալիս։ Ցեվ չսխալվեցի։ Շուտով լսեցի մի հեռավոր ձայն, վորը մոտենալով, ավելի բարձրանում եր։

Ցեսս սաստիկ վախեցա, ծլկվեցի մոտակա մշտադալար կաղնիների անտառը և մկան պես թաք կացա։

Մի ուրիշ ձայն պատասխանեց։ Հետո կրկին խոսեց առաջին ձայնը և ես այդ ձայնը ճանաչեցի — Սիլվերի ձայնն եր։ Նա ինչ վոր բանի մասին անդադար խոսում եր։ Նրա ուղեկիցը պատասխանում եր կարուկ կերպով։ Ձայներից դատելով, նրանք խոսակցում եյին տաք-տաք, համարյա թե թշնամաբար, սակայն խոսքերը վոկել չկարողացա։

Վերջապես նրանք լռեցին և, յերևի, նստեցին, վորովհետև թռչունները հետզհետե հանգստացան և ճահիճն իջան։

Ցեվ ես զգացի, վոր թեթևվում եմ իմ պարտականություններից։ Ցեթե ես այնքան հիմար եմ, վոր ափը դուրս յեկա ծովահենների հետ, պետք ե, առնվազն, լսել թե ինչի մասին են նրանք խոսում։ Իմ պարտականությունը հրամայում եր

ինձ ծածուկ մոտենալ նրանց, վորքան կարելի յե մոտիկ, և թաքնվել հանգուցավոր թփերի խիտ տերևների մեջ։ Յես կարող եյի ճշտությամբ վորոշել այն տեղը, վորտեղ նստած են յերկու նավաստիները — մի քանի թոչունների ձայներից և հուզմունքից, վորոնք դեռևս պտտվում եյին նրանց գլխին։

Դանդաղ, բայց համառ կերպով վոտքերիս ու ձեռքերիս վրա առաջ սողացի։ Վերջապես գլուխս բարձրացնելով և նայելով տերևների լուսանցիկ արանքից, յես տեսա կանաչ հովտի վրա, ճահճի ոտ, ծառերի տակ, Ջոն Սիլվերին և ելի մի նավաստու։ Նրանք իրար դեմ կանգնած, խոսում եյին։

Յերկուսին ել արևը վառում եր։ Սիլվերը գլխարկը շպրտեց գետնի վրա և նրա մեջ, ուռած, սպիտակ փայլող քրտինքով պատած դեմքը դարձված եր դեպի խոսակիցը։

— Լարեկամս,— ասում եր նա,— դու ինձ համար մաքուր վոսկի յես։ Միթե դու կարծում ես, վոր յես կանհանգստանալի քո մասին, յեթե ամբո՛ղջ սրտով չսիրեյի քեզ։ Ամեն բան արված է, վոչինչ չես կարող փոխել։ Յես ուզում եմ քեզ մահից ազատել, ահա թե ինչու յես քեզ հետ եմ։ Յեթե մեր նավաստիներն իմանային, թե ինչի մասին եմ քեզ հետ խոսում, թիմ, մատները, թե ինչ կանեյին ինձ։

— Սիլվեր,— պատասխանեց ծովագնացը, և յես նկատեցի վոր նրա յերեսը կարմրել է և խոպոտ կոկռան ձայնը ձգված պարանի պես դողդողում է,— Սիլվեր, դու արդեն յերիտասարդ չես և կարծես թե խիղճ ունես։ Համենայն դեպս վոչ վոք քեզ սրիկա չի համարում։ Դու փող ունես... Շատ փող... Ավելի, քան ուրիշ ծովագնացները Միևնույն ժամանակ դու վախկոտ չես։ Խնդրեմ, բացատրիր ինձ, թե ինչու յես գլուխ դնում այդ անարդ կեղտաշորերին։ Վոչ, դու նրանց հետ համամիտ չես կարող լինել։ Յես ավելի շուտ կթողնեմ, վոր գլուխս կտրեն, բայց իմ պարտականությանը չեմ դավաճանի։

Հանկարծակի ազմուկն ընդհատեց նրան։ Վերջապես յես զտա մի ազնիվ ծովագնաց և միևնույն ժամանակ տեղեկություն լսեցի մի ուրիշ ազնիվ ծովագնացի մասին։ Հեռվից, ճահճի յեզերքից տարածվեց մի սուր գայրույթի աղմուկ, հետո յերկրորդը և հետո սիրա կտրատող հեծեծանք։ Հեռադիտակի ժայռերի արձագանքը մի քանի անգամ կրկնեց։ Ճահճային թռչունների

բանակը կրկին վեր բարձրացավ և յերկնքի առաջը փակեց։ Դեռ յերկար ժամանակ այդ մահվանից առաջ արձակած հեծեծանքը հնչում եր իմ ականջին, թեև շուրջս կրկին լռություն տիրեց, վորը խախտվում եր միայն իյնող թռչունների յերամների թևերի թափահարումով և հեռավոր մակընթացության թնդյունով։

Թոմը խթանահարված ձիու պես ցնցվեց։ Իսկ Սիլվերը մինչև անգամ աչքն էլ չթարթեց։ Նա կանգնած եր հենված հենակին և նայում եր իր խոսակցին, ինչպես խայթելու պատրաստված ոձ։

— Ջոն,— ասաց ծովագնացը, պարզելով նրան ձեռքը։

— Ձեռքդ հեռու,— գոռաց Սիլվերը, լարախաղացի ճարպկությամբ ու արագությամբ մի քայլ յետ թռչելով։

— Լավ, Ջոն Սիլվեր, ձեռքս յետ կքաշեմ,— ասաց ծովագնացը։— Բայց, ճշմարիտ եմ ասում, վոր քո անմաքուր խիղճն ե միայն ստիպում քեզ, վոր վախենաս ինձանից։ Աղաչում եմ, բացատրիր ինձ, թե ինչ ե պատահել այնտեղ։

— Ի՞նչ ե պատահել,— հարցրեց նրան Սիլվերը։ Նա ժպտաց, բայց վոչ այնքան լայն, վորքան միշտ և նրա աչքերը մեծ դեմքի վրա փոքրացան ինչպես ասեղների ծայրեր և ապակու կտորների նման փայլեցին։

— Ի՞նչ ե պատահել։ Իմ կարծիքով դա Ալանն ե։

Դժբախտ Թոմն անսահման անվեհերությամբ ասաց.

— Ալանը։ Հանգիստ նրա վոսկորներին, նա մեռավ իսկական ծովագնացի պես։ Իսկ դու, Ջոն Սիլվեր... Մենք յերկար ժամանակ ընկերներ ենք յեղել, բայց այժմ էլ այդ չի լինի։ Թող յես շան նման սատկեմ, բայց պարտականությանս չեմ դավաճանի։ Դու սպանեցիր Ալանին, այնպես չե։ Ուրեմն ինձ էլ սպանիր, յեթե կարող ես։ Բայց գիտցիր, վոր յես քեզանից չեմ վախենում։

Այս խոսքերից հետո անվեհեր ծովագնացը մեջքը շրջեց դեպի խոհարարը և քայլեց դեպի ափը։ Բայց նրան հեռու գնալ չհաջողվեց։ Ջոնը ճչաց, բռնեց ծառի ճյուղից, ուսի տակից հանեց իր հենակը և նետեց նրա յետևից, ինչպես նիզակ։ Անասելի ուժով ձգված հենակը շվվոցով անցավ ոդով և սուր ծայրով մխվեց նրա մեջքին, թիակների մեջտեղում։ Խեղճ Թոմը թևերը թափահարեց ու ընկավ։

Չգիտեմ՝ ծանր եր արդյոք վիրավորվելը։ Ձայնից դատելով

նրա վոգնաշարը կոտրվել եր։ Սիլվերը չթողեց, վոր նա ուշքի գա։ Առանց հենակի, մի վոտով, նա կապկի ճարպկությամբ թռավ Թոմի վրա և դանակը մինչև կոթը խրեց նրա անոգնական մարմնի մեջ։ Թփերի մեջ նստած, յես լսում եյի, թե ինչպես ծանր եր շնչում մարդասպանը հարվածելիս։

Յես յերբեք գիտակցությունս չեմ կորցրել և չգիտեմ, թե ինչ բան ե դա։ Սակայն այդ ժամանակ վոդջ աշխարհը լողաց իմ շուրջ, ինչպես մառախուղի մեջ։ Յեվ Սիլվերը, և՛ թռչունները և՛ Հեռադիտակի գագաթը— բոլորը պտտվում, տատանվում եյին։ Ականջներս լցվեցին զանազան տեսակի զանգերի և ինչ վոր հեռավոր ձայներով։

Յերբ ուշքի յեկա, հենակն արդեն սրիկայի կռան տակն եր, գլխարկն էլ՝ գլխին։ Նրա առջև անշարժ ընկած եր Թոմը։ Սակայն մարդասպանը նրա վրա չեր էլ նայում։ Նա մի փունջ խոտով մաքրում եր իր արյունոտ դանակը։

Շուրջս ամեն ինչ առաջվա պես եր։ Արևն անխնա կերպով այրում եր և՛ այս ճահիճը, վորի վրայից մշուշը քուլա-քուլա բարձրանում եր և՛ լեռան գագաթը։ Յեվ չեյի հավատում, վոր մի րոպե առաջ աչքիս առաջ մարդ սպանեցին։

Ջոնը ձեռքը գրպանը տարավ, գրպանից մի սուլիչ հանեց և մի քանի անգամ շվացրեց։ Յես, իհարկե, այդ ազդանշանի նշանակությունը չգիտեյի, բայց իմ բոլոր յերկյուղները միանգամից զարթնեցին։ Այստեղ մարդիկ կգան։ Ինձ կնկատեն։ Նրանք արդեն յերկու ազնիվ ծովագնաց են սպանել։ Ի՞նչու Թոմից և Ալանից հետո յես չպետք ե զոհ դառնայի։

Աշխատելով չաղմկել, յես չորեքթաթ տալով դուրս յեկա թփուտից և դեպի անտառը սլացա։ Վազելիս լսեցի, թե ինչպես ծեր ծովահենը կանչում ե իր ընկերներին։ Այդ ձայները կարծես ինձ թևեր տվին։ Անտառը մնաց յետևիս, յես վազեցի այնպես արագ, վոր յերբեք չեյի վազել։ Յես սլանում եյի տարբերություն չդնելով ճանապարհների մեջ, միայն թե մարդասպանից հեռու փախչեմ։ Ցուրաքանչյուր քայլափոխում իմ յերկյուղն ավելանում եր և վերջապես մի խենթ սարսափ դարձավ։

Դրությունս հուսահատական եր։ Թնդանոթն արձակվելուց հետո, միթե յես կհամարձակվեյի մարդկային արյունով թաթախված այդ ավազակների հետ մակույկ նստել։ Միթե նրանցից վորև մեկը, հենց վոր տեսնի ինձ, չի վազորի իմ վիզը։

Հենց միայն իմ բացակայությունը միթե՞ չեր ապացուցում, որ ես վախենում եմ նրանցից և չի՞ նշանակում, որ ամեն բան իմացել եմ։ Ամեն ինչ վերջացած է, մտածեցի ես։ Մնաս բարով, «Իսպանոլա»։ Մնաք բարով, կալվածատեր, բժիշկ, նավապետ։ Ես կյանքից կդրկվեմ կամ սովից, կամ բանդիտի դանակից։

Ես սլանում եյի չիմանալով թե ուր, և դուրս յեկա յերկզլուխ գագաթ ունեցող մի ցածրիկ սարի ստորոտը։ Կղզու այս մասում մշտադալար կաղնիներն այնքան ել խիտ չեյին աճում և իրենց չափով նման եյին վոչ թե թփերի, այլ սովորական անտառային ծառերի։ Յերբեմն նրանց վրա բարձրանում եյին հիսուն և մինչև անգամ յոթանասուն ֆուտ բարձրություն ունեցող մենավոր յեղևիններ։ Ոգն այստեղ թարմ եր ու ծաքուր և բոլորովին այնպես չեր, ինչպես ներքևում, ճահճի մոտ։

Բայց այստեղ ինձ հետամուտ եր լինում մի ուրիշ վտանգ և իմ սիրտը դարձյալ սարսափից մարեց։

ԳԼՈՒԽ XV

ԿՂԶԻԱՅԻՆ

Ձառիվերի քարքարոտ լանջից մանրիկ քարեր թափվեցին և խշշալով ցատկոտեցին ծառերի միջով։ Ես ակամա վերև նայեցի և տեսա մի տարորինակ եյակ, որն արագ թռչում եր յեղևնու ընի յետևից։ Ի՞նչ եր։ Ա՞րջ։ Մա՞րդ։ Կապի՞կ։ Ես կարողացա տեսնել միայն ինչ վոր մի սև ու բրդոտ բան և սարսափից կանգ առա։

Ցեվ այսպես յերկու ճանապարհն ել կտրված են։ Ցետևից հետամուտ են լինում մարդասպանները, առջևից՝ այս անհայտ հրեշը։ Ցեվ միանգամից գերադասեցի հայտնի վտանգն անհայտից։ Մինչև անգամ Սիլվերն այնքան սարսափելի չեր թվում, վորքան այս անտառային կենդանին։ Ես շրջվեցի և ամեն րոպե յետ նայելով, վազեցի դեպի մակույկների կողմը։

Հրեշը, ճանապարհը ծռելով, իմ առաջը դուրս յեկավ։ Ես շատ հոգնած եյի։ Բայց յեթե մինչև անգամ հոգնածություն ել չզգայի, միևնույն է չեյի կարող արագության մեջ մրցել այդ տեսակ արագաշարժ թշնամու հետ։ Տարորինակ

եյակը յեղնիկի արագությամբ մի ընից մյուս ընի մոտ եր վազում։ Նա շարժվում եր յերկու վոտի վրա, մարդուն նման թեև շատ եր ծռված դեպի գետին։ Այո՛, դա մարդ եր, այդ բանում յես այլևս չեյի կարող կասկածել։

Ես հիշեցի այն բոլորն ինչ վոր լսել եյի մարդակերների մասին և արդեն պատրաստվում եյի ոգնություն կանչել։ Սակայն այն միտքը, որ իմ առջև մարդ է կանգնած, թեև վայրենի, վորոշ չափով արիացրեց իրա։ Ցեվ վախը դեպի Սիլվերը հանկարծ կենդանացավ։ Ես կանգնեցի և մտածում եյի, թե ինչպես ծլկեմ թշնամուց։ Հետո հիշեցի, որ մոտս ատրճանակ կա։ Հենց վոր տեսա, որ յես անոգնական չեմ, քաջությունս վերադարձավ և յես վճռական կերպով կղզու դեմը վազեցի։

Նա կրկին թաքնվեց, այս անգամ ծառի յետևում։ Նկատելով, որ յես գնում եմ նրա մոտ, նա դուրս յեկավ իր թաքստոցից և ուղղում եր մի քայլ անել դեպի ինձ։ Հետո անվճռականորեն կանգնեց, յետ-յետ քաշվեց և հանկարծ ծունկ չոքեց և աղերսանքով ձեռքերը պարզեց դեպի ինձ, որն ինձ սաստիկ զարմացրեց ու վրդովեց։

Ես նորից կանգ առա

— Ո՞վ եք դուք,— հարցրի յես

— Բեն Գաննը,— պատասխանեց նա։ Նրա ձայնը խռպոտ եր և վայրի, վորպես ժանգոտ կողպեքի ճռռոցը։— Ես դժբախտ Բեն Գաննն եմ։ Ցերեք տարի յե, վոչ մի մարդու հետ չեմ խոսել։

Սակայն այնպիսի սպիտակ մարդ եր, ինչպես յես և դեմքի գծագրությունը մինչև անգամ հաճելի յեր։ Միայն մաշկն այնպես եր սևացել արևի տակ, որ մինչև անգամ շրթունքներն ել սև եյին։ Այն բոլոր մուրացիկներից, որ յես տեսել եյի իմ կյանքում, սա ամենից գլխովածն եր։ Նրա հագուստը կազմված եր հին առագաստի լաթերից և նավաստու վերնաշապկից։ Մի լաթը մյուսի հետ ամրացված եր կամ կոճակով, կամ ծառի ճյուղով, կամ կպրած վուշի թելով։ Միակ չպատռոտված բանը, որ կար նրա վրա, կաշվե գոտին եր պղնձե ճարմանդով։

— Ցերեք տարի՞,— բացականչեցի յես։— Ձեր նավը խորտակվե՞լ է։

— Վոչ, բարեկամս,— ասաց նա,— ինձ թողել են այստեղ, կղզու վրա։

Ցես լսել եյի ծովահենների այդ սարսափելի պատժի մասին. մեղավորին իջեցնում եյին վորևե հեռու, անմարդաբնակ կղզի և թողնում այնտեղ, տալով քիչ քանակությամբ վառոդ ու գնդակ։

— Ինձ գցել են այս կղզին յերեք տարի առաջ,— շարունակեց նա։— Այդ որվանից կերակրվում եմ այծի մսով, պտուղներով ու վոստրեներով։ Մարդն ընդունակ է ապրելու ամեն տեղ, ուր վոր նրան գցեն։ Բայց յեթե դու իմանայիր, սիրելիս, թե ինչպես իմ սիրտը կարոտել է մարդու ուտելիքին։ Մի կտոր պանիր չկա՞ մոտդ։ Վա՜չ։ Դե, տեսնում եք, յես յերկար ժամանակ է, վոր յերազում պանիր եմ տեսնում։ Զարթնում եմ, բայց պանիրը չկա։

— Յեթե ինձ հաջողվի նավը վերադառնալ,— ասացի յես,— դուք, ա՛յ, այսպիսի կտոր պանիր կստանաք։

Նա շոշափում եր իմ բաճկոնը, շոյում ձեռները, դիտում կոշիկները և լուռ, յերեխայի նման ուրախանում եր, վոր իր առջև մարդ է տեսնում։ Սակայն, լսելով իմ պատասխանը, նա ինձ վրա նայեց մի տեսակ խորամանկությամբ։

— Յեթե քեզ հաջողվի նավը վերադառնալ,— կրկնեց նա իմ խոսքերը։— Իսկ ո՞վ կարող է քեզ խանգարել։

— Դե, իհարկե, վոչ դուք,— պատասխանեցի յես։

— Իհարկե, վոչ յես,— բացականչեց նա։— Իսկ քո անունն ինչ է, բարեկամս։

— Ջիմ,— ասացի յես։

— Ջիմ, Ջիմ,— կրկնում եր նա հաճույքով։— Այո՛, Ջիմ, յես այնպիսի կյանք եմ վարել, վոր ամաչում եմ քեզ պատմել։ Ինձ վրա նայելով, դու կհավատաս արդյոք, վոր իմ մայրը շատ լավ ու ազնիվ կին է յեղել։

— Դժվար է հավատալ,— համաձայնեցի յես։

— Նա հաղվագյուտ կին եր,— ասաց նա։— Ցես բարեկիրթ, քաղաքավարի տղա եյի և կարողանում եյի այնպես արագ անգիր կրկնել հավատի ուսմունքը, վոր մի խոսքը մյուսից տարբերել չեր կարելի։ Ցեվ ահա թե յես ինչ դարձա, Ջիմ։ Ցեվ այդ բոլորը նրանից յեղավ, վոր յես յերիտասարդ ժամանակ գնում եյի գերեզմանատուն գիր ու արծիվ խաղալու։ Ատված վկա, սկսեցի գիր ու արծիվով և գլորվեցի։ Մայրս ասաց, վոր իմ վերջը լավ չի լինի և նրա գուշակությունը կատարվեց։ Ասենք, լավ յեղավ, վոր յես ընկա այս կղզին։ Մենակության մեջ յես շատ

մոռացեցի և զղջացի։ Այժմ արդեն ինձ խմիչքով վոչ վոք չի կարող հրապուրել։ Իհարկե, յես խմիչքից այժմ ել չեմ հրաժարվի, բայց քիչ կխմեմ, մի մատնոցից վոչ ավելի... Յես ինձ խոսք եմ տվել ուղղվել և այժմ արդեն ճանապարհից չեմ դուրս գա, կտեսնես։ Իսկ վոր գլխավորն և, Ջիմ,— նա յետ նայեց և ձայնը ցածրացրեց,— չե՞ վոր յես այժմ հարստացել եմ։

Այն ժամանակ յես վերջնականապես համոզվեցի, վոր, մենակության մեջ, խեղճը խելագարվել է։ Յերևի իմ միտքն արտացոլվել եր իմ դեմքի վրա, վորովհետև նա տաքացած կրկնեց՝

— Հարուստ։ Հարուստ։ Լսիր, Ջիմ, յես քեզ մարդ կդարձնեմ։ Ա՜խ, Ջիմ, դու կորհնես ճակատագիրը, վոր առաջինը գտար ինձ։

Հանկարծ նրա դեմքը մռայլվեց, նա սեղմեց իմ ձեռքը և սպառնական կերպով մատը բարձրացրեց.

— Ճշմարիտն ասա, Ջիմ, սա Ֆլինտի նավը չե՞։

Գլխումս մի բախտավոր միտք ծագեց։ Այս մարդը մեր զինակիցը կարող է դառնալ։ Յեվ յես իսկույն պատասխանեցի նրան.

— Վո՛չ, Ֆլինտի նավը չե, Ֆլինտը մեռել է։ Բայց քանի վոր դուք ուզում եք իմանալ ճշմարտությունը, ահա։ Նավի վրա Ֆլինտի հին ընկերներից մի քանիսը կան և այդ հանգամանքը մեզ համար մեծ դժբախտություն է։

— Կա՞ արդյոք... մի վոտանին,— գոչեց նա շնչապատառ լինելով։

— Սիլվե՞րը,— հարցրեցի յես։

— Սիլվերը, Սիլվերը։ Այո, նրա անունը Սիլվեր եր։

— Նա մեզ մոտ խոհարար է։ Յեվ ղեկավարում է ավազակախումբը։

Նա ղեռևս բռնել եր իմ ձեռքը, սակայն այս խոսքերից հետո, քիչ մնաց, վոր կոտրի։

— Յեթե քեզ ուղարկել է Յերկարահասակ Ջոնը,— ասաց նա,— յես կորած եմ։ Գիտե՞ս արդյոք, թե վորտեղ ես գտնվում։

Յես պատմեցի նրան բոլորը— և՛ մեր ճանապարհորդության և մեր տանջալի դրության մասին։ Նա ինձ լսեց մեծ ուշադրությամբ, և յերբ վերջացրի, գլուխս շոյեց.

— Դու սքանչելի տղա յես,— ասաց նա։— Դուք բոլորդ այժմ կապված եք մեռյալ հանգույցով։ Հույսներդ դրեք Բեն Գանների վրա և նա ձեզ կփրկի։ Ասա, ի՞նչպես կվերաբերվի ձեր կալվածատերը դեպի այն մարդը, վորը ձեզ փորձանքից կազատի։

Յես ասացի, վոր կալվածատերն աշխարհիս ամենառատաձեռն մարդն է։

— Լավ, լավ, բայց գիտե՞ս,— շարունակեց Բեն Գանները,— յես չեմ պատրաստվում նրանից ծառայի սպասազգեստ կամ դռնապանի պաշտոն խնդրելու։ Յես ուզում եմ իմանալ, նա կհամաձայնի՞ արդյոք տալ ինձ գոնե մի հազար ֆունտ այն փողերից, վորոնք առանց այն ել իմն են։

— Համոզված եմ, վոր կտա,— պատասխանեցի յես։— Բոլոր նավաստիները պետք է նրանից իրենց բաժին գանձն ստանային։

— Յեվ ինձ տուն կտանի,— հարցրեց նա, զննող հայացքով նայելով ինձ։

— Իհարկե,— բացականչեցի յես։— Կալվածատերն իսկական ջենտլմեն է, յեթե մենք ազատվենք ավազակներից, այնպիսի փորձված ծովագնացի ոգնությունը, վորպիսին դուք եք, նավի վրա չափազանց հարկավոր կլինի։

— Այո,— ասաց նա,— ուրեմն դուք անպատճառ կտանե՞ք ինձ։

Յեվ թեթևացած՝ հառաչեց։

— Իսկ այժմ լսիր, թե ինչ կպատմեմ քեզ,— շարունակեց նա։— Յերբ Ֆլինտը թաղեց գանձը, յես նավի վրա եյի։ Նրա հետ կային նաև վեց ծովագնաց— առողջ, ուժեղ մարդիկ։ Նրանք կղզու վրա մնացին մի շաբաթի չափ, իսկ մենք գտնվում եյինք հին «Ծովացուլի» վրա։ Մի գեղեցիկ որ տեսանք մի մակույկ, վորի մեջ նստած եր Ֆլինտը, վորի գլուխը կապված եր կապույտ թաշկինակով։ Արևը դուրս եր գալիս։ Նա գունատ եր, ինչպես մահը և գալիս եր մենակ, իսկ մնացած վեցն սպանված եյին... Սպանված ու թաղված եյին, այո։ Թե ինչպես եր կարողացել բոլորին սպանել, վոչ վոք մեզանից յերբեք չիմացավ։ Նրանք կռվել են, հետո սկսել է կոտորածը և նա բոլորին սպանել է,— մեկը՝ վեցին... Բիլլի Բոնսն ավագ նավաստի յեր, իսկ Յերկարահասակ Ջոնը՝ ընակարանապետ։ Նրանք հարցրել են Ֆլինտին, թե վո՞րտեղ է գանձը։ Նա պատասխանել է. գնացեք ափը և վորոնեցեք։— Սակայն յերդվում եմ վորոտով, վոր նավը ձեզ չի սպասի։ Ահա թե ինչ ասաց նա։ Իսկ յերեք տարի

առաջ յես ուրիշ նավի վրա եյի, և մենք տեսանք այս կղզին. «Տղերք,—ասացի յես,— այստեղ Ֆլինտը գանձ է թաղել։ Ափն իջնենք և վորոնենք»։ Նավապետը շատ բարկացավ։ Բայց բոլոր նավաստիներն ինձ հետ համամիտ եյին և մենք մոտեցանք ափին։ Տասերկու որ վորոնեցինք, բայց գանձը չգտանք։ Ամեն որ ընկերներս ինձ ավելի ու ավելի եյին հայհոյում։ Վերջապես նրանք հավաքվեցին նավը։ «Իսկ դու, Բենյամին Գանն, մնա այստեղ, ասացին նրանք։— Ահա քեզ հրացան, բահ և լինգ, Բենյամին Գանն... Մնա այստեղ և Ֆլինտի փողերը վորոնիր»։ Այդ որվանից, Ջիմ, ահա յերեք տարի յե ապրում եմ այստեղ և վոչ մի անգամ մարդկային աղնիվ կերակուր չեմ տեսել։ Նայիր ինձ. մի՞թե յես հասարակ նավաստու նման եմ։ Վոչ, ասում ես, նման չե՞մ։ Ցավ յերբեք էլ նման չեմ յեղել։

— Այդպես էլ ասա քո կալվածատիրոջը, Ջիմ. նա յերբեք հասարակ նավաստու նման չի յեղել։— շարունակեց նա։— Ասա նրան, վոր Գանը յերեք տարի յեղել է այս կղզու վրա, մենակ, յեվ գիշեր, և՛ ցերեկ, և՛ լավ յեղանակին, և՛ անձրևին։ Ցերբեմն, կարելի յե, նա հիշել է իր զառամյալ մորը, թեև նա վաղուց կենդանի չե (այդպես էլ ասա նրան)։ Սակայն իր ժամանակի մեծ մասը (իսկ ոա անպատճառ ասա նրան , իր ժամանակի մեծ մասը Գանը պարապել է ուրիշ գործերով։ Ցավ այս խոսքերն ասելիս կսմթիր նրան, այ, այսպես։

Ցավ նա կրկին բարեկամաբար կսմթեց ինձ։

— Դու նրան,— շարունակեց նա,— ահա թե էլ ինչ ասա. Գանը հրաշալի մարդ է (այդպես էլ ասա նրան)։ Գանը գիտե պարոնի և ծովահենի մեջ յեղած տարբերությունը, վորովհետև նա ինքը մի ժամանակ ծովահեն է յեղել։

— Ինչ վոր դուք ասացիք, յես համարյա թե վոչինչ չհասկացա,— ասացի յես։— Սակայն այդ այժմ կարևոր չե, վորովհետև միևնույն է, չգիտեմ, թե ինչպես գնամ նավը։

— Ա՜,— ասաց նա,— քո գործը վատ է։ Դե լավ, յես մի նավակ ունեմ, վորն ինքս եմ շինել ինձ համար, իմ սեփական ձեռքերով։ Թաքցրել եմ սպիտակ ժայռի տակ։ Վորևե փորձանքի ժամանակ, մենք կարող ենք այդ նավակով գնալ, յերբ կմթնի... Բայց սպասիր,— գոչեց նա հանկարծ։— Ի՞նչ է կատարվում այնտեղ։

Հենց այդ բոպեին նավից թնդանոթ արձակեցին։ Դղրդալի արձագանքը թնդանոթի ձայնը վերցրեց ու տարածեց ամբողջ

կղզու մեջ։ Իսկ մինչև արևի մայր մտնելը դեռ յերկու ժամ կար։

— Այնտեղ կռվում են,— բացականչեցի յես։

— Արի իմ յետևից։ Շուտ։

Ցավ սկսեցի վազել դեպի նավի կայանը, մոռանալով իմ յերկյուղը։ Իմ կողքից թեթև ու արագ վազում եր դժբախտ գերին։

— Դեպի ձախ, դեպի ձախ,— ասաց նա։— Դեպի ձախ, սիրելի Ջիմ։ Մոտեցիր ծառերին։ Ահա այստեղ յես առաջին անգամ այծ սպանեցի։ Այժմ այծերն այստեղ չեն իջնում, նրանք վազում են միայն այնտեղ, վերևում, սարերի վրա, վորովհետև Բենյամին Գաննից վախենում են...

Վազելիս նա անդադար խոսում եր, պատասխանի չսպասելով, ասենք յես էլ չեյի կարող պատասխանել։

Թնդանոթ արձակելուց հետո, յերկար ժամանակ լռություն եր տիրում, իսկ հետո հրացանի համազարկ լսվեց։

Իսկ հետո ելի լռություն։ Հետո, մեր առջևում, քառորդ մղոն հեռավորության վրա, բրիտանական դրոշակ ծածանվեց։

ՑՑԱՊԱՏ

ԳԼՈՒԽ XVI

ՀԵՏԱԳԱ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՒՄ Ե ԲԺԻՇԿԸ: ԻՆՉՊԵՍ ՀԵՌԱՑԱՆ ՆԱՎԻՑ:

Յերկու նավակն եկ «Իսպանոլայից» հեռացան մոտ մեկ ու կես ժամին։ Նավապետը, կալվածատերը և յես նստեցինք նավասենյակում և խորհրդակցում եյինք, թե ինչ անել։ Յեթե գոնե թեթև քամի լիներ, մենք հանկարծակի կհարձակվեյինք վեց խռովարարների վրա, վորոնք մնացել եյին նավում, խարիսխը կբարձրացնեյինք և ծովը կմտնեյինք։ Բայց քամի չկար։ Բացի դրանից հայտնվեց Գենտերը և հաղորդեց, վոր Ջիմ Գոկինսը մակուկը մտավ և ծովահենների հետ ափը գնաց։

Մենք, իհարկե, յերբեք չեյինք մտածում, վոր Ջիմ Գոկինսը դավաճան է, սակայն նրա մասին շատ եյինք անհանգըստանում։ Այն նավաստիները, վորոնց հետ գնաց, այնպես հուզված եյին, վոր, խոստովանում եմ, մենք հույս չունեյինք, թե նորից Ջիմին կտեսնենք։ Մենք տախտակամածն շտապեցինք։ Կուպրը փուչիկներով դուրս եր գալիս ագուցներից։ Ոգի մեջ տարածված եր ճահիճների գարշահոտությունը, վորից քիչ եր մնում սիրտս խառնի։ Այս զզվելի նեղուցից տենդի յեվ փորհարինքի հոտ եր գալիս։ Վեց սրիկաները մռայլ դեմքով նստել եյին կերակրամանի վրա։ Ափին, ինչ վոր մի գետակի գետաբերանի մոտ, գտնվում եյին մակուկները, վորոնցից յուրաքանչյուրի մեջ մի նավաստի յեր նստած։ Նրանցից մեկը «Լիլիբուլերո» յեր շշվացնում։

Սպասելն անտանելի յեր և մենք վորոշեցինք, վոր յես ու Գենտերը նավակով գնանք հետախուզելու։

Նավակները գտնվում եյին նավի աջ կողմում։ Իսկ յես ու Գենտերը գնացինք ուղիղ, հենց այնտեղ, ուր քարտեզի վրա ցցապատ եր նշանակված։ Մեզ նկատելով, այն նավաստիները, վորոնք պահպանում եյին նավակները, շփոթվեցին։ «Լիլիբուլերոն» լռեց։ Մենք տեսնում եյինք, թե ինչպես վիճում եյին այն մասին, թե ինչ անենք։ Յեթե նրանք իմաց տային Սիլվերին, ամեն բան, յերևի, այլ կերպ տեղի կունենար։ Բայց, յերևի, նրանց հրամայված եր վոչ մի դեպքում մակուկներից չհեռանալ։ Նրանք հանգիստ նստեցին և նրանցից մեկը կրկին «Լիլիբուլերո» շշվացրեց։

Այդ տեղում ափը մի քիչ գոգավորվում եր, կազմելով փոքրիկ հրվանդանի նման մի բան և յես դիտմամբ նավակն այնպես վարեցի, վոր հրվանդանը ծածկեր մեզ մեր թշնամիներից առաջ, նախքան մենք կհասնեյինք ափին։ Ափը դուրս թռչելով, յես բոլոր ուժով վազեցի, գլխարկիս տակ մետաքսի թաշկինակ դնելով, վոր գլուխս վառող արեգակից պաշտպանի։ Յուրաքանչյուր ձեռքիս մի-մի լցրած ատրճանակ կար։

Դեռ հարյուր յարդ եկ չեյի վազել, յերբ հասա ցցապատին։

Փոքրիկ բլրի կատարից պարզ աղբյուր եր բղխում։ Հենց այստեղ, աղբյուրի մոտ, կառուցված եր մի բարձր գերանաշեն տուն։ Նրա մեջ կարող եյին տեղավորվել քառասուն մարդ։ Այս շենքի պատերի մեջ հրացանների համար հրակնատներ կային։ Տան չորս կողմը կար մի ընդարձակ մաքրված տարածություն, շրջապատված վեց ֆուտ յերկարությամբ ցցապատերով, առանց դռան, առանց մի ճեղքի։ Կոտրելը հեշտ չեր, իսկ առանց դռան, առանց մի ճեղքի։ Կոտրելը հեշտ չեր, իսկ տնակում նստածներից թաքնվելու համար ցցապատերի յետևում կանգնելն անհնարին եր։ Տնակում նստած մարդիկ հարվում կանգնելն անհնարին եր։ Տնակում նստած մարդիկ ձակվողներին կգնդակահարեյին, ինչպես կաքավների։ Յեթե նրանք լավ ժամապահներ և բավականաչափ կենսամթերք ունենային, մի ամբողջ գնդի հարձակման կդիմանային։

Առանձնապես ուրախացրեց ինձ աղբյուրը։ Չէ՞ վոր «Իսպանոլայի» նավասենյակն եկ վատ չեր, շատ զենք, շատ ռաղ մամթերք կա, շատ մթերք, շատ հիանալի գինիներ։ Սակայն նավասենյակում ջուր չկար։ Յես այդ մասին մտածում եյի, յերբ հանկարծ մի սարսափելի, մահից առաջ տեղի ունեցող, հեծծանք լսեցի։ Առաջին անգամը չեյի հանդիպում մահվան. յես

ծառայել էի դուքս Կեմբերլենդի զորքում և Ֆոնտենոյում ինքս էի վերք ստացել,— բայց այս աղաղակից սիրտս ճմլվեց։ «Չիմ Գոկինսը կորավ», վորոշեցի յես։

Հին զինվոր լինելը մեծ նշանակություն ունի, իսկ բժիշկ լինելն ավելի մեծ։ Մեր գործում վոչ մի բոպե կորցնել չի կարելի։ Յես միանգամից ամեն բան կշռադատեցի, շտապով ափը վերադարձա և թռա նավակի մեջ։

Բարեբախտաբար, Գենտերը հրաշալի թիավար դուրս յեկավ։ Մենք սլացանք նեղուցով։ Նավակը հասավ նավին և յես կլկլին նավը բարձրացա։

Բարեկամներս սաստիկ հուզված էին։ Կալվածատիրոջ դուստրը թղթի պես սպիտակ եր։ Բարի մարդ,— մտածեցի յես, — քո պատճառով ինչպիսի՜ վտանգների յենթարկեցինք մեր կյանքը։ Կերակրամանի վրա նստած նավաստիներից մեկն ել նույնպես գունատ եր և հուզված։

— Այդ մարդը,— ասաց Նավապետ Սմոլետը, հայացքը դեպի նավաստին գցելով,— դեռ ավազակության սովոր չե։ Յերբ նա զոռոցը լսեց, բժիշկ, քիչ մնաց ուշքը գնա։ Մի քիչ ժամանակ՝ և նա մերը կլինի։

Յես պատմեցի նավապետին իմ պլանը և միասին քննարկեցինք։

Ծերունի Ռեգրետին դրինք միջանցքում, կերակրամանի և նավասենյակի միջև, տալով յերեք, թե չորս լցված ատրճանակ և մի խոտկուռ պաշտպանվելու համար։ Գենտերը նավակը մոտեցրեց նավին և մենք Զոյսի հետ սկսեցինք բարձել վառոդ, ատրճանակ, պաքսիմատ, խոզի միս։ Հետո նավակի մեջ գցեցինք մի տակառ կոնյակ և իմ թանկագին դեղերի արկղը։

Այդ ժամանակ կալվածատերն ու նավապետը տախտակամածը դուրս յեկան։ Նավապետը կանչեց յերկրորդ ավագ նավաստուն, վորը նավում մնացած նավաստիների պետն եր։

— Պարոն Գենդս,— ասաց նա,— մենք այստեղ յերկու հոգի յենք և յուրաքանչյուրս յերկու ատրճանակ ունենք։ Զեզանից ով վոր ազդանշան տա կղզի գնացողներին, կսպանվի։

Ավազակները շփոթվեցին։ Հետո, իրար հետ ցածր ձայնով խոսելուց հետո, ցած իջան և ուղում եյին թիկունքից հարձակվել մեզ վրա, սակայն նեղ միջանցքում ատրճանակներով զինված Ռեգրետին հանդիպելով, միանգամից յետ դարձան։

Ինչ վոր մեկը տախտակամածի անցքից գլուխը դուրս հանեց։

— Ցած իջիր, շուն,— գոռաց նավապետը։

Գլուխն անհայտացավ։ Բոլոր վեց հոգին ել, սաստիկ վախեցած, ինչ վոր տեղ մտան և լռեցին։

Մենք Զոյսի հետ նավակը բերներերան լցրինք։ Հետո իջանք նավակը և բոլոր ուժով թիավարելով, դեպի ափն եյինք սլանում։

Մեր յերկրորդ անգամ գալը, ափին կանգնած ժամապահներին չափազանց անհանգստացրեց։ «Լիլիբուլերոն» կրկին լռեց։ Յեվ նախքան հրվանդանն անցնելը և նրանց չտեսնելը, նրանցից մեկը նավակը թողեց և անտառի խորքը վազեց։ Յես ուղում եյի, առիթից ոգտվելով, նրանց մակույկները վոչնչացնել, բայց վախեցա, վոր Սիլվերն իր ավազակախմբով մոտիկ լինի և մենք ամեն ինչ կկորցնենք, յեթե չափազանց շատ բան ցանկանանք։

Մենք հասանք առաջվա տեղը և սկսեցինք բեռներն ամրոցը տանել։

Ծանր բեռնավորված, մենք մեր պաշարը տարանք մինչև ամրոցը և գցեցինք ցցապատի այն կողմը։ Պաշարը պաշտպանելու համար թողինք Զոյսին։ Նա մենակ մնաց, սակայն նրա մոտ յեղած հրացանների թիվը կես դյուժինից պակաս չեր։ Իսկ մենք Գենտերի յետ վերադարձանք նավակի մոտ և նորից պաշար տարանք։ Այսպիսով, առանց հանգստանալու աշխատելով, աստիճանաբար վոչչ բեռները տեղափոխեցինք։ Զոյսը և Գենտերը մնացին ամրոցում, իսկ յես ամբողջ ուժով թիավարելով, սլացա դեպի «Իսպանոլան»։

Մենք վորոշեցինք մի անգամ ել բարձել նավակը։ Բայց վտանգավոր եր։ Նրանք, իհարկե շատ եյին, քան մենք, սակայն մենք լավ եյինք զինված։ Ափը դուրս յեկածներից վոչ վոք ատրճանակ չուներ և մինչև նրանց մեզ մոտենալը, կարող կլինենք առնվազն վեց մարդ սպանել։

Կալվածատերն ինձ սպասում եր նավախելի պատուհանի մոտ։ Նա շատ կայտառացել եր և ուրախացել։ Իմ ձգած պարանի ծայրը բռնելով, նա քաշեց մակույկը և մենք կրկին սկսեցինք բարձել խոզի միս, վառոդ, պաքսիմատ։ Հետո վերցրինք մի-մի ատրճանակ և մի-մի թուր ինձ, կալվածատիրոջ, Ռեգրետի և նավապետի համար։ Մնացած զենքը և վառոդը ծովը թափե-

ցինք։ Նեղուցում ջրի խորությունը յերկու ու կես սաժեն եր և մենք տեսնում եյինք, թե ինչպես, արեգակի լույսով լուսավորված, փայլում և պողպատը մաքուր, ավազոտ հատակում։

Տեղատվությունն սկսվեց և մեր նավը շրջում եր խարսխի շուրջը։ Ափին, մակույկների մոտ, իրար կանչող ձայներ եյին լսվում։ Թեև դա ապացուցում եր, որ Ջոյսն ու Դենտերը, որոնք գտնվում եյին արևելյան կողմում, դեռ նկատված չեն, այնուամենայնիվ, վորոշեցինք շտապել։

Ռեդրեսը թողեց իր պահակատեղը միջանցքում և թռավ նավակի մեջ։ Նավակը տարանք նավի մյուս կողքը, որ նավապետ Սմոլետտն ել նստի։

— Տղերք,— գոչեց նա բարձրաձայն,— դուք ինձ լսում եք։

Նավաստիների սենյակից ձայն չլսվեց։

— Յես քեզ եմ տեսնում, Աբրագեմ Գրեյ. յես քեզ հետ եմ խոսում։

Լռություն։

— Գրեյ,— շարունակեց պարոն Սմոլետտը, ձայնը բարձրացնելով,— յես հեռանում եմ նավից և հրամայում եմ քեզ հետևել քո նավապետին։ Յես գիտեմ, որ դու իսկապես լավ մարդ ես, մնացածներն ել այնքան վատ չեն, որքան աշխատում են ձևանալ։ Յես ժամացույցը բռնել եմ ձեռքիս։ Յերեսուն վայրկյան ժամանակ եմ տալիս, որ դու միանաս ինձ։

Շփոթություն սկսվեց։

— Դե արի, բարեկամս,— շարունակեց նավապետը։— Մի ստիպիր մեզ, որ իզուր ժամանակ կորցնենք։ Դանդաղության յուրաքանչյուր վայրկյանը ամե և սպառնում թե ինձ և թե այս պարոններին։

Խուլ պայքար սկսվեց, լսվեցին զարկի ձայներ և Աբրագեմ Գրեյը տախտակամածը դուրս յեկավ։ Նրա յերեսը դանակով կտրված եր։ Նա վազեց նավապետի մոտ, ինչպես մի շուն, որին տերը շվացրել է։

— Յես քեզ հետ եմ, պարոն,— ասաց նա։

Նրանք յերկուսն ել թռան նավակի մեջ և մենք առաջ շարժվեցինք։

Նավը թողեցինք, բայց դեռ ցցապատին չեյինք հասել։

ԳԼՈՒԽ XVII

ԲԺԻՇԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ։ ՎԵՐՋԻՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՎԱԿՈՎ։

Այս վերջին, հինգերորդ տեղափոխությունն այնքան բարեհաջող չվերջացավ, ինչպես առաջվա տեղափոխությունները։ Առաջինը, մեր փոքրիկ մակույկը շատ ծանրաբեռնված եր։ Հինգ մեծահասակ տղամարդ, որոնցից յերեքի՝ Տրելոնիի, Ռեդրեսի և նավապետի հասակը վեց ֆուտից բարձր եր— քիչ բան չե։ Սրան ավելացրեք վառոդը, խոզի միսը և պաքսիմատի պարկերը։ Ջուրը թափվում եր նավակի մեջ։ Դեռ հարյուր յարդ չեյինք անցել, որ իմ անդրավարտիկը և բաճկոնի փեշերը թրջվեցին։

Նավապետն ստիպեց մեզ բեռներն ուրիշ տեսակ դասավորել և նավակն ուղղվեց։ Այնուամենայնիվ մենք վախենում եյինք շնչելուց, որ մակույկը չշրջվի։

Յերկրորդը, տեղատվության պատճառով ուժեղ հոսանք եր սկսվել, որն ուղղված եր դեպի արևմուտք, հետո շրջվում եր դեպի հարավ, դեպի բաց ծովը, այն անցքով, որի միջով առավոտյան անցավ մեր նավը։ Մեր սաստիկ ծանրաբեռնված նավակը կարող եր շուտ տալ ամենաթեթև ալեծածանումն անգամ։ Բայց ամենից վատն այն եր, որ հոսանքը մեզ մի կողմն եր տանում և չեր թողնում որ ափին հասնենք, այնտեղ, ուր առավոտյան հասել եյինք։ Յեթե մենք հոսանքին չհաղթահարելինք, կհասնեյինք ափին, յերկու մակույկների մոտ, որտեղ ամեն րոպե կարող եյին հայտնվել ծովահենները։

— Ել ուժ չունեմ վարելու դեպի ցցապատը, պարոն,— ասացի յես նավապետին։

— Յես հստակ եյի դեկի մոտ, իսկ նավապետն ու Ռեդրեսը, որոնք դեռ չեյին հոգնել, թիավարում եյին։ Հոսանքը տանում եր մեզ։

— Չի կարելի ուժ տալ թիերին։

— Յեթե ուժ տանք թիերին, ջուր կթափվի— ասաց նավապետը։

— Աշխատեցեք, խնդրեմ, և պահեցեք ուղիղ հոսանքի դեմ։ Աշխատեցեք, պարոն, խնդրում եմ ձեզ,— ասաց նավապետը։

Հոսանքը մեզ տանում եր մինչև այն ժամանակ, յերբ մակույկի քիթն ուղղեցի դեպի արևելք, ուղիղ անկյունով, այն ճանապարհով, որով մենք պետք է շարժվեյինք։

— Այսպես մենք յերբեք ափին չենք հասնի,— ասացի յես։

— Յեթե ինչ ուղղություն վոր տալիս ենք, տանում ե, պարոն, ապա այն ուղղությունը պետք ե բռնենք,— պատասխանեց նավապետը։— Վարեցեք հոսանքի դեմ։ Յեթե տանի, —շարունակեց նա,— մենք արդեն յերբեք ցցապատի մոտ չենք կարող կանգ առնել և ավազակային մակույկները կարող են հարձակվել մեզ վրա։ Իսկ յեթե ուշանանք, հոսանքը շուտով կհանդարտվի և մենք հանգիստ կերպով կհասնենք ափին։

— Հոսանքն արդեն թույլ ե, պարոն,— ասաց նավաստի Գրեյը, վորը նստել եր մակույկի քթին։— Կարելի յե մի քիչ ուղղել դեպի ափը։

— Շնորհակալ եմ, սիրելիս,— շնորհակալություն հայտնեցի նրան, կարծես թե մեր մեջ յերբեք վոչ մի թյուրիմացություն չեր յեղել։

Մենք բոլորս անխոս պայմանավորվել եյինք վարվել նրա հետ այնպես, վոր կարծես թե նա հենց սկզբից մեր համախոհն ե յեղել։

Յեվ հանկարծ նավապետն արտասանեց ձայնը փոխելով.

— Թնդանոթը։

— Յես արդեն այդ մասին մտածել եմ,— ասացի յես, կարծելով, թե նա ասում ե, վոր հնարավոր ե թնդանոթով ոմբակոծել մեր ամրոցը։— Նրանց յերբեք չի հաջողվի թնդանոթն ափ հանել։ Իսկ յեթե հանեն ել, կմնա անտառում։

— Վո՛չ, դուք նայեցեք դեպի նավախելը,— ասաց նա։

Շտապելուց թնդանոթը բոլորովին մոռացել եյինք։ Հինգ սրիկաները հանում եյին թնդանոթի «բաճկոնը», ինչպես նրանք անվանում եյին կուպրոտ պարուսինե ծածկոցը, վորով թնդանոթը ծածկված եր։ Յես հիշեցի, վոր մենք նավի մեջ վառոդ և ռումբեր ենք թողել և վոր ավազակները շատ հեշտությամբ կարող են պահեստից հանել։

— Իդրայելը Ֆլինտի մոտ թնդանոթաձիգ ե յեղել,— խրոպոտ ձայնով ասաց Գրեյը։

Յես մակույկն ուղիղ դեպի ափն ուղղեցի։ Հոսանքը թուլացել եր և մենք հեշտությամբ կարողանում եյինք մակույկը վարել, վորը հրաշալի կերպով հնազանդվում եր դեկին։ Բայց, հակառակի պես, այժմ ուղղված եր դեպի «Իսպանոլան» և հրաշալի թիրախ եր հանդիսանում։

Յես կարողանում եյի վոչ միայն տեսնել, այլև լսել, վոր

կարմրամաշկ սրիկա Իդրայել Գենդսը տախտակամածի վրայով ռումբ եր գլորում.

— Ո՞վ ե մեր ամենալավ կրակողը,— հարցրեց նավապետը։

— Անկասկած պարոն կալվածատերը,— պատասխանեցի յես։

— Պարոն Տրելոնի, սպանեցեք ավազակներից մեկին։ Յեթե կարելի յե, Գենդսին,— ասաց նավապետը։

Տրելոնին պողպատի պես սառն եր։ Նա գիտեց իր հրացանի հրահանը։

— Զգո՛ւշ, պարոն,— բացականչեց նավապետը,— մակույկը շուռ չտաք։ Իսկ դուք բոլորդ պատրաստ յեղեք և կրակելու ժամանակ աշխատեցեք հավասարակշռություն պահպանել։

Կալվածատերը հրացանը բարձրացրեց, թիավարները թիավարելը դադարեցրին, մենք անցանք մակույկի կողքը, վոր հավասարակշռություն պահպանենք և այդ բոլորն այնպես հաջող անցավ, վոր վոչ մի կաթիլ ջուր ներս չթափվեց։

Այդ ժամանակ ծովահենները թնդանոթի բերանը դեպի մեր կողմն եյին դարձնում, և Գենդսը, վոր հրածակի հերուները ձեռքին բռնած, կանգնած եր թնդանոթի փողաբերանի մոտ, հիանալի թիրախ եր։ Այնուամենայնիվ մենք հաջողություն չունեցանք։ Այն ժամանակ, յերբ Տրելոնին կրակեց, Գենդսը կռացավ և գնդակը շվվալով նրա վրայից անցնելով, դիպավ նավաստիներից մեկին։

Վիրավորը գոռաց և նրա գոռոցին ձայնակցեցին վոչ թե միայն նրանք, ովքեր նրա հետ նավի վրա եյին, այլև շատ ձայներ ափից։ Նայելով այնտեղ, յես տեսա, վոր ծովահենները անտառից դեպի մակույկները են վազում։

— Նրանք իսկույն կճանապարհվեն,— ասացի յես։

— Ընթացքն արագացրեք,— գոչեց նավապետը։— Այժմ արդեն կարևոր չե, կխորտակվի նավակը, թե վոչ։ Յեթե մեզ չհաջողվի ափ հանել, ամեն ինչ կորած ե։

— Միայն մի մակույկ ե ճանապարհվում, պարոն,— նկատեցի յես։— Մյուս մակույկի մարդիկ, յերևի, վազում են ափով, վոր մեր ճանապարհը կտրեն։

— Նրանք ստիպված կլինեն շատ վազել,— առարկեց նավապետը։— Իսկ ծովագնացները ցամաքի վրա արագաշարժ չեն։ Յես նրանցից չեմ վախենում, այլ թնդանոթից։ Սատանաներ։ Իմ թնդանոթն անվրեպ ե խփում։ Նախազգուշացրեք մեզ, կալ-

վածատեր, յերբ վառված պատրույգը կտեսնեք, նավակին ուրիշ ուղղություն կտանք։

Չնայած ծանր բեռանը, մեր նավակն այժմ բավական արագ եր շարժվում և համարյա թե մեջը ջուր չեր թափվում։ Մնում եր միայն, վոր յերեսուն-քառասուն անգամ թիավարենք և կհասնեյինք ծառերի մոտի ավազոտ ծանծաղուտին, վորը տեղատվությունը մերկացրել եր։ Մակույկն արդեն մեզ հասնել չեր կարող, հրվանդանը նրան ծածկում եր։

Տեղատվությունը, վորը քիչ առաջ մեր փախչելուն խանգարում եր, այժմ խանգարում եր մեր թշնամիներին, վոր մեզ չհասնեն։ Մեզ միայն թնդանոթն եր սպառնում։

— Ավելի լավ է կանգ առնենք և նրանցից մեկին ել սպանենք,— ասաց նավապետը։

Բայց պարզ եր, վոր անպատճառ թնդանոթը կարձակեն։ Ավազակները մինչև անգամ իրենց վիրավոր ընկերոջ վրա չեյին նայում, թեև նա կենդանի յեր և մենք տեսնում եյինք, թե ինչպես նա փորձում եր մի կողմ սողալ։

— Պատրաստ է.— բացականչեց կալվածատերը։

— Դեպի յեռ,— վորպես արձագանք, ձայն տվեց նավապետը։

Նա և Ռեդրեսն այնպես շարժեցին թիակները, վոր նավախելը խորասուզվեց ջրի մեջ։ Կալվածատերը ժամանակին զգուշացրեց մեզ։ Թնդանոթը թնդաց — այն, վոր լսեց Ջիմը — կալվածատիրոջ հրացանի ձայնը նրան չհասավ։ Մենք չնկատեցինք, թե վորտեղ ընկավ ռումբը։ Ցես յենթադրում եմ, վոր ռումբն անցավ մեր գլխով և նրա առաջացրած քամին եր մեր դժբախտության պատճառը։

Այնուամենայնիվ, կրակոցից անմիջապես հետո, նավակի յետևի մասը ջուրը սուզվեց, նավակի մեջ ջուր լցվեց և սկսեց հանդարտ խորասուզվել։ Ջրի խորությունն ընդամենը յերեք ֆուտ եր։ Ցես ու նավապետը հաջողությամբ կանգնեցինք ծովի հատակին, իրար դիմաց։ Մնացած յերեք հոգին ջուրն ընկան և փնչացնելով ու հեվալով, դուրս յեկան

Իսկապես, մենք եժան պրծանք — վոչ վոք կյանքից չզրկվեց և բոլորն ել հաջողությամբ ափը հասան։ Բայց մեր պաշարը մնաց ծովի հատակում, բայց վոր ամենավատն եր, հինգ հրացանից չեր թրջվել միայն յերկուսը։ Ցես, իմ հրացանը, ջրի մեջ ընկնելիս, ընազդաբար բարձրացրի գլխիս վերև։ Իսկ

նավապետի հրացանը կախված եր մեջքից, փականը դեպի վեր և նույնպես չոր եր մնացել, Իսկ մնացած յերեք հրացանը նավակի հետ ջուրն ընկան։

Մոտիկ անտառից ձայներ եյին լսվում։ Կարող եյին մեր ճանապարհը, դեպի ցցապատը, կտրել։ Բացի դրանից, մենք կասկածում եյինք, թե կղիմանան արդյոք Գենտերն ու Ջոյսը, յերբ նրանց վրա վեց ծովահեն հարձակվի։ Գենտերն ամուր մարդ եր։ Իսկ Ջոյսից մենք յերկյուղ եյինք կրում — նա քաղաքավարի և պատրաստակամ ծառա յեր, շատ լավ կարող եր խողանակով շոր մաքրել, բայց կռվի համար բոլորովին անպետք եր։

Մենք հուզված, ծանծաղուտով ափը հասանք, ճակատագրի քմահաճույքին թողնելով մեր խեղճ նավակը, վորի մեջ գտնվում եր մեր ունեցած վառոդի և վողջ մթերքի համարյա կեսը։

ԳԼՈՒԽ XVIII

ԲԺԻՇԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ։ ԿՌՎԻ ԱՌԱՋԻՆ ՈՐՎԱ ՎԵՐՋԸ։

Մենք ամբողջ ուժով փախչում եյինք անտառի միջով, վորը բաժանում եր մեզ ցցապատից և ամեն վայրկյան ծովահենների ձայները մոտենում եր։ Շուտով մենք լսեցինք նրանց վոտնաձայնը և ճյուղերի չրթչրթոցը։ Նրանք անցնում եյին անտառի միջով։

Ցես հասկացա, վոր մենք լուրջ ընդհարում պետք է ունենանք, այդ պատճառով ել նայեցի հրացանը։

— Նավապետ,— ասացի յես։— Տրելոնին անվրեպ է կրակում, իսկ նրա հրացանը թրջվել է։ Տվեք նրան ձեր հրացանը։

Նրանք հրացանները փոխեցին և Տրելոնին, առաջվա պես լռակյաց ու սառնարյուն, մի վայրկյան կանգ առավ, լիցքն ստուգելու։ Այս ժամանակ միայն յես նկատեցի, վոր Գրեյն առանց զենքի յե և տվի նրան իմ թուրը։ Գրեյն ուրախացած, թքեց ձեռքին, ունքերը կիտեց և թուրը ճոճեց այնպիսի ուժով, վոր բերանը սուլոցով ոդը ճեղքեց։ Ցեվ թրի յուրաքանչյուր ճոճումը հաստատում եր, վոր մեր նոր զինակիցը մինչև արյան վերջին կաթիլը պիտի կռվի։

Ելի քառասուն քայլ վազելուց հետո, մենք հասանք ան-

տառի ծայրին և հայտնվեցինք ցցապատի առաջ։ Մենք մոտեցանք ուղիղ ցցապատի հարավային կողմի մեջտեղին։ Միաժամանակ յոթ ավազակները, ավագ նավաստի Ջոր Ենդերսոնի գլխավորությամբ, բարձր աղաղակելով, դուրս յեկան անտառից, ցցապատի հարավ-արևմտյան անկյունից։

Նրանք շփոթված կանգ առան։ Յես և կալվածատերը, նրանց սթափվելու ժամանակ չտալով, կրակեցինք։ Ամրության մեջ յեղող Գենտերն և Ջոյսն ել կրակեցին։ Ջորս ատրճանակը թընդացին միանգամից և կրակոցն իզուր չանցավ. թշնամիներից մեկն ընկավ, մնացածներն շտապով թաղնվեցին ծառերի յետևում։

Նորից հրացանները լցնելով, մենք զգուշությամբ մոտեցանք ցցապատին, վոր տեսնենք ընկած թշնամուն։ Նա սպանված եր տեղնուտեղը — գնդակը դիպել եր ուղիղ սրտին։

Հաջողությունը մեզ ուրախացրեց։

Բայց հանկարծ թփերի մեջ մի ատրճանակ չրթաց, ականջիս վրայից գնդակը սուլելով անցավ և խեղճ Թոմ Ռեդբեռը տատանվեց ու ամբողջ հասակով ընկավ։ Յես ու կալվածատերը կրակեցինք դեպի թփերը։ Սակայն մեր կրակոցները հաջող չանցան և, յերևի, մեր լիցքերն անտեղի անցան։ Կրկին լցնելով հրացանները, մենք վազեցինք խեղճ Թոմի մոտ։

Նավապետն ու Գրեյն արդեն դիտում եյին։ Յես միայն աչքիս ծայրով նայեցի և միանգամից նկատեցի, վոր անհույս գործ է։

Յերևի, մեր կրակոցներն ստիպեցին նահանջել, վորովհետև մեզ հաջողվեց անարգել անցկացնել ցցապատի վրայով խեղճ ծերունի հրացանաձգին և տանել ամբոցի կտուրը։

Խեղճ հին ընկեր։ Նա վոչ մի բանի վրա չեր զարմանում, վոչ մի բանից չեր գանգատվում, վոչ մի բանից չեր վախենում, մինչև անգամ մեր արկածների առաջին որից մինչև այսոր, վոչ մի բանի վրա չեր տրտնջացել։ Նա, վորպես տրոյացի, հերոսաբար պաշտպանում եր նավի նախասենյակը։ Բոլոր հրամանները կատարում եր լուռ, բարեխիղճ ու հնազանդ։ Նա մեզ բոլորից քսան տարու չափ մեծ եր։ Յեվ ահա այդ մռայլ, ծեր, հավատարիմ ծառան մեռնում եր մեր աչքի առաջ։

Կալվածատերը նրա առջև ծունկ չոքեց, ձեռքը համբուրեց և փոքրիկ յերեխայի նման լաց յեղավ։

— Բժիշկ, յես մեռնում եմ,— ասաց նա։

— Այո, բարեկամս,— ասացի յես։

— Ուզում եմ մահվանից առաջ մի գնդակ ել ուղարկեմ նրանց։

— Թոմ,— ասաց կալվածատերը,— ասա, վոր ներում ես ինձ։

— Ինձ համար անպատշաճ է, պարոն, ներել կամ չներել իր տիրոջը,— պատասխանեց ծերունի ծառան։— Թող լինի, ինչ լինելու յե։ Ամեն։

Նա լռեց, ապա խնդրեց, վոր վորևե մեկն աղոթք կարդա։

— Այդպիսի սովորություն կա, պարոն,— ավելացրեց նա և սրանից հետո շուտով մեռավ։

Այդ ժամանակ նավապետը, վորին յես զարմանքով դիտում եյի, հանեց սնդուկից և իր լիքը գրպաններից զանազան իրեր՝ բրիտանական դրոշակ, մի կապ պարան, գրիչ, թանաք, նավի որագրության մատյանը և մի քանի ֆունտ ծխախոտ։ Նա գտավ մի յերկար յեղեռնու ձող և Գենտերի ոգնությամբ ամրացրեց ամբոցի վրա։ Հետո, կտուրը բարձրանալով, բրիտանական դրոշակն ամրացրեց նրա վրա։

Այս բանը, ըստ յերևույթին, մեծ բավականություն պատճառեց նրան։ Հետո նա թեքվեց և սկսեց հետազոտել և հաշվել պաշարեղենը, յերբեմն նայելով Թոմի վրա։ Յեվ յերբ Թոմը մեռավ, նա մի ուրիշ դրոշակ հանեց յեվ մեռելին ծածկեց։

— Մի վշտացեք, պարոն,— ասաց նա, սեղմելով կալվածատիրոջ ձեռքը։— Նա մեռավ իր պարտականությունը կատարելիս։

Հետո ինձ մի կողմ տարավ։

— Բժիշկ Լիվսի,— հարցրեց նա,— դուք և կալվածատերը քանի՞ շաբաթից հետո յեք սպասում այն նավին, վորը պետք է մեզ ոգնության ուղարկեն։

Յես պատասխանեցի, վոր դա յերկարատև գործ է։ Շաբաթներ չի պահանջում, այլ ամիսներ։ Յեթե մենք ոգոստոսի վերջին չվերադառնանք, Բլենդին մեզ ոգնելու համար նավ կուղարկի, վոչ ուշ և վոչ շուտ։

— Դե, հաշվեցեք, թե այդ նավը յերբ կլինի այստեղ,— վերջացրի յես։

— Այդ դեպքում, պարոն,— ասաց նա,— յեթե մենք մեծ հաջողություն ել ունենանք, մենք նեղ վիճակում կլինենք։

— Ինչո՞ւ,— հարցրեցի յես։

— Շատ ափսոս, պարոն, վոր նավակի մեջ յեղած վողջ

բեռը փչացավ։ Ահա թե ինչու,— պատասխանեց նա։— Վառոդ ու գնդակ բավականի ունենք։ Բայց մթերքը քիչ է։ Շատ քիչ։ Թերևս չենք ավտոսա, վոր ավելորդ բերանից ազատվեցինք։

Ցեվ նա ցույց տվեց բրիտանական դրոշակով ծածկված մեռելին։

Այդ բոպեին տանիք վրայից սուլոցով թռավ ռումբը, վորն ընկավ հեռու, մեր յետևի անտառը։

— Ոչ՝,— ասաց նավապետը։— Ռմբակոծություն։ Բայց չե՞ վոր նրանք վառոդ քիչ ունեն։

Յերկրորդ անգամ նշան առնելն ավելի հաջող եր։ Ռումբը ցցապատից անցավ և ընկավ մեր ամրոցի առջև, ավազի ամպ բարձրացնելով։

— Նավապետ,— ասեց կալվածատերը,— ամրոցը նավից չի յերևում։ Նրանք, յերևի դրոշակին են նշան առնում։ Լավ չի՞ լինի, վոր դրոշակն իջեցնենք։

— Դրոշակն իջեցնե՞լ,— վրդովվեց նավապետը։ — Վոչ, պարոն։ Ով ուզում է, թող իջեցնի, բայց յես չեմ իջեցնի։

Ցեվ մենք իսկույն նրա հետ համաձայնեցինք։

Ծովային հպարտ սովորությունը թույլ չի տալիս իջեցնել դրոշակը կռվի ժամանակ։ Բացի դրանից մենք ուզում եյինք ապացուցել թշնամիներին, վոր նրանց ռմբակոծությունը մեզ համար բոլորովին սարսափելի չե։

Ամողջ յերեկո թնդանոթով մեզ ռմբակոծում եյին։ Ռումբերից մեկն անցավ մեր գլխով, մյուսն ընկավ ցցապատի առջև, յերրորդը՝ ավազի մեջ—ամրության առջև։ Ծովահենները բարձր նշան ելին վերցնում, ռումբերն իրենց ուժը կորցնում եյին և խրվում ավազի մեջ։ Բեկորներից ել չեյինք վախենում։ Ցեվ, թեև, մի ռումբ ծակեց մեր տանիքն ու հատակը, սակայն շուտով ընտելացանք ռմբակոծությանը և վերաբերվում եյինք անտարբեր, ինչպես ծղրիդի ճռռոցին։

— Այս գործը լավ կողմ ել ունի,— նկատեց նավապետը։ — Բոլոր ծովահենները յերևի, այժմ նավի վրա յեն։ Տեղատվությունն ուժեղացել է և մեր մթերքները յերևի, ջրի տակից դուրս են յեկել։ Ե՞յ, կամավորներ չե՞ն լինի արդյոք, վոր վազեն խոզի միսը բերեն։

Գրեյն ու Գենտերը բոլորից առաջ պատրաստակամություն հայտնեցին։ Լավ զինված, նրանք ցցապատից թռան։ Սակայն խոզի միսը նրանց բաժին չընկավ։ Ծովահենները

ավելի քաջ եյին, քան մենք սպասում եյինք։ Բացի դրանից, նրանք Իզրայել Գենդսի թնդանոթի վրա մեծ հույս եյին դնում։ Հինգ ավազակ յեռանդուն կերպով հանում եյին մթերքը մեր խորտակված նավակից և տեղափոխում մոտիկում կանգնած մակույկի մեջ։ Մակույկների մեջ նստածներն ստիպված եյին շարունակ թիավարել, վորովհետև հոսանքը մակույկը մի կողմ եր տանում։ Սիլվերը մակույկի յետևում կանգնած, կարգադրություններ եր անում։ Նրանք բոլորն ել զինված եյին ատրճանակներով, վոր, յերևի, ձեռք եյին բերել ինչ վոր գաղտնի պահեստից։

Նավապետը նստեց գերանի վրա և սկսեց գրանցել նավի որագրական մատյանի մեջ։ Ալեքսանդր Սմոլետ— նավապետ, Դեվիդ Լիվսի— նավի բժիշկ, Աբրագիմ Գրեյ – հյուսնի ոգնական, Ջոն Տրելոնի — նավատեր, Ջոն Գենտեր և Ռիչարդ Ջոյս — նավատիրոջ ծառաներ ու համերկրացիներ, ահա բոլոր նրանք, ովքեր իրենց պարտականությանը հավատարիմ են մնացել։ Մեզ հետ պաշար վերցնելով, վոր կրավի տասն որից վոչ ավելի, նրանք այսոր ափ իջան և Գանձերի կղզու մեջ, ամրոցի վրա բրիտանական դրոշակ բարձրացրին։ Թոմ Ռեդրետին, նավատիրոջ ծառային ու համերկրացուն, ավազակներն սպանեցին։ Ջիմ Գոկինս — սպասավոր։

Ցես մատեցի խեղճ Ջիմ Գոկինսի մարմնի մասին

Հանկարծ անտառում մի կանչ լսվեց։

— Ով վոր մեկը մեզ կանչում է,— ասաց Գենտերը, վոր պահակ եր կանգնել։

— Բժիշկ, կալվածատեր, նավապետ։ Ե՞յ, Գենտեր, դու՞ յես,— լսեցինք մեկի ձայնը։

Ցես վազեցի դեպի դուռը և տեսա Ջիմ Գոկինսին։ Վողջ ու առողջ նա անցնում եր մեր ցցապատով։

ԳԼՈՒԽ XIX

ՀԵՏԱԳԱ ԴԵՊՔԵՐԸ ԿՐԿԻՆ ՇԱՐԱԴՐՈՒՄ Է ՋԻՄ ԳՈԿԻՆՍԸ։ ԿԱՑԱԶՈՐՆ ԱՄՐՈՑՈՒՄ։

Հենց վոր Բեն Գանը բրիտանական դրոշակը տեսավ, կանգ առավ, ձեռքս բռնեց ու նստեց։

— Դե,— ասաց նա,— անկասկած այնտեղ քո բարեկամներն են։

— Ավելի ճիշտ՝ խռովարարները,— ասացի ես։

— Ցերբեք, — բացականչեց նա։— Այս կղզու մեջ, այս անապատի մեջ, վորտեղ բացի ծովահեններից վոչ վոք չի լինում, Սիլվերը ծովահենի սև դրոշակ կբարձրացներ։ Հավատա ինձ։ Ցես այդպիսի գործերը գիտեմ։ Այնտեղ քո բարեկամներն են. սա ճիշտ է։ Ցերեի ընդհարում է յեղել և նրանք հաղթել են։ Ցեվ այժմ նրանք ափին են, ցցապատի յետևում։ Ֆլինտն է ցցապատը կառուցել։ Շատ տարի առաջ։ Ի՞նչ գլուխ ուներ այն Ֆլինտը։ Միայն ռոմը կարող եր նրան կործանել։ Նա վոչ վոքից չեր վախենում, բացի Սիլվերից։ Իսկ Սիլվերից նա վախենում եր, պետք է ճիշտն ասել։

— Ինչ կա վոր,— ասացի ես,— քանի վոր ցցապատի յետևում մերոնք են, պետք է գնալ այնտեղ։

— Կա՛ց,— առարկեց Բենը։— Սպասի՛ր։ Դու, թվում է, լավ տղա ես։ Բայց այնուամենայնիվ միայն տղա ես։ Իսկ Բեն Գաննը խորամանկ է։ Գաննը չի սխալվի։ Վոչ մի խմիչքով ինձ դեպի այնտեղ չես կարող գրավել... Ցես ինքս պետք է տեսնեմ քո պարոնին և թող նա ինձ աղնիվ խոսք տա։ Իսկ դու իմ խոսքերը չմոռանաս։ Միայն թե, այդպես էլ ասա նրան, վստահությունը հնարավոր է միայն անձնական ծանոթության դեպքում, և կմթիր նրա ձեռքը։

Ցեվ նա յերրորդ անգամ կմթեց ինձ բազմանշանակալից տեսքով։

— Իսկ յերբ Բեն Գաննը ձեզ պետք գա, դու գիտես, թե վորտեղ պետք է գտնել նրան. Ջիմ։ Այնտեղ, ուր այսոր հանդիպեցիր։ Ցեվ ով վոր կգա նրան կանչելու, պետք է ձեռքին սպիտակ թաշկինակ ունենա և մենակ գա։ Դու այդպես էլ ասա նրանց. «Բեն Գաննը դրա համար իր պատճառներն ունի»։

— Լավ,— ասացի ես։— Կարծեմ ես ձեզ հասկացա։ Դուք ուզում եք ինչ վոր առաջարկություն անել և պետք է տեսնվեք կալվածատիրոջ կամ բժշկի հետ։ Իսկ ձեզ տեսնել կարելի է այնտեղ, ուր այսոր տեսա։ Ուրիշ վոչինչ։

— Իսկ ինչու՞ դու չես հարցնում, թե ժամի քանիսին կարելի է գտնել ձեզ այնտեղ։ Ցես ընդունում եմ կեսորից մինչև ժամի յերեքը։

— Լավ, լավ,— ասացի ես։— Իսկ այժմ կարող եմ գնալ։

— Իսկ դու չե՞ս մոռանա,— հարցրեց նա վրդովված։— Ասա նրան վոր «միայն անձնական ծանոթության դեպքում» և վոր «ունի իր պատճառները»։ Ցես կխոսեմ նրա հետ, ինչպես մարդը մարդու հետ։ Իսկ հիմա կարող ես գնալ, Ջիմ,— ասաց նա, առաջվա նման ձեռքս ամուր բռնելով։— Լսիր, Ջիմ, իսկ յեթե տեսնես Սիլվերին, դու չե՞ս ասելու Բեն Գաննին։ Մինչև անգամ յեթե քեզ կապեն վայրի ձիու պոչին։ Չե՞ս ասելու։ Մինչև անգամ տանջեն էլ չե՞ս ասի։

Թնդանոթի թնդյունը նրա խոսքն ընդհատեց։ Ռումբը սլացավ ծառերի միջով և ընկավ ավազի մեջ, հարյուր յարդ հեռավորության վրա այնտեղից, ուր մենք կանգնած խոսում եյինք։ Մենք յերկուսս էլ զանազան կողմեր վազեցինք։

Մի ժամվա ընթացքում կղզին դղրդում եր թնդանոթի կրակոցից և ռումբերը սլանում եյին անտառով, ճանապարհին կործանելով ամեն ինչ։ Ցես թագնվում եյի մերթ այստեղ, մերթ այնտեղ և ամեն տեղ ինձ թվում եր, վոր ռումբերն ուղիղ դեպի ինձ են սլանում։ Փոքր առ փոքր իմ կորցրած արիությունը վերադարձավ։ Այնուամենայնիվ դեռևս չեյի վստահում մոտենալ ցցապատին, վորի մոտ ռումբերն ավելի հաճախ եյին ընկնում։ Շարժվելով դեպի արևելք, վերջապես հասա այն ծառերին, վոր աճում եյին հենց ափի մոտ։

Արեգակը նոր եր մայր մտել, ծովային թեթև հողմը սուլում եր անտառում և նավահանգստի մոխրագույն մակերևույթը ծածկում ալյակներով։ Տեղատվությունն ընդարձակ ավազոտ ծանծաղուտը մերկացրել եր։ Ողը, ցերեկվա տոթից հետո, այնպես եր սառել, վոր յես, թեթև բաճկոն հագած, սաստիկ դողում եյի։

«Իսպանոլան» առաջվա պես կանգնած եր խարիսխ գցած։ Նրա վրա ծածանվում եր «Ուրախ Ռոջեր» սև, ծովահենական դրոշակ, վրան գանգ։ Տախտակամածի վրա կարմիր բռնկոց դրոշակ, վրան գանգ։ Տախտակամածի վրա կարմիր բռնկոց փայլեց և դղրդալի արձագանքն ամբողջ անտառում տարածեց թնդանոթի վերջին կրակոցը։

Ռմբակոծությունը վերջացավ։

Ցես, թփերի մեջ պառկած, հետևում եյի ծովահեններին։ Ափին, հենց ցցապատի դիմաց, մի քանի մարդ ինչ վոր մի բան կացնով կտրատում եյին։ Հետագայում յես իմացա, վոր նրանք վոչնչացնում եյին մեր դժբախտ նավակը։ Հեռվում, գետաբերանի մոտ, ծառերի միջև մի մեծ խարույկ եր բոցկլտում։ Խարույկի և նավի միջև անընդհատ մի մակույկ եր դես ու դեն գնում։ Նավաստիները, վոր առավոտյան այնքան մռայլ եյին,

այժմ, Թիավարելիս յերեխաների նման գոչում ու ծիծաղում եյին։ Սակայն նրանց ձայնից յես կռահեցի, վոր ուրախությունը ոմն է առաջացրել։

Վերջապես վորոշեցի գնալ դեպի ցցապատը։ Յես ցցապատից բավականի հեռու եյի, ցածրիկ, ավազոտ ցամաքալեզվի վրա, վորը փակում եր մեր նավահանգիստը արևելյան կողմից և հասնում մինչև Կմախքի կղզին։ Բարձրանալով ցամաքալեզվի վրա, ցածրիկ թփուտի մեջ, յես տեսա մի բավականի մեծ մենավոր ժայռ, վորը տարորինակ սպիտակ գույն ուներ։ Յես գլխի ընկա, վոր դա այն սպիտակ ժայռն է, վորի մասին խոսում եր Բեն Գանները, և վոր յեթե ինձ նավակ պետք լինի, կիմանամ, թե վորտեղ է։ Յես թափառում եյի անտառում, մինչև վոր տեսա ցցապատի յեռևի, ծովից ամենահեռու ծայրը։ Մերոնք ինձ հանդիպեցին սիրալիորեն։

Յես նրանց պատմեցի իմ արկածների մասին և չորս կողմս նայեցի։ Տունը շինված եր յեղևնու անտաշ բներից — և՛ պատերը, և՛ տանիքը, և՛ հատակը։ Հատակը մի քանի տեղերում մի կամ մեկ ու կես ֆուտ բարձր եր գետնից։ Մուտքի մոտ սանդուխք կար, սանդուխքի տակից մի առվակ եր խոխոջում։ Ջուրը թափվում եր մի արհեստական ավազանի մեջ — մի մեծ նավային չուգունե կաթսա, տակը ծակ։

Տունը համարյա թե դատարկ եր։ Միայն մի անկյունում շինված եր քարաշեն ոջախի նման մի բան, յերկաթե վանդակով, ածուխի համար։

Ցցապատով շրջապատված բլրի լանջերին գտնվող բոլոր ծառերը կտրված եյին շինության համար։ Կոճղերից կարելի եր յեզրակացնել, վոր մի հիանալի պուրակ են վոչնչացրել։ Գետնի վերին շերտը, ծառերը կտրատելուց հետո, անձրևները լվացել, տարել եյին, մնացել եր մաքուր ավազը։ Միայն այնտեղ, վորտեղ առվակը դուրս եր գալիս կաթսայից, յերևում եյին և՛ մամուռ, և՛ ձարխոտ, և՛ կարճահասակ թփուտ։ Ցցապատի յեռևից անմիջապես խիտ ու բարձր անտառն եր սկսվում։ Սա, ինչպես ասում եյին, պաշտպանությանը խանգարում եր։ Յետևից, ցամաքի կողմից, անտառը բաղկացած եր սոճիներից, իսկ առջևից, նեղուցի կողմից՝ նույն սոճիներից և մշտադալար կաղնիներից։

Յերեկոյան տաքը, թեթև քամին, վորի մասին յես ասացի, փչում եր կոպիտ կերպով շինված շինության բոլոր ճեղքերից, անդադար հատակը ծածկելով ավազե անձրևով։ Ավազը կեղտոտում եր մեր աչքերը, ավազը ճզմվում եր մեր ատամների տակ, ընկնում եր մեր ուտելիքի մեջ, ավազը պարում եր կաթսայի հատակում, ինչպես բրինձը յեռացող կերակրի մեջ։ Ծխնելույզ չունեյինք — ծուխը դուրս եր գալիս տանիքի մեջ յեղած քառանկյունի անցքով։ Մուտքի ճանապարհը գանելուց առաջ, ծուխը տարածվում եր վողջ տան մեջ և մեզ ստիպում եր հաղալ և լաց լինել։

Գրեյը, մեր նոր ընկերը, յերեսը կապել եր — ավազակները նրա թուշը կտրել եյին։ Իսկ խեղճ ծերունի Թոմ Ռեդրեսը, վոր դեռ չեր թաղվել, բրիտանական դրոշակով ծածկված, ընկած եր պատի մոտ։

Յեթե մեզ թույլ տային պարապ նստել, մենք շուտով կվհատվեյինք։ Սակայն նավապետ Սմոլետը բոլորի համար կարողանում եր գործ գտնել։ Նա մեզ կանչեց իր մոտ և բաժանեց յերկու հերթի։ Մի հերթի մեջ ընկան բժիշկը, Գրեյը և յես, մյուս հերթի մեջ՝ կալվածատերը, Գենտերը և Ջոյսը։ Մի որվա մեջ շատ հոգնել եյինք, սակայն նավապետը յերկու հոգու ուղարկեց անտառ փայտ բերելու, յերկու հոգու էլ հրամայեց, վոր Ռեդրեսի համար գերեզման փորեն։ Բժիշկը դարձավ խոհարար, ինձ դռան մոտ ժամապահ դրեց, իսկ ինքը, նավապետը, սկսեց անց ու դարձ անել մեկից մյուսի մոտ, բոլորին ոգնել ու սիրտ տալ։

Յերբեմն բժիշկը մոտենում եր դռանը, թարմ ոդ ծծելու և ծխից կարմրած աչքերը հանգստացնելու։ Այդ ժամանակ նա ինձ հետ կարճ խոսակցություն եր ունենում։

— Այս Սմոլետն ավելի լավ է, քան յես, — ասաց նա մի անգամ։ — Յեվ յեթե այս բանն ինքս խոստովանում եմ, ուրեմն այդպես էլ է, Ջիմ։

Մի ուրիշ անգամ նախ լռեց, հետո գլուխը դարձրեց և ուշադրությամբ նայեց իմ դեմքին։

— Այն Բեն Գանների վրա կարելի՞ յե հույս դնել, — հարցրեց նա։

— Չգիտեմ, պարոն, — պատասխանեցի յես։ — Յես հավատացած չեմ, վոր նրա խելքը տեղն է։

— Ուրեմն, խելքը տեղը չէ, — ասաց բժիշկը։ — Յեթե մի մարդ յերեք տարի անմարդաբնակ կղզու մեջ իր յեղունգներն է կրծոտել, Ջիմ, նրա խելքը տեղը չի կարող լինել այնպես,

ինչպես քոնը կամ իմը։ Այդպես են մարդիկ։ Ասում ես նա յերազում է պանրի մասին։

— Այո, պարոն—պատասխանեցի յես։

— Լավ, Ջիմ,— ասաց նա։ — Տես թե ինչ ոգտակար է բժիշկ լինելը։ Դու, յերևի, տեսել ես իմ բռնութամանը, սակայն չես տեսել, վոր յես բռնութի յեմ քաշում։ Իմ բռնութամանում կա մի կտոր իտալական պանիր, վորը շատ սննդարար է։ Այդ պանիրը մենք կոտանք Բեն Գաննին

Ընթրիքից առաջ մենք ծերունի Թոմին թաղեցինք ավազի մեջ։ Հետո միառժամանակ գլխաբաց կանգնեցինք գերեզմանի մոտ։ Անտառից շատ փայտ եյին բերել, սակայն նավապետն ելի դժգոհ եր։

— Վաղը յես կստիպեմ ձեզ, վոր աշխատեք ինչպես հարկն է,— ասաց նա։

Ընթրիքին ապխտած խոզի միս ուտելուց և մի-մի բաժակ տաք փունջ խմելուց հետո, կալվածատերը, նավապետն ու բժիշկը գնացին խորհրդակցելու։

Սակայն, ըստ յերևույթին, վոչ մի լավ բան չմտածեցին։ Պաշարն այնքան քիչ եր, վոր մենք անխուսափելիորեն պետք է, մինչև ոգնության դալը, սովամահ լինեյինք։ Մնում եր մի բան՝ վորքան կարելի յե շատ ծովահեն սպանել, սպանել մինչև այն ժամանակ, մինչև վոր սև դրոշակն իջեցնեն կամ «Իսպանոլայով» բաց ծով դուրս գան։ Նրանք տասնիններից տասնհինգ եյին դարձել, վորոնցից յերկուսը վիրավոր եյին, իսկ մեկը, վոր խփեցինք Թնդանոթի մոտ, յեթե չեր մեռել, համենայն դեպս ծանր վիրավորված եր։ Մենք պետք է խնամքով պահպանենք մեր մարդկանց և հիշենք, վոր յերկու հուսալի զինակից ունենք— ոսոը և յեղանակը։

Ռոմն արդեն իր գործը կատարել եր. ծովահեններից կես մղոն եյինք հեռու, այնուամենայնիվ մինչև վերջին յերեկոն լսում եյինք յերգեր ու աղաղակներ։ Իսկ բժիշկը յերդվում եր իր կկոց ծամով, վոր շուտով յեղանակն իր անելիքը կանի. ծովահենները ճահճի մոտ են, վոչ մի տեղ չունեն, մի շաբաթից հետո նրանց կեսը դողերոցք կընկնի ու կպառկի։

— Յեվ այդպես,— ասում եր բժիշկը,— յեթե նրանց չհաջողվի միանգամից մեր գլուխն ուտել, նրանք ուրախ կլինեն, յեթե թողնեն կղզին և վերադառնան նավը։ Նրանք նավ ունեն

և միշտ կարող են զբաղվել իրենց արհեստով— ծովային ավազակությամբ։

— Սա առաջին նավն է, վոր յես կորցնում եմ,— ասաց նավապետ Սմոլետտը։

Ցես սաստիկ հոգնած եյի։ Քնելուց առաջ շատ շուռ ու մուռ յեկա, իսկ հետո, փայտի կտորի նման քնեցի։

Բոլորն արդեն վաղուց վեր եյին կացել, նախաճաշում ու փայտ եյին կտրում, յերբ հանկարծ զարթնեցի հանկարծակի աղմուկից։

— Սպիտակ դրոշակ,— գոչեց մեկը։

Ցեվ իսկույն մի զարմացած բացականչություն լսվեց.

— Ինքը Սիլվերն է։

Ցես վեր թռա, աչքերս տրորեցի և վազեցի պատի հրակնատի մոտ։

ԳԼՈՒԽ XX

ՍԻԼՎԵՐԸ ԲԱՆԲԵՐ

Իսկապես վոր ցցապատին մոտեցան յերկու մարդ։ Նրանցից մեկը մի սպիտակ լաթ եր թափահարում, իսկ մյուսը վոչ այլ վոք, այլ ինքը Սիլվերը, անվրդով կանգնած եր նրա կողքին։

Դեռ շատ վաղ եր։ Վաղուց այդպիսի ցուրտ առավոտ չեյի տեսել։ Դողը մինչև վոսկորներս եր անցնում։ Ցերկինքը պարզ եր, պայծառ, ծառերի կատարները ծաղող արեգակի ճառագայթների տակ վարդագույն եյին դարձել։ Սակայն ներքևում, ուր Սիլվերն իր ուղեկցի հետ կանգնած եր, դեռևս մութն եր։ Նրանց վոտների մոտից քուլա-քուլա բարձրանում եր սպիտակ մշուշը— ճահճի գիշերային գոլորշին։ Դողերոցք և մշուշ— ահա թե ինչում եր կայանում կղզու տխուր գաղտնիքը։ Կղզին խոնավ, տենդոտ և վատառողջ տեղ եր։

— Տեղներ դ,— ասաց նավապետը։— Գրազ կգամ, վոր նրանք խորամանկություն են հորինում։

Հետո նա գոչեց.

— Ո՞վ է գալիս։ Կանգնեք, թե չե կկրակենք։

— Սպիտակ դրոշակը,— գոչեց Սիլվերը։

Նավապետը դուրս յեկավ ու կանգնեց դրսի սանդուղքի

վրա այնպես, որ դավաճանի գնդակը համարյա թե չեր սպառնում նրան։

Դառնալով դեպի մեզ, նա հրամայեց.

— Բժշկի խումբը հրակնատների մոտ։ Բժիշկ Լիվսի, խնդրում եմ գրավել հյուսիսային պատը, Ջիմ, արևելյան պատը, Գրեյ՝ արևմտյանը։ Մյուս հերթը թող լցնի ատրճանակները։ Շուտ, շուտ։ Ուշադիր յեղեք։

Հետո կրկին դարձավ դեպի ավազակները.

— Ի՞նչ եք ուզում մեզանից ձեր սպիտակ դրոշակով, — գոչեց նա։

Այս անգամ պատասխանեց վոչ թե Սիլվերը, այլ մյուս ծովահենը։

— Պարոն, նավապետ Սիլվերը հրավիրում է ձեզ իր նավը և ցանկանում է ձեզ հետ պայմանագիր կնքել,— աղաղակեց նա։

— Նավապետ Սիլվերը։ Ցես այդպիսի նավապետ չեմ ճանաչում։ Ո՞վ են նա,— հարցրեց նավապետը։

Մենք լսեցինք, թե ինչպես նա կիսաձայն ավելացրեց.

— Ահա թե ի՞նչ։ Արդեն նավապետ է։ Ի՞նչ արագ բարձրացավ աստիճանը։

Ցերկարահասակ Ջոնն ինքը պատասխանեց.

— Այդ յես եմ, պարոն։ Մեր դժբախտ տղերքը, ձեր դասալքությունից հետո, ինձ նավապետ են ընտրել, պարոն։— «Դասալքություն» բառը նա առանձնապես շեշտեց։— Մենք պատրաստ ենք կրկին յենթարկվելու ձեզ, իհարկե, վորոշ պայմաններով, յեթե ցանկանաք մեզ հետ պայման կնքել։ Իսկ այժմ, նավապետ Սմոլետտ, ազնիվ խոսք տվեք, վոր այստեղից ինձ կենդանի բաց կթողնեք և չեք կրակի, մինչև վոր ցցապատից չհեռանամ։

— Ցես ձեզ հետ խոսելու վոչ մի ցանկություն չունեմ, — ասաց նավապետ Սմոլետտը։— Բայց քանի վոր ուզում եք խոսել ինձ հետ, յեկեք այստեղ։ Սակայն յեթե դուք դավաճանության մասին եք մտածում, ապա ձեզ վրա նեղացեք։

— Այդքանը բավական է, նավապետ,— ուրախ բացականչեց Ցերկարահասակ Ջոնը։— Միայն ձեր մի խոսքը բավական է։ Ցես գիտեմ, վոր դուք ջենտլմեն եք, նավապետ, և վոր ձեր խոսքին կարելի յե հավատալ։

Մենք տեսանք, թե ինչպես սպիտակ դրոշակ բռնող մարդն աշխատում եր չթողնել Սիլվերին, վոր մեզ մոտ գա։ Դրա մեջ

զարմանալի բան չկար, վորովհետև նավապետն այնքան էլ սիրալիր չեր խոսում։ Բայց Սիլվերը պատասխանի փոխարեն միայն ծիծաղեց և նրա ուսին խփեց, կարծես թե վատնգավոր լինելու մասին մտածելն անդամ անհեթեթություն եր։ Նա մոտեցավ ցցապատին, ձգեց իր հենակը, ապա ինքն էլ արտասովոր արագությամբ ու ճարպկությամբ անցավ։

Պետք է խոստովանեմ, վոր յես այնքան զբաղված եյի տեղի ունեցող դեպքով, վոր ժամապահի պարտականությունները մոռացել եյի։ Թողել եյի իմ պահակատեղն արևելյան հրակնատի մոտ և կանգնած եյի նավապետի յետևում, վորը նստել եր շեմքի վրա, արմունկները ծնկների վրա դրած, գլուխն ափերի մեջ առած և նայում եր չուգունե կաթսայի վրա, վորի մեջ ջուրն աղմկում եր և ավազի մանրիկ հատիկները պարում եյին։ Իր քթի տակ շշվացնում եր «պատանիներ և կուլսեր, իմ յետևից» յեղանակը։

Սիլվերի համար բավականի դժվար եր բլրի լանջով բարձրանալը։ Զառիվայրի վրա, թափվող ավազի և լայն կոճղերի մեջ, նա իր հենակով անպաշտպան եր, ինչպես նավը ծանծաղուտի վրա։ Սակայն նա արիաբար ու լռությամբ հաղթահարեց վողջ ճանապարհը, կանգնեց նավապետի առաջ և շատ գեղեցիկ ձևով պատվի առավ։ Նա հագել եր իր ամենալավ զգեստը, մինչև ծնկները հասնող կապույտ բաճկոն, բազմաթիվ պղնձե կոճակներով, դեպի ծոծրակը ծռած գլխարկ, վորի շուրջը ժանյակ եր կարված

— Ահա և դուք, սիրելի,— ասաց նավապետը, գլուխը բարձրացնելով։— Նստեցեք։

— Ինձ տուն թողեք, նավապետ,— խղճալի ձայնով խնդրեց Ցերկարահասակ Ջոնը։— Այսպիսի ցուրտ առավոտյան ավազի վրա նստելու ցանկություն չունեմ։

— Յեթե դուք, Սիլվեր,— ասաց նավապետը,— շարունակեյիք մնալ աղնիվ մարդ, ապա այժմ դուք նստած կլինեյիք խոհանոցում։ Մեղավորը դուք եք։ Դուք կամ իմ նավի խոհարարն եք, այդ ժամանակ յես ձեզ հետ լավ եմ վարվում, կամ նավապետ Սիլվերը, խռովարար և ծուլահեն, այն ժամանակ, ինձնից, բացի կախաղանից, ուրիշ վոչինչ մի սպասեք։

— Լավ, լավ, նավապետ,— ասաց խոհարարը, նստելով ավազի վրա,— Միայն հետո ձեր ձեռքը պետք է տաք ինձ, վոր բարձրանամ։— Լավ եք տեղավորվել այստեղ։ Իսկ դա Ջոնն է։

Բարի որ, Ջոն։ Բժիշկ, հարգանքներս։ Դուք բոլորդ միասին եք, կարծես մի յերջանիկ ընտանիք, յեթե թույլ կտաք այդպես արտահայտվել

— Գործի մասին խոսեցեք, սիրելի,— ընդհատեց նավապետը։— Ասացեք, ինչու յեք յեկել։

— Ճիշտ է, նավապետ Սմոլետ,— պատասխանեց Սիլվերը։— Ամենից առաջ գործը։ Պետք է խոստովանեմ, վոր այս գիշեր լավ խաղ խաղացիք մեր գլխին։ Զեզանից մեկը յերևի լավ մահակ գործածել գիտի։ Իմ մարդկանցից վոմանք ուղղակի ցնցվեցին այդ գործից։ Խոստովանում եմ, վոր յես ինքս էլ ցնցվեցի։ Կարելի յե հենց դրա համար եմ յեկել պայմանագրելու։ այց, յերդվում եմ վորոտով, նավապետ, յերկրորդ անգամ այդ պատմությունը ձեզ չի հաջողվի։ Մենք ամեն տեղ ժամապահներ ենք դրել և ռոմի քանակն իջեցրել ենք։ Դուք, յերևի, կարծում եք, վոր մենք բոլորս էլ սաստիկ հարբած եյինք։ Հավատացեք, վոր յես բոլորովին հարբած չեյի, այլ միայն շան նման հոգնել եյի։ Յեթե մի վայրկյան շուտ դարթնեյի, իմ ձեռքից չեյիք պրծնի։ Դեռ կենդանի յեր, յերը նրա մոտ վազեցի։

— Հետո,— պաղարյուն կերպով արտասանեց նավապետ Սմոլետը։

Սիլվերի ասածը նավապետի համար հանելուկ եր, բայց նա ունքն էլ չշարժեց։ Իսկ յես, խոստովանում եմ, քիչ ու մինչ բան գլխի ընկա։ Յես հիշեցի Բեն Գանների վերջին խոսքերը։ Յես հասկացա, վոր նա գիշերը մոտեցել է ավազակներին, յերբ նրանք հարբած, թափված են յեղել խարույկի շուրջը։ Յես ուրախ եյի, վոր այժմ մեր թշնամիներից կենդանի յեն միայն տասնչորս հոգի։

— Ահա թե ինչ,— ասաց Սիլվերը։— Մենք ուզում ենք գանձը գտնել և կգտնենք։ Իսկ դուք, իհարկե, ուզում եք փրկել ձեր կյանքը և իրավունք ունեք։ Չե՞ վոր դուք քարտեզ ունեք, այնպես չե՞։

— Շատ կարելի յե,— պատասխանեց նավապետը։

— Յես հաստատ գիտեմ, վոր դուք քարտեզ ունեք,— շարունակեց Ցերկարահասակ Ջոնը։— Բայց ինչու յեք դուք ինձ հետ այդպես խուսափելով խոսում, այդ ձեզ ոգուտ չի բերի։ Ձեր քարտեզը մեզ հարկավոր է, ուրիշ վոչինչ, իսկ անձամբ ձեզ, յես ամենավոքը չարիք անդամ չեմ ցանկանում։

— Բավական է, սիրելի,— ընդհատեց նավապետը։— Ցեռ քո ասած մարդկանցից չեմ։ Մեզ ճշտապես ճայտնի յեն ձեր նպատակները։ Բայց այդ հանգամանքը մեզ բոլորովին չի անհանգստացնում, վորովհետև ձեռքներդ կարճ դուրս յեկավ։

Նավապետը հանգիստ նայեց նրան և սկսեց ծխամորճը լցնել։

— Ցեթե Եք Գրեյը...— սկսեց Սիլվերը

— Կաց,— գոչեց Սմոլեթտը։— Գրեյն ինձ վոչինչ չի ասել և յես նրան վոչ մի բան չեմ հարցրել։ Կասեմ ավելին. յես ամենայն բավականությամբ ողը կցնդեցնեյի և՛ ձեզ, և՛ նրան, և այս սատանայական կղզին։ Ահա թե ինչ եմ մտածում յես ձեր վողջ ավազակախմբի մասին, սիրելիս։

Այս զայրույթի պոռթկումը, յերևի, Սիլվերի լեզուն կապեց։ Նա ուզում եր բարկանալ, բայց իրեն զսպեց։

— Ինչպես ուզում եք,— ասաց նա։— Մտածեցեք, ինչ վոր ցանկանում եք, յես ձեզ չեմ արգելի։ Դուք, կարծեմ պատրաստվում եք ծխամորճ ծխելու, նավապետ։ Ցես ել, թույլ տվեք, վոր նույնն անեմ։

Նա իր ծխամորճը ծխախոտ լցրեց ու ծխեց։ Ցերկուսն ել յերկար ժամանակ լուռ նստած, նայում եյին իրար յերեսի, յերբեմն ծուխ բաց թողնելով, յերբեմն ել կռանալով, վոր թքեն։ Նրանց վրա նայելը զվարճալի յեր՝ ինչպես թատրոնական ներկայացման վրա։

— Ահա մեր պայմանները,— վերջապես ասաց Սիլվերը։ — Դուք մեզ պետք է տաք քարտեզը, վոր մենք կարողանանք գանձը գտնել, դուք պետք է դադարեք դժբախտ նավաստիներին կրակելուց և նրանց գլուխը ջարդելուց, յերբ քնած են։ Ցեթե այս պայմաններին համաձայն եք, մենք ձեզ առաջարկում ենք ընտրել հետևյալ միջոցներից մեկը։ Առաջին միջոցը գանձը բարձելուց հետո մենք թույլ ենք տալիս ձեզ վերադառնա, նավը, և յես ձեզ ազնիվ խոսք եմ տալիս, վոր ձեզ կենդանի կիջեցնեմ վորևե ծովափում։ Ցեթե առաջին միջոցը ձեզ դուր չի գալիս, վորովհետև իմ նավաստիներից շատերը ձեզ վրա ատամ են կրճատացնում, ահա յերկրորդ միջոցը. մենք կթողնենք ձեզ այստեղ, կղզու վրա։ Պաշարը կկիսենք և յես խոստանում եմ ուղարկել ձեր յետևից առաջին պատահած նավը։ Խորհուրդ եմ տալիս այս պայմաններն ընդունել։ Ավելի լավ պայման չի լինի։ Հուսով եմ,— այստեղ նա ձայնը բարձրացրեց,— վոր ձեր

բոլոր մարդիկը, վորոնք այս տանն են, կլսեն իմ խոսքերը, վորովհետև մեկին ասածը, բոլորի համար է ասված։

Նավապետ Սմոլեթտը վեր կացավ և իր ծխամորճի մոխիրը թափ տվեց ձախ ձեռքի ափի մեջ։

— Ա՞յդ է բոլորը,— հարցրեց նա։

— Ցերդվում եմ վորոտով, վոր սա իմ վերջին խոսքն է, — պատասխանեց Զոնը։— Ցեթե մերժեք, իմ փոխարեն կխոսեն մեր հրացանները։

— Հիանալի յե,— ասաց նավապետը։— Իսկ այժմ ինձ լսեցեք։ Ցեթե դուք բոլորդ կներկայանաք ինձ մեկ-մեկ առանց զենքի, յես ձեզ կշղթայեմ, կառնեմ Անգլիա և դատի կտամ։ Իսկ յեթե չեք ներկայանա, այն ժամանակ հիշեցեք, վոր ինձ անվանում են Ալեքսանդր Սմոլեթտ, վոր յես կանգնած եմ այս դրոշակի տակ և վոչ վոքի չեմ խնայի։ Գանձը դուք չեք գտնի։ Նավով փախչել ձեզ չի հաջողվի, վորովհետև ձեզանից վոչ վոք վարել չգիտե։ Կռվելում ել դուք վարպետ չեք։ Գրեյի դեմ ձերոնցից հինգ հոգի եյին կռվում և նա բոլորի պատասխանն ել տվեց։ Դուք ամուր նստած եք ծանծաղուտի վրա, նավապետ Սիլվեր, և շուտով նրանից չեք դուրս գա։ Սա ամենավերջին բարի խոսքն է, վոր դուք լսում եք ինձանից։ Իսկ հետևյալ հանդիպմանը, յես գնդակն անց կկացնեմ ձեր մեջքի մեջ։ Կորեք, սիրելի։ Շտապեցեք։

Սիլվերի աչքերը կատաղությունից փայլատակեցի։ Նա իր ծխամորճի կրակը թափ տվեց։

— Տվեք ձեր ձեռքը, վոր կարողանամ բարձրանալ,— գոռաց նա։

— Չեմ տա,— պատասխանեց նավապետը։

— Ո՞վ կտա ինձ իր ձեռքը,— ընդհատեց Սիլվերը։

Մեզանից վոչ վոք մինչև անգամ չշարժվեց։ Զզվելի հայհոյանքներ տալով, Սիլվերն ավազի վրայով սողաց մինչև սանդուխքը, բռնեց և միայն այդ ժամանակ նրան հաջողվեց բարձրանալ։ Նա թքեց առվի մեջ.

— Դուք ինձ համար ինչպես այս թուքը,— գոչեց նա։— Մի ժամից հետո յես ձեր տանը ռոմ եմ խմելու։ Ծիծաղեցեք, կայծակը խփի ձեզ, ծիծաղեցեք։ Մի ժամից հետո դուք այն աշխարհումն եք ծիծաղելու։ Իսկ Ձեզանից ով վոր կենդանի մնա, մեռելներին կնախանձի։

Յեվ կրկին հայհոյելով, կաղալով առաջ գնաց։ Զորս անգամ ուզեց ցցապատն անցնել, բայց ընկավ։ Վերջապես սպիտակ դրոշակ բռնող մարդը նրան անց կացրեց և մի բոպեյում նրանք անհայտացան ծառերի յետևում։

ԳԼՈՒԽ XXI

ՀԱՐՁԱԿՈՒՄ

Հենց վոր Սիլվերն անհայտացավ, նավապետը, վոր բոլոր ժամանակ աչքը նրանից չեր հեռացնում, յետ դարձավ և նկատեց, վոր պահակատեղում կանգնած է միայն Գրեյը։ Մենք առաջին անգամ տեսանք, թե նավապետն ինչպես է բարկանում։

— Տեղերում, — գոռաց նա։

Մենք վազեցինք դեպի հրակնատները։

— Գրեյ, — ասաց նա, — յես քո անունը կգրեմ նավի մատյանի մեջ։ Դու քո պարտքը կատարեցիր այնպես, ինչպես վայել է ծովագնացին։ Պարոն Տրելոնի, դուք ինձ զարմացրիք։ Բժիշկ, չե՞ վոր դուք զինվորական համազգեստ եք կրել։ Յեթե Ֆոնտենուայում դուք այդպես եք կատարել ձեր պարտականությունը, ավելի լավ է, վոր մահճակալից ցած չիջնեյիք։

Բժշկի հերթը հրակնատների մոտ եր, իսկ մնացածները լցնում եյին հրացանները։ Մենք բոլորս ամոթից կարմրեցինք։

Նավապետը լուռ հետևում եր մեզ։ Հետո նորից խոսեց։

— Բարեկամներս, — ասաց նա, — յես Սիլվերին հանդիպեցի, այսպես ասած, թնդանոթի համազարկով։ Յես դիտմամբ նրան կատաղեցրի։ Ինչպես նա ասաց, չի անցնի մի ժամ, վոր մենք հարձակման կենթարկվեք։ Դուք գիտեք, վոր նրանք շատ են, քան մենք, սակայն, դրա փոխարեն, մենք գտնվում ենք ամրոցում։ Մի բոպե առաջ յես նույնիսկ կարող եյի ասել, վոր մեզ մոտ կարգապահություն կա։ Յես չեմ կասկածում, վոր մենք կհաղթենք նրանց, յեթե դուք ցանկանաք հաղթել։

Հետո նա մոտեցավ յուրաքանչյուրիս և խոստովանեց, վոր այս անգամ ամեն ինչ կարգին է։

Ամրոցի յերկու կարճ պատերի մեջ — արևելյան և արևմտյան — միայն յերկուական հրակնատ կար, հարավային պատի մեջ, վորտեղ գտնվում եր դուռը, դարձյալ յերկուսն եր, իսկ հյուսիսային պատի մեջ՝ հինգ հրակնատ։ Մենք, յոթ հոգիս, քսան

հրացան ունեյինք։ Փայտը չորս կույտ արինք, այդ կույտերին անվանեցինք սեղաններ։ Յուրաքանչյուր սեղանի վրա դրված եր չորսական լցված հրացան, վորպեսզի ամրոցի պաշտպանները միշտ ձեռքի տակ ունենան։ Իսկ հրացանների միջև դրված եյին թրերը։

— Կրակը հանգցրեք, — ասաց նավապետը։ — Արդեն տաք է, ծուխն ել աչքերիս վնաս է տալիս։

Պարոն Տրելոնին դուրս բերեց ոջախի վանդակը և կրակը ցրեց ավազի վրա։

— Գոկինսը դեռ չի նախաճաշել։ Գոկինս, նախաճաշդ վերցրու, պահակատեղումդ կուտես, — շարունակեց նավապետը։ — Շարժվիր, բարեկամս, թե չե առանց նախաճաշի կմնաս։ Գենտեր, բոլորին մի-մի բաժակ անգլիական ողի տուր։

Յերբ մենք պատրաստվում եյինք, նավապետը խորհեց պաշտպանության պլանը։

— Բժիշկ, ձեզ հանձնարարվում է դուռը, — ասաց նա։ — Լավ նայեցեք, բայց շատ առաջ մի կանգնեք։ Կանգնեցեք ներսում և կրակեցեք սանդուխքի յետևից, Գենտեր, դու վերցրու արևելյան պատը։ Զոյս, բարեկամս, վերցրու արևմտյան պատը։ Պարոն Տրելոնի, դուք լավ հրաձիգ եք, Գրեյի հետ միասին վերցրեք հյուսիսային, ամենայերկար պատը, վորը հինգ հրակնատ ունի։ Դա ամենավտանգավոր կողմն է։ Յեթե նրանց նատ ունի։ Դա ամենավտանգավոր կողմն է։ Յեթե նրանց հաջողվի վազել մինչև այդ պատը և հրակնատներից կրակել մեզ վրա, մեր գործը շատ վատ կլինի։ Իսկ յես ու դու, Գոկինս, վոր անպետք հրաձիգ ենք, կլցնենք հրացանները և կոգնենք բոլորին։

Նավապետը ճիշտ եր ասում. ցուրտն անցավ։ Հենց վոր արեգակը բարձրացավ ծառերի կատարների վրա, յեղանակը տաքացավ և մշուշն անհայտացավ։ Շուտով ավազն սկսեց այրել մեր կրունկները և ամրոցի գերաններից տաքացած խեժը հոսեց։ Մենք բաճկոններս հանեցինք, շապիկներիս ոձիքները բաց արինք, թևերս մինչև ուսերս քշտեցինք։ Յուրաքանչյուրը կանգնած եր իր պահակատեղում, տաքացած և հուզված։

Այսպես անցավ մի ժամ։

— Սատանա, — ասաց նավապետը, — ձանձրալի է։ Գրեյ, մի յերգ յերգիր։

Հենց այդ վայրկյանին առաջին անգամ պարզվեց, վոր մեզ վրա հարձակում է պատրաստվում։

— Թույլ տվեք հարցնել, պարոն,— ասաց Ջոյսը,— յեթե յես մարդ տեսնեմ, պիտի կրակեմ։

— Իհարկե,— գոչեց Նավապետը։

— Շնորհակալ եմ, պարոն,— ասաց Ջոյսը, նուլնպիսի հանգիստ և քաղաքավարի ձևով։

Վոչինչ չեր պատահել, սակայն Ջոյսի հարցն ստիպեց մեզ սրել մեր աչքերն ու ականջները։ Հրաձիգները հրացանները պատրաստ պահել եյին, իսկ Նավապետը կանգնել եր ամբոցի մեջտեղում, շրթունքները հուզ տված, հակատը կնճռոտած։

Այսպես անցավ մի քանի վայրկյան։ Հանկարծ Ջոյսն իր հրացանն անց կացրեց հրակնատի մեջ և արձակեց։ Նրա կրակոցի ձայնը դեռ չեր կտրվել, յերբ սկսեցին չորս կողմից կրակել— համազարկ համազարկի յետևից։ Մի քանի գնդակ դիպավ ցցապատի գերանին։ Բայց ամբոցի ներսը վոչ մի գնդակ չընկավ։ Յեվ յերբ ծուխը ցրվեց, ցցապատի շուրջը և անտառում, առաջվա պես, հանդարտություն եր տիրում։ Վոչ մի ճյուղ չեր շարժվում։ Թփերի մեջ հրացանի վոչ մի փող չեր փայլում։ Կարծես թե մեր թշնամիները գետինն անցան։

— Դիպցրիր վորևե մեկի,— հարցրեց Նավապետը։

— Վոչ, պարոն,— պատասխանեց Ջոյսը։— Կարծեմ, չդիպցրի, պարոն։

— Ճշմարիտ է ասում, այդ էլ լավ է,— ասաց Նավապետ Սմոլետը...— Լցրու նրա հրացանը, Գոկինս։ Ի՞նչ եք կարծում, բժիշկ, ձեր կողմում քանի՞ անգամ կրակեցին։

— Յես կարող եմ ճիշտ պատասխան տալ,— ասաց բժիշկ Լիվսին.— յերեք անգամ։ Յես յերեք բռնկում տեսա— յերկուսն իրար կողքի և մեկը հեռվում, դեպի արևմուտք։

— Յերեք,— կրկնեց Նավապետը։— Իսկ ձեր կողմում, պարոն Տրելոնի։

— Սակայն պատասխանելը հեշտ չեր։ Հյուսիսային կողմից շատ եյին կրակել։ Կալվածատերը հավատացնում եր, վոր ինքը նկատել է ընդամենը յոթ կրակոց, իսկ Գրեյը, թե՝ ութ կամ ինը։ Արևելքից ու արևմուտքից միայն մի-մի անգամ եյին կրակել։ Յերեի հարձակումը պետք է սպասեյինք հյուսիսային կողմից։ Իսկ այլ կողմերից կրակում եյին միայն մեր ուշադրությունը ցրելու համար։ Այնուամենայնիվ Նավապետ Սմոլետն իր կարգադրությունները չփոխեց։

— Յեթե ավազակներին հաջողվի ցցապատն անցնել,— ասում

եր նա,— նրանք կարող են գրավել յուրաքանչյուր չպաշտպանված հրակնատ և բոլորիս սպանել, ինչպես առնետների, մեր սեփական ամրոցում։

Սակայն մենք մտածելու համար շատ քիչ ժամանակ ունեյինք։ Հյուսիսային կողմից հանկարծ աղաղակ լսվեց և ծովահենների մի փոքրիկ խումբ, դուրս գալով անտառից, վազեց դեպի ցցապատը։ Այդ վայրկյանին նորից սկսեցին չորս կողմից գնդակոծել մեզ։ Բայց դռնից մի գնդակ սլացավ և բժշկի հրացանը կտոր-կտոր արավ։

Հարձակվողները կապիկների պես անցնում եյին ցցապատի վրայից։ Կալվածատերն ու Գրեյը շարունակ կրակում եյին։ Յերկու հոգի վայր ընկան — մեկը ներսում, յերկուսը դրսում։ Ասենք, նրանցից մեկը, յերևի, այնքան էլ վիրավորված չեր, վորքան վախեցած, վորովհետև իսկույն վոտի կանգնեց և անհայտացավ անտառում։

Յերկու հոգի պառկած եյին գետնի վրա, մեկը փախավ, չորսը հաջողությամբ ցցապատն անցան։ Յոթ, թե ութ ծովահեն, վորոնցից յուրաքանչյուրը, յերևի, մի քանի հրացան ուներ, անտառում նստած շարունակ գնդակոծում եյին մեր տունը։ Այնուամենայնիվ այդ գնդակոծությունը մեզ վոչ մի վնաս չբերեց։

Հարձակվողներից չորս հոգի, աղաղակելով, վազեցին դեպի ամբոցը։ Անտառում թաքնվածները նույնպես աղաղակում եյին, վոր ընկերներին աշխուժացնեն։ Մեր հրձիգներն էլ անընդհատ վոր ընկերներին աշխուժացնեն։ Մեր հրձիգներն էլ անընդհատ կրակում եյին, բայց այնպես շտապում եյին, վոր, յերևի, վոչ մի անգամ չդիպցրին։ Մի վայրկյանում չորս ծովահեն բարձրացան բլրի վրա և հարձակվեցին մեզ վրա։

Ջոր Ենդերսոնի, ավագ նավաստու, գլուխը յերևաց միջին հրակնատում։

— Կոտորեցեք դրանց։ Կոտորեցեք դրանց,— մռնչում եր նա։

Այդ վայրկյանին մի ուրիշ ծովահեն խլեց Գինտերի հրացանը, փողից բռնեց և կոթով խփեց Գինտերին այնպիսի ուժով, վոր գժբախտն ուշաթափված գետին ընկավ։ Միևնույն ժամանակ յերրորդը, հաջողությամբ տան չորս կողմը պտտվելով, հայտնվեց դռան մեջ և թուրը թափահարելով, հարձակվեց բժշկի վրա։

Մենք գտնվում եյինք այնպիսի դրության մեջ, ինչ դրության մեջ մինչև այժմ մեր թշնամիներն եյին։ Միայն թե

մենք կրակում էյինք ծածկված տեղից անպաշտպան ծովահենների վրա, իսկ այժմ ինքներս, վոչնչով պաշտպանված չլինելով, պետք է ձեռնակռվի դուրս գայինք լավ ծածկված թշնամու հետ։ Ամրոցը լցվեց վառոդի ծխով, բայց այս հանգամանքը մեզ համար ձեռնտու չեր։ Հենց ծխի պատճառով էլ մենք կենդանի մնացինք։ Աղմուկից, հառաչանքից և ատրճանակների կրակոցից ականջներս դժդժում էյին։

— Դուրս յեկեք, հառաջ, ձեռնամարտի դուրս յեկեք։ Թրերով,— գոչեց նավապետը։

Ցեսի փայտի կույտի վրայից թուրս վերցրի։ Մի ուրիշն էլ թուրը վերցնելիս, կտրեց իմ մատների հոդերը, բայց յես ցավ չզգացի։ Ցեսի վազեցի դեպի դուռը, դեպի լույսը։ Մեկն էլ իմ յետևից դուրս յեկավ, բայց չգիտեմ, թե ով։ Իմ առջևում բժիշկը — բլրի լանջով հալածում եր իր վրա հարձակվող ծովահենին։ Ցես տեսա, թե ինչպես մի հարվածով նա վայր գցեց նրա ձեռքի զենքը, հետո թրով խփեց նրա յերեսին։ Ծովահենը մեջքի վրա վայր ընկավ։

— Տան շուրջը։ Տան շուրջը,— գոչեց նավապետը։

Սակայն, չնայած ընդհանուր շփոթության և աղմուկին, յես նրա ձայնի մեջ փոփոխություն նկատեցի։

Մեքենայաբար յենթարկվելով հրամանին, յես շրջվեցի դեպի արևելք, թուրս բարձրացրած անկյունից ծռվեցի և յերես առ յերես հանդիպեցի Ենդերսոնին։ Նա մռնչաց և վորսորդական դանակը, արևից շողալով, պտտվեց իմ գլխի վրա։ Ցես վախենալու էլ ժամանակ չունեցա։ Հարվածից խուսափելով, յես ընկա փափուկ ավազի վրա և գլխիվայր գլորվեցի զառիվայրով։

Գրոհի ժամանակ, յերբ յես դուրս թռա դռնից, մյուս ծովահենները արդեն անցնում էյին ցցապատից, վոր մեզ սպանեն։ Մեկը նրանցից, գիշերային կարմիր թասակով, թուրն ատամներով բռնած, պատրաստվում եր ցցապատից թռչել։ Իմ բլրից ընկնելն այնպես արագ կատարվեց, վոր յերբ վոտի կանգնեցի, ամեն ինչ նույն դրության մեջ եր. կարմիր թասակ ծածկած ծովահենը նույն դրությամբ նստած եր, իսկ մյուսի գլուխը հենց նոր եր դուրս յեկել ցցապատի յետևից։ Այնուամենայնիվ այդ ժամանակ կռիվը վերջացավ և մենք հաղթանակը տարանք։

Գրեյը, վոր դռնից դուրս եր յեկել իմ յետևից, գետնին փռեց յերկարահասակ ավազ նավաստուն, մինչև վերջինիս յերկ-

բ։րդ անգամ թուրը պտտացնելը։ Մյուս ծովահենն սպանվեց հրակնատի մոտ այն բոպ։յին, յերբ պատրաստվում եր կրակել դեպի տան ներսը։ Նա հոգևարքի մեջ կուչ ու ձիգ եր անում ավազի վրա, ծխացող ատրճանակը ձեռքից բաց չթողնելով։ Ցերբորդին, ինչպես արդեն ասացի, սրախողող արավ բժիշկը։ Ցցապատն անցած չորս ծովահեններից միայն մեկը կենդանի մնաց։ Զգելով իր թուրը կռվի դաշտում, նա, մահից սարսափած, մագլցում եր ցցապատով, վոր փախչի, բայց ընկնում եր։

— Կրակեցեք, կրակեցեք տնից,— գոչում եր բժիշկը։— Իսկ դուք, քաջեր, ծածկվեցեք։

Բայց նրա խոսքերն իզուր եյին անցնում։ Վոչ վոք հրացան չեր արձակում։ Զորսից վերջինը հաջողությամբ անցավ ցցապատը և մյուսների հետ անհայտացավ անտառում։ Մի բոպեյից հետո հարձակվողներից, բա ի հինգ հոգուց, վոչ վոք չմնաց. չորսն ընկած եյին ցցապատի այս կողմում, մեկը՝ այն կողմում։

Բժիշկը, Գրեյը և յես վազեցինք դեպի դուռը։ Կենդանի մնացածներն ամեն բոպե կարող եյին վերադառնալ և հրաձգությունն սկսել։

Վառոդի ծուխը ցրվեց և մենք միանգամից տեսանք, թե ինչ գնով ենք հաղթություն տարել։ Գենտերն ուշ թափ ընկած եր իր հրակնատի մոտ։ Զոյսը, գնդակահարված գլխով, հավիտյանս հանգստացել եր։ Տան մեջտեղում կալվածատերը բռնել եր բժշկին և յերկուսի յերեսն ել գունատ եր։

— Նավապետը վիրավորված է,— ասաց պարոն Տրելոնին։

— Բոլորը փախան,— հարցրեց պարոն Սմոլետը։

— Բոլորը, ով կարողացավ,— պատասխանեց բժիշկը։— Բայց հինգ հոգի ել յերբեք չեն կարող վազել։

— Հինգ հոգի,— բացականչեց նավապետը։— Այնքան ել վատ չի։ Նրանց շարքից դուրս յեկան հինգ հոգի, իսկ մեզանից՝ միայն յերեք, ուրեմն այժմ չորսս իննի դեմ ենք։ Սա լավ է, քան սկզբում— յոթը տասնիննի դեմ*)։

*) Իսկապես այդ ժամանակ կենդանի եյին մնացել միայն ութ ավազակ, վորովհետև պարոն Տրելոնու նավում խփած նավաստին նույն յերեկոյան մեռավ։ Բայց, ինչպես, այդ մասին մենք լսեցանք շատ ուշ։

Ծան. հեղ.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

ԻՄ ԱՐԿԱԾՆԵՐԸ ԾՈՎԻ ՎՐԱ

ԳԼՈՒԽ XXII

ԻՆՉՊԵՍ ՍԿՍՎԵՑԻՆ ԻՄ ԱՐԿԱԾՆԵՐԸ ԾՈՎԻ ՎՐԱ

Ավազակները չվերադարձան։ Նույնիսկ վոչ մեկը նրանցից չկրակեց անտառից։ «Նրանք այսորվա բաժինն ստացել են», արտահայտվեց նրանց մասին նավապետը։ Մենք կարող եյինք հանգիստ կերպով կապել վիրավորների վերքերը և ճաշ պատրաստել։ Այս անգամ ճաշը պատրաստեցինք յես ու կալվածատերը։ Զնայելով վտանգին, մենք գերադասեցինք ճաշ պատրաստել բակում, վոր չլսենք, թե ինչպես սարսափելի յեն հառաչում մեր վիրավորները։

Կռվում վնասված ութ հոգուց միայն յերեք հոգի եյին կենդանի մնացել։ հրակնատի մոտ խփված ծովահենը, Գենտերը և նավապետ Սմոլետը։ Առաջին յերկուսի դրությունը անհուսալի յեր։ Ծովահենը շուտով մեռավ վիրահատության ժամանակ. Գենտերը, չնայած մեր ջանքերին, գիտակցության չեկավ։ Նա ամբողջ որը կենդանի մնաց, բարձր շնչելով, ինչպես մանակ։ Նա ամբողջ որը կենդանի մնաց, բարձր շնչելով, ինչպես շնչում եր զաբկի ժամանակ այն ծերունի ծովահենը, վոր ապրում եր մեր պանդոկում։ Սակայն նրա կողերը և գանգը ջարդված եյին և նա հեռևյալ գիշերը, առանց հառաչելու, առանց գիտակցության գալու, վախճանվեց։

Նավապետի վերքերը տանջող եյին, բայց վոչ վտանգավոր։ Վոչ մի անգամ մահացու կերպով վնասված չեր։ Ենդերսոնի գնդակը, վոր առաջին անգամ դիպավ նավապետ Զորին, ծակել եր նրա թիակը և թեթև կերպով դիպել թոքերին։ Ցերկրորդ գնդակը դիպել եր սրունքին և կտրել մի քանի կապեր։

Բժիշկը հավատացնում եր, վոր նավապետն անպայման կառողջանա, սակայն մի քանի շաբաթ չպետք է ման գա, ձեռքը շարժի և շատ խոսի։

Պատահաբար ստացած մատիս վերքը դատարկ բան եր։ Բժիշկ Լիվսին քերծվածքի վրա սպեղանի դրեց և քնքշաբար ականջս տրորեց։

Ճաշից հետո կալվածատերն ու բժիշկը նստեցին նավապետի մոտ և սկսեցին խորհրդակցել։ Խորհրդակցությունը վերջացավ կեսորից հետո։ Բժիշկը վերցրեց իր գլխարկը, ատրճանակները, թուրը խրեց գոտկի մեջ, քարտեզը դրեց գրպանը, հրացանը կախեց ուսից, հուսխային կողմից անցավ ցցապատը և անհայտացավ անտառում։

Ցես ու Գրեյը նստած եյինք ամրոցի հեռու անկյունում, վոր չլսենք, թե ինչ են խոսում մեզնից մեծերը։ Գրեյն այնպես հուզված եր բժշկի տարորինակ վարմունքից, վոր ծխամորճը բերանից հանեց և մոռացավ վոր եյի բերանը դնի։

— Ինչ հիմար բան է,— ասաց նա։— Բժշկի խելքը չի պակսել արդյոք։

— Չեմ կարծում,— պատասխանեցի ես։— Ամենից ուշ նրա խելքը կպակսի։

— Գուցե թե այդպես է,— ասաց Գրեյը։— Բայց եթե նրա խելքը պակաս չկ, ուրեմն խելագարը ես եմ։

— Վոչ, բժիշկը յերևի մի պլան ունի,— բացատրեցի ես։ — Իմ կարծիքով նա գնաց Բեն Գաննի հետ տեսնվելու։

Ինչպես հետո պարզվեց, ես ճիշտ եյի ասել։

Այնինչ ամրոցում շոգն անտանելի յեր դառնում։ Կեսորվա արեգակը ջեռացնում եր բակի ավազը և իմ մտքում մի տարորինակ միտք է պտտվում։ Ցես սկսեցի նախանձել բժշկին, վոր անցնում եր զով անտառով, ներշնչում եր յեղեվնու խեժոտ հոտը, այն ժամանակ, յերբ ես տապակվում եյի այս անիծված դժոխքում, վորտեղ շորերս թրջվել եյին քրտնքից, վորտեղ մարդկային արյուն եր թափված, վորտեղ շուրջս մեռելներ եյին թափված։ Զզվանքը, վոր պատճառում եր մեր ամրոցը, համարյա նույնպես մեծ եր, ինչպես և յերկյուղը։

Ցես լվանում եյի հատակը, լվանում եյի ամանները, և ամեն բոպե զզվանքը դեպի այս տունը, նախանձը դեպի բժիշկը, ավելանում եր։ Վերջապես պատահաբար հայտնվեցի պաքսիմատի պարկի մոտ։ Ինձ վոչ վոք չեր տեսնում։ Ցես սկսեցի

պատրաստվել փախուստի։ բաճկոնիս յերկու գրպանն ել պաքսիմատ լցրեցի։

Դուք կարող եք ինձ հիմար անվանել։ Ցես անխոհեմ եյի վարվում, կյանքս վտանգի եյի յենթարկում, այնուամենայնիվ ես ձեռք առա զգուշության բոլոր միջոցները, վոր կային իմ ձեռքի տակ։ Այս պաքսիմատը առնվազն յերկու որ չի թողնի, վոր ես սովից մեռնեմ։

Հետո վերցրի յերկու ատրճանակ։ Վառոդ ու գնդակ ինձ մոտ վաղուց կար և ես ինձ հիանալի զինված եյի զգում։

Իմ պլանը, ըստ եությունյան, այնքան ել վատ չեր։ Ցես ուզում եյի գնալ ավազոտ ցամաքալեզուն, վորն արևելյան կողմից բաժանում եր մեր նավահանգիստը բաց ծովից, գտնել սպիտակ ժայռը, վոր յերեկ յերեկոյան նկատեցի, և նայել՝ նրա տակ չի թագցնում արդյոք Բեն Գաննը իր նավակը։ Այս գործն իմ կարծիքով արժեքավոր գործ եր։ Բայց ես հաստատ գիտեյի, վոր ինձ ամրոցից բաց չեն թողնի և ես վճռեցի փախչել։ Իհարկե, այդպես վարվել պետք չեր, բայց մի մոռացեք, վոր ես յերեխա եյի և չեյի կարողանում ցանկությունս հաղթահարել։

Շուտով փախչելու համար հարմար դեպք պատահեց։ Կալվածատերն ու Գրեյը նավապետի վերքերը կապում եյին։ Ճանապարհն ազատ եր։ Ցես ցցապատն անցա և անհայտացա անտառի մեջ։ Նախքան իմ բացակայության հայտնի լինելը, ես արդեն այնքան հեռացա, վոր վոչ մի կանչ չեյի կարող լսել։

Այս իմ յերկրորդ անմիտ արարքն առաջինից վատ եր, վորովհետև ամրոցում միայն յերկու առողջ մարդ մնաց։ Այնուամենայնիվ, ինչպես և առաջին փախուստը, ոգնեց, վոր մենք փրկվենք։

Ցես ճանապարհ ընկա դեպի կղզու արևելյան ափը, վորովհետև ցանկանում եյի գնալ ցամաքալեզվի դեպի ծովի կողմը դարձված ափով, վոր ինձ նավից չնկատեն։

Ցերեկոյան դեմ եր, թեև արեգակը դեռ շատ բարձրում եր գտնվում։ Անտառի միջով գնալով, ես առջևից լսում եյի վոչ թե միայն ալեկոծության անընդհատ դղրդոցը, այլ և ճյուղերի շարժվելու ձայնը և տերևների սլսլոցը։ Սա նշանակում եր, վոր այսոր ծովի ալեկոծությունն ավելի ուժեղ եր, քան սովորաբար լինում եր։ Շուտով զով փչեց։ Ելի մի քանի քայլ, և ես դուրս յեկա անտառի յեզրը։ Իմ առաջ, մինչև հորիզոնը, տարածվում

եր արեգակի լույսով լուսավորված ծովը, իսկ ափի մոտ յեռում ու փրփրում եր ալեկոծությունը։

Ցեսս յերբեք չտեսա, վոր ծովը, Գանձերի կղզու մոտ հանդարտ լինի։ Մինչև անգամ պարզկա որերին, յերբ արեգակը շլացնելու չափ փայլում եր և ոդն անշարժ, հսկա ալիքները թնդյունով վազում էն դեպի այդ ափը։ Հազիվ թե կղզու վրա մի տեղ գտնվի, վորտեղ կարելի լինի պատսպարվել ալեկոծության աղմուկից։

Ցեսս անցնում եյի ափով, զբոսանքից հաճույք զգալով։ Վերջապես, վճռելով, վոր արդեն բավականաչափ դեպի հարավ եմ գնացել, զգուշությամբ, խիտ թփերի պաշտպանությամբ, բարձրացա դեպի վեր — ցամաքալեզվի լեռնաշղթայի վրա։

Առջևս նավահանգիստն եր, յետևիս՝ ծովը։ Ծովային քամին, կարծես հոգնած իր սեփական կատաղությունից, հանդարտվում եր։ Նրան փոխարինում եյին հարավից և հարավարևելքից յեկող ոդի հոսանքները, վորոնք իրենց հետ խիտ մշուշ եյին բերում։ Նեղուցում, վոր պաշտպանված եր Կմախքի կղզիով, նույնպես անշարժ մութ-կապարագույն ջուր եր, ինչպես այն որը, յերբ մենք առաջին անգամ տեսանք։ Վողջ «Իսպանոլան», կայմի ծայրից մինչև ջրագիծը, կախ ընկած սև դրոշակի հետ միասին, արտացոլված եր ինչպես հայելու մեջ։

Նավի մոտ յես տեսա մի մակույկ։ Մակույկի առջևի մասում նստած եր Սիլվերը։ Նրան յես կճանաչեյի, վորքան էլ հեռու լիներ։ Նա խոսում եր յերկու ծովահենների հետ, վորոնք նավի յեզրից ծռվել եյին դեպի Սիլվերը։ Նրանցից մեկի գլխին կարմիր թասակ կար։ Սա այն սրիկան եր, վոր քիչ առաջ անցավ ցցապատից։ Նրանք խոսում եյին ու ծիծաղում, բայց յես նրանցից մի ամբողջ մղոն հեռու եյի և հասկանալի չեյի, վոր նրանց խոսակցությունը լսել չեյի կարող։ Հետո լսեցի մի սարսափելի, վոչ մարդկային ձայն։ Սկզբում վախեցա, բայց հետո ճանաչեցի Նավապետ Ֆլինտի — թութակի — ձայնը։ Մինչև անգամ ինձ թվաց, վոր յես չալիկ թռչնին տեսա Սիլվերի ուսի վրա։

Մակույկը ճանապարհվեց դեպի ափը, իսկ կարմիր թասակ ծածկած մարդն եր ընկերոջ հետ, նավաստիների սենյակն իջան։

Արեգակը ծածկվեց Հեռադիտակի յետևում, մշուշը խտացավ, արագ մթնեց։ Ցեսս հասկացա, վոր վոչ մի բոպե չի կարելի կորցնել, յեթե ցանկանում եմ այսոր գտնել նավակը։

Սպիտակ ժայռը լավ յերևում եր մացառուտի միջից, բայց չափազանց հեռու յեր և յես քիչ ժամանակ չկորցրի, մինչև հասա։ Ցեսս չորեքթաթ անցնում եյի թփերի միջով։ Համարյա թե զիշեր եր, յերբ ձեռքս քսեցի ժայռի անհարթ կողքին։ Ժայռի տակ մի փոքրիկ հովիտ կար, վորտեղ կանաչ մամուռ եր աճում։ Այդ հովիտը պաշտպանված եր հայացքներից ավազակույտերով և հազիվ ծունկներիս հասնող կանցառ թփուտով։ Հովտի խորքում տեսա այծի մորթիներից պատրաստված վրան։ Անգլիայում այդպիսի վրաններ գնչուներն են ունենում։

Ցեսս անցա հովիտը, վրանի փեշը բարձրացրի և ներսը մտա Բեն Գանների նավակը — բոլոր ինքնագործ նավակներից, այսպես ասած, սա ամենաինքնագործն եր։ Ամուր փայտից Բենը ծռկող շրջանակ եր պատրաստել, ներսից այծի մորթիներ խփել — ահա ամբողջ նավակը։ Զգիտեմ, թե ինչպես եր նավակը դիմանում մեծահասակ մարդուն, քանի վոր յես դրժվարությամբ եյի տեղավորվում։ Ներսում կար մի նեղ նստարան, վոտների համար նեցուկ և մի թիակ։

Առաջ յես յերբեք ձկնորսական հյուսված նավակներ չեյի տեսել, վոր գործ եյին ածում հին բրիտանացիք։ Բայց հետագայում յես ծանոթացա նրանց։ Վորպեսզի դուք պարզ պատկերացում ունենաք Բեն Գանների նավակի մասին, կասեմ, վոր ամենայնիվ ուներ գլխավոր առավելություն հին նավից — թեթև եր և ազատ կերպով կարելի յեր տեղից-տեղ փոխադրել։

Այժմ ինձ մնում եր ամբոցը վերադառնալ։ Բայց այդ ժամանակ գլխումս մի նոր պլան հայտնվեց և յես այնպես համառորեն բավական եյի այդ պլանից, վոր վոչ մի նավապետ Սմոլետտ չեր կարող ինձ ստիպել, վոր հրաժարվեմ։ Ցեսս մտածեցի, ոգտվելով գիշերվա մթությունից, նավակով մոտենալ «Իսպանոլային» և կտրել խարսխի ճոպանը։ Թող հոսանքը նավին ափ դուրս գցի։ Ցեսս համոզված եյի, վոր ավազակները, վոր առավոտյան այնպիսի դիմադրության եյին հանդիպել, պատրաստվում եյին խարիսխը բարձրացնել և ծովը դուրս գալ։ Պետք եր խանգարել, քանի ուշ չեր։ Նավի վրա, հերթապահների տրամադրության տակ, վոչ մի մակույկ չեր մնացել, հետևապես ճոպանը կարելի յեր կտրել առանց վտանգի յենթարկվելու։

Սպասելով, վոր վերջնականապես մթնի, յես նստեցի

ավազի վրա և սկսեցի պաքսիմատ կրծել։ Դժվար է պատկերացնել մի ավելի հարմար գիշեր, մտածածս կատարելու համար։ Վողջ յերկինքը պատած եր թանձր մշուշով։ Յերբ մարեցին ցերեկվա վերջին ճառագայթները, խոր խավարը պատեց Դանձերի կղզուն։ Յեվ յերբ վերջապես նավակն ուսիս դցած, դուրս յեկա հովտից և սայթաքելով մոտեցա ջրին, խոր խավարի միջից միայն յերկու լույս եյին փայլում. առաջինը մի մեծ խարույկ եր ափին, ճահճի վրա, որի մոտ ծովահենները հարբեցողությամբ եյին զբաղված, յերկրորդ լույսն իսկապես ծածկված եր ինձանից. դա նավի առջևի մաոի պատուհանն եր։ Յես տեսնում եյի միայն լույսի մի բիծ մշուշի մեջ։

Տեղատվությունն արդեն սկսվել եր, ափի և ջրի մեջ կղմելով թաց ավազի մի լայն շերտ։ Շատ անգամ յես խրվեցի ջրիկ տղմի մեջ, մինչև որ հասա նահանջող ջրին։ Մի քանի քայլ ծանծաղուտով անցնելով, յես արագ և ուժեղ կերպով նավակը դրի ջրի մակերևույթի վրա։

ԳԼՈՒԽ XXIII

ՏԵՂԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Նավակը, ինչպես յենթադրում եյի, իմ հասակի ու քաշի մարդու համար շատ համապատասխան եր։ Նավակը թեթև եր, շարժուն, սակայն դրա հետ միասին այնքան ծռակող ու արագաշարժ, որ վարելն անհնարին եր։ Ինչ ուղղում ես արա, կաշվիցդ դուրս յեկ, անվերջ պտտվում ես։ Ինքը Բեն Գանները հետո խոստովանեց, որ այդ նավակը կարող է գործածել նա, ով «արդեն սովոր է նրա քմահաճույքին»։

Իհարկե, յես դեռ նավակի քմահաճույքին սովոր չեյի. ինչ ուղղությամբ ասես սլանում եր, բացի քո ցանկացած ուղղությունից։ Ավելի հաճախ դառնում եր դեպի ափը և յեթե տեղատվություն չլիներ, հաղիվ թե կարողանայի նավին հասնել։ Իմ բախտից տեղատվությունն ինձ դեպի «Իսպանոլան» եր տանում։

Նախ նկատեցի մի բիծ, որն իրեն շրջապատող խավարից ավելի սև եր։ Հետո տեսա նավի իրանն ու կայմերը։ Յեվ մի ակնթարթից հետո (որովհետև ինչքան հեռու եյի գնում, այնքան արագ եր քշում տեղատվությունը), հասա խարսխի ճոպաններին և բռնեցի։

Այնքան ուժեղ եր նավի ձգտումը խարսխից ազատվելու, որ ճոպանը լարի նման ձգված եր։ Նավի տակ տեղատվությունն ալեկոծվում ու աղմկում եր լեռնային գետակի նման։ Դանակիս մի զարկը, և «Իսպանոլան» կսլանա այնտեղ, ուր նրան կքաշի հոսանքը։

Սակայն յես ժամանակին գլխի ընկա, որ ամուր ձգված ճոպանը, յեթե միանգամից կտրեմ, ձիու սմբակի ուժով կխփի ինձ, նավակը շուռ կգա և յես ծովի հատակը կգնամ։

Յես կանգ առա և սկսեցի սպասել։ Յեթե հաջող դեպք չլիներ, յես, յերևի, վերջի վերջո կհրաժարվեյի իմ մտադրությունից։ Դիշերը մոտենալով, թեթև քամին, որ սկզբում փչում եր հարավ-արևելքից, ապա հարավից, դարձավ հարավ-արևմտյան։ Հանկարծակի վրա հասած փոթորիկը «Իսպանոլային» շուռ տվեց հոսանքի դեմ։ Ճոպանը թուլացավ և իմ ձեռքը, որով բռնել եյի, ջրի մեջ մտավ։

Հասկանալով, որ վոչ մի վայրկյան չի կարելի բաց թողնել, հանեցի դանակս, ատամներովս բաց արի և սկսեցի մեկը մյուսի յետևից կտրել ճոպանի մանրաթելերը։ Յերբ միայն յերկու մանրաթել մնաց կտրելու, ճոպանը նորից ձգվեց և յես սկսեցի սպասել քամու հետևյալ թափին։

Նավասենյակից վաղուց բարձր ձայներ եյին լսվում։ Բայց, ճշմարիտն ասած, յես այնպես տարված եյի իմ գործով, որ նրանց վրա ուշադրություն չեյի դարձնում։ Այժմ, յերբ գործ չունեյի, սկսեցի ականջ դնել։

Յես ճանաչեցի յերկրորդ ավագ նավաստի Իզրայել Գենտսի ձայնը, նրա, որ յերբեմն Ֆլինտի մոտ հրաձիգ եր։ Յերկրորդ ձայնն անկասկած պատկանում եր կարմիր թասակ ծածկած բարեկամիս։ Նրանք յերկուսն էլ սաստիկ հարբած եյին և շարունակում եյին խմել։ Նրանցից մեկը հարբածի ճիչով պատուհանը բաց արավ և ինչ որ մի բան ջուրը շպրտեց, յերևի դատարկ շիշ։ Ասենք, նրանք վոչ թե միայն խմում, այլև կատաղաբար վիճում եյին։ Հայհոյանքները կարկտի նման թափվում եյին և յերբեմն ինձ թվում եր, որ գործը տուր ու դրմփոցի յի հասնում։ Սակայն ամեն անգամ ձայները հանդարտվում եյին և վեճը դադարում եր։ Հետո նորից եյին սկսում, որ մի քանի բոպեյից դադարեն։

Ափին, ծառերի ընների միջից յես տեսնում էի խարույկի կրակը։ Այնտեղ ով վոր մեկը մի հին տխուր, միապաղաղ նավասաու յերգ էր յերգում, վորի յուրաքանչյուր տողից հետո, վոռնոցի նման դայլայլ էր կրկնվում։ Մեր ճանապարհորդության ժամանակ յես այդ յերգը շատ եյի լսել։ Այդ յերգը այնքան յերկար էր, վոչ վոչ մի յերգիչ մինչև վերջը չէր կարողանում յերգել և ձգում էր մինչև այն ժամանակ, վորքան համբերություն ուներ։ Յես այդ յերգից միայն մի քանի բառ եմ հիշում.

Յոթանասուն հինգն էլ չվերադարձան տուն,
Նրանք խեղդվեցին ծովի հորձանքում։

Յես մտածեցի, վոր այդ տխուր յերգը, յերևի, միանգամայն համապատասխանում է այն տխրությանը, վոր պատել է ծովահեններին, վորոնք այսոր այնքան ընկեր կորցրին։ Սակայն շուտով համոզվեցի, վոր իրականում այս ծովային բանդիտներն անզգա յեն այնպես, ինչպես ծովը, վորի վրայով ճանապարհորդում էին։

Վերջապես քամին կրկին թափով փչեց։ Մթության մեջ նավը կրկին դեպի ինձ շարժվեց։ Յես զգացի, վոր ճոպանը կրկին թուլացավ և մի ուժեղ հարվածով կտրեցի վերջին մանրաթելը։

Իմ նավակի վրա քամին վոչ մի աղդեցություն չուներ և յես անսպասելի կերպով հայտնվեցի «Իսպանոլայի» յեղրի տակ։ Նավը, հողմահար յեղած, կամաց պտտվում էր իր առանցքի շուրջը։

Յես բոլոր ուժով թիավարում էի, բայց սպասելով, վոր նավակը կշրջվի։ Սակայն նավը նավակիս քաշում էր իր յետևից և յես վոչ մի կերպ հեռանալ չեյի կարողանում, այլ միայն կամաց շարժվում եյի քթից դեպի յետևի մասը։ Ասենք, վերջապես, նավակն սկսեց հեռանալ և յես արդեն հույս ունեյի բաժանվել վտանգավոր հարևանից։ Սակայն այդ ժամանակ ձեռքս ընկավ նավախելից կախված ճոպանի ծայրը։ Յես իսկույն բռնեցի։

Թե ինչու բռնեցի, չգիտեմ։ Յերևի, անգիտակցաբար։ Իսկ յերբ ճոպանն իմ ձեռքին էր և յես համոզվեցի, վոր ամուր է կապված, հանկարծ հետաքրքրությունս բորբոքվեց և վորոշեցի նայել նավասենյակի պատուհանից։

Ձեռքերով տնտղելով, ճոպանի ոգնությամբ նավակս քաշեցի դեպի նավի յետևի կողմը։ Այս հանգամանքը սաստիկ վտանգ էր սպառնում. նավակն ամեն վայրկյան կարող էր շուռ գալ։ Բարձրանալով, յես տեսա նավասենյակի մի մասն ու առաստաղը։

Այդ ժամանակ նավը և նրա ուղեկիցը — նավակը — արագ ընթանում էին հոսանքով։ Մենք արդեն հավասարվել էինք ափի խարույկին։ Նավը բարձրաձայն «խոսեց», ինչպես ասում են ծովագնացները, այսինքն սկսեց աղմուկով ճեղքել ալիքները և մինչև յես չնայեցի պատուհանից, չկարողացա հասկանալ, թե ինչու պահպանության համար նավում թողնված ավազակները տագնապ չեն բարձրացնում։ Սակայն մի հայացքով նավասենյակը նայելով, բավական էր հասկանալ բոլորը։ Իսկ յես իմ յերերուն նավակում կանգնած, իսկապես կարող եյի միմիայն մի հայացք ձգել։ Գենտսը և նրա ընկերը, իրար կոկորդից բռնած, կռվում էին։

Յես ընկա նստարանի վրա։ Մի ակնթարթ ևս, նավը կշրջվեր։ Իմ առջև դեռևս յերևում էին ծովահենների կատաղած, արյունալի դեմքերը, ծխացող լամպի աղոտ լույսի տակ։ Յես աչքերս փակեցի, վոր նրանք կրկին մթությանն ընտելանան։

Անվերջ պարերգը վերջապես դադարեց և խարույկի մոտ կերուխում անողները յերգեցին ինձ ծանոթ յերգ.

Տասնհինգ մարդ մեռելի սնդուկի վրա,
Յո-խո-խո և մի շիշ ռոմ,
Թմիր, և սատանան քեզ մինչև վերջը կհասցնի,
Յո-խո-խո և մի շիշ ռոմ։

Մտածելով, թե ռումն ու սատանան ինչ են անում այժմ «Իսպանոլայի» նավասենյակում, յես հանկարծակի ցնցում զգացի։ Նավակս սաստիկ թեքվել էր և ուղղությունը փոխել։ Հոսանքի արագությունը տարորինակ կերպով արագացել էր։

Յես աչքերս բաց արի։ Շուրջս, թեթև ծծմբե լույսով կայծերի նման փայլատակելով, աղմկում, փրփրում էին մանրիկ ալիքները։ Թվում էր, վոր «Իսպանոլան» էլ էր ուղղությունը փոխել։ Յես մոայլ կերպով տեսնում էի նավի կայմերը մութ յերկնքում։ Այո, քանի շատ եյի նայում, այնքան հաստատ եյի համոզվում, վոր նավը դեպի հարավ է գնում։

Յես յետ նայեցի և քիչ մնաց, վոր սիրտս պայթի։ Այժմ խարույկը վառվում էր հենց իմ մեջքի յետևում։ Ուրեմն, հոսանքը

ծովել է դեպի աջ, տանելով իր հետ և՛ ծանր նավը, և՛ իմ թեթև, պարող նավակը։ Կատաղի հոսանքը նեղ նեղուցով մեզ դեպի բաց ծովն էր քաշում։

Հանկարծ նավը մի, առնվազն քսան աստիճանի, պտույտ էլ արավ և այդ վայրկյանին յես լսեցի նախ մի ճիչ, ապա՝ մյուսը։ Սանդուխքի վրայից անցնող վոտների ձայն լսեցի և հասկացա, վոր հարբածները կռիվը դադարեցրել են։ Դժբախտությունը յերկուսին էլ սթափեցրել է։

Յես պառկեցի իմ վողորմելի նավակի հատակին և հանձնվեցի ճակատագրի քմահաճույքին։ Նեղուցից դուրս գալով, յես պիտի ընկնեյի գաղաղած ալեկոծության մեջ, վորն արագությամբ կվրկեր ինձ բոլոր հոգսերից։ Մահից յես չեյի վախենում, բայց տանջալից էր անգործ պառկել և սպասել մահվան։

Այդպես մի քանի ժամ պառկած մնացի։ Ալիքներն ինձ այս ու այն կողմն եյին շպրտում և վրաս ջրի կաթիլներ թափում։ Յուրաքանչյուր նոր ալիք ինձ անխուսափելի մահ էր սպառնում։ Բայց կամաց-կամաց յես հոգնեցի։ Զնայած սարսափելի դրությանս, յես թմրեցի և անզգայացա։ Յերբ քնեցի, յերազումս տեսա իմ հայրենի վայրերը և հին «Ծովակալ Բենբոուն»։

ԳԼՈՒԽ XXIV

ՄԱԿՈՒՅԿԻ ՄԵՋ

Յերբ զարթնեցի, բոլորովին լույս էր արդեն։ Յես տեսա, վոր հոսանքն ինձ տանում է Գանձերի կղզու հարավ-արևմտյան ափով։ Արեգակն արդեն դուրս էր յեկել, բայց Հեռադիտակի հսկա դանգվածքը, վոր իջնում էր դեպի ծովն անառիկ ժայռերով, նրա առաջը փակել էր։

Քարշակի Գլուխը և Միջնակայմ ժայռը գտնվում եյին իմ կողքին։ Ժայռը մերկ էր ու սև, իսկ Գլուխը շրջապատված էր քառասուն-հիսուն ֆուտ բարձրություն ունեցող ապառաժներով և թափված ժայռերի կույտերով։ Ինձնից մինչև կղզին քառորդ մղոնից վոչ ավելի տարածություն կար։ Յես վորոշեցի վերցնել թիակը և թիավարել։

Սակայն շուտով ստիպված եյի հրաժարվել այդ մտադրությունից։ Փուլ յեկած ժայռերի միջից կատաղած մռնչում էր ալեկոծությունը։ Հսկա ալիքները մեկը մյուսի յետևից գոռում գոչյունով դեպի վեր եյին բարձրանում փրփրած։ Յես տեսա, վոր մոտենալով ափին կամ կկորչեմ այդ ալիքների մեջ, կամ անտեղի ուժ կգործադրեմ, բարձրանալու անառիկ ապառաժների վրա։

Բայց միայն այս չէր, վոր վախեցնում էր ինձ։ Սեղանի նման տափակ ժայռերի վրա սողում եյին ինչ վոր ահագին լպրծուն հրեշներ, ինչ վոր անհավատալի չափի կակղամորթեր։ Յերբեմն նրանք թռչում եյին ջրի մեջ և սուզվում։ Կակղամորթերը հաջում եյին և ժայռերի խլացուցիչ արձագանքը կրկնում էր նրանց վայրի հաջոցը։

Հետագայում յես իմացա, վոր դրանք ծովային այռուծներ են, միանգամայն անվնասակար կենդանիներ ծովաշան ցեղից։ Սակայն նրանց տեսքը սարսափելի յեր, ափն անմերձենալի յեր, մակընթացությունն ուժեղ խփում էր ժայռերին և իմ ափին մոտենալու ցանկությունը կորավ։ Ավելի լավ է սովից մեռնել բաց ծովում, քան յերես առ յերես այդպիսի վտանգների հանդիպել։

Այդ ժամանակ փրկվելու մի այլ հնարավորություն պատկերացրի։ Քարշակի Գլխից դեպի հյուսիս յես տեսա տեղատվության ժամանակ մերկացող մի յերկար ավազոտ ծանծաղուտ, իսկ ավելի հյուսիսում՝ մի ուրիշ հրվանդան, այն հրվանդանը, վոր մեր քարտեզի վրա նշանակված էր Անտառոտ Հրվանդան անունով։ Այդ հրվանդանի վրա աճել եյին կանաչ հսկա յեղևնիներ, վորոնք մինչև ջուրն եյին իջնում։

Յես հիշեցի Սիլվերի խոսքերը, թե կղզու արևմտյան ափի յերկարությամբ կա մի հոսանք, վոր գնում է դեպի հյուսիս։ Հասկացա, վոր այդ հոսանքի մեջ եմ ընկել և վորոշեցի Քարշակի Գլուխն անցնելուց հետո, փորձեմ իջնել Անտառոտ Հրվանդանի մոտ, վորն ինձ ավելի սիրալիր էր թվում։

Ծովի վրա մեռյալ ալեծածանություն էր։ Հարավից համառ ու սիրալիր քամի յեր փչում և ինձ հոսանքով տանում։ Ալիքները համաչափ բարձրանում և իջնում եյին։

Յեթե ուժեղ քամի լիներ, յես վաղուց խեղդված կլինեյի։ Սակայն մեղմ քամու ժամանակ կարելի յեր զարմանալ միայն, թե ինչքան ճարպիկ էր իմ պստիկ, թեթև նավակը։ Պառկած լինելով նավակի հատակին և չորս կողմը նայելով, յես շատ անգամ տեսա հսկա ալիքի կապտավուն գագաթն իմ գլխի վրա։

Հոսանքը նավակը տանում եր դեպի նավը միատեսակ արագությամբ, բայց նավն այնպես արագ եր փոխում իր ուղղությունը, այնքան հաճախ կանգ եր առնում, վոր համարյա առաջ չեր շարժվում։ Ցեթե կարողանայի նստել նավակի մեջ և թիավարել, անկասկած կհասնեյի նավին։ Ցավ հանկարծ իսկապես ցանկացա հասնել։ Նոր արկածների ծարավը պատեց ինձ, իսկ անուշ ջրի մասին մտածելն իմ անմիտ վճռականությունը կրկնապատկեց։

Ցես վեր կացա և իսկույն ալիքը վոտից մինչև գլուխ թրջեց ինձ։ Բայց այդ բանն ինձ չսարսափեցրեց։ Ցես նստեցի և, ժողովելով բոլոր ուժերս, սկսեցի թիավարել։ Սկսեցի հետապնդել «Իսպանոլային», վորը վոչ վոք չեր վարում։ Ցերբեմն ալիքներն այնպես եյին շպրտում ինձ, վոր իմ սիրտը թրպտում եր ինչպես թռչուն։ Հաճախ կանգնում եյի և նավակի մեջ հավաքված ջուրը թափում։ Այնուամենայնիվ շուտով յես ընտելացա նավակին և սկսեցի այնպես զգուշ ուղղություն տալ կատաղած ալիքների միջով, վոր միայն յերբեմն փրփուրի մանը կտորներն եյին խփում յերեսիս։

Իմ և նավի մեջ յեղած տարածությունը հետզհետե քչանում եր։ Ցես արդեն կարողանում եյի տեսնել դեկի կոթի պղնձե փայլը։ Տախտակամածի վրա վոչ վոք չկար։ Ավազակները, յերևի, փախել եյին։ Իսկ յեթե չեյին փախել, ուրեմն նավաստիների սենյակում խոր քուն են մտել։ Ցես նրանց կփակեմ այդ սենյակում և նավն ինչ կուզենամ՝ կանեմ։

Հանկարծ բախտը ժպտաց ինձ։ Քամին մի քանի վայրկյան հանդարտվեց։ Ցենթարկվելով հոսանքին, «Իսպանոլան» կամաց պտտվեց իր առանցքի շուրջը։ Ցես տեսա նրա յետևի կողմը։ Նավաստիների սենյակի պատուհանը բաց եր։ Սեղանի վրա տեսա վառվող լամպ, թեև վաղուց ցերեկ եր։ Միջնակայմը գրոշակի նման կախված եր։ Նավն իր ընթացքը դանդաղեցրեց, վորովհետև շարժվում եր միայն հոսանքի հետ։

Ցես քիչ հետ եյի մնացել նավից։ Սակայն այժմ, ջանքս կրկնապատկելով, կարող եյի կրկին հասնել նրան։

Ցես արդեն նրանից ընդամենը հարյուր յարդ տարածության վրա եյի գտնվում, յերբ քամին նորից ուռցրեց նրա առագաստները։ Նավը դարձավ դեպի ձախ և կրկին սահելով սլացավ ալիքների վրայով, ինչպես ծիծեռնակ։

Սկզբում յես հուսահատվեցի, հետո ուրախացա։ Նավը

շրջան կատարեց և սկսեց ուղիղ դեպի ինձ լողալ։ Ահա նա անցավ մեզ բաժանող տարածության կեսը, հետո յերկու յերրորդը, ապա յերեք քառորդը։ Ցես տեսա, թե ինչպես եյին վիրուում ալիքները նրա յեզրերի տակ։ Իմ փոքրիկ նավակից նավը մի հսկա յեր յերևում։

Հանկարծ յես հասկացա, թե ինչ վտանգ է սպառնում ինձ, յեթե նավը դիպչեր իմ նավակին։ Մտածելու համար ժամանակ չեր մնում։ Պետք է փորձեյի ազատվել։ Ցես դանվում եյի մի ալիքի կատարի վրա, յերբ նավի քիթը ճեղքեց հարևան ալիքը։ Ցես վոտքի կանգնեցի և վեր ցատկեցի, նավակն ընկղմելով ջրի մեջ։ Ձեռքով բռնեցի բուշպրիտի վերի ծայրը, իսկ վոտս ընկավ պարանների արանքը։ Ցեվ սարսափահար յեղած, կախված եյի ոդում։ Ներքևից ված թեթև զարկն ինձ իմաց տվեց, վոր նավն ընկղմեց իմ նավակը և «Իսպանոլայից» այժմ վոչ մի կերպ չի կարելի հեռանալ։

ԳԼՈՒԽ XXV

ՑԵՍ ԻՋԵՑՆՈՒՄ ԵՄ «ՈՒՐԱԽ ՌՈՋԵՐԸ»

Հենց վոր բարձրացա բուշպրիտի վրա, վոր ծածանվող յեռանկյունի առագաստը խլացուցիչ ձայնով չխկաց, կարծես թնդանոթի կրակոց, ուռավ և ուղղությունը փոխեց։ Նավը, մինչև իջվածքը ցնցվեց։ Իսկ մի վայրկյանից հետո, թեև մնացած բոլոր առագաստներն ուռած եյին, սակայն յեռանկյունի առագաստը կրկին չխկաց ու կախվեց։

Անակնկալ հարվածից քիչ եր մնում ջուրն ընկնեյի։ Ժամանակ չկորցնելով, յես սողալով բարձրացա բուշպրիտով և գլխիվայր ընկա տախտակամածի վրա։

Ցես գտնվում եյի ջրամբարի քամոտ կողմում։ Միջնակայմը ծածկում եր ինձնից նավախելի մի մասը։ Ցես վոչ մի կենդանի արարած չտեսա։ Տախտակամածը, վոր խոռվությունից ոչինչ չեր լվացվել, ապականված եր կեղտոտ վոտների հետքերով։ Բերանը կոտրված մի դատարկ շիշ յես ու առաջ եր գլորվում ինչպես կենդանի։

Հանկարծ «Իսպանոլան» նորից գնաց քամու ուղղությամբ։ Ցեռանկյունի առագաստները չխկացին իմ յետևին։ Ղեկը շրջան կատարեց և նավը ցնցվեց։ Այդ վայրկյանին միջնակայմը, ճախարակները ճռնչացնելով, մի կողմ ընկավ և յես տեսա նավի յետևի կողմը։

Յերկու ծովահենն ել այնտեղ եյին։ «Կարմիր թասակն» անշարժ պառկած եր մեջքի վրա։ Նրա ձեռքերը տարածված եյին, ինչպես խաչված, ատամները բաց եյին։ Իզրայել Գենդսը նստած եր գլուխը կրծքին խոնարհած։ Ձեռներն անոգնական կախվել եյին, յերեսը չնայած արևառությանը, ճարպե մոմի պես սպիտակ եր։

Նավը, կատաղած ձիու նման ծառս եր լինում ու վեր-վեր նետվում։ Առագաստներն ուռել եյին, առագաստափայտերն այնպես ուժեղ եյին շարժվում, վոր կայմը բարձր հառաչում եր։ Ժամանակ առ ժամանակ նավի քիթը խրվում եր ալիքի մեջ և այն ժամանակ ջրակաթիլների թեթև ամպերը թռչում եյին դրոսարանի վրա։ Իմ, այժմ խորտակված, ինքնագործ շարժուն նավակն ավելի լավ եր պայքարում ալիքների դեմ, քան այս մեծ նավը։

Նավի յուրաքանչյուր թռիչքին, կարմիր թասակ ծածկած ավազակը ցատկոտում եր։ Սակայն ինձ սարսափեցրեց այն հանգամանքը, վոր նրա յերեսի արտահայտությունը չեր փոխվում — առաջվա նման ատամները բացած ծիծաղում եր։ Իսկ Գենդսը յուրաքանչյուր ցնցումից սահում եր հետու, դեպի նավախելը։ Քիչ-քիչ հասավ նավի յեզրին և վոտը կախվեց ջրի վրա։ Ցես տեսնում եյի միայն նրա մի ականջը և գանգրահեր բակենբարդի մի մասը։

Այս ժամանակ յես նկատեցի, վոր նրանց մոտ, տախտակների վրա արյան շերտեր են սեին տալիս և վճռեցի, վոր հարբած դրությամբ կռվելիս, իրար սրախողող են արել։

Ցեվ հանկարծ, յերբ նավը մի քանի ակնթարթ կանգ առավ, Իզրայել Գենդսը թեթև հառաչելով շարժվեց դեպի իր առաջվա տեղը։ Այս տանջալից հառաչանքը, վոր վկայում եր չափազանց հոգնածության մասին, մի վայրկյան կարեկցություն առաջացրեց իմ մեջ։ Բայց յես հիշեցի այն խոսակցությունը, վորը լսել եյի խնձորի տակառի մեջ նստած ժամանակ և կարեկցությունն իսկույն անցավ։

Ցես մոտեցա միջնակայմին։

— Ա՛յ, յես եյի նավի վրա յեմ, պարոն Գենդս,— ասացի յես հեգնաբար։

Նա դժվարությամբ աչքերը դեպի ինձ դարձրեց, սակայն

այնպես հարբած եր, վոր զարմանք եկ չարտահայտեց։ Նա միայն մի բառ արտասանեց.

— Բրենդի։

Յես հասկացա, վոր ժամանակ կորցնել չի կարելի։ Անցնելով կայմի տակից, վորը փակում եր իմ ճանապարհը, պարանե սանդուխքով վազեցի նավասենյակը։

Դժվար ե պատկերացնել, թե ինչպիսի ավերում կար այնտեղ։ Բոլոր արկղների կողպեքները կոտրված եյին։ Ավազակները, յերևի, քարտեզն են վորոնել։ Հատակը պատած եր կեղտի շերտով, վոր ավազակները վոտներով բերել եյին այն ճահճոտ տեղից, վորտեղ հարբեցողությամբ եյին զբաղված։ Սպիտակ գույնով ներկված և վոսկե շքաձողով զարդարված միջորմների վրա կեղտոտ մատների հետքեր եյին մնացել։ Տասնյակ դատարկ շշեր, յենթարկվելով տատանումին, զընդալով անկյունից անկյուն եյին գլորվում։ Բժշկի բժշկական գրքերից մեկը բաց ընկած եր սեղանի վրա։ Թերթերի կեսը պոկված եր, յերևի ծխախոտի համար։ Այս բոլոր այլանդակությունների մեջ առաջվա պես եր մռայլ ու մթին լամպը։

Յես նայեցի մառանը։ Տակառները դատարկ եյին և անհամար քանակությամբ դատարկ շշեր թափված եյին հատակի վրա։ Յես հասկացա, վոր բոլոր ծովահենները խռովության սկզբից հարբելուց գլուխ չեն թափել։

Այնուամենայնիվ դա մի կիսատ ողու շիշ Գենդսի համար։ Ինձ համար վերցրի մի քիչ պաքսիմատ, մի քիչ չոր միրգ, մի բուռ չամիչ և մի կտոր պանիր։ Խարձրանալով տախտակամածը, յես այդ բոլորը դասավորեցի ղեկի մոտ, ավազ նավատուց հեռու, վոր ձեռքը չհասնի։ Հետո գնացի ու կուշտ ջուր խմեցի և միայն այդ ժամանակ, և վոչ դրանից առաջ, շիշը պարզեցի Գենդսին։

Նա խմեց կեսից վոչ պակաս և միայն այն ժամանակ շիշը հեռացրեց բերանից։

— Յերդվում եմ վորոտով,— ասաց նա,— վոր հենց այդ եր ինձ հարկավոր։

Յես նստեցի մի անկյունում և սկսեցի ուտել։

— ԾՃՆՐ եք վիրավորված,— հարցրեցի նրան։

Նա ինչ վոր հաչոցի ձայնով պատասխանեց.— Եթե բժիշկը այստեղ լիներ, յես արագ կբուժվեյի։ Սակայն, ինքդ տեսնում ես, գործերս հաջող չեն գնում։ Իսկ սա մեռավ,— ավելացրեց նա, գլուխը թեքելով դեպի կարմիր թասակ դրած մարդու կողմը։— Վատ ծովագնաց եր։ Իսկ դու վորտեղից յեկար։

— Յես յեկել եմ այստեղ, վոր վարեմ այս նավը, պարոն Գենդս,— ասացի յես։— Այսուհետև, մինչև հետևյալ կարգադրությունը, ինձ ձեր նավապետը համարեցեք։

Նա մռայլ նայեց ինձ, բայց վոչինչ չասաց։ Նրա թշերը թեթևակի կարմրեցին։ Բայց նրա տեսքը հիվանդագին եր և նավի յուրաքանչյուր տատանումից ընկնում եր կողքի վրա։

— Ի միջի այլոց,— շարունակեցի յես,— այս դրոշակն ինձ դուր չի գալիս, պարոն Գենդս, յեթե թույլ կտաք, յես կփոխեցնեմ։ Ավելի լավ ե դրոշակ չունենալ, քան այսպիսին։

Յես վազեցի կայմի մոտ, քաշեցի համապատասխան պարանը և իջեցնելով անիծված սև դրոշակը,

— Կորչի նավապետ Սիլվերը,— գոչեցի յես, գլխարկս թափահարելով։

Նա ուշադրությամբ դիտում եր ինձ չբարձրացնելով գլուխը և նրա դեմքը նենգություն եր արտահայտում։

— Յես կարծում եմ,— ասաց նա վերջապես,— յես կարծում եմ, նավապետ Գոկինս, վոր դուք կուզենայիք ափ իջնել։ Յեկեք այդ մասին խոսենք,

— Ինչու չե,— պատասխանեցի յես,— հաճությամբ, պարոն Գենդս։ Շարունակեցեք։— Յեվ յես կրկին վերադարձա իմ ուտելիքի մոտ և շարունակեցի մեծ ախորժակով ուտել։

— Այդ մարդը,— սկսեց նա. թույլ կերպով թափ տալով գլուխը դեպի դիակը։— Նրան Ո՞Բրայեն եյին անվանում... Իրլանդացի եր։ Մենք նրա հետ առագաստները պարզեցինք և ուզում եյինք վերադառնալ նավահանգիստը։ Սակայն նա մեռավ և գարշահոտություն ե արձակում՝ ինչպես հոտած ջուրը նավամբարում։ Զգիտեմ, թե ով պետք ե այժմ վարի նավը։ Առանց իմ ցուցմունքների դու այս նավը վարել չես կարող։ Լսիր, ինձ ուտելու և խմելու բան տուր, վերքս փաթաթիր իմ հին շարֆով, դրա փոխարեն յես քեզ ցույց կտամ, թե ինչպես պետք ե նավը վարել։ Համաձայն ես։

— Միայն նկատի ունեցեք,— ասացի յես,— նավապետ Կիտի նավակայանը վերադառնալ չեմ ուզում։ Յես ուզում եմ նավը տանել Հյուսիսային նավահանգիստը և այնտեղ հանդարտ մոտենալ ափին։

—Լավ,— բացականչեց նա։— Միթե՞ յես այնպես ապուշ եմ։ Միթե՞ չեմ հասկանում։ Շատ լավ եմ հասկանում, վոր յես տանուլ եմ տվել և վոր դու յես տարել։ Ի՞նչ կա վոր։ Դու ուզում ես Հյուսիսային նավահանգիստը գնալ։ Բարեհաճիր։ Յես ընդդիմություն չեմ անի։ Յերգվում եմ վորոտով, վոր յես կոգնեմ քեզ նավը տանել թեկուզ իմ կախաղանի տախտակամածը։

Նրա խոսքերը ինձ մտազուրկ չթվացին։ Մենք պայման կապեցինք։ Յերեք բոպեյից հետո «Իսպանոլան» արդեն գնում եր Գանձերի կղզու ափով։ Յես հույս ունեյի հասնել մինչև կեսոր Հյուսիսային հրվանդանին, վոր մինչև մակընթացությունը Հյուսիսային նավահանգիստը մտնենք։ Այն ժամանակ մենք, վոչ մի վտանգի չենթարկվելով, «Իսպանոլան» կմոտեցնենք ափին, կսպասենք մինչև ջուրը նստի և ցած կիջնենք։

Յես իջա ներքև, վորոնեցի իմ սեփական սնդուկը և նրա եիջից հանեցի այն մետաքսե փափուկ թաշկինակը, վոր նվիրել եր ինձ մայրս։ Իմ ոգնությամբ Գենդոն այդ թաշկինակով կապեց աղդրի մեջ յեղած խոր վերքը, վորից արյուն եր հոսում։ Նախաճաշելուց և մի քանի ումպ անգլիական ողի խմելուց հետո, նա զգալիորեն աշխուժացավ, ավելի ուղիղ նստեց, սկսեց ավելի արագ ու պարզ խոսել, ուրիշ մարդ դարձավ։

Բարեհաջող քամի փչեց։ Նավը թռչնի նման սլանում եր։ Ափերը յերևում ու անհայտանում եյին։ Նրանց տեսքն ամեն բոպե փոխվում եր։ Կղզու բարձր մասը մնաց մեր յետևում։ Մենք սլանում եյինք նոսր յեղեգներով պատած ցածր ավազոտ ափով։ Բայց այդ ել վերջացավ։ Մենք շրջապատեցինք ժայռոտ բլուրը— կղզու ամենահյուսիսային մասը։

Նավ վարելն ինձ դուր յեկավ։ Յես հիանում եյի հրաշալի արևոտ յեղանակով և գեղատեսիլ ափերով։ Ուտելիք ու խմելիք շատ ունեյի, այլևս խղճի խայթոց չեյի զգում նրա համար, վոր փախել եյի ամրոցից, վորովհետև այդպիսի խոշոր հաղթանակ տարա։ Յես ամեն ինչով գոհ կլինեյի, յեթե ավագ նավաստու աչքերը չլինեյին։ Նա ամենածաղրական ձևով աննահանջորեն հետևում եր ինձ և նրա յերեսի վրա ժամանակ առ ժամանակ տարօրինակ ժպիտ եր յերևում։ Այդ ժպիտի մեջ ինչ վոր անզորություն ու տանջանք կար— ծերունու մռայլ ժպիտ։ Միաժամանակ նրա մեջ ինչ վոր ծաղրական, ինչ վոր դավաճանական բան կար։ Յես աշխատում եյի, իսկ նա նենգամտությամբ քմծիծաղ եր տալիս և հետևում, հետևում, հետևում ինձ։

ԳԼՈՒԽ XXVI

ԻԶՐԱՑՆԻ ԳԵՆԴՈՍԸ

Քամին, կարծես ուզենալով սիրաշահել մեզ, հարավայինից դարձավ արևմտյան։ Մենք առանց դժվարության անցանք կղզու հյուսիս-արևելյան ծայրից մինչև Հարավային ծովախորշի մուտքը։ Սակայն վախեցանք մտնել ծովախորշը մակընթացությունից առաջ, վորովհետև խարիսխ չունեյինք։ Պետք և սպասեյինք։ Ավագ նավաստին սովորեցնում եր ինձ թե ինչպես պետք և վարել նավը և շուտով յես մեծ հաջողություն ունեցա։ Հետո յերկուսս ել լուռ նստեցինք և սկսեցինք ուտել։

—Նավապետ,— ասաց նա վերջապես ելի նույն չարամիտ հեգնանքով։— Այստեղ ընկած և իմ հին ընկեր Ո՛Բրայենը։ Ծովը չթթ գցի արդյոք։ Յես այնքան ել փափկանկատ մարդ չեմ և խղճի խայթ չեմ զգում, վոր նրան այն աշխարհն ուղարկեցի։ Սակայն, իմ կարծիքով, նա քիչ և զարդարում մեր նավը։ Իսկ քո կարծիքով ինչպե՞ս և։

—Ուժս չի պատի։ Բացի դրանից այդ աշխատանքն իմ ճաշակի չե։ Իմ կարծիքով թող պառկած մնա,— ասացի յես։

—Ի՞նչ դժբախտ նավ և այս «Իսպանոլան», Ջիմ,— շարունակեց նա, աչքով անելով։— Վորքա՞ն մարդ և սպանվել այս «Իսպանոլայի» վրա և վորքա՞ն խեղճ ծովագնացներ մեռան այն որից, յերբ յես ու դու հեռացանք Բրիստոլից։ Յես այսպիսի անհաջող ծովագնացություն յերբեք չեմ տեսել։ Ահա Ո՛Բրայենն ել մեռավ։ Նա իսկապես մեռե՞լ և։ Յես անգետ մարդ եմ, իսկ դու կարդալ ու համրել գիտես։ Ասա ինձ առանց խաբեբայության, ուղղակի։ մեռածն այնպես ել մեռա՞ծ և մնում, թե յերբևիցե հարություն և առնում, ինչպես բացատրում են տերտերները։

—Դուք կարող եք սպանել մարմինը, պարոն Գենդոս և վոչ թե հոգին,— ասացի յես։—Այսպես են սովորեցրել ինձ մեր յեկեղեցում։ Իմացեք, վոր Ո՛Բրայենն այս բոպեյիս կենդանի է և այն աշխարհից հետևում և մեզ։

—Ա՜խ,— ասաց նա։— Ի՞նչ վիրավորական և։ Ուրեմն յես իզուր եմ ժամանակ կորցրել։ Ասենք, վոգիները, իմ կարծիքով, մեծ վնաս տալ չեն կարող։ Յես վոգիների հետ գործ ունեցել եմ, Ջիմ։ Լսիր, յես ուզում եմ խնդրել քեզ, վոր իջնես նավասենյակը և բերես ...Սատանան տանի, յես մոռացել եմ,

վոր հարկավոր է... Հա, ինձ համար մի շիշ գինի բերես, Ջիմ։

Ավագ նավաստու մոռացկոտությունն ինձ կասկածելի թվաց։ Ճիշտն ասած, յես չհավատացի, վոր գինին նրան ավելի յե դուր գալիս, քան անգլիական ողին։ Այդ բոլորը միայն պատրվակ է։ Գործը պարզ էր. նա ուզում էր, վոր յես տախտակամածից հեռանամ։ Բայց ինչու՞ համար էր ուզում։ Նա խուսափում էր իմ աչքերին նայելուց։ Նրա հայացքը շարունակ այս կողմից այն կողմն էր թափառում — յերբեմն յերկընքին էր նայում, յերբեմն սեռած Ո՛Բրայենին։ Նա ամբողջ ժամանակ ժպտում էր, մինչև անգամ խորամանկության առատությունից լեզվի ծայրը բերանից հանում էր։ Սրանից ծծկեր յերեխան էլ գլխի կընկներ, վոր նա ինչ վոր բան է մտածում։ Այնուամենայնիվ յես ցույց չտվի, վոր կասկածում եմ։

— Գինի՞, — հարցրի յես։ — Շատ լավ։ Ինչպիսի՞ գինի — սպիտա՞կ, թե կարմիր։

— Միևնույն է, բարեկամս, — պատասխանեց նա։ — Միայն թե թունդ լինի և շատ։

— Լավ... Յես ձեզ համար պորտվեյն կբերեմ, պարո՛ն Գենդ։ Բայց հարկավոր է վորոնել։

Յես վազեցի ներքև, աշխատելով, վոր կոշիկներս վորքան կարելի յե պինդ զարկեմ գետնին։ Հետո կոշիկներս հանեցի, անձայն անցա պահեստի միջանցքով դեպի նավաստիների սենյակը, այնտեղից պարանե սանդուխքով բարձրացա, գլուխս պատուհանից հանեցի և սկսեցի նայել դեպի տախտակամածը։ Գենդը յերբեք գլխի չէր ընկնի, թե յես դիտում եմ նրան։ Այնուամենայնիվ, յես բոլոր միջոցները ձեռք առա, վոր նրա ուշադրությունը դեպի ինձ չգրավեմ։

Ցավ առաջին իսկ հայացքից համոզվեցի, վոր իմ ամենավատ կասկածներն էլ ճշմարիտ են։

Նա չորեքթաթ արած արագ մագլցում էր տախտակամածի վրայով, թեև, յերևի, նրա վիրավոր վոտը չափազանց ցավում էր, վորովհետև յուրաքանչյուր շարժումից հետո բարձր հառաչում էր։ Կես րոպեյի ընթացքում նա հասավ ջրատար խողովակին, վորի մոտ ընկած էր նավի ճոպանը, ողաձև ծալված և այնտեղից մի մեծ դանակ, ավելի ճիշտ մի կարճ դաշույն հանեց, վորը մինչև կոթը ներկված էր արյունով։ Նա դիտեց դաշույնը, դուրս գցելով ներքևի ծնոտը, ձեռք տվեց

դաշույնի բերանին և արագ կոնատակին դնելով, կրկին իր հին տեղը սողաց։

Յես իմացա, ինչ վոր ինձ համար հարկավոր էր. Իզրայելը կարող է շարժվել, նա զինված է։ Բանի վոր նա աշխատում էր հեռացնել ինձ տախտակամածից, ուրեմն, յես նրա գոհը կլինեմ։ Իսկ ինչ էր պատրաստվում անել իմ մահից հետո — ամբողջ կղզու յերկարությամբ Հյուսիսային ծովախորշից մինչև ծովահեններին ճամբարը քաշ գալ, կամ թնդանոթ արձակել և ընկերներին ոգնության կանչել — այդ, իհարկե, յես չգիտեի։

Յես կարող եի վստահել Գենդին միայն մի բանում, վորովհետև այդ բանում մեր շահերը համապատասխան եին. մենք յերկուսս էլ ուզում եինք նավը մի անվտանգ տեղ հասցնել, վոր հետո կարելի լիներ հեշտ ու անվտանգ հանել։ Բանի վոր այդ բանը չի արված, իմ կյանքն անվտանգ է։

Խորհելով, յես ժամանակ չկորցրի։ Գաղտագողի անցա նավաստենյակը, կոշիկներս հագա, վերցրի մի շիշ գինի և տախտակամածը վերադարձա։

Գենդը նույն դրության մեջ պառկած էր։ Նրա աչքերը կկոցված եին, իբրև թե այնքան թույլ էր, վոր պայծառ լույսը տանել չէր կարող։ Նա նայեց ինձ, սովորական կերպով կոտրեց շշի բերանը և միանգամից համարյա թե շիշը դատարկեց, ասելով, ինչպես սովորաբար ասում են.

— Քո կենացը։

Հետո, քիչ հանգստանալով, գրպանից մի ծամելու ծխախոտ հանեց և խնդրեց մի կտոր կտրել։

— Բարի յեղիր, կտրիր, — ասաց նա, — թե չե յես դանակ չունեմ, ուժս էլ չի պատում։ Ա՜խ, Ջիմ, Ջիմ, յես բոլորովին քայքայվել եմ։ Մի կտոր կտրիր։ Սա վերջին բաժինն է, վոր յես պիտի ծամեմ իմ կյանքիս ընթացքում։ Յերկա՛ր կապրեմ արդյոք։ Շուտով յես այն աշխարհում կլինեմ։

— Լավ, — ասացի յես։ — Կկտրեմ։ Սակայն յեթե յես ձեր տեղ լինեյի... Ինձ այդպես վատ զգալիս, յես կաշխատեյի մահից առաջ ապաշխարել։

— Ապաշխարե՞լ, — հարցրեց նա։ — Ի՞նչ խոստովանել։

— Ինչպե՞ս թե ինչ, — բացականչեցի յես։ — Զգիտե՞ք, թե ինչ ապաշխարել։ Դուք դավաճանեցիք ձեր պարտականությանը։ Վոչ կյանքներդ անց եք կացրել սուի և արյունի մեջ։

Ահա ձեր վոտների տակ ընկած է մի մարդ, վորին քիչ առաջ սպանել եք դուք և ինձ հարցնում եք, թե ինչ ապաշխարեմ։ Ահա թե ինչ, պարոն Գենդս։

Ցես խոսում եյի Ջերմագին՝ ինչպես հարկավոր է, վորովհետև մտածում եյի կոնտակին թագնված դաշույնի մասին և այն մասին, վոր նա մտածել է ինձ սպանել։ Իսկ նա շատ դինի յեր խմել, այդ պատճառով էլ ինձ պատասխանում եր արտասովոր հանդիսավորությամբ։

— Ցերեսուն տարի յես լողացել եմ ծովերի վրա,— ասաց նա։— Տեսել եմ լավ բան էլ, վատ բան էլ, և՛ մրրիկ, և՛ ալեկոծություն, և՛ սով, և՛ ելի շատ բան։ Բայց, հավատա ինձ, վոչ մի անգամ չեմ տեսել, վոր առաքինությունը մարդուն վորևե ոգուտ տա։ Ճշմարիտը նա յե, ով առաջինն է խփում։ Մեռածները չեն կծում։ Ահա իմ վողջ հավատը։ Ամեն։ Լսիր,— ասաց նա հանկարծ բոլորովին ուրիշ ձայնով,— բավական է հիմար բաներ խոսենք։ Մակընթացությունը վաղուց է սկսել։ Լսիր իմ հրամանները, նավապետ Գոկինս, և մենք քեզ հետ նավը ծովախորշը կմացնենք։

Իսկապես վոր մենք պետք է անցնեյինք միայն յերկու մղոնից վոչ ավել։ Սակայն ճանապարհը դժվար եր։ Պարզվեց, վոր Հյուսիսային ծովախորշի մուտքը վոչ թե միայն նեղ ու սակավաջուր է, այլև շատ վոլորապտույտ։ Ուշադրություն եր հարկավոր։ Ցես բանիմաց կատարող եյի, իսկ Գենդսը՝ հրաշալի հրամանատար։ Մենք այնպես վարպետորեն խոտորանավեցինք, այնպես անցանք բոլոր ծանծաղուտները, վոր նայողի քեֆը կգար։

Ցերը յերկու հրվանդաններն էլ անցանք, մեղ չորս կողմից շրջապատեց ցամաքը։ Ինչպես Հարավային, այնպես էլ Հյուսիսային ծովախորշի ափերը ծածկված եյին խիտ անտառով։ Սակայն ծովախորշը յերկար եր, նեղ և, ճշմարիտն ասած, ավելի գետաբերանի յեր նման, քան ծովախորշի։ Ուղիղ մեր առջև, հարավային անկյունում մենք տեսանք մի ջարդված նավի կիսով չափ կառուցած կմախքը։ Դա մի մեծ յերեք կայմանի նավ եր։ Նա այնքան յերկար ժամանակ կմնացել եր այնտեղ, վոր ջրաբույսերը չորս կողմից շրջապատել եյին։ Տախտակամածի վրա թփեր եյին աճել, վորոնց մեջ վառ գույնի ծաղիկներ կային։ Տեսարանը տխուր եր, բայց ապացուցեց,

վոր այս ծովախորշը կանգ առնելու համար միանգամայն հարմար է։

— Նայիր,— ասաց Գենդսը,— ահա ափին մոտենալու մի լավ տեղ։ Հարթ, մաքուր ավազ, յերբեք վոչ մի ալիք չի լինում, չորս կողմն անտառ, այն նավի վրա, ինչպես այդում, ծաղիկներ են բուսնում։

— Իսկ նավը ծանծաղուտի մեջ չի՞ խրվի, յեթե ափին մոտենանք,— հարցրեցի յես։

— Ծանծաղուտից դժվար չի լինի հանել,— պատասխանեց նա։— Տեղատվության ժամանակ ճոպանը քաշիր մյուս ափը, փաթաթիր մեծ յեղևնիներից մեկին, ծայրը քաշիր յետ ու փաթաթիր կայմին։ Հետո սպասիր մակընթացության։ Ցերը մակընթացությունը կսկսվի, հրամայիր վողջ անձնակազմին միանգամից բռնել ճոպանը և քաշել։ Ցեվ նավը, ինչպես յերիտասարդ գեղեցկուհի, ինքը դուրս կգա ծանծաղուտից։ Իսկ այժմ, վորդիս, ժամանակ մի կորցնի։ Մենք ծանծաղուտի մոտ ենք, իսկ նավը չափազանց արագ է գնում։ Քիչ դեպի ձ... ձախ... ուղիղ... ուղիղ։

Նա հրամաններ եր տալիս, իսկ յես շտապ ու ճիշտ կատարում եյի։

Հանկարծ նա բացականչեց.

— Վայրիր քամու ուղղությամբ, սրտակից բարեկամ։

Ցես բոլոր ուժով ընկա ղեկի վրա։ «Իսպանոլան» շրջվեց և արագ մոտեցավ ափին, վոր պատած եր ցածրիկ անտառով։

Ցես այնպես տարված եյի այդ շարժողություններով, վոր մոռացել եյի, թե մտադրվել եյի ուշադրությամբ հետևել ավազ նավաստուն։ Ինձ հետաքրքրում եր միայն մի բան—յերբ նավի հատակը դիպչեր ավազին։ Ցես մոռացա, թե ինչ վտանգ է սպառնում ինձ և նավի աջ յեզրից կռացած, նայում եյի, թե ինչպես քթի տակ փրփրում է ջուրը։ Ցեվ առանց վորևե պայքարի կկորչեյի յես, յեթե հանկարծ անհանգստությունը չստիպեր ինձ յետ նայել։ Գուցե յես խշշոց լսեցի կամ աչքերիս տակով շարժվող ստվեր նկատեցի։ Գուցե իմ մեջ մի բնազդ զարթնեց, կատվի բնազդի նման։ Բայց շրջվելով, յես տեսա Գենդսին։ Նա ինձ բոլորովին մոտ եր,դաշույնն աջ ձեռքին։

Մեր հայացքները հանդիպեցին իրար և յերկուսս էլ բարձր գոռացինք։ Ցես գոռացի սարսափից։ Նա, վորպես կատաղած յեզ, մռնչաց կատաղությունից և հարձակվեց ինձ վրա։ Ցես թռա դեպի նավի քիթը և ձեռքիցս բաց թողի ռումպելը,

վորն իսկույն ուղղվեց։ Այս ռումպելն իմ կյանքը փրկեց, դեպավ Գենդսի կրծքին և նա վայր ընկավ։

Մինչև Գենդսը վոտի կանգնեց, յես դուրս թռա այն անկյունից, վորտեղ նա ինձ քշել եր։ Այժմ ամբողջ տախտակամածն իմ տրամադրության տակ եր և յես կարող եյի նրանից խուսափել, վորքան կարող եյի։ Միջնակայմի առաջ յես կանգ առա, ատրճանակը գրպանիցս հանեցի, նշան առա և կրակեցի։ Գենդսն ուղիղ դեպի ինձ եր գալիս։ Շնիկը չրթաց, բայց չպայթեց։ Պարզվեց, վոր հրանցքում վառոդը թրջվել է։ Յես անիծեցի ինձ և իմ անփութությունը։ Ինչու յես կրկին չլցրի ատրճանակը։ Չե՞ վոր ժամանակ շատ ունեյի։ Այն ժամանակ յես անդեն չեյի կանգնի ինչպես վոչխարը մսագործի առաջ։

Չնայած իր վերքին, Գենդսը զարմանալի արագ եր շարժվում։ Նրա սպիտակ մազերն ընկել եյին կատաղությունից կարմրած դեմքի վրա։ Յես ժամանակ չունեյի յերկրորդ ատրճանակս հանելու։ Բացի դրանից յես համոզված եյի, վոր այդ ատրճանակն էլ առաջինի նման թրջվել է։ Մի բան միայն պարզ եր. յես պետք է ծլկեյի Գենդսից, թե չե ինձ կքշեր դեպի նավի քիթը, ինչպես քիչ առաջ քշեց դեպի նավի յետևի կողմը։ Յեթե այս բանը նրան հաջողվեր, արյունոտ դաշույնի ամբողջ ինն կամ տասը վերշոկը կխրվեր իմ մարմնի մեջ։ Յես բռնեցի գլխավոր կայմը, վորը բավականի հաստ եր և յուրաքանչյուր մկան լարած, սպասում եյի։

Տեսնելով, վոր յես պատրաստվում եմ ծլկվելու, նա կանգ առավ։ Մի քանի վայրկյան նա այնպես եր ձևացնում, թե խկույն կհարձակվի ինձ վրա կամ աջից, կամ ձախից։ Յեվ յես հաղիվ հազ շրջվում եյի յերբեմն դեպի ձախ, յերբեմն դեպի աջ։ Պայքարը նման եր այն խաղին, վոր յես այնքան խաղացել եյի տանը, Սև Բլրին մոտիկ ժայռերի մեջ։ Սակայն, իհարկե, խաղի ժամանակ յերբեք սիրտս այդպես վայրի կերպով չեր տրոփում։ Այնուամենայնիվ այդ խաղը հեշտ եր խաղալ յերեխայի համար, քան մի ծեր ծովագնացի, վորն աղդրին վերք ունի։ Յես քիչ համարձակ դարձա և մինչև անգամ սկսեցի մտածել, թե ինչով կվերջանա խաղը։ «Իհարկե,— մտածում եյի, — յես կարող եմ յերկար ժամանակ դիմանալ, բայց վաղ թե ուշ, այնուամենայնիվ նա ինձ վերջ կտա»։

Յերբ մենք կանգնած եյինք իրար դեմ ու դեմ, «Իսպանոլան» անսպասելի կերպով խրվեց ավազի մեջ։ Զարկից նավն



ուժեղ կերպով կողքի վրա ծռվեց։ Տախտակամածը կանգնեց քառասուն հինգ աստիճան անկյան վրա, ջրատար խողովակներից սկսեց ջուր հոսել, տախտակամածի վրա լայն ջրափոս գոյացավ։

Մենք յերկուսով ել մեր հավասարակշռությունը կորցրինք և համարյա գրկված գլորվեցինք ուղիղ դեպի ջրատար խողովակները։ Կարմիր թասակ դրած մեռելն ել, տարածած ձեռքերով, ինչպես առաջ, գլորվեց այնտեղ։ Յես այնպես ուժեղ գլուխս խփեցի ավագ նավաստու վոտին, վոր ատամներս կրճատցին։ Սակայն, չնայելով ջարդվածքին, յես առաջինը վոտի յելա, իսկ մեռելն ընկավ Գենդսի վրա։ Նավի հանկարծակի ծռվելը տախտակամածի վրա վազվզելն անկարելի դարձրեց։ Պետք է փրկվելու ուրիշ միջոց վորոնեյի, գտնելի առանց մի վայրկյան կորցնելու, վորովհետև թշնամիս խսկույն կհարձակվեր ինձ վրա։ Կայմապարանները կախված եյին գլխիս վրա։ Յես նրանցից բռնեցի, բարձրացա վերև և վոչ մի անգամ շունչ չառա, մինչև վոր չնստեցի առագաստափայտի վրա։ Արագաշարժությունը փրկեց ինձ։ Վոտներիցս կես ֆուտ տարածության վրա, դաշույնը փայլեց։ Անհաջողությունից վրդովված, Իզրայել Գենդսը, զարմանքից բերանը լայն բացած, նայում եր վերև, դեպի ինձ։

Յես մի քիչ շունչ առա։ Ժամանակ չկորցնելով, յես նորից լցրի ատրճանակը, հետո ել յերկրորդ ատրճանակը։

Գենդսն անզոր չարությամբ դիտում եր ինձ։ Նա սկսեց հասկանալ, վոր նրա դրությունը շատ վատացավ։ Մի քիչ մտածելուց հետո, նա դժվարությամբ բռնեց կայմապարանից և դաշույնն ատամներով բռնած, դանդաղ դեպի վեր սողաց, խոր հառաչանքով իր յտեսից քաշ տալով վիրավորված վոտը։ Յես ժամանակ ունեցա կրկին լցնել յերկու ատրճանակն ել, մինչև վոր նա անցավ մեր մեջ յեղած տարածության մի յերրորդ մասը։ Այն ժամանակ զույգ ձեռքերումս ատրճանակները բռնած, յես խոսեցի նրա հետ։

—Յեթե ելի մի քայլ անես, պարոն Գենդս, յես ձեր ուղեղը դուրս կթափեմ։ Մեռելները, ինչպես հայտնի յե ձեզ, չեն կծում,— ասացի յես հեգնանքով։

Նա միանգամից կանգ առավ։ Նրա դեմքից յերևում եր, վոր ինչ վոր բան է մտածում։ Բայց մտածում եր այնքան ծանր ու այնքան դանդաղ, վոր յես ուրախանալով իմ անվտանգության վրա, բարձր ձայնով ծիծաղեցի։ Վերջապես, մի քանի անգամ թուք կուլ տալուց հետո, նա խոսեց։ Նրա յերեսի վրա, առաջվա նման, իրեն կորցնելու արտահայտություն կար։ Նա հանեց բերանից դանակը, վորը խանգարում եր խոսել, բայց տեղից չշարժվեց։

—Ջիմ,— ասաց նա,—մենք յերկուսս ել ավելորդ բան շատ արինք, և՛ դու, և յես։ Մենք պետք է զինադադարի պայման կապենք։ Յեթե այն հարվածը չլիներ, յես քեզ վերջ կտայի։ Բայց ինձ յերբեք չի հաջողվում, յերբեք, ինչ արած, յես ծերունի ծովագնացս, քեզ, Ջիմ, նավի փոքրավորիդ պետք է զիջեմ։

Նրա խոսքերին վստահելով, յես ուրախ ծիծաղեցի, ինչպես ցանկապատի վրա թռած աքաղաղ, յերբ հանկարծ նա աջ ձեռքը թափ տվեց։ Ինչ վոր մի բան ոդում նետի պես սուլեց։ Յես հարված և սաստիկ ցավ զգացի։ Ուսս մեխված եր կայմին։ Սարսափելի ցավից և անսպասելիությունից—չգիտեմ, մտածելով արդյոք, թե անգիտակցաբար—յես յերկու շնիկն ել քաշեցի։ Ատրճանակներս պայթեցին և ձեռքիցս ընկան։ Բայց մենակ նրանք չընկան. սարսափելի գոռոցով ավագ նավաստին քաց թողեց պարանները և գլխիվայր ընկավ ուղիղ ջրի մեջ։

ԳԼՈՒԽ XXVII

«ՊԻԱՍՏՐՆԵՐ»

Նավն այնքան սաստիկ թեքվել եր, վոր կայմերն ուղղակի կախված եյին ջրի վրա։ Ես նստած եյի առագաստափայտին, ինչպես թառի վրա և իմ տակին ծովախորշի ջուրն եր։ Գենդսը, բարձրացած լինելով վոչ այնքան բարձր, վորքան յես, նավին ավելի մոտ եր և ընկավ ջուրը իմ և զբոսատեղու արանքից։ Միայն մի անգամ դուրս յեկավ նա ջրի յերեսը, արյունոտ փրփուրի մեջ և հավիտյանս խորասուզվեց ջրի մեջ։ Յերբ ջուրը հանդարտվեց, յես տեսա նրան։ Նա ընկած եր մաքուր լուսավոր ավազի վրա, նավի ստվերում։ Յերկու ձուկ լողում եյին նրա մարմնի վրա։ Յերբեմն, ջրի տատանման շնորհիվ, թվում եր, վոր նա շարժվում է և փորձում է վեր կենալ։ Ասենք, նա կրկնակի ձեռել եր. և գնդակահարված եր և խեղդված։ Նա

ձկների կերակուր դարձավ այնտեղ, որտեղ պատրաստվում էր սպանել ինձ։

Ցեսը դղում էր վրդովում, գլխապտույտ, յերկյուղ։ Արյունի տաք շիթերը հոսում էին իմ մեջքով և կրծքով։ Դաշույնը, որ իմ ուսը մխել էր կայմին, շիկացած յերկաթի նման այրում էր ինձ։ Բայց ցավը չէր սարսափեցնում ինձ — այդպիսի ցավ յես կարող էի տանել և առանց հառաչանքի։ Ինձ սարսափեցնում էր այն միտքը, որ յես կարող եմ դուրս պրծնել առագաստափայտից և ընկնել այս հանդարտ կանաչ ջրի մեջ, այնտեղ, ուր պառկած է մեռած ավագ նավաստին։

Ցեսը յերկու ձեռքով այնպես էր կպել առագաստափայտին, որ յեղունկները ցավում էին։ Աչքերս փակեցի, որ վտանգը չտեսնեմ։ Կամաց-կամաց գլուխս թարմացավ, սիրտս սկսեց ավելի հանդարտ խփել և ինքնազգացումս վերադարձավ։

Ամենից առաջ յես փորձեցի դաշույնը հանել։ Սակայն, կամ նա չափազանց խորն էր ցցվել կայմի մեջ, կամ ջղերս էին չափազանց քայքայվել, բայց դաշույնը հանել վոչ մի կերպ չկարողացա։ Դողը պատեց ինձ։ Ցեվ, որքան էլ տարորինակ է, այդ դողն ոգնեց ինձ։ Դաշույնը խրվել էր միայն կաշվիս մի փոքրիկ կտորի մեջ և յերբ դողացի, կաշին պատռվեց։ Արյունն առաջվանից ավելի ուժեղ հոսեց, բայց դրա փոխարեն յես ազատվեցի։ Ասենք, իմ բահկոնն ու շապիկը դեռ մեխված էին կայմին։

Ցեսը առաջ նետվեցի և բոլորովին ազատվեցի։ Ցեսը տախտակամածը վերադարձա աջ նավեղրի պարաններով։ Վոչ մի ուժ չէր ստիպի ինձ իջնել այն պարաններով, որոնցից քիչ առաջ պոկվեց Իզրայելը։

Ցեսը իջա նավասենյակը և փորձեցի կապել վերքս։ Նա ինձ սաստիկ ցավ էր պատճառում։ Արյունը դեռ հոսում էր։ Սակայն վերքը խոր չէր, անվտանգ էր և ձեռքերս շարժելուն չէր խանգարում։ Այժմ նավը միայն ինձ էր պատկանում և յես սկսեցի մտածել, թե ինչպես ազատվեմ վերջին ճանապարհորդից — մեռած Ո՞Բրայենից։

Ցեսը արդեն ասացի, որ նա գլորվել էր և հասել նավի յեզրին։ Սարսափելի անճոռնի տիկնիկի նման, նա ընկած էր այնտեղ։ Մի ահագին տիկնիկ, այն հասակի, ինչ որ կենդանի մարդը, սակայն զրկված կյանքի բոլոր գույներից և հրապույրից։ Նրա հախից գալն ինձ համար դժվար չէր — իմ վողբերգական արկածների ժամանակ յես մեռելներին ընտելացել էի ու էլ նրանցից չէի վախենում։ Ցեսը նրա գոտուց բռնեցի, բարձրացրի, ինչպես թեփի տոպրակ, և յեզրից շպրտեցի։ Նա բարձր ղրմփոցով ընկավ։ Կարմիր թասակը թռավ գլխից և լողաց ջրի յերեսին։ Ցերը որ դիակի ընկնելուց առաջացած պղտորությունն անցավ, յես պարզ տեսա նրանց յերկուսին էլ՝ Ո՞Բրայենին և Իզրայելին։ Նրանք պառկած էին կողք-կողքի։ Ջուրը, շարժվելով, որորում էր նրանց։ Ո՞Բրայենը, չնայելով իր յերիտասարդությանը, բոլորովին ճաղատ էր։ Նա պառկած էր, ճաղատ գլուխը դրած իրեն սպանողի ծնկան վրա։ Արագավազ ձկները սլանում էին նրանց յերկուսի վրայով էլ։

Ցեսը նավի վրա մենակ մնացի։ Հենց նոր սկսվեց տեղատվությունը։ Արեգակը արդեն այնքան ցածր էր, որ արևմտյան ափի յեղևնիների սուլերները կտրում էին ծովախորշը և հասնում տախտակամածին։ Փչում էր յերեկոյան մեղմ քամին, և թեև արևելքից ծովախորշը պահպանում էր յերկգագաթանի բլուրը, ճոպաններն սկսեցին սուլել, իսկ առագաստները՝ տատանվել ու թփթփալ։

Ցեսը տեսա, որ նավին վտանգ է սպառնում։ Արագ փաթաթեցի յեռանկյունի առագաստները և իջեցրի տախտակամածի վրա։ Սակայն միջնակայմի առագաստներն իջեցնելն ավելի դժվար էր։ Ցերը նավը թեքվել էր, ճոպանն ընկել էր յեզրի այն կողմը և նրա ծայրը, յերկու-յերեք ֆուտ առագաստներով, մինչև անգամ ջրի տակն էր գնացել։ Սրանից դրությունն ավելի վտանգավոր էր դարձել։ Փորձանքը կարող էր գալ ամեն կողմից և յես վոչ մի բանի չէի համարձակվում ձեռք տալ, որ իմ դրությունը չվատթարացնեմ։ Վերջապես դանակս հանեցի և առագաստի պարանները կտրեցի։ Գաֆելը միանգամից իջավ և կախված առագաստը լողաց ջրի յերեսին։ Վորքան էլ աշխատեցի չկարողացա նիրալը քաշել։ Դա իմ ուժերից վեր էր։ Ի՞նչ արած։ Ստիպված էի «Իսպանոլան» բախտի բերմունքին թողնել։ Չէ՞ որ յես էլ բախտի բերմունքին էի թողնված։

Այդ ժամանակ մթնշաղը պատեց ծովախորշը։ Արեգակի վերջին ճառագայթները, անցնելով անտառի բացատի միջով, շողում էին պայծառ, ինչպես թանկագին քարեր, կրծանված նավի փառահեղ պատմուճանի վրա։ Ցեղանակը ցրտում էր։

Տեղատվության պատճառով ջուրը քաշվում եր դեպի ծովը և նավն ավելի եր պառկում կողքի վրա։

Ցես գնացի նավի քիթը և նայեցի ներքև։ Քթի տակ ջուրը ծանծաղ եր և յես համենայն դեպս, յերկու ձեռքով բռնելով պարանը, զգուշությամբ անցա նավեզրից։ Ջուրը հազիվ մինչև գոտիս եր հասնում։ Ավազը խիտ և, ալիքների հետքերով յես դուրս յեկա ափը, թողնելով, վոր «Իսպանոլան» պառկի կողքի վրա և իր առագաստը վողողի ջրի մեջ։ Արևը մայր մտավ և սոճիների մեջ քամին աղմկեց։

Ցեվ այդպես, իմ ծովային արկածները վերջացան։ Ցեվ անկասկած հաջողությամբ վերջացան։ Նավը բանդիտների ձեռքից խլված է և մենք կարող ենք, թեկուզ հիմա, ճանապարհվել դեպի ովկիանոսը։ Ցես յերազում եյի շուտով բաղառնալ տուն, մեր ամրոցը և պարծենալ իմ քաջագործություններով։ Ցերևի ինձ մի քիչ կհանդիմանեն ինքնակամ հեռանալու պատճառով, սակայն «Իսպանոլայի» զավթելը կհարթի ամեն ինչ և մինչև անգամ ինքը, նավապետ Սմոլետտը ստիպված կլինի խոստովանել իմ քաջագործությունները։

Այսպես մտածելով, հիանալի տրամադրությամբ ճանապարհ ընկա դեպի ցցապատը, վորի յետևում, ինչպես յենթադրում եյի, բարեկամներս ինձ սպասում եյին։ Ցես լավ հիշում եյի, վոր արևելյան կողմում գտնվող ամենավերջին գետը, վոր թափվում է նավապետ Կիդդի ծովախորշը, սկսում է յերկգլխանի բլրի մոտից։ Ցեվ յես ծովեցի դեպի ձախ, դեպի այդ բլուրը, յենթադրելով անցնել գետն ամենանեղ տեղից։ Անտառը բավական ցանցառ եր։ Քայլելով սարալանջի վրայով, շուտով ծովեցի դեպի բլրի ծայրը և ծանծաղուտով գետն անցա։

Այստեղ եր, վոր պատահեցի Բեն Գաննին։ Ցես սկսեցի առաջ գնալ զգուշությամբ, աչալուրջ դիտելով չորս կողմս։ Բոլորովին մթնեց։ Անցնելով ճեղքվածքի միջով, վոր գտնվում եր յերկու բլրի կատարների արանքում, յես յերկնքի վրա տեսա խարույկի տատանվող ցոլք։ Վորոշեցի, վոր, յերևի, Բեն Գաննը բոցավառ խարույկի վրա իր համար ընթրիք է պատրաստում, և հոգուս խորքում զարմացա նրա անզգուշության վրա։ Ցեթե այդ ցոլքը յես տեսնում եմ, կարող է տեսնել նաև Սիլվերն իր ճամբարից, վորը գտնվում եր ճահճի վրա։

Գիշերն ավելի խավար եր դառնում։ Ցես դժվարությամբ եյի ճանապարհը գտնում։ Ցերկգլխանի բլուրը յետևից և հեռադիտակի կատարն աջից, իմ միակ ուղենիշերն եյին, սակայն նրանց դծագրություններն ավել մի ու ավելի եյին ցրվում մթության մեջ։ Նոսր աստղերը լայն առկայծում եյին։ Մթության մեջ յես դիպչում եյի թփերի և ընկնում ավազի փոսերի մեջ։

Հանկարծ քիչ լուսացավ։ Ցես վերև նայեցի։ Գունատ ճաճանչը լուսավորում եր Հեռադիտակի գագաթը։ Ներքևում, խիտ ծառերի միջից, յես տեսա մի ինչ վոր մեծ արծաթե բան և դժվարությամբ գլխի ընկա, վոր դա լուսինը դուրս յեկավ։

Գնալն ավելի հեշտացավ և յես քայլերս արագացրի։ Ժամանակ առ ժամանակ մինչև անգամ վազում եյի— համբերությունս հատել եր։ ուզում եյի շուտ ասնել ցցապատին։ Սակայն, մտնելով այն պուրակը, վորը շրջապատել եր մեր ամրոցը, յես հիշեցի զգուշության մասին և սկսեցի քիչ կամաց գնալ։ Տխուր վախճան կունենային իմ արկածները, յեթե ինձ, իմ բարեկամները, թշնամու տեղ ընդունելով, գնդակահարեյին։

Լուսինը լողում եր բարձր ու բարձր։ Անտառի բոլոր բացատները վողողված եյին նրա լույսով։ Բայց ուղիղ իմ առջև, ժայռերի մեջ յես նկատեցի ինչ վոր ցոլք, վոր լուսնի ցոլքին բոլորովին նման չեր։ Այդ ցոլքը տաք եր, կարմիր և ժամանակ առ ժամանակ կարծես մութն եր դառնում։ Ցերևի դա խարույկ եր, վորը մխում եր և ծածկվում մոխրով։

Այդ ինչ է, սատանան տանի։

Վերջապես յես հասա բացատին։ Ցցապատի արևմտյան ծայրը լուսավորված եր լուսնի լույսով։ Մնացած ցցապատը և տունը գտնվում եյին մթության մեջ, տեղ-տեղ յերկար արծաթագույն շերտերով կտրտված։ Իսկ տան յետևը մի ահագին խարույկ եր վառվում։ Խարույկի ծիրանագույն շողերը ցայտուն կերպով տարբերվում եյին լուսնի քնքույշ և գունատ ցոլքից։ Վոչ մի տեղ մարդ չկար։ Վոչ մի ձայն։ Միայն ճյուղերի մեջ թեթև քամին եր աղմկում։

Ցես զարմացած կանգ առա, գուցե, մի քիչ ել վախեցած։ Մենք յերբեք մեծ խարույկ չեյինք վառում։ Նավապետի հրամանով մենք միշտ վառելիքը խնայում եյինք։ Ցեվ յես սկսեցի յերկյուղ կրել, թե իմ բացակայության ժամանակ մի բան չի պատահել արդյոք իմ բարեկամներին։

Ցես հասա ցցապատի արևելյան ծայրին, ամբողջ ժամանակ անցնելով սալերի միջով և ցցապատն անցա այն տեղից, ուր խավարն ավելի թանձր եր։

Վորպեզի տագնապ չբարձրացնեմ, յես չորեքթաթ և անձայն մագլցեցի դեպի տան անկյունը։ Յեվ հանկարծ թեթևացած շունչ քաշեցի։ Յես խոմփոցը տանել չեմ կարող. յես հաճախ տառապել եմ այն մարդկանցից, վորոնք քնած ժամանակ խոմփում են։ Բայց այս անգամ իմ բարեկամների բարձր ու խաղաղ խոմփոցն ինձ համար յերաժշտություն թվաց։ Այդ խոմփոցը հանգստացրեց ինձ, ինչպես ծովի վրա հանգստացնում է հերթապահի գիշերային հիանալի կանչը՝ «Ամեն ինչ կարգին է»։

Մի բան ինձ համար պարզ եր, նրանք քնած են առանց մի պահակի։ Յեթե իմ փոխարեն նրանց մոտ մտներ Սիլվերն իր ավազակախմբով, նրանցից վոչ մեկն արշալույսը չեր տեսնի։ Յերևի, մտածում եյի յես, այդ բոլորը նրանից է, վոր Նավապիտը վիրավոր է։ Յեվ նորից յես կշտամբեցի ինձ, վոր այնպիսի վտանգի ժամանակ, յերբ պահակ դնելու մարդ էլ չունեյին, թողեցի բարեկամներիս։

Յես մոտեցա դռանը և ներս նայեցի։ Ներսն այնպես խավար եր, վոր վոչինչ տեսնել չկարողացա։ Բացի խոմփոցից մի ինչ վոր տարորինակ ձայն էլ եր լսվում, չգիտես թևերի թափահարում, թե թխթխկոց։

Ձեռքերս առաջ պարզած, յես տուն մտա. «Կպառկեմ իմ սովորական տեղում,— մտածեցի յես ժպտալով,— իսկ առավոտյան, նրանց զարմացած դեմքերին նայելով, կղվարճանամ»։

Յես դիպա մեկի վոտին։ Քնածը շրջվեց մյուս կողքի վրա, հառաչեց, բայց չզարթնեց։

Այդ ժամանակ մթության մեջ հանկարծ մի սուր ձայն լսվեց. «Պիաստրներ, պիաստրներ, պիաստրներ, պիաստրներ, պիաստրներ»։ Յեվ այլն, առանց շունչ առնելու, առանց ձայնը փոխելու, ինչպես լարված ժամացույց։

Դա Նավապետ Ֆլինտն եր, Սիլվերի կանաչ թութակը։ Նա յերբ թևերը թափահարում և կտցով թխթխկացնում, փորելով ծառի կեղևի մի կտոր։ Ահա թե ով եր պահպանում քնածներին պահակից լավ, ահա թե ով իր միապաղաղ, ձանձրացուցիչ կանչով, հայտարարեց իմ գալստյան մասին։

Յես ժամանակ չունեյի թաքնվելու։ Լսելով թութակի սուր ու զիլ ձայնը, քնածները զարթնեցին ու վեր թռան։ Յես լսեցի Սիլվերի ձայնը։ Նա հայհոյեց ու աղաղակեց.

— Ո՞վ է գալիս։

Յես սկսեցի վազել, բայց ընկա մեկի վրա։ Մեկին հրելուց հետո, մի ուրիշի ձեռքն ընկա։ Այդ մեկն ամուր բռնեց ինձ։

— Ապա մի կերոնը բեր, Դիկ,— ասաց Սիլվերը, յերբ պարզվեց, վոր յես էլ գնալ չեմ կարող։

Ավազակներից մեկը տնից դուրս յեկավ և վերաղարձավ վառվող խանձողը ձեռքին։

ՆԱՎԱՊԵՏ ՍԻԼՎԵՐԸ

ԳԼՈՒԽ XXVIII

ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՃԱՄԲԱՐՈՒՄ

Խանձողի բոսորագույն լույսը լուսավորեց տան ներսը և հաստատեց իմ վատթարագույն յերկյուղը։ Ծովահենները տիրել եյին ամբոցը և մեր ամբողջ պաշարեղենը։ Յեվ կոնյակի տակառը, և՛ խոզի ապուխտը, և՛ պաքսիմատով լիքը տոպրակները, գտնվում եյին իրենց տեղերում։ Յես սարսափեցի, յերբ տեսա, վոր վոչ մի գերի չկա։ Յերևի իմ բոլոր բարեկամները մեռել եյին։ Վշտից սիրտս կծկվում եր։ Ինչո՞ւ յես ել չմեռա նրանց հետ միասին։

Միայն վեց ծովահեն եր կենդանի մնացել և նրանք բոլորն ել այստեղ եյին— իմ առջև։ Դրանցից հինգը, կարմիր, ուռած դեմքով, զարթնեցին քնից և արագ յելան վոտքի։ Վեցերորդը միայն տեղից բարձրացավ և հենվեց արմունկին։ Նա չափազանց գունատ եր։ Գլուխը փաթաթված եր արյունոտ փալասով։ Ուրեմն նա վիրավոր է և նոր է վիրավորվել։ Յես հիշեցի, վոր գրոհի ժամանակ ծովահեններից մեկին վիրավորեցինք, վորը հետո անհայտացավ անտառում։ Յերևի նա յե։

Թութակը նստած եր Յերկարահասակ Ջոնի ուսին և կլոցով փետուրները մաքրում եր։ Ինքը Սիլվերն առաջվանից ավելի գունատ եր ու մռայլ։ Նա հագել եր շքեղ բաճկոնը, վորը հագած յեկավ մեզ մոտ բանակցելու։ Բայց այժմ այդ բաճկոնը կավոտ եր և պատառոտված։

— Եհե՜,— ասաց նա։— Սա Ջիմ Գոկինսն է, սատանան տանի ինձ։ Հլմ՜ւր ես յեկել, հա։ Աբի, աբի։ Յես միշտ ուրախանում եմ, յերբ հին բարեկամներ են գալիս ինձ մոտ։

Նա նստեց անգլիական ոդու տակառի վրա և սկսեց իր ճխամորճը ծխախոտ լցնել։

— Մի կրակ բեր, Դիկ,— խնդրեց նա։

Յեվ ծխելով, ասաց.

— Շնորհակալ եմ, բարեկամս։ Կարող ես խանձողը ցած դնել։ Իսկ դուք, պարոններ, պառկեցեք, մի ամաչեք։ Մենք բոլորս պարտավոր չենք պարոն Գոկինսի առջև զգաստ կանգնել։ Թող նա ների ձեզ, պատժի ինձ ասված։ Յեվ այդպես, Ջիմ,— շարունակեց նա մեկնված,— դու այստեղ ես։ Ի՜նչ հաճելի անակնկալ բան է խեղճ ծերունի Ջոնի համար։ Յես առաջին իսկ հայացքից տեսա, վոր դու ճարպիկ տղա յես, բայց այժմ յես տեսնում եմ, վոր դու ուղղակի հերոս ես։

Իհարկե, յես վոչ մի բառով չպատասխանեցի։ Նրանք ինձ կանգնեցրին պատի մոտ և յես ուղիղ կանգնած, աշխատում եյի վորքան կարելի յե հանգարտ նայել Սիլվերի յերեսին։ Բայց յես հուսահատված եյի։

Սիլվերն անվրդով մի քանի անգամ ձգվեց և կրկին խոսեց.

— Քանի վոր դու մեզ մոտ հյուր ես յեկել, Ջիմ,— ասաց նա,— յես քեզ բոլորը կպատմեմ ինչ վոր մտքումս ունեմ։ Դու միշտ իմ սրտովն ես յեղել, վորովհետև ուսերիդ վրա գլուխ ունես։ Քեզ վրա նայելով, յես հիշում եմ այն ժամանակը, յերբ յես այդպես յերիտասարդ ու գեղեցիկ եյի։ Յես միշտ ցանկացել եմ, վոր դու միանաս մեզ, գանձից քո մասն ստանաս և մեռնես փարթամության մեջ, վորպես հարուստ պարոն։ Յեվ ահա, վորդյակս, դու յեկար, վերջապես։ Նավապետ Սմոլեթը լավ ծովագնաց է, յես այդ միշտ հաստատել եմ, սակայն կարգապահության տեսակետից չափազանց պահանջկոտ է։ «Պարտականությունն ամենից առաջ», ասում է նա և միանգամայն ճիշտ է ասում։ Իսկ դու փախար նրանցից, քո նավապետից։ Մինչև անգամ բժիշկն ել գոհ չե քեզանից։ Նա «ապերախտ անզգամ» անվանեց քեզ։ Մի խոսքով, դու ձերոնց մոտ ել չես կարող վերադառնալ։ Նրանք քեզ ընդունել չեն ցանկանում։ Յեվ յեթե չես ուզում յերրորդ խումբ կազմակերպել, դու պետք է միանաս նավապետ Սիլվերին։

Ուրեմն գործն այնքան ել վատ չե։ Ուրեմն իմ բարեկամները կենդանի յեն։ Թեև յես պատրաստ եյի հավատալ Սիլ-

վերի ասածներին, վոր նրանք իմ փախուստի պատճառով բարկացել են ինձ վրա, այնուամենայնիվ յես շատ ուրախացա։

— Յես էլ չեմ խոսում այն մասին, վոր դու մեր իշխանության տակ ես,— շարունակեց Սիլվերը,— դու ինքդ այդ տեսնում ես։ Խելացի փաստերը յես սիրում եմ։ Յես սպառնալիքների մեջ յերբեք վոչ մի ոգուտ չեմ տեսել։ Յեթե քեզ մեզ մոտ ծառայելը դուր է գալիս, կամավոր կերպով մտիր մեր շարքերը։ Իսկ յեթե դուր չի գալիս, Ջիմ, պարզապես ասա՝ վոչ։ Տեսնում ես, յես քեզ հետ պարզ եմ խոսում, առանց վորևե խորամանկության։

— Դուք ուզում եք, վոր յես պատասխանեմ,— հարցրեցի յես դողդողջուն ձայնով։

Նրա հեգնական շատախոսության մեջ յես զգում էի մահվան սպառնալիք։ Այտերս վառվում էին, սիրտս հուսահատորեն խփում էր կրծքումս։

— Վոչ վոք քեզ չի ստիպում, բարեկամս,— ասաց Սիլվերը։— Լավ մտածիր։ Մենք շտապելու բան չունենք։ Չի՞ վոր այնտեղ, վորտեղ դու ներկա յես լինում, ձանձրալի չի լինում։

— Դե լավ,— ասացի յես, քիչ համարձակ,— քանի վոր դուք ուզում եք, վոր յես վորոշեմ, թե ում կողմն եմ անցնում, պետք է բացատրեք ինձ, թե ինչ է կատարվում այստեղ, թե ինչու դուք այստեղ եք, թե ուր են իմ բարեկամները։

— Ի՞նչ է կատարվում,— մռայլ կրկնեց ծովահեններից մեկը։— Շատ բան կտայի իմանալու համար թե ինչ է կատարվում մեզ մոտ։

— Բերանդ կապիր, քանի վոր քեզ չեն հարցնում,— բարկացած ընդհատեց նրան Սիլվերը, ապա նախկին քաղաքավարությամբ դիմեց ինձ։— Յերեկ առավոտյան, պարոն Դոկինս,— ասաց նա,— բժիշկ Լիվսին յեկավ մեզ մոտ սպիտակ դրոշակով։ «Դուք մնացիք ծանծաղուտի վրա,— ասաց նա.— նավը գնացել է»։ Յերբ մենք ոռմ էինք խմում և յերգեր յերգում, նավը ձեռքից բաց թողինք։ Յես այդ չեմ ժխտում։ Մեզանից վոչ վոք նավը չէր հսկում։ Մենք վազեցինք ափը և, յերդվում եմ վորոտով, մեր հին նավն անհայտացավ։ Մենք քիչ էր մնում թափվեյինք տեղն ու տեղը։ «Լավ,— ասաց բժիշկը,— յեկեք պայման կապենք»։ Մենք պայման կապեցինք— յես ու նա,— և ահա մենք ստացանք ձեր պաշարեղենը, ձեր անգլիական ողին, ձեր ամրոցը, ձեր փայտը, վորը դուք այնքան հեռատեսությամբ կտրատել էիք, բոլորը, այսպես ասած, ձեր նավակը, բոլորը։ Իրենք էլ գնացին։ Իսկ թե վորտեղ են նրանք այժմ, չգիտեմ։

Նա կրկին հանդարտորեն ձգվեց։

— Իսկ քեզ պայմանի մեջ չեն մտցրել,— շարունակեց նա։ — Բժիշկն ուղղակի ասաց ինձ այդ մասին։ «Ձեզանից քանի՞ հոգի յեն մնացել»— հարցրի յես։ «Չորս հոգի,— պատասխանեց նա,— չորս հոգի, վորոնցից մեկը վիրավոր է։ Իսկ թե վորտեղ է այն անիծված յերեխան, չգիտեմ և գիտենալ էլ չեմ ցանկանում,— ասաց նա։— Նրան հիշելը մեզ համար զզվելի յե»։ Ահա նրա սեփական խոսքերը։

— Ա՞յդ է բոլորը,— հարցրի յես։

— Բոլորը, ինչ վոր դու պետք է գիտենաս,վորդիս,— պատասխանեց Սիլվերը։

— Իսկ հիմա յե՞ս պիտի ընտրեմ։

— Այո, հիմա դու պիտի ընտրես,— ասաց Սիլվերը։

— Շատ լավ,— ասացի յես։— Յես այնքան հիմար չեմ և արածս գիտեմ։ Ինչ ուզում եք արեք, ինձ համար միևնույն է։ Այն ժամանակից, յերբ հանդիպել եմ ձեզ, սովորել եմ նայել մահվան դեմքին։ Բայց նախ և առաջ ուզում եմ մի բանի մասին պատմել ձեզ,— շարունակեցի յես ավելի ու ավելի հուզվելով։— Ձեր դրությունը շատ վատ է. նավը կորցրիք, գանձը կորցրիք, ձեր մարդկանց կորցրիք։ Ձեր բանը շատ վատ է։ Յես, յեթե ուզում եք իմանալ,թե ով է հանցավոր այդ բոլոր բաներում, իմացեք, վոր յես եմ, և ուրիշ վոչ վոք։ Այն գիշեր, յերբ մենք մոտենում էինք կղզուն, յես նստած էի խնձորի տակառում և լսեցի այն բոլորը, ինչ վոր ասացիք դուք— Ջոն, և դու, Դիկ Ջոնսոն և ինչ ասաց Գենդսը, վորն այժմ գտնվում է ծովի հատակում։ Յես ինչ վոր լսեցի, նույն ժամին հաղորդեցի նավապետ Սմոլետին։ Յես կտրեցի նավի խարսխի ճոպանը, յես սպանեցի այն մարդկանց, վորոնց դուք թողել էիք նավի վրա, յես նավը թաղցրի, վոր յերբեք չեք գտնի։ Դուք եք հիմար դրության մեջ և վոչ թե յես, ել ինչու պետք է վախենամ ձեզանից։ Կարող եք ինձ սպանել, կամ խնայել, ինչպես ձեր կամքն է։ Յեթե խնայեք, յես անցյալը կմոռանամ և յերբ ձեզ դատեն ծովահենության համար, կփորձեմ ազատել ձեզ հանդուցյից։ Այժմ ընտրելու հերթը ձերն է։ Իմ մահը ձեզ վոչ մի ոգուտ չի բերի։ Իսկ յեթե կենդանի թողնեք, յես կաշ-

խատեմ, վոր ձեզ չկախեն։

Ցես լռեցի։ Ցես շնչասպառ եյի լինում։ Ցես ապշեցի, տեսնելով, վոր վոչ վոք նույնիսկ տեղից չշարժվեց։ Բոլորն ել վոչխարի նման նայում եյին ինձ։ Պատասխանի չսպասելով, յես շարունակեցի.

— Ինձ թվում ե, պարոն Սիլվեր, վոր դուք այստեղ բոլորից լավ մարդն եք։ Իսկ յեթե կմեռնեմ, պատմեցեք բժշկին, վոր անփառունակ մահով չմեռա։

— Նկատի կունենամ,— ասաց Սիլվերն այնպիսի տարորինակ տոնով, վոր յես չկարողացա հասկանալ— ծաղրում ե ինձ, թե իմ արիությունը նրան դուր յեկավ։

— Մի մոռացեք,— գոչեց Մորգան անունով, թուխ դեմքով մի նավաստի, վորին յես տեսել եյի Ցերկարահասակ Ջոնի պանդոկում Բրիստոլի նավահանգստում,— մի մոռացեք, վոր այն ժամանակ դա ճանաչեց Սև Գամփռին։

— Այդ դեռ բոլորը չե,— ավելացրեց Սիլվերը։— Սա, յերդվում եմ վորոտով, այն յերեխան ե, վորը Բիլլի Բոնսի սնդուկից քարտեզը հանեց։ Վերջապես Ջիմ Հոկինսը մեր ձեռքն ընկավ։

— Արյունը բաց թողնենք,— գոչեց Մորգանը և ուղղվեց։

Ցեվ դանակը դուրս քաշելով, վոտքի յելավ այնքան թեթև, վոր կարծես քսան տարեկան լիներ։

— Տեղդ,— գոչեց Սիլվերը։— Ո՞վ ես դու, Թոմ Մորգան։ Գուցե կարծում ես, վոր դու այստեղ նավապետ ես։ Ցերդվում եմ, վոր յես կսովորեցնեմ քեզ լսել։ Միայն թե համարձակվիր ճանապարհս կտրել։ Վերջապես յերեսուն տարվա մեջ ով վոր կանգնել ե իմ ճանապարհի վրա, ընկել ե կամ առագաստափայտի վրա, կամ ծովը, ձկներին նախաճաշ։ Այո։ Հիշիր, Թոմ Մորգան, դեռ չի յեղել մի մարդ, վորն ապրել ե աշխարհում, յերբ ինձ հետ հաշտ չի յեղել։

Թոմը լռեց, սակայն մյուսները շարունակեցին մրթմրթալ։

— Թոմը ճշմարիտ ե ասում,— ասաց մեկը։

— Ցես հրամանատարներ շատ եմ ունեցել,— ավելացրեց մյուսը։— Ցեվ, յերդվում եմ կախաղանով, Ջոն Սիլվեր, յես չեմ թույլ տա, վոր դու իմ քթից բռնած մանե ածես։

— Ջենտլմեններ, ձեզանից ո՞վ ե ուզում ինձ հետ գործ ունենալ,— ընդհատեց Սիլվերը։

Նա նստած եր տակառի վրա, և այժմ առաջ շարժվեց։ Նրա աջ ձեռքին գտնվում եր վառվող ծխամորճը։

— Դե, ինչ եք ուզում։ Ուղղակի ասացեք։ Թե՞ համբացել եք։ Թող դուրս գա, ով ուզում ե, յես սպասում եմ։ Ցես այսքան տարի նրա համար չեմ ապրել յերկրի վրա, վոր վորևե հարբած հնդկահավ կտրի իմ ճանապարհը։ Դուք գիտեք մեր սովորությունները։ Դուք ձեզ համարում եք հաջողության ջենտլմեններ։ Հապա ինչու՞ չեք դուրս գալիս, յես պատրաստ եմ։ Թող նա, ով սրտոտ ե, դուրս քաշի իր սուրը յեվ յես, թեև հենակներով եմ, շատ շուտ կտեսնեմ, թե ինչ գույնի յե նրա փորոտիքը, նախ քան կհանգչի այս ծխամորճը։

Վոչ վոք չշարժվեց։ Վոչ վոք մի խոսքով անգամ չպատասխանեց։

— Ահա, այդպես եք բոլորդ միշտ,— շարունակեց նա, ծխամորճը բերանին դնելով։— Քաջ եք, խոսք չկա։ Կռվի մեջ այնքան ել քաջ չեք։ Կամ թե ընդունակ չեք հասկանալու մարդկային հասարակ լեզուն. չե՞ վոր յես այստեղ նավապետ եմ, ձեզանից ընտրված։ Ցես ձեր նավապետն եմ, վորովհետև յես մի ամբողջ ծովային մղոն խելոք եմ ձեր բոլորից։ Դուք չեք ուզում կռվել ինձ հետ, ինչպես վայել ե հաջողության ջենտլմեններին։ Այն ժամանակ, յերդվում եմ վորոտով, վոր դուք պետք ե ինձ լսեք։ Այս տղան իմ սրտովն յե։ Սրանից լավը յես յերբեք չեմ տեսել։ Նա յերկու անգամ ավելի յե նման տղամարդու, քան այնպիսի առնետները, ինչպիսին դուք։ Դե, լսեցեք, ով ձեռք կտա նրան, ինձ հետ գործ կունենա։

Ցերկարատև լռություն տիրեց։

Ցես ձգված կանգնած եյի պատի մոտ։ Սիրտս դեռևս ծուրճի նման խփում եր, սակայն կրծքիս մեջ հույս ծնվեց։ Սիլվերը ձեռքերը խաչած նստած եր, հենված պատին։ Նա ծծում եր ծխամորճը և հանգիստ եր, ինչպես յեկեղեցում։ Միայն աչքերը շարժվում եյին։ Նա դաղտագողի դիտում եր իր վայրագ խումբը։ Ծովահենները քաշվեցին մի հեռու անկյուն և սկսեցին շշուկով խոսել։ Ցերբեմն նրանք յետ եյին նայում և խանձողի կարմիր լույսն ընկնում եր նրանց հուզված դեմքի վրա։ Սակայն նրանք ինձ վրա չեյին նայում, այլ Սիլվերի վրա։

— Դուք, յերևի, պատրաստվում եք ինչ վոր բան ասելու,— ասաց Սիլվերը և թքեց։— Ի՞նչ կա վոր, ասացեք, յես լսում եմ։

խատեմ, վոր ձեզ չկախեն։

Ցեսլուեցի։ Ցեսլուեցի շնչասպառ եյի լինում։ Ցեսլուեցի, տեսնելով, վոր վոչ վոք նույնիսկ տեղից չշարժվեց։ Բոլորն էլ վոչխարի նման նայում եյին ինձ։ Պատասխանի չսպասելով, ես շարունակեցի.

— Ինձ թվում է, պարոն Սիլվեր, վոր դուք այստեղ բոլորից լավ մարդն եք։ Իսկ յեթե կմեռնեմ, պատմեցեք բժշկին, վոր անփառունակ մահով չմեռա։

— Նկատի կունենամ,— ասաց Սիլվերն այնպիսի տարորինակ տոնով, վոր ես չկարողացա հասկանալ— ծաղրում է ինձ, թե իմ արիությունը նրան դուր յեկավ։

— Մի մոռացեք,— գոչեց Մորգան անունով, թուխ դեմքով մի նավաստի, վորին ես տեսել եյի Ցերկարահասակ Ջոնի պանդոկում Բրիստոլի նավահանգստում,— մի մոռացեք, վոր այն ժամանակ դա ճանաչեց Սև Գամփռին։

— Այդ դեռ բոլորը չե,— ավելացրեց Սիլվերը։— Սա, յերդվում եմ վորոտով, այն յերեխան է, վորը Բիլլի Բոնսի սնդուկից քարտեզը հանեց։ Վերջապես Ջիմ Դոկինսը մեր ձեռքն ընկավ։

— Արյունը բաց թողնենք,— գոչեց Մորգանը և ուղղվեց։

Ցեվ դանակը դուրս քաշելով, վոտքի յելավ այնքան թեթև, վոր կարծես քսան տարեկան լիներ։

— Տեղդ,— գոչեց Սիլվերը։— Ո՞վ ես դու, Թոմ Մորգան։ Գուցե կարծում ես, վոր դու այստեղ նավապետ ես։ Յերդվում եմ, վոր ես կսովորեցնեմ քեզ լսել։ Միայն թե համարձակվիր ճանապարհս կտրել։ Վերջապես յերեսուն տարվա մեջ ով վոր կանգնել է իմ ճանապարհի վրա, ընկել է կամ առագաստափայտի վրա, կամ ծովը, ձկներին նախաճաշ։ Այո։ Հիշիր, Թոմ Մորգան, դեռ չի յեղել մի մարդ, վորն ապրել է աշխարհում, յերբ ինձ հետ հաշտ չի յեղել։

Թոմը լռեց, սակայն մյուսները շարունակեցին մրթմրթալ։

— Թոմը ճշմարիտ է ասում,— ասաց մեկը։

— Ես հրամանատարներ շատ եմ ունեցել,— ավելացրեց մյուսը։— Ցեվ, յերդվում եմ կախաղանով, Ջոն Սիլվեր, ես չեմ թույլ տա, վոր դու իմ քթից բռնած մանը ածես։

— Ջենտլմեններ, ձեզանից ո՞վ է ուզում ինձ հետ գործ ունենալ,— ընդհատեց Սիլվերը։

Նա նստած եր տակառի վրա, և այժմ առաջ շարժվեց։ Նրա աջ ձեռքին գտնվում եր վառվող ծխամորճը։

— Դե, ի՞նչ եք ուզում։ Ուղղակի ասացեք։ Թե՞ համբացել եք։ Թող դուրս գա, ով ուզում է, ես սպասում եմ։ Ցեսլուեցի այսքան տարի նրա համար չեմ ապրել յերկրի վրա, վոր վորևե հարբած հնդկահավ կտրի իմ ճանապարհը։ Դուք գիտեք մեր սովորությունները։ Դուք ձեզ համարում եք հաջողության ջենտլմեններ։ Հապա ինչո՞ւ չեք դուրս գալիս, ես պատրաստ եմ։ Թող նա, ով սրտոտ է, դուրս քաշի իր սուրը յեվ ես, թեև հենակներով եմ, շատ շուտ կտեսնեմ, թե ինչ գույնի յե նրա փորոտիքը, նախ քան կհանգչի այս ծխամորճը։

Վոչ վոք չշարժվեց։ Վոչ վոք մի խոսքով անդամ չպատասխանեց։

— Ահա, այդպես եք բոլորդ միշտ,— շարունակեց նա, ծխամորճը բերանին դնելով։— Քաջ եք, խոսք չկա։ Կռվի մեջ այնքան էլ քաջ չեք։ Կամ թե ընդունակ չեք հասկանալու մարդկային հասարակ լեզուն. չե՞ վոր ես այստեղ նավապետ եմ, ձեզանից ընտրված։ Ցեսլուեցի ձեր նավապետն եմ, վորովհետև ես մի ամբողջ ծովային մղոն խելոք եմ ձեր բոլորից։ Դուք չեք ուզում կռվել ինձ հետ, ինչպես վայել է հաջողության ջենտլմեններին։ Այն ժամանակ, յերդվում եմ վորոտով, վոր դուք պետք է ինձ լսեք։ Այս տղան իմ սրտովն է։ Սրանից լավը ես յերբեք չեմ տեսել։ Նա յերկու անդամ ավելի է նման տղամարդու, քան այնպիսի առնետները, ինչպիսին դուք։ Դե, լսեցեք, ով ձեռք կտա նրան, ինձ հետ գործ կունենա։

Ցերկարատև լռություն տիրեց։

Ցեսլուեցի ձգված կանգնած եյի պատի մոտ։ Սիրտս դեռևս մուրճի նման խփում եր, սակայն կրծքիս մեջ հույս ծնվեց։ Սիլվերը ձեռքերը խաչած նստած եր, հենված պատին։ Նա ծծում եր ծխամորճը և հանգիստ եր, ինչպես յեկեղեցում։ Միայն աչքերը շարժվում եյին։ Նա զգաստագողի դիտում եր իր վայրագ խումբը։ Ծովահեններն քաշվեցին մի հեռու անկյուն և սկսեցին շշուկով խոսել։ Ցերբեմն նրանք յետ եյին նայում և խանձողի կարմիր լույսն ընկնում եր նրանց հուզված դեմքի վրա։ Սակայն նրանք ինձ վրա չեյին նայում, այլ Սիլվերի վրա։

— Դուք, յերևի, պատրաստվում եք ինչ վոր բան ասելու,— ասաց Սիլվերը և թքեց։— Ի՞նչ կա վոր, ասացեք, ես լսում եմ։

— Ներողություն եմ խնդրում, պարոն,— սկսեց ծովահեն-
ներից մեկը,— դուք հաճախ խախտում եք մեր սովորություն-
ները։ Սակայն կա մի սովորություն, որը մինչև անգամ դուք
խախտելու իրավունք չունեք։ Խումբն անբավական է, սակայն,
թույլ տվեք ասել, որ այս խումբն այնպիսի իրավունք ունի,
որպիսին ունեն մյուսները։ Մենք իրավունք ունենք հավաք-
վելու և խոսելու իշխանության մասին։ Ներողություն եմ
խնդրում, պարոն, որովհետև այնուամենայնիվ դուք մեր նա-
վապետն եք։ Բայց յես ուզում եմ ոգտվել իմ իրավունքներից
և գնալ խորհրդի։

Զսպված կերպով Սիլվերին զինվորական պատիվ տալով,
այդ բարձրահասակ, հիվանդոտ, գեղին աչքանի, յերեսուն հինգ
տարեկան նավաստին, հանդարտ գնաց դեպի յելքը և անհայ-
տացավ դռան յետևը։ Մյուսները դուրս յեկան նրա յետևից։
Յուրաքանչյուրը Սիլվերին զինվորական պատիվ եր տալիս և
իրեն արդարացնելու համար մի բան մրթմրթում եր։

— Համաձայն սովորության,— ասաց մեկը։

— Գնում ենք նավաստիական ժողովի,— ասաց Մորգանը։

Յես ու Սիլվերը մնացինք յերկուսով վառվող խան-
ձողի մոտ։

— Լսիր, Ջիմ Հոկինս,— ասաց նա հաղիվ լսելի հառաս-
տուն շշուկով։— Դու միայն մի մաղ հեռու յես մահից, և որ
ամենավատն է, տանջանքից։ Նրանք ուզում են ինձ պաշ-
տոնանկ անել։ Դու տեսար, տեսար թե ինչպես յես քեզ
պաշտպանեցի։ Սկզբում յես չեմի ուզում քեզ պաշտպանել,
բայց դու մի քանի խոսք ասացիր և յես իմ պլանները փո-
խեցի։ Յես այն ժամանակ սարսափած եմի իմ անհաջողու-
թյուններից, կախաղանից, որ ինձ սպառնում է։ Լսելով քո
խոսքերը, ինքս ինձ ասացի. հովանավորիր Հոկինսին, Ջոն,
Հոկինսն ել քեզ կհովանավորի։ Դու նրա վերջին խաղաթուղթն
ես, Ջոն, իսկ նա, յերդվում եմ վորոտով, քո վերջին խաղա-
թուղթը։ Ծառայություն ծառայության փոխարեն, վորոշեցի
յես։ Դու քեզ համար վկա յես ազատում, յերբ գործը դատարան
հասնի, իսկ նա կազատի քո պարանոցը։

Յես աղոտ կերպով սկսեցի հասկանալ, թե բանն ինչումն է։

— Դուք ուզում եք ասել, որ ձեր խաղը տանում եք
տվել,— հարցրի յես։

— Այո, յերդվում եմ սատանայով,— պատասխանեց նա։—

Քանի որ նավը չկա, նշանակում է, մնում է միայն կախա-
ղանը։ Յես համառ եմ, Ջիմ Հոկինս, սակայն, յերբ տեսա, որ
ծովախորշում նավ չկա, յես հասկացա, որ մեր խաղը վեր-
ջացել է։ Իսկ նրանք թող խորհրդակցեն, նրանք բոլորն ել
անուղեղ վախկոտներ են։ Յես կաշխատեմ ազատել քո մորթը։
Բայց լսիր, Ջիմ, ծառայություն ծառայության փոխարեն. դու
կազատես Յերկարահասակ Ջոնին հանգույցից։

Յես ապշել եմի։ Ի՞նչ վողորմելի ծղոտից է բռնում նա,
խմբապետը։

— Յես կանեմ բոլորը, ինչ կարող եմ,— ասացի յես։

— Դե, ձեռք-ձեռքի խփենք,— բացականչեց նա։— Դու
եժան պրծար, յես ել, յերդվում եմ վորոտով, փրկության
հույս սատացա։

Նա կաղելով շարժվեց դեպի խանձողը, որ վառվում եր
փայտերի մոտ և նորից ծխեց իր ծխամորճը։

— Հասկացիր ինձ, Ջիմ,— շարունակեց նա վերադառ-
նալով։— Դեռևս ուսերիս վրա գլուխ կա, և յես վորոշել եմ
կալվածատիրոջ կողմն անցնել։ Յես գիտեմ, որ դու նավը
թագցրել ես վորևե ապահով տեղ։ Թե ինչպես ես արել, յես
չգիտեմ, սակայն յես համոզված եմ, որ նավը վողջ ու ան-
վնաս է։ Գենդսն ու Ո'Բրայենը հիմար դուրս յեկան։ Նրանց վրա
յես յերբեք հույս չեմի դնում։ Նկատիր, որ յես քեզ վոչինչ
չեմ հարցնում և ուրիշներին ել չեմ թույլ տալիս, որ հարց-
նեն։ Յես մեր խաղի կանոնները գիտեմ և հասկանում եմ, որ
յես տանուլ եմ տվել։ Իսկ դու այնպես յերիտասարդ ես, այն-
պես քաջ, որ յեթե մենք իրար պահպանենք, շատ բանի
կհասնենք։

Նա թիթեղյա գավաթի մեջ տակառից կոնյակ լցրեց։

— Չե՞ս ուզում խմել, բարեկամս,— հարցրեց նա։

Յես մերժեցի։

— Իսկ յես մի քիչ կխմեմ, Ջիմ,— ասաց նա։— Այնքան
հոգս կա առաջիս, վոր, հարկավոր է, որ խթանեմ ինձ։ Ի դեպ
հոգսերի մասին։ Ինչու բժիշկն այս քարտեղն ինձ տվեց,
սիրելի Ջիմ։

Իմ դեմքի վրա արտահայտվեց այնպիսի անկեղծ զարմանք,
որ նա հասկացավ հետագա հարցերի անոգուտ լինելը։

— Այո, նա տվեց ինձ իր քարտեղը... Յեվ այստեղ, ան-

կասկած, մի բան կա։ Այստեղ, ինչ վոր մի բան է թաղնված, Ջիմ... լավ, կամ վատ։

Նա նորից կոնյակ կուլ տվեց և իր մեծ գլուխը թափ տվեց այնպիսի մարդու նման, վորն անխուսափելի փորձանքներ է սպասում։

ԳԼՈՒԽ XXIX

ԿՐԿԻՆ ՍԵՎ ՆՇԱՆ

Ծովահենների ժողովը մի առ ժամանակ շարունակվեց, յերբ նրանցից մեկը վերադարձավ ամբոցը և հեգնական ձևով Սիլվերին զինվորական պատիվ տալով, թույլտվություն խնդրեց խանձողը վերցնել։ Սիլվերն իր համաձայնությունը տվեց և վերջինս հեռացավ, յերկուսիս մթության մեջ թողնելով։

— Մրրիկը մոտենում է, Ջիմ,— ասաց Սիլվերը։

Նա սկսեց ինձ հետ բարեկամաբար վերաբերվել։

Ցեմ մոտեցա մոտիկ հրակնատին և դեպի բակը նայեցի։ Խարույկը համարյա թե հանգչում եր։ Այլևս լույս չեր տալիս, ուր չեր, վոր դավադիրներին խանձող պետք յեկավ։ Նրանք շրջանաձև կանգնել եյին բլրի լանջին, տան ու ցցապատի միջև։ Նրանցից մեկը բռնել եր խանձողը, մյուսը մեջտեղում ծունկ եր չոքել։ Նրա ձեռքին բաց դանակ կար, վորի բերանը փայլփլում եր, մերթ լուսնի, մերթ ջահի լույսով լուսավորված։ Մնացածները մի քիչ կռացել եյին, կարծես նայելով, թե ինչ է անում այն մեկը։ Վերջինիս ձեռքին մի գիրք հայտնվեց։ Ցեվ յես ժամանակ չունեցա մտածելու, թե վորտեղից է ավազակին անհամապատասխան այդ իրը, յերբ նա վեր բարձրացավ և բոլորը խմբով դեպի տունն ուղղվեցին։

— Նրանք այստեղ են գալիս,— ասացի յես։

Ցես կանգնեցի առաջվա տեղում։ Զուգենալով ձգել իմ արժանապատվությունը, չեյի ուզում, վոր ծովահենները նկատեն, թե յես հետևում եյի նրանց։

— Համեցեք խնդրեմ, բարեկամ, թող գան,— ուրախ ասաց Սիլվերը։— Դեռ ինձ մոտ նրանց հանդիպելու համար բան կա։

Դուռը բացվեց և հինգ ծովահենները անվճռականորեն խմբվելով շեմքի մոտ, մեկին առաջ հրեցին։ Այլ պայմաններում ծիծաղելի կլիներ նայել, թե ինչպես դանդաղ և յերկյուղով է մոտենում պատգամավորը, կանգ առնելով յուրաքանչյուր քայլում և ձգելով աջ, պինդ սեղմած ձեռքը։

— Մոտ յեկ, բարեկամս,— ասաց Սիլվերը,— և մի վախենա, յես քեզ չեմ ուտի։ Տե՛ր, դմբո, ինչ կա այդտեղ։ Ցես սովորությունները գիտեմ։ Ցես պատգամավորին ձեռք չեմ տա։

Այս խոսքերից սիրտ առած, ավազակը քայլերն արագացրեց, Սիլվերի ձեռքի մեջ մի բան խցկեց և արագ հետ վազեց ընկերների մոտ։

Խոհարարը նայեց իր ափին։

— Սեվ նշան։ Այդպես էլ կարծում եյի,— ասաց նա։— Վորտեղից եք թուղթ գտել։ Այս ի՞նչ է։ Այ, դուք, թշվառներ։ Ավետարանից եք կտրել։ Դրա համար դուք կպատժվեք։ Իսկ վո՞ր հիմարն է ավետարանը կտրել։

— Տեսնում եք,— ասաց Մորգանը։— Ցես ի՞նչ ասացի։ Դրանից վոչ մի լավ բան չի դուրս գա։

— Դե, այժմ դուք կախաղանից չեք պրծնի,— շարունակեց Սիլվերը։— Ումնի՞ց եք վերցրել այդ ավետարանը։

— Դիկից,— ասաց մեկը։

— Դիկի՞ց։ Դե, Դիկ, աղոթիր աստծուն,— ասաց Սիլվերը, վորովհետև քո յերգը յերգված է։ Ցես ճիշտն եմ ասում։ Աստված պատժի ինձ, վոր քո բանը պրծած է։

Բայց այստեղ դեղին աչքանի յերկարահասակ մարդը մեջ ընկավ։

— Բավական է դուրս տաք, Ջոն Սիլվեր,— ասաց նա։— Խումբը հավաքվելով ժողովի, ինչպես հրամայում է հաջողության ջենտլմեն՝ների սովորությունը, քեզ սև նշան ուղարկելու վորոշում հանեց։ Շուռ տուր նշանը, ինչպես հրամայում է մեր սովորությունը և կարդա թե ինչ է գրված։ Այն ժամանակ ուրիշ կերպ կխոսես։

— Շնորհակալ եմ, Ջոն,— ձայն տվեց Սիլվերը։— Դու գործնական մարդ ես և մեր սովորություններն անգիր գիտես։ Ի՞նչ է գրված։ Այ թե ի՞նչ։ «Պաշտոնանկ է արված»։ Ահա թե ի՞նչ։ Ցեվ ի՞նչ լավ ձեռագիր է։ Ինչպես գրքի մեջ գրած։ Այդ քո ձեռագիրն է, Ջորջ։ Դու խմբում առաջին մարդն ես։ Ցես յերբեք չեմ զարմանա, յեթե այժմ քեզ նավապետ ընտրեն։ Խնդրեմ խանձողը տաս, թե չե ծխամորճս վոչ մի կերպ չի ծխվում։

— Դե, դե,— ասաց Ջորջը,— խմբի աչքին թող մի փչի։ Վոր քեզ լսենք, շատ բան կասես, այնուամենայնիվ ցած յեկ

այդ տակառից։ Դու արդեն մեր նավապետը չես։ Ցած արի տակառից և մեր ընարությունները մի խանգարիր։

— Իսկ ես կարծում եմ, թե դու իսկապես սովորությունները գիտես,— արհամարհանքով առարկեց Սիլվերը։— Դու դեռ պետք է մի քիչ սպասես, վորովհետև ես դեռևս ձեր նավապետն եմ։ Դուք պետք է առաջադրեք ձեր մեղադրանքները և լսեք իմ պատասխանը։ Իսկ մինչև այն ժամանակ ձեր սև նշանը մի պաքսիմատից ավելի արժեք չունի։ Տեսնենք, թե դրանից ինչ դուրս կգա։

— Մի վախենա, սովորությունները չենք խախտի,— պատասխանեց Ջորջը.— Մենք ուզում ենք գործել ազնվորեն։ Ահա քեզ մեր մեղադրանքները։ Առաջինը՝ դու ամբողջ գործը տապալեցիր։ Դու չես համարձակվի առարկել սրա դեմ։ Յերկրորդ՝ դու թույլ տվիր մեր թշնամիները հեռանան, թեև նրանք այստեղ իսկական թակարդի մեջ էին։ Թե ինչու էին նրանք ուզում գնալ, չգիտեմ, բայց պարզ է, վոր վորևե բանի համար ուզում էին գնալ։ Յերրորդ՝ դու արգելեցիր մեզ հետևել նրանց։ Ո՞, մենք քեզ տեսնում ենք ամբողջովին, Ջոն Սիլվեր։ Դու յերկակի խաղ ես խաղում։ Չորրորդ՝ դու հովանավորեցիր այս տղային։

— Ա՞յդ է բոլորը,— հանդարտորեն հարցրեց Սիլվերը։

— Միանգամայն բավական է,— պատասխանեց Ջորջը։ —Մեզ, քո բերանաբացության պատճառով, կկախեն արևի տակ չորանալու։

— Այժմ լսեցեք, թե ինչ կպատասխանեմ ձեր մեղադրանքներին։ Յես կպատասխանեմ կետ առ կետ։ Դուք ասում եք, վոր յես ամբողջ գործը տապալեցի։ Բայց չե՞ վոր դուք գիտեք, թե յես ինչ եմի ուզում։ Յեթե դուք ինձ լսեիք, մենք բոլորս այժմ վողջ ու անվնաս կգտնվեինք «Իսպանոլայի» վրա, իսկ վոսկին կլիներ նավի ամբարում, յերդվում եմ վորոտով։ Իսկ ո՞վ խանգարեց ինձ։ Ո՞վ եր շտապեցնում և հորդորում ինձ— իր որինական նավապետին։ Ո՞վ ինձ կղզին յեկած հենց առաջին որը սև նշան ուղարկեց և այս սատանայական պարն սկսեց։ Հրաշալի պար է— յես պարում եմ ձեզ հետ միասին— այդ պարի մեջ կան նույն վոտնձգությունները, ինչ վոր ունեն Լոնդոնի հանգույցների մեջ տարուբերվող պարողները։ Իսկ ո՞վ սկսեց այս բոլորը, Ենդերսոնը և Գենդսը, և դու, Ջորջ Մերրի։ Այդ խռովարարներից դու յես միայն կենդանի մնացել։ Յեվ դու հանդգնություն ունես նավապետ դառնալու։ Դու, վոր կործանեցիր համարյա մեր վողջ հերոսախումբը։ Վոչչդրանից բան չի դուրս գա։

Սիլվերը լռեց։ Ջորջի և մյուս ավազակների դեմքի արտահայտությունից յես իմացա, վոր նրա խոսքերն իզուր չանցան։

— Սա առաջին կետը,— բացականչեց նա, քրտնած ճակատը սրբելով, վորովհետև այնպես բորբոքված եր խոսում, վոր պատերը դողում էին։— Յերդվում եմ, վոր ինձ համար նողկալի յե ձեզ հետ խոսելը։ Դուք վոչ դատողություն ունեք և վոչ էլ հիշողություն։ Զարմանում եմ, թե ինչպես են ձեր մայրերը թողել, վոր դուք ծով դուրս գաք։ Ծով։ Այդ դուք եք հաջողության ջենտլմենները։ Ավելի լավ է, վոր դուք դերձակ դառնայիք։

— Բավական է հայհոյես,— ասաց Մորգանը։— Պատասխանիր մնացած մեղադրանքներին։

— Ա՜, մյուսներին,— գոչեց Սիլվերը։— Մնացածներն էլ լավ են։ Դուք ասում եք, վոր բանը պրծած է։ Յերդվում եմ վորոտով, դուք մինչև անգամ չեք կասկածում, ինչպես վատ է։ Մենք այնքան մոտ ենք կախաղանին, վոր իմ պարանոցն արդեն փայտանում է հանգույցից։ Տեսնում եմ, թե ինչպես ենք տատանվում յերկաթե շղթաների մեջ և մեզ վրա ագռավները են պտտվում։ Մակընթացության ժամանակ ծովագնացները մեզ մատով ցույց են տալիս։ «Սա ով է», հարցնում է մեկը։ «Ջոն Սիլվերն է։ Յես նրան լավ եմ ճանաչում», պատասխանում է մյուսը։ Քամին ճոճում է կախվածներին և տարածում շղթաների զնգոցը։ Ահա թե ինչ է սպասում մեզ, Ջորջ Մերրի, Գենդսի, Ենդերսոնի և մյուս ապուշների պատճառով։ Հետո, սատանան տանի, ձեզ հետաքրքրում է չորրորդ կետը— ահա այս տղան։ Նա պատանդ է, հասկանում եք։ Միթե մենք պետք է վոչնչացնենք պատանդին։ Նա, գուցե, մեր վերջին հույսն է։ Սպանենք այս տղային։ Վոչ, սիրելիներս, յես նրան չեմ սպանի։ Ասենք, յես դեռ յերրորդ կետին չեմ պատասխանել։ Լավ, համեցեք, կպատասխանեմ։ Գուցե դուք բանի տեղ չեք դնում բժշկի ամենորյա այցելությունները, մի բժշկի, վոր ավարտել է կոլեջը։ Քո ծակ դանդի համար, Ջոն, էլ բժիշկ պետք չէ։ Իսկ քեզ, Ջորջ Մերրի, վոր վեց ժամը մի անգամ չերմախտը թափ է տալիս, վոր աչքերդ կիտրոնի նման

դեղին է, բժշկվել չես ուզում։ Գուցե դուք չգիտեք, վոր այս-
տեղ շուտով, ոգնելու համար, յերկրորդ նավ ե գալու. սակայն
նավը շուտով կգա։ Ահա թե ձեզ յերբ է պետք գալու պա-
տանդը։ Հետո— յերկրորդ կետը, դուք ինձ մեղադրում եք, վոր
յես պայման եմ կապել։ Բայց չե՞ վոր դուք ինքներդ ծնկաչոք
աղերսում եյիք, վոր պայման կապեմ։ Դուք ծնկաչոք քարշ
եյիք գալիս, դուք փոքրոգություն եյիք անում, դուք վախե-
նում եյիք սովից մեռնելուց։ Բայց այս բոլորը դատարկ
բաներ են։ Տեսեք, թե ինչու համար յես պայման կապեցի։

Ցեվ նա հատակի վրա մի թերթ թուղթ գցեց։ Ցես
իսկույն ճանաչեցի։ Դա այն քարտեզն եր, դեղին թղթի վրա,
յերեք կարմիր խաչերով, վորը մի ժամանակ յես գտա Բիլլի
Բոնսի սնդուկի տակին։ Ցես վոչ մի կերպ չկարողացա գլխի
ընկնել, թե այդ քարտեզը բժիշկն ինչու յե ավել Սիլվերին։

Այս քարտեզը ավազակներին ավելի խիստ ապշեցրեց,
քան ինձ։ Նրանք ընկան քարտեզի վրա, ինչպես կատուները
մկան վրա։ Նրանք հայհոյանքով, աղմուկով և մանկական ծի-
ծաղով իրարից խլելում եյին քարտեզը։ Կարելի յեր կարծել,
վոր արդեն վոչ թե միայն վոսկի եյին ձեռնահարում մատնե-
րով, այլև ամբողջովին տանում եյին նավով։

— Այո՛,— ասաց մեկը,— սա Ֆլինտի ստորագրությունն է,
կարող եք չկասկածել։ Դ. Ֆ. և ներքևում՝ վոլորագիծ։ Նա միշտ
այդպես եր ստորագրում։

— Այդ բոլորը լավ, բայց մենք ինչպես կտանենք գանձը,
յեթե նավ չունենք։

Սիլվերը հանկարծ, ձեռքով մեջքը բռնած, վոտքի յելավ։

— Նախազգուշացնում եմ քեզ վերջին անգամ, Ջորջ,— գո-
ռաց նա։— Մի խոսք ևս, և յես կկովեմ քեզ հետ։ Ինչպե՞ս։
Ցես ինչ գիտեմ, ինչպես։ Այդ դու պետք է ինձ ասես, դու և
մյուսները, վորոնք նավը ձեռքից բաց թողին։ Բայց վո՛չ, յես
քեզանից խելոք խոսք չեմ սպասում— քո խելքն ուտիճի խելք
է։ Իսկ քաղաքավարի խոսելու դու ընդունակ ես, կամ յես քեզ
քաղաքավարություն կսովորեցնեմ։

— Ճիշտ է,— ասաց Ծերունի Մորգանը։

— Բա ինչ։ Իհարկե, ճիշտ է,— շարունակեց նավի խոհա-
բարը։— Դու կորցրիր մեր նավը։ Ցես ձեզ համար դանձ գտա։
Ո՞վ է մեզանից ավելի լավ։ Բայց յերդվում եմ, վոր այլևս չեմ

ուզում ձեզ մոտ նավապետ լինել։ Ընտրեցեք, ում ուզում եք։
Ցես ինչ վոր արեցի, բավական է։

— Սիլվերին,— գոռացին բոլորը։— Ազդրը, հավիտյանս
հավիտենից։ Ազդրին՝ նավապետ։

— Ահա թե ինչ յերգիցիք դուք այժմ,— բացականչեց խո-
հարարը։— Ջորջ, սիրելի բարեկամս, դու պետք է ուրիշ դեպքի
սպասես։ Բախտավոր ես, վոր յես անհիշաչար եմ։ Իմ սիրտն
անվոխակալ է։ Բա այս սեվ նշանն ինչ անենք, բարեկամներ։
Այժմ կարծես թե ել բանի պետք չե։ Դիկն իր հոգին կորցրեց,
ավետարանն իզուր տեղը փչացրեց։

— Գուցե պետք դա յերդվելու համար,— հարցրեց Դիկը,
վորին, ըստ յերևույթին, իր սրբապղծությունը չափազանց
անհանգստացրել եր։

— Ավետարան կտրված յերեսով,— սարսափեց Սիլվերը։
— Վո՛չ մի կերպ։ Նրա մեջ յերգարանից ավելի սրբություն չկա։

— Այնուամենայնիվ ավելի լավ է պահել,— ասաց Դիկը։

— Իսկ այս, Ջիմ, վերցրու հիշատակի համար,— ասաց Սիլ-
վերը, տալով սեվ նշանը։

Սեվ նշանը կրոնի*) չափ եր, մի յերեսն սպիտակ— Դիկը
կտրել եր ավետարանի ամենավերջին յերեսը։ Մյուս յերեսին
տպված եր յերկու տող վոտանավոր «Հայտնությունից»։ Հե-
տագայում ինձ հաջողվեց կարդալ յերկու բառ, «շներ ու մար-
դասպաններ»։ Վոտանավոր տպված յերեսը մրոտ եր, վորն
արդեն սկսել եր կեղտոտել իմ մատները։ Իսկ մաքուր յերեսին
անկյունաձև գրված եր. «Պաշտոնական և արված»։ Այժմ այդ
սեվ նշանն ընկած է իմ առջև։ Սակայն անկյունաձև մա-
կագրությունից մնացել է միայն կարծես յեղունգով արված
քերծվածքի հետքեր։

Այսպես վերջացան այդ գիշերվա դեպքերը։ Ռում խմելուց
հետո, մենք պատկեցինք քնելու։ Վրեժ լուծելու համար, Սիլ-
վերը Ջորջ Մերրիին նշանակեց ժամապահ, սպառնալով մահով,
յեթե վորևե բան լավ չի տեսնի։

Ցես յերկար ժամանակ աչքս կպցնել չեյի կարողանում։
Մտածում եյի այն մարդու մասին, վորին սպանեցի, փրկելով
իմ կյանքը։ Մտածում եյի այն նշանավոր խաղի մասին, վոր
խաղում եր Սիլվերը, մի ձեռքով պահելով ավազակների խումբը,

*) Կրոնն անգլիական արծաթե փող է, արժե մոտ յերկու ռուբլի։

մյուս ձեռքով բռնելով ամեն տեսակի կարելի ու անկարելի միջոցներ, որ փրկի իր աննշան կյանքը։ Նա հանդարտ քնած եր և խռմփում եր։ Բայց այնուամենայնիվ խղճալուց իմ սիրտը ճմլվում եր, յերբ նայում եյի նրան և մտածում եյի, թե ինչպիսի փորձանքներով է շրջապատված նա և ինչ խայտառակ մահ է սպասում նրան։

ԳԼՈՒԽ XXX

ԱԶՆԻՎ ԽՈՍՔՈՎ

Ինձ արթնացրեց,— ավելի ճիշտ, մեզ բոլորիս արթնացրեց, որովհետև վեր թռավ մինչև անգամ ժամապահը, որ ննջում եր դռան մոտ,— մի պարզ, բարձր ձայն, որ լսվեց անտառի յեզրից։

— Ե՛յ, կայազոր, վեր կաց։ Բժիշկը գալիս է։

Իսկապես բժիշկն եր։ Նրա ձայնը լսելով, յես ուրախացա, բայց իմ ուրախությանը խառնված եյին հուզմունք և ամոթանք։ Յես հիշեցի իմ դասալքությունը, այն դավաճանությունը, որ յես կատարեցի։ Յեվ այդ բոլորն ինչ բանի հասցրեց։ Նրան, որ յես գերի յեմ ավազակների մոտ, որոնք ամեն րոպե կարող են ինձ կյանքից զրկել։ Յես ամաչում եյի նայել բժշկի յերեսին։ Բժիշկը, յերևի, վեր եր կացել դեռ լույսը բացվելուց առաջ, որովհետև որը նոր եր սկսվում։ Յես վազեցի հրակնատի մոտ և նայեցի։ Նա կանգնած եր ներքևում, մինչև ծնկները նողացող մառախուղի մեջ, ինչպես մի ժամանակ կանգնած եր հենց այս ամբարի մոտ Սիլվերը։

— Բարեվ, բժիշկ։ Բարի լույս, պարոն,— բացականչեց Սիլվերը, սիրալիր ժպիտով։— Ի՞նչ շուտ եք վեր կացել։ Վաղ պարթնող թռչունը շատ ուտելիք կգտնի, ինչպես ասում է առակը։ Ջորջ, սթափվիր, որդիս, և ողնիր բժիշկ Լիվսիին, որ նավը բարձրանա։ Ամեն ինչ կարգին է, բժիշկ։ Ձեր բուժվորները առաջվանից ավելի ուրախ և կայտառ են։

Այսպես նա զվարճախոսում եր, բլրի գագաթին կանգնած, հենակը կոնատակին, մի ձեռքով հենված պատին, միանգամայն առաջվա Ջոնը և՛ ձայնով, և՛ բռնելակերպով, և՛ ծիծաղով։

— Մեզ մոտ անակնկալ բան կա ձեզ համար, պարոն,— շարունակեց նա։— Մի փոքրիկ յեկվոր, հա, հա։ Նոր կենվոր, այն էլ ինչպիսի՜ կենվոր։ Արջամկան պես է քնած, ասված վկա։ Ամբողջ գիշերը քնած եր Ջոնի հետ կողք-կողքի։

Այդ ժամանակ բժիշկ Լիվսին անցավ ցցապատից և մոտեցավ խոհարարին։ Յեվ յես նկատեցի, թե ինչպես նրա ձայնը դողաց, յերբ հարցրեց։

— Մթթե Զիմմե է։

— Նա ինքը — պատասխանեց Սիլվերը։

Բժիշկը հանկարծ կանգ առավ։ Կարծես թե տեղից շարժվելու հնարավորություն չուներ։

— Լավ,— ասաց նա վերջապես։— Առաջ գործ, հետո ուրախություն։ Կարծեմ առակն այսպես է։ Առաջ հիվանդներին նայենք։

Բժիշկը մտավ տուն և սառնությամբ ինձ գլխով անելով, զբաղվեց իր հիվանդներով։ Նա իրեն պահում եր հանդարտ ու հասարակ կերպով, թեև յես չեյի կարող չգիտենալ, որ նրա կյանքն այս նենգ մարդկանց մեջ մազից է կախված։ Նա զրուցում եր բուժվորների հետ այնպես, որ կարծես թե հրավիրել են հիվանդի մոտ, անգլիական խաղաղ ընտանիքում։ Ինձ թվաց, որ նրա վերաբերմունքը դեպի ծովահենները, նրանց վրա ուժեղ ազդեցություն եր թողնում։ Նրանք այնպես եյին իրենց պահում, որ կարծես թե վոչինչ չի պատահել, կարծես թե նա առաջվա նման նավի բժիշկ է և իրենք առաջվա պես փութաջան և անձնվեր նավաստիներ։

— Դու առողջանում ես, բարեկամս,— ասաց նա գլուխը փաթաթված մարդուն։— Քո տեղը, յեթե ուրիշը լիներ, չեր ապրի։ Բայց քո գլուխը չուգունի կաթսայի պես պինդ է։ Իսկ ինչպես են քո գործերը, Ջորջ։ Դու ամբողջովին դեղին ես։ Քո փայծաղը կարգին չե։ Դեղ ընդունել ես։ Ասացեք, նա դեղ ընդունել է։

— Ինչպես չե, պարոն, ինչպես չե։ Ընդունել է, պարոն,— ձայն տվավ Մորգանը։

— Այն ժամանակից, յերբ յես բանդիտների, կամ, ավելի ճիշտ, բանտի բժիշկ դարձա,— ասաց բժիշկ Լիվսին բարեսիրտ ժպիտով,— յես իմ պարտականությունն եմ համարում պահել ձեզ անվնաս, հանդուցյի համար։

Ավազակներն իրար յերեսի նայեցին, բայց լռությամբ կուլ տվին բժշկի կատակը։

— Դիկն իրեն վատ է զգում, պարոն,— ասաց մեկը։

— Վա՜ղ,— ասաց բժիշկը։— Դե՛, մի այստեղ յեկ տեսնեմ, Դիկ, լեզուդ ցույց տուր։ Ո՜, յես չեմ զարմանում, վոր նա իրեն վատ է զգում։ Այդպիսի լեզվով կարելի յե վախեցնել և ֆրանսիացիներին։ Նա էլ և սկսել ջերմել։

— Ահա թե ինչ է պատահում այն մարդու հետ, վորը փչացնում է սուրբ գիրքը,— ասաց Մորգանը։

— Պատահում է նրա հետ, վոր իշի նման հիմար է,— առարկեց բժիշկը։— Նրա հետ, ում խելքը պակաս է ու չի տարբերում թարմ ոդը վարակված ոդից, չոր գետինը թունավոր և գարշելի ճահճից։ Դուք բոլորդ էլ վարակվել եք ջերմով, բարեկամներս, և շատ ժամանակ կանցնի, մինչև վոր ազատվեք։ Տեղավորվել ճահճի վրա։ Սիլվեր, դուք ինձ զարմացրիք, ասված վկա։ Դուք այնպիսի հիմար չեք, ինչպես մյուսները, սակայն ամենափոքր հասկացողություն անգամ չունեք թե ինչպես պետք է պահպանել ձեր ստորադրյալների առողջությունը։

— Շատ լավ,— ասաց բժիշկը, նայելով իր բուժվորներին և մի քանի բժշկական խորհուրդներ տալով, վոր նրանք լսեցին այնպիսի հեզությամբ, վոր կարծես արյունարբու ավազակներ չլինեն, այլ բարեգործական դպրոցի սաներ։— Այսոր բավական է։ Իսկ հիմա, յեթե թույլ կտաք, յես կուզենայի զրուցել այս պատանու հետ։— Ցեվ նա անփույթ կերպով ինձ գլխով արավ։

Զորջ Մերրին կանգնած եր դռան մոտ և, կնճռոտվելով, ինչ վոր դառը դեղ եր ընդունում։ Լսելով բժշկի խնդիրը, նա ամբողջովին կարմրեց, դարձավ դեպի նա և գոռաց.

— Վա՜ղ մի կերպ։

Ցեվ վատ հայհոյանքներ տվավ։

Սիլվերը ձեռքը խփեց տակառին։

— Լռի՛ր,— մռնչաց նա և կատաղած առյուծի նման նայեց չորս կողմը։— Բժիշկ, շարունակեց նա քաղաքավարի կերպով,— յես համոզված եյի, վոր դուք կցանկանաք խոսել Ջիմի հետ, վորովհետև գիտեյի, վոր այս տղան ձեր սրտովն է։ Մենք բոլորս այնպես շնորհակալ ենք ձեզանից, մենք, ինչպես տեսնում եք, այնպես վստահում ենք ձեզ, մենք ձեր դեղերն ողու պես խմում ենք։ Յես իսկույն ամեն բան կանեմ։ Գոկինս, դու կարող ես ինձ ջենտլմենի աղնիվ խոսք տալ,— վորովհետև, թեև քո ծնողներն աղքատ են, բայց դու ջենտլմեն ես,— վոր վոչ մի տեղ չես փախչի։

Ցեվ հոժարությամբ նրան աղնիվ խոսք տվի։

— Այդ դեպքում, բժիշկ,— ասաց Սիլվերը,— դուք ցցապատից անցեք։ Ցերը վոր անցնեք, յես Ջիմին ներքև կբերեմ։ Դուք կլինեք ցցապատի մի կողմում, իսկ նա՝ մյուս կողմում և այդ հանդամանքը չի խանգարի ձեզ, վոր սրտանց խոսեք։ Ցտեսություն, պարոն։ Բարևեցեք կալվածատիրոջը և նավապետ Սմոլեթին։

Հենց վոր բժիշկը դուրս յեկավ, ծովահենների զայրույթը, վոր պահում եյին Սիլվերի յերկյուղից, պայթեց։ Նրանք մեղադրում եյին Սիլվերին, վոր նա կրկնակի խաղ է խաղում, վոր նա ուզում է իրեն պաշտպանել, իսկ մյուսներին մատնել։ Մի խոսքով, նրանք իմացան Սիլվերի մտադրությունը։ Ցես չեյի կարծում, վոր նա այս անգամ կարող է դուրս պրծնել։ Բայց նա բոլորից յերկու անգամ խելոք եր և նրա յերեկվա հաղթությունը մեծ իշխանություն եր տվել։ Նա նրանց հիմար անվանեց, հայտնեց, վոր առանց իմ և բժշկի խոսակցության յոլա գնալ չի կարելի, ցույց եր տալիս նրանց քարտեղը և հարցնում. միթե նրանք ուզում են խախտել պայմանն այն որը, յերբ կարելի յե սկսել գանձերի վորոնումը։

— Վա՜յ, յերդվում եմ վորոտով,— գոռում եր նա։— Կգա ժամանակ, վոր մենք էլ նրանց քիթը կքաշենք, բայց մինչև այն ժամանակը յես պետք է փաղաքշեմ այդ բժշկին, մինչև անգամ յեթե ստիպված լինեմ նրա կոշիկները ոսոմով մաքրել։

Նա հրամայեց խարույկ վառել, հենակը վերցրեց, ձեռքը դրեց ուսիս և կաղալով ցած իջավ, ծովահեններին շփոթության մեջ թողնելով։ Զգացվում եր, վոր նրա փաստերը նրանց վրա այնքան էլ չազդեցին։

— Մի՛ շտապիր, բարեկամս, մի՛ շտապիր,— ասաց նա ինձ։— Նրանք միանգամից կհարձակվեն մեզ վրա, յեթե նկատեն, վոր յերկուսս էլ շտապում ենք։

Մենք դանդաղ իջանք ավազոտ զառիվայրով այնտեղ, վորտեղ ցցապատի յետևին սպասում եր բժիշկը։ Սիլվերը կանգ առավ։

— Թող Ջիմը պատմի ձեզ, բժիշկ, թե ինչպես յես աղատեցի նրա կյանքը, թեև դրա համար քիչ մնաց, վոր նավապետի կոչումից զրկվեմ,— ասաց նա։— Ա՜խ, բժիշկ, յերբ մարդ իր նավակը վարում է դեպի կործանումը, յերբ նա մահվան հետ գիր ու արծիվ է խաղում, նա ուզում է թեկուզ մի ամենափոքր բարի խոսք լսել։ Նկատի ունեցեք, վոր խոսքս վերաբերում է

վոչ թե միայն իմ, այլև այս տղայի կյանքին։ Ցերդվեցնում եմ ձեզ, բժիշկ, խղճացեք ինձ, գոնե հույսի մի ստվեր տվեք։

Այժմ, ընկերներից հեռանալով և մեջքը դեպի ամբոցը կանգնած լինելով, Սիլվերը միանգամից ուրիշ մարդ դարձավ։ Նրա թշերը ներս ընկան, ձայնը դողում եր։ Իսկական մեռել դարձավ։

— Մի՞թե դուք վախենում եք, Ջոն,— հարցրեց բժիշկ Լիվսին։

— Բժիշկ, յես վախկոտ չեմ։ Վոչ, յես մինչև անգամ այնքան ել վախկոտ չեմ,— և նա ցույց տվավ մատի ծայրը,— սակայն, ճիշտն ասեմ, յերբ մտածում եմ կախաղանի մասին, մարմնիս մեջ դող ե ընկնում։ Դուք բարի և ճշմարիտ մարդ եք։ Ավելի լավը կյանքիս մեջ չեմ տեսել։ Դուք չմոռանաք իմ արած լավությունները, թեև, իհարկե, չարությունն ել չեք մոռանա։ Տեսնում եք, յես մի կողմ եմ քաշվում և ձեզ Ջիմի հետ մենակ եմ թողնում։ Այս ել դուք կհաշվեք իբրև լավություն, այնպես չե՞։

Նա մի կողմ քաշվեց և իսկ և իսկ այնքան տարածություն,վոր մեզ չլսի, նստեց կոճղի վրա և սկսեց շվշվացնել։ Նա այս ու այն կողմն եր դառնում, նայում եր յերբեմն ինձ։ յերբեմն բժշկին, յերբեմն անդսպելի ծովահեններին, վորոնք ավազի վրա փռված, խարույկ եյին վառում, յերբեմն ել տանից բերում եյին խոզի միս և հաց նախաճաշի համար։

— Ցեվ այդպես, Ջիմ,— տխուր ասաց բժիշկը,— դու այստեղ ես։ Ինչ վոր ցանես, այն կհնձես, տղաս։ Ցես չեմ կարողանում քեզ հայհոյել։ Միայն մի բան կասեմ. յեթե նավապետ Սմոլեթան առողջ լիներ, դու չեյիր համարձակվի փախչել մեզանից։ Դու անաղնիվ վարվեցիր, դու գնացիր, յերբ նա հիվանդ եր և քեզ չկարողացավ ուժով պահել։

Պետք ե խոստովանեմ, վոր այս խոսքերը լսելուց հետո յես լաց յեղա։

— Բժիշկ,— ասացեի յես,— խնդրում եմ ինձ չհայհոյեք։ Ցես ինքս ինձ շատ եմ հայհոյել։ Իմ կյանքը մագից ե կախված։ Ցես այժմ ել մեռան կլինեյի, յեթե Սիլվերն ինձ չպաշտպաներ։ Մահից յես չեմ վախենում, բժիշկ, յես միայն տանջանքից եմ վախենում։ Ցեթե նրանք սկսեն ինձ տանջել...

— Ջիմ,— ընդհատեց բժիշկը և նրա ձայնը քիչ փոխվեց՝

— Ջիմ, այդ յես չեմ կարող թույլ տալ։ Ցցապատն անցիր, փախչենք։

— Բժիշկ,— ասացի յես,— չե՞ վոր յես ազնիվ խոսք եմ տվել։

— Գիտեմ, գիտեմ,— բացականչեց նա։— Ի՞նչ արած, Ջիմ Այդ մեղքը յես ինձ վրա կվերցնեմ։ Չե՞ վոր յես չեմ կարող քեզ այստեղ անողնական թողնել։ Թռիր։ Մի վոստյուն, և դու ազատության մեջ կլինես։ Քարայծի նման կսլանանք։

— Վոչ,— պատասխանեցի յես։— Չե՞ վոր դուք ել այդպես չեյիք վարվի։ Վոչ դուք, վոչ կալվածատերը և վոչ նավապետը տված խոսքը չեյիք դրժի։ Սիլվերն ինձ վստահում ե։ Ցես նրան ազնիվ խոսք եմ տվել։ Բայց, բժիշկ, դուք ինձ մինչև վերջ չլսեցիք։ Ցեթե նրանք սկսեն ինձ տանջել, յես չեմ դիմանա և կասեմ, թե վորտեղ եմ թաղցրել նավը։ Իմ գործը լավ գնաց, բժիշկ, բախտն ինձ ժպտաց և յես նրանց նավը տարա։ Այժմ նավը գտնվում ե Հյուսիսային ծովախորշի հարավային ափին։ Մակընթացության ժամանակ կարելի յե այն տեղից դուրս բերել։

— Նա՞վը,— բացականչեց բժիշկը։

Ցեվ յես մի քանի խոսքով պատմեցի նրան ինչ որ պատահել եր։ Նա լուռ լսեց ինձ։

— Դա ճակատագիր ե,— նկատեց նա, յերբ վերջացրի։— Ամեն անգամ դու ազատում ես մեզ մահից։ Ցեվ միթե դու կարծում ես, վոր մենք կթողնենք, վոր դու այստեղ դանակի տակ մեռնես։ Այդ վատ պարգև կլինի այն բոլորի համար, վոր դու մեզ համար արել ես, տղաս։ Դու հայտնաբերեցիր դավադրությունը։ Դու դարձ Բեն Գանին։ Ավելի լավ բան քո ամբողջ կյանքում չես անի, յեթե հարյուր տարի ել ապրելու լինես։ Այդ Բեն Գանը ոչ, ոչ, ոչ։ Ի դեպ Բեն Գանի մասին... Սիլվեր,— գոչեց նա։— Սիլվեր, յես ուզում եմ ձեզ խորհուրդ տալ,— շարունակեց նա, յերբ խոհարարը մոտեցավ,— մի շտապեք վորոնել գանձը։

— Ցես, պարոն, բոլոր ուժով պետք ե աշխատեմ ձգձգել այդ գործը,— ասաց Սիլվերը։— Բայց յերդվում եմ, վոր միայն գանձի վորոնումով կարող եմ փրկել իմ և այս դժբախտ տղայի կյանքը։

— Լավ,Սիլվեր,—ասաց բժիշկը,—յեթե այդպես ե, վորո-

նեցեք։ Բայց յես ձեզ մի խորհուրդ եմ կտամ. գանձին մոտենալիս աղմուկից խուսափեցեք։

— Պարոն,— ասաց Սիլվերը,— դուք ինձ ասացիք կամ շատ բան, կամ չափազանց քիչ։ Ի՞նչ եք ուզում։ Ինչո՞ւ թողիք ամբոցը։ Ինչո՞ւ տվիք ինձ քարտեզը Յես այդ չհասկացա յեվ այժմս էլ չեմ հասկանում։ Յես կուրորեն կատարեցի այն բոլորը, ինչ վոր դուք պահանջեցիք, թեև մի փոքրիկ հույս անգամ չտվիք։ Իսկ այժմ նոր գաղտնիքներ։ Յեթե այդ գաղտնիքներն էլ բաց չանեք, էլ ինչպե՞ս կարող եմ ձեզ ոգնել։

— Վո՛չ,— մտախոհ պատասխանեց բժիշկը,— յես իրավունք չունեմ այդպիսի գործերի մասին ձեզ տեղյակ պահել։ Դա իմ գաղտնիքը չե, Սիլվեր։ Այլապես, յերդվում եմ իմ կեղծ ծամով, վոր յես բոլորը կպատմեյի ձեզ։ Յեթե յես մի խոսք անգամ ասեմ, նավապետը խիստ կպատժի ինձ։ Այնուամենայնիվ յես ձեզ մի փոքրիկ հույս կտամ, Սիլվեր. յեթե յես ու դուք դուրս պրծնենք այս գայլի փոսից, յես կաշխատեմ ձեզ փրկել կախաղանից։

Սիլվերի դեմքը վայրկենապես փայլեց։

— Հաբաղատ մայրս էլ չեր կարող դրանից լավ մխիթարել ինձ,— բացականչեց նա։

— Սա առաջինը, ինչ վոր յես կարող եմ ասել ձեզ,— ավելացրեց բժիշկը։— Յեվ յերկրորդ. այս տղային պահեցեք ձեզ մոտ և, յեթե հարկավոր լինի ոգնել, կանչեցեք ինձ։ Յես կաշխատեմ ձեզ ազատել և այն ժամանակ դուք կտեսնեք, վոր իմ ասածները դատարկ խոսքեր չեն... Մնաս բարով, Ջիմ։

Ցցապատի միջից բժիշկ Լիվսին սեղմեց իմ ձեռքը, Սիլվերին գլխով արավ և արագ քայլերով ուղղվեց դեպի անտառը։

ԳԼՈՒԽ XXXI

ԳԱՆՁԻ ՎՈՐՈՆՈՒՄԸ։ ՆԱՎԱՊԵՏ ՖԼԻՆՏԻ ՅՈՒՅԱՍԱԿԸ

— Ջիմ,— ասաց Սիլվերը, յերբ մենք մենակ մնացինք,— յես քո կյանքն ազատեցի, դու՝ իմը։ Յեվ յես այդ յերբեք չեմ մոռանա։ Չե՞ վոր յես տեսա, թե ինչպես բժիշկը համոզում եր քեզ փախչել։ Թեև աչքի մի ծայրով, բայց տեսա։ Յես քո պատասխանը չլսեցի, բայց տեսա, վոր դու հրաժարվեցիր։ Այդ ես չեմ մոռանա, Ջիմ։ Այսոր առաջին անգամ, բերդի վրա անհաջող գրոհից հետո, իմ մեջ հույս փայլեց։ Յեվ ելի քո պատճառով։ Գանձերի վորոնումը, Ջիմ, մենք կսկսենք կուրորեն և այդ ինձ դուր չի գալիս։ Բայց մենք ուժեղ կերպով կպաշտպանենք իրար և, ինչ էլ վոր լինի, կփրկենք մեր պարանոցները։

Ծովահեններից մեկը, վոր զբաղված եր խարույկի մոտ, ձայն տվեց, թե նախաճաշը պատրաստ է։ Մենք նստեցինք ավազի վրա, խարույկի մոտ և սկսեցինք տապակած աղած միս ուտել։ Ավազակներն այնպիսի խարույկ եյին վառել, վոր կարելի յեր յեզ տապակել։ Շուտով խարույկն այնպես բոցավառվեց, վոր նրան կարելի յեր մոտենալ— այն էլ զգուշությամբ — միայն այն կողմից, վորտեղից քամի յեր փչում։ Այդպես էլ շռայլությամբ եյին վերաբերվում ծովահենները դեպի մթերքը. անչափ աղած միս եյին ուտում, առնվազն յերեք անգամ ավելի, քան հարկավոր եր։ Նրանցից մեկը հիմարաբար ծիծաղելով, կրակի մեջ շպրտեց մնացած կտորները։ Կրակն ավելի պայծառ բոցավառվեց, կլանելով այդ արտասովոր վառելիքը։ Կյանքումս յերբեք չեյի տեսել այդպիսի մարդիկ, վորոնք այդ աստիճան անհոգ վերաբերմունք ունենային դեպի վաղվա որը։ Ամեն բան անում եյին անփութությամբ— անմիտ կերպով վոչնչացնում եյին մթերքը, ժամապահ կանգնած ժամանակ քնում եյին և այլն։ Առհասարակ նրանք ընդունակ եյին կարճատև բռնկումների, իսկ յերկարատև ռազմական գործողությունների համար անընդունակ եյին։

Մինչև անգամ Սիլվերը, վորը իր թութակի հետ նստած եր մի կողմում, այդ վատնումի համար վոչ մի նկատողություն չարավ։ Այդ բանը շատ զարմացրեց ինձ, վորովհետև յես գիտեյի, թե ինչպիսի զգույշ և հեռատես մարդ է նա։

— Այո՛, բարեկամներս,— ասաց նա,— բախտավոր եք, վոր Աղը ունեք, վորն ամեն ժամանակ մտածում է ձեր մասին։ Յես տեղեկացել եմ այն, ինչ վոր ինձ հարկավոր է։ Նավը նրանց մոտ է։ Առայժմ չգիտեմ, թե վորտեղ են թաղցրել։ Բայց յերբ մենք գանձ կուենենանք, կվորոնենք վողջ կղզին և նորից նավը ձեռք կգցենք. համենայն դեպս մենք ուժեղ ենք նրանով, վոր նավակներ ունենք։

Այդպես եր ճառում նա, տաք խոզի միսը բերանը լցնելով։ Նա նրանց հույս եր տալիս, նա վերականգնում եր իր խախտված հեղինակությունը և միաժամանակ— ինչպես ինձ թվաց— աշխուժացնում եր ինքն իրեն։

—Իսկ մեր պատանդը,— շարունակեց նա,— վերջին անգամ տեսակցություն ունեցավ այն մարդկանց հետ, որոնք նրա սրտի համար սիրելի չեն։ Նրա խոսակցությունից չես իմացա այն բոլորը, ինչ որ ինձ հարկավոր եր ։ դրա համար նրանից շատ շնորհակալ եմ։ Իսկ այժմ— վերջացավ։ Ցերբ կգնանք գանձը գտնելու, չես նրան պարանով կկապեմ և չեռևից կտանեմ։ Նա մեզ համար վոսկուց թանկ է և մենք նրան կենդանի կպահենք. որևէ դեպքում պետք կգա։ Իսկ ցերբ մենք և՛ նավ կունենանք, և՛ գանձ, ցերբ մենք խմբով ուրախ ճանապարհ կընկնենք դեպի ծովը, այն ժամանակ մենք կխոսենք պարոն Գոկինսի հետ ինչպես պետքն է, և նա կտանա իր բաժինը, ըստ իր արժանիքի։

Զարմանալի չէ, որ նրանք չափազանց ուրախացան, ինչ վերաբերում է ինձ, ապա չես չափազանց հուսահատվեցի և վհատվեցի։ Ցեթե Սիլվերի պլանը, որի մասին հայտնեց, կատարվի, այդ կրկնակի դավաճանը վոչ մի բոպե չի տատանվի։ Նա խաղում է չերկու ճակատում և, անկասկած, աղատությունը և ծովահենի հարատությունը կգերադասի հանգույցից աղատվելու այն թույլ հույսից, որ մենք կարող ենք առաջարկել նրան։

Իսկ չեթե հանգամանքները կստիպեն Սիլվերին պահել բժշկին տված խոսքը, ինձ, միևնույն է, մահվան վտանգ է սպառնում։ Նրա ընկերների կասկածներն ամեն բոպե կարող են համոզմունք դառնալ։ Այն ժամանակ չես ել, նա ել պետք է պաշտպանենք մեր կյանքը, նա— կաղ, չես՝ չերեխա, հինգ հսկա նավաստիներից։

Այս չերկու վտանգին ավելացրեք նաև այն գաղտնիքը, որով դեռևս ծածկված եչին իմ բարեկամների արարքները։ Ինչու՞ նրանք հեռացան ամրոցից։ Ինչու՞ նրանք տվին քարտեզը։ Ի՞նչ են նշանակում այն խոսքերը, որ ասաց բժիշկը Սիլվերին. «Գանձը վորոնելիս աղմուկից խուսափեցեք»։ Տարորինակ չէ՞ր, որ նախաճաշն այնքան ել համեղ չթվաց և չես ծանր սրտով քարշ եչի գալիս ավազակների չեռևից, ցերբ գնում եչին գանձը գտնելու։

Մենք բավականի տարորինակ տեսարան եչինք ներկայացնում— բոլորն ել նավաստու կեղտոտ բաճկոն հագած, բոլորը, բացի ինձանից, մինչև ատամները զինված։ Սիլվերը չերկու հրացան եր քաշ տալիս. մեկը մեջքին, մչուս՝ կրծքին։ Թուրը խրել եր գոտկի մեջ։ Իր լայնափեշ հագուստի չուրանքանչչյուր գրպանում մի-մի ատրճանակ եր դրել։ Այդ բոլորը չրացնելու համար, նրա ուսին նստած եր Նավապետ Ֆլինտը, վորն առանց լռելու արտասանում եր զանազան ծովային անկապ խոսքեր։ Իմ գոտկատեղից ել պարան եչին կապել և չես հուլ— հնազանդ քարշ եչի գալիս խոհարարի չետևից։ Պարանի ծայրը նա բռնում եր չերբեմն ազատ ձեռքով, չերբեմն ատամներով։ Ինձ տանում եչին վորպես վարժեցրած արջ։

Ամեն մեկը մի վորևե բան եր տանում. վոմանք բահեր ու չերկաթե նիգեր (ավազակները այդ իրերը «Իսպանոլայից» դուրս եչին բերել ամենից առաջ), մչուսները՝ խոզի միս, պաքսիմատ և անգլիական ողի ճաշի համար։ Ցես նկատեցի, վոր բոլոր մթերքներն իսկապես վերցված եչին մեր նկատեցի, վոր բոլոր մթերքներն իսկապես վերցված եչին մեր պահեստից և հասկացա, վոր Սիլվերը չերեկ՝ չերեկոյան ճշմարիտն ասաց։ Ցեթե նա բժշկի հետ վորևե պայման կապած չլիներ, նավը կորցրած ավազակներն սատկված կլինեչին կերակրվել սպանած թռչուններով և վրայից ել ջուր խմել։ Ջուրը նրանք չեչին սիրում, իսկ վորս անել ծովահենները չեն կարողանում։ Ցեվ չեթե նրանք մինչև անգամ ուտելիքի պաչար չեչին պատրաստել, ապա վառոդի պատրաստություն բոլորովին չեչին տեսել։ Այնուամենայնիվ մենք ճանապարհ ընկանք, մինչև անգամ գլուխը ջարդված ծովահենը, վորի համար ավելի ոգտակար կլիներ մնալ անկողնում։ Իրար չետևից շարված մի կերպ քաշ չեկանք մինչև ափը, վորտեղ մեզ սպասում եչին չերկու նավակ։ Մինչև անգամ այդ նավակներն ել վկայում եչին ընդմիշտ հարբած ծովահենների հիմար անհոգության մասին. չերկուսն ել ցեխի մեջ կորած եչին, մեկի նստարանն ել կոտրված եր։ Վորոշվեց ճանապարհ ընկնել չերկու նավակով, վորովհետև մեկը չկորչի։ Ցերկու մասի բաժանվելով, վերջապես մենք հեռացանք ափից։

Ճանապարհին քարտեզի մասին վեճ սկսվեց։ Կարմիր խաչը չափազանց մեծ եր և չեր կարող, իհարկե, տեղի ճիշտ ցուցիչ ծառայել։ Քարտեզի հակառակ կողմում չեղած բացատրությունները համառոտ եչին ու անորոշ։ Ցեթե ընթերցողը հիշում է, գրված եր այսպես.

«Մեծ ծառ» Հեռադիտակի ուսին, ուղղությունը դեպի Հ. Հ. Հ.— Ա.— ից։
Կմախքի կղզին Ա. Հ. Ա. և Ա. վրա։
Տասը ֆուտ»։

Ցեվ այդպես նախ և առաջ պետք եր գտնել մեծ ծառը։ Ուղիղ մեր առջև Խարիսխի կայանը վերջափակվում եր յերկույերեք հարյուր ֆուտ բարձրություն ունեցող սարահարթով, վորը հյուսիսում միանում եր Հեռադիտակի հարավային լանջին, հարավում դառնում եր ժայռոտ բարձրություն, վորը կոչվում եր Բիզանկայմ։ Սարահարթում աճել եյին յերկար ու կարճ սոճիներ։ Թե վորն եր այդ ծառերից նավապետ Ֆլինտը յերկար անվանել, կարելի յեր վորոշել տեղում, կողմնացույցի միջոցով։

Այնուամենայնիվ մենք դեռ ճանապարհի կեսն ել չեյինք անցել, իսկ յուրաքանչյուրն արդեն վորևե ծառ եր ընտրել։ Միայն Յերկարահասակ Ջոնն ուսերը թոթվեց և խորհուրդ տվեց սպասել, մինչև վոր տեղ հասնենք։

Սիլվերի ցուցմունքով, մենք ուժերս խնայում եյինք և շատ ել չեյինք հենվում թիակների վրա և յերկար գնալուց հետո իջանք յերկրորդ գետի գետաբերանին, այն գետի, վորը հոսում է Հեռադիտակի անտառոտ լանջով։ Այնտեղից, թեքվելով դեպի ձախ, մենք սկսեցինք մոտենալ սարահարթին։

Սկզբում մեր առաջխաղացությունը շատ ծանր եր, փափուկ հողի և խիտ ճահճային բուսականության պատճառով։ Բայց կամաց-կամաց վերելքը դարձավ զառիթափ, հողը քարոտ, բուսականությունը բարձր և ցանցառ։ Մենք մոտենում եյինք կղզու լավագույն մասին։ Խոտի փոխարեն գետինը ծածկված եր հոտավետ ծաղկափթիթ թփերով։ Մուսկատի ընկույզի կանաչ թփուտների մեջ, այստեղ ու այնտեղ բարձրանում եյին բարձր սոճիների ծիրանագույն սյուներ, վորոնք լայն ստվեր եյին տալիս։ Մուսկատի հոտը խառնվում եր փշատերևների հոտի հետ։ Ողը թարմ եր ու շարժուն։ Արեգակը փայլում եր, բայց թեթև քամին թարմացնում եր մեր դեմքը։

Ավազակները գնում եյին ցրված և ուրախ-ուրախ իրար ձայն եյին տալիս։ Մեջտեղում, բոլորից չափազանց յետ մնացած, կամաց-կամաց գնում եր Սիլվերը, քաշ տալով ինձ իր յետևից։ Նրա համար դժվար եր բարձրանալ սարալանջի խճով ծածկված ճանապարհով։ Յես հաճախ բռնում եյի նրան, յերբ սայթաքում եր։

Այդպես գնացինք մենք կես մղոնի չափ և արդեն հասել եյինք գագաթին, յերբ հանկարծ ձախ կողմից գնացող մի

ավազակ, սարսափից զառաց։ Նա անընդհատ ճչում էր և բոլորը վազելով մոտեցան նրան։

— Դուք կարծում եք, թե նա պատահաբար գանձի տեղը գտել է,— ասաց Ծերունի Մորգանը, շտապ վազելով մեր մոտից։ — Վոչ, վոչ, մենք դեռ այն ծառին չենք հասել։

Այո, նա գանձը չգտավ։ Բարձր սոճու տակ ընկած էր մի կմախք։ Բարձր խոտերը խիտ ցանցով շրջապատել էին նրան, տեղից շարժելով մանր վոսկորներից մի քանիսը։ Կմախքի վրա տեղ-տեղ մնացել էին փտած հագուստի մնացորդները։ Ցես հավատացած եմ, վոր չկար մեր մեջ մի մարդ, վորի մարմնով սարսուռ չանցներ։

— Սա ծովագնաց է յեղել,— ասաց Ջորջ Մերրին, վորը մյուսներից ավելի համարձակ էր դիտում փտած լաթերը։— Նրա հագուստը ծովային է յեղել։

— Իհարկե ծովագնաց է յեղել,— ասաց Սիլվերը։— Ցենթադրում եմ, վոր դու հույս ունեյիր այստեղ յեպիսկոպոս գտնել։ Այնուամենայնիվ, ինչու այս վոսկորները այսպիսի տարորինակ կերպով են ընկած։

Ճիշտ վոր կմախքն ընկած էր անբնական դիրքով։ Տարորինակ պատահականությամբ (մեղավոր են արդյոք նրան կցող թռչունները, գուցե և դանդաղ աճող խոտերը, վոր նրան չորս կողմից շրջապատել էին) նա պառկած էր ձգված, նետի պես ուղիղ։ Նրա վոտները մի կողմ էին դարձված, իսկ գլխի վրա բարձրացված ձեռքերը մյուս կողմը, ինչպես թռչելու պատրաստ լողորդ։

— Եհե, յես սկսում եմ հասկանալ,— ասաց Սիլվերը։— Սա կողմնացույց է։ Այո, այո։ Ահա ցցված է, ինչպես ատամ, Կմախքի կողու դագաթը։ Կողմնացույցով ստուգեցեք, թե վոր կողմն է ցույց տալիս մեռելը։

Ստուգեցին։ Իսկապես մեռելը ցույց էր տալիս դեպի Կմախքի կողին։ Կողմնացույցը ցույց էր տալիս Ա.—Հ.—Ա. և դեպի Ա. ուղղությունը։

— Այդպես էլ կարծում էի,— բացականչեց խոհարարը։ — Սա ցուցասլաք է։ Նշանակում է, այնտեղ Բեվեռային աստղն է, իսկ ահա այնտեղ ուրախ դոլարները։ Ցերդվում եմ վորոտով, Ֆլինտին հիշելիս իմ մարմնով սարսուռ է անցնում։ Սա նրա սիրելի սրամտություններից մեկն է։ Նա վեց ընկերների հետ մնաց այստեղ և բոլորին կտոր-կտոր արավ։ Իսկ հետո

սպանվածներից մեկից իր համար կողմնացույց պատրաստեց։ Վոսկորները յերկար են, մազերը՝ դեղին։ Ե՜, սա Ալլարդայսն է, պատժի ենթ ասված։ Դու հիշում ես Ալլարդայսին, Թոմ Մորգան։

— Ինչպես չե,— ասաց Մորգանը,— իհարկե։ Նա ինձ պարտ է մնացել բացի դրանից վերցրել է իմ դանակը, յերբ գնում էր կողին։

— Ուրեմն դանակն այստեղ պետք է լինի,— ասաց մյուս ավազակը։— Ֆլինտն այնպիսի մարդ չէր, վոր նավաստիների գրպանները փնտռեր։ Թռչուններն ել հո չեյին կարող այդ դանակը տանել։

— Դու ճշմարիտ ես ասում, սատանան տանի քեզ,— բացականչեց Սիլվերը։

— Այնուամենայնիվ, այստեղ վոչինչ չկա,— ասաց Մերրին, ուշադրությամբ շոշափելով գետինը։— Գոնե մի պղնձե դրամ մնացած լիներ, կամ, որինակ ծխախոտի տուփ։ Այս բոլորն ինձ կասկածելի յե թվում։

— Ճիշտ է, ճիշտ է,— համաձայնեց Սիլվերը։— Այստեղ ինչ վոր բան կա։ Այո, թանկագին ընկերներ, յեթե Ֆլինտը կենդանի լիներ, այս տեղերում մենք չեյինք կարող զբոսնել։ Մենք վեց հոգի յենք, նրանք ել վեց հոգի եյին, իսկ այժմ նրանցից միայն վոսկորներ են մնացել։

— Վոչ, հանգիստ յեղիր, նա մեռել է, յես իմ սեփական աչքերով նրան տեսա մեռած,— ձայն տվեց Մորգանը։— Վիլլին տարավ ինձ նրա մեռած մարմնի մոտ։ Նա ընկած էր աչքերի տակը կապտած։

— Իհարկե, նա մեռավ,— հաստատեց գլուխը փաթաթված ծովահենը։— Բայց յեթե վորևե մեկը մեռնելուց հետո թափառում է աշխարհում, դա, իհարկե, Ֆլինտն է։ Ցեվ ինչպես դժվար մեռավ մարդը։

— Այո, վատ մեռավ,— նկատեց մի ուրիշը։— Ցերբեմն կատաղում էր, յերբեմն ռոմ էր պահանջում, յերբեմն սկսում էր յերգել «Տասնհինգ մարդ մեռելի սնդուկի վրա»։ Բացի «Տասնհինգ մարդուց» ուրիշ վոչինչ չէր յերգում։ Ցես, ճշմարիտն ասեմ ձեզ, այդ որվանից այդ յերգը չեմ սիրում։ Սարսափելի տոթ էր։ Ֆլինտն ամբողջ ուժով յերգում էր և նրա յերգը խառնվում էր նախամահյան խռխռոցների հետ։

— Հառաջ, հառաջ,— ասաց Սիլվերը,— բավական է շաղակրատեք։ Նա մեռել է և ուրվականի նման չի թափառում յերկրատեք։ Նա մեռել է և ուրվականի նման չի թափառում յերկ-

բում։ Իսկ յեթե մինչև անգամ մտածի հեռանալ գերեզմանից՝ ապա չէ՞ վոր ուրվականները յերևում են գիշերները, իսկ այժմ, ինչպես տեսնում եք, ցերեկ է... Մեռելի մասին խոսելու կարիք չկա, մեզ սպասում են դուբլոնները։

Մենք առաջ շարժվեցինք։ Ու թեև արեգակն ուժեղ լուսավորում եր, ծովահենները այլևս այս ու այն կողմ չեյին վազում և իրար ձայն չեյին տալիս։ Նրանք գնում եյին շարքով և իրար հետ խոսում եյին կիսաձայն։ Այդպիսի սարսափ եր ազդել նրանց վրա մեռած ծովահենը։

ԳԼՈՒԽ XXXII

ԳԱՆՁԻ ՎՈՐՈՆՈՒՄԸ։ ՁԱՅՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Մասամբ այդ սարսափի թուլացնող ազդեցության տակ մասամբ եվ նրա համար, վոր Սիլվերը և հիվանդ ծովահենները հանդստանան, բարձրավանդակի կատարին վողջ խումբը դադար առավ։

Բարձրավանդակը քիչ թեքված եր դեպի արևմուտք, այդ պատճառով եվ այն տեղից, ուր մենք նստած եյինք, յերկու կողմից եվ տեսարան եր բացվել։ Առջևում, ծառերի կատարների յետևում, մենք տեսնում եյինք Անտառոտ բլուրը, մակընթացության փրփուրով շրջապատված։ Յետևից յերևում եր վոչ թե միայն նեղուցը և Կմախքի կղզին, այլև — ցամաքալեզվի և հարթության յետևում — բաց ծովի ազատ տարածությունը։ Մեզ վրա ուղիղ բարձրանում եր Հեռադիտակը, վորի վրա աճել եյին նոսր սոճիներ և տեղ-տեղ բերանաբաց խոր անդունդներ։

Անդորրությունը խախտվում եր միայն ափնակոծության հեռավոր թնդյուններով և անհամար միջատների ժժոցով։ Մարդ չկա։ Ծովի վրա վոչ մի առագաստ։ Մենակության զգացմունքն ավելի ևս ուժեղանում եր շրջապատող տարածությունների լայնությամբ։

Հանգստի ժամանակ Սիլվերը կողմնացույցով չափումներ եր անում։

— Այստեղ յերեք «մեծ ծառ» կա,— ասաց նա,— և նրանք բոլորն եվ դասավորված են ուղիղ գծով Կմախքի կղզուց։ «Հեռադիտակի ուսը», յես կարծում եմ, ահա այս փոսն է։ Այժմ յերեխան եվ գանձը կգտներ։ Իմ կարծիքով վատ չեր լինի, վոր նախ մի բան ուտենք։

— Յես չեմ ուզում,— մրթմրթաց Մորգանը։— Հենց վոր հիշեցի Ֆլինտին, ախորժակս միանգամից կորավ։

— Այո՛, վորդիս, բախտավոր ես, վոր նա մեռավ,— ասաց Սիլվերը։

— Նրա դեմքն եվ սատանայի դեմքի նման եր,— բացականչեց յերրորդ ծովահենը, ցնցվելով։— Ամբողջ մարմինը կափ-կապույտ եր։

— Դա ռոմից է,— ավելացրեց Մերրին։— Կապո՛ւյտ։ Բա կապույտ չի՞ լինի։ Ռոմից կապտում են, այդ ճիշտ է։

Կմախքի տեսքը և Ֆլինտին հիշելն այնպես եյին ազդել այդ մարդկանց վրա, վոր նրանք սկսեցին խոսել ցածր ու ցածր և վերջապես հասան հազիվ լսելի շշնջյունի, վորը համարյա անտառի անդորրությունը չեր խախտում։ Յեվ հանկարծ մոտիկ պուրակից մեկի բարակ, շառաչող, զիլ ձայնը սկսեց լավ ծանոթ յերգը։

Տասնհինգ մարդ մեռելի սնդուկի վրա,
Յո—խո—խո և մի շիշ ռոմ։

Մահվան սարսափ պատեց ծովահենների։ Բոլոր վեցի դեմքերն եվ միանգամից դարձան դեղին։ Մեկը վոտի կանգնեց, մյուսները ջղաձգաբար բռնեցին իրար։ Մորգանը պառկեց գետնի վրա և ոձի նման սողաց։

— Ֆլինտն է,— բացականչեց Մերրին։

Յերգն ընդհատվեց այնպես կտրուկ կերպով, ինչպես սկսվել եր, կարծես ձայնանիշի մեջտեղում յերգչի բերանը միանգամից փակեցին։ Որն արևոտ եր և պարզ, յերգողի ձայնը դուրեկան ու զիլ և յես իմ ուղեկիցների սարսափը հասկանալ չկարողացա։

— Հառաջ,— ասաց Սիլվերը, հազիվ շարժելով մոխրագույն շրթունքները։— Այս կերպ վոչինչ չի դուրս գա։ Իհարկե, այս բոլորը շատ զարմանալի յե և յես չգիտեմ, թե ով է այնտեղ կատակ անում, սակայն համոզված եմ, վոր մեռել չե, այլ կենդանի մարդ։

Խոսելու ժամանակ վերադարձավ նրա արիությունը և դեմքը քիչ առույգացավ։ Մյուսներն եվ, նրա խոսքերի ազդեցության տակ, կայտառացան և կարծես թե սթափվեցին։ Յեվ հանկարծ հեռվից լսվեց նույն ձայնը։ Բայց այժմ նա չեր յեր-

գում, այլ գոռում էր, կարծես վորևե հեռու տեղից և նրա գոռոցը հանդարտ, վորպես անլսելի արձագանք, տարածվեց Հեռադիտակի ծերպերի մեջ։

— Դարբի Մակ-Գրոու,— հառաչեց մեկը և նրա հառաչանքի միջից հեկեկանք էր լսվում։— Դարբի Մակ-Գրոու, Դարբի Մակ-Գրոու...

Այսպես նա կրկնում էր անվերջ, Հետո նրա ձայնը քիչ բարձրացավ և մի անլուր հայհոյանք աղաղակելով, վոռնաց.

— Դարբի, ռում տուր ինձ։

Ավազակները գետնին կպան և աչքերը քիչ մնաց ճակատի վրա բարձրանան։ Ձայնը վաղուց էր մարել, բայց նրանք դեռևս կանգնած էին քար կտրած և լուռ նայում էին դեպի առաջ։

— Գործը պարզ է,— ասաց մեկը։— Պետք է փախչել։

— Այդ նրա վերջին խոսքերն էին,— հառաչեց Մորգանը։ — Վերջին խոսքերը մահից առաջ։

Դիկը հանեց իր ավետարանը և սկսեց վշտահար աղոթել։ Նախքան ծով դուրս գալը և բանդիտ դառնալը, նա դաստիարակվել էր բարեպաշտ ընտանիքում։

Միայն Սիլվերն իրեն չկոտրեց։ Յես լսում էի, թե ինչպես նրա ատամները չխկչխկում էին յերկյուղից, բայց նա յետ դառնալու մասին չէր էլ ուզում լսել։

— Այս կղզու վրա վոչ վոք, բացի մեզանից, մինչև անգամ Դարբիի մասին չի լսել,— փնթփնթաց նա իրեն կորցրած.— վոչ վոք բացի մեզանից։

Հետո իրեն սանձահարեց և գոչեց.

— Լսեցեք։ Յես յեկել եմ այստեղ, վոր գանձ հանեմ, և վոչ վոք, վոչ մարդ, վոչ սատանա, ինձ չի կարող կանգնեցնել։ Յես Ֆլինտից չեմ վախենում, յերբ նա կենդանի յեր և, սատանան տանի, մեռած ժամանակ էլ չեմ վախենա։ Մեզանից քառորդ մղոն հեռավորության վրա յոթ հարյուր հազար ֆունտ ստերլինգ կա։ Միթե գոնե մեկ հաջողության ջենտլմեն ընդունակ է նավի յետևի կողմը շուռ տալ այնքան դրամի առջևից, մի ինչ վոր կապտասփաթ հարբեցողի պատճառով, այն էլ սատկած։

Սակայն նրա խոսքերն ավազակների արիությունը չվերադարձրին։ Ընդհակառակը, վոչ հարգելի վերաբերմունքը դեպի ուրվականը, նրանց խուճապային սարսափը ուժեղացրեց միայն։

— Լսիր, Ջոն,— ասաց Մերրին։— Ուրվականին մի վիրավորիր։

Մնացածներին յերկյուղն այնպես էր պատել, վոր վոչ մի բառ արտասանել չէին կարողանում։ Մինչև անգամ այս ուրայն կողմ փախչելու համարձակություն չունեցին։ Վախն ստիպել էր նրանց խմբվել Սիլվերի շուրջը, վորովհետև նա բոլորից քաջ էր։ Նրան վերջապես հաջողվեց վորոշ չափով աղատվել յերկյուղից։

— Ձեր կարծիքով դա ուրվական է։ Կարելի յե, վոր այդպես է,— ասաց նա։— Բայց մի բան է ինձ վրդովում։ Մենք բոլորս էլ պարզ կերպով արձագանք լսեցինք։ Բայց ասացեք, վորևե մեկը տեսել է, վոր ուրվականն ստվեր ունենա։ Յեթե ստվեր չի կարող լինել, նշանակում է արձագանք էլ չկա։ Այլապես դա անբնական հիմարություն կլինի։

Այսպիսի փաստերն ինձ թույլ թվացին։ Բայց դուք յերբեք նախապես չեք կարող ասել, թե անահավատ մարդկանց վրա ինչը կազդի։ Ի զարմանս իմ, Ջորջ Մերրին ավելի շատ թեթևություն զգաց։

— Այդ ճիշտ է,— ասաց նա։— Համա գլուխ կա ուսերիդ վրա, հա, Ջոն։ Ամեն ինչ կարգին է, թանկագին ընկերներ։ Դուք պարզապես սխալ ուղղություն եք վերցրել։ Իհարկե, ձայնը Ֆլինտի ձայնի պես էր։ Բայց այնուամենայնիվ ավելի ուրիշի ձայնի յեր նման... Ավելի շուտ այդ ձայնը...

— Յերդվում եմ սատանայով, վոր դա Բեն Գանների ձայնն էր,— ընդհատեց Սիլվերը։

— Ճիշտ է,— բացականչեց Մորգանը, գետնից բարձրանալով և չոքելով,— դա Բեն Գանների ձայնն էր։

— Բայց մեծ տարբերություն կա արդյոք,— հարցրեց Դիկը։— Բեն Գանն էլ է մեռել, Ֆլինտն էլ։

— Թքած Բեն Գանների վրա,— բացականչեց Մերրին։— կենդանի յե, թե մեռած, միևնույն չե՞։

Տարորինակ էր տեսնել, թե ինչպես այդ մարդիկ արագ սթափվեցին և թե ինչպես նրանց դեմքին կրկին խաղաց կարմրությունը։ Մի քանի րոպեյից հետո, նրանք շաղակրատում էին իրար հետ այնպես, վոր կարծես թե վոչինչ չէր պատահել, միայն թե ականջ էին դնում, չի՞ լսվում արդյոք տարորինակ ձայնը։ Բայց ամեն ինչ խաղաղ էր։ Յեվ, գործիքներն ուսերին առած, նրանք առաջ շարժվեցին։ Առջևից գնում

եր Մերրին, ձեռքին բռնած Զոնի կողմնացույցը, վորպեսզի կմախքի կողու հետ մի գծի վրա լինեն։ Նա ճիշտ ասաց. Բեն Գաննից, կենդանի լիներ նա, թե մեռած, վոչ վոք չեր վախենում։

Միայն Դիկն առաջվա պես ձեռքին բռնել եր ավետարանը և վախեցած այս ու այն կողմն եր նայում։ Բայց այլևս նրան վոչ վոք չեր կաբեկցում։ Մինչև անգամ Սիլվերը ծաղրում եր նրա սնոտիապաշտությունը։

— Ցես քես ասացի, վոր ավետարանդ փչացրել ես։ Մթթե դու կարծում ես, վոր ուրվականը կվախենա այն ավետարանից, վորից մի յերես պոկված ե։ Ինչպես չե։ Գրպանդ բաց պահիր։

— Ցեվ մի պահ կանգ առնելով մատներով Դիկի քթի տակին չրթացրեց։

Բայց Դիկին արդեն խոսքերով չեր կարելի հանգստացնել։ Շուտով ինձ համար պարզվեց, վոր նա վերջնականապես հիվանդ ե։ Տոթից, հոգնածությունից ու յերկյուղից նրա ջերմը, վոր դուշակել եր բժիշկ Լիվսին, սկսեց արագ կերպով ուժեղանալ։

Գագաթին քիչ ծառեր կային և գնալը բավականաչափ հեշտացավ։ Այժմ մենք իջնում եյինք ներքև, վորովհետև, ինչպես արդեն ասացի, սարահարթը մի քիչ դեպի արևելք եր թեքված։ Մեծ ու փոքր սոճիներն իրարից բաժանված եյին լայն տարածությամբ։ Մինչև անգամ մուսկատի ընկուզենիների և լեռնավարդերի մեջ ել հաճախ պատահում եյին տոթից խանձված ընդարձակ բացատներ։ Գնալով դեպի հյուսիս-արևմուտք, մենք մոտենում եյինք Հեռադիտակի ուսին։ Հեռադիտակի տակ յերևում եր արևելյան լայն ծովախորշը՝ վորտեղ քիչ ժամանակ առաջ նավակն ինձ վեր-վեր եր գցում ու պտտում։

Առաջին բարձր ծառը, վորին մենք մոտեցանք, կողմնացույցով ստուգելուց հետո, անհամապատասխան գտնվեց։ Նույնը պատահեց նաև յերկրորդ ծառի հետ։ Յերրորդը թփուտներից համարյա յերկու հարյուր ֆուտ բարձր եր։ Սա բուսական աշխարհի հսկան եր, կարմիր բնով մի քանի գրկաչափ հաստությամբ։ Նրա ստվերի տակ մի ամբողջ գասակ կարող եր քայլել։ Այս սոճին անպայման հեռվից տեսանելի յեր — և՛ ծովի արևելյան կողմից և արևմուտքից, և Ֆլինտն, իզուր չեր, վոր նշանակել եր իր քարտեզում վորպես ծովագնացության նշան։

Սակայն իմ ուղեկիցներին հուզում եր վոչ թե սոճու լայն չափը։ Նրանք լցված եյին վառ գիտակցությամբ, վոր նրա շվաքում թաղված ե յոթ հարյուր հազար ֆունտ ստերլինգ։ Փողի մասին մտածելիս նրանց յերկյուղն անհայտանում եր։ Աչքերը բոցավառվում եյին, քայլերն արագանում, ամրանում։ Նրանք միմիայն մի բանի մասին եյին մտածում — այն հարստության մասին, վոր նրանց սպասում եր, անհոգ, փառավոր, շռայլ կյանքի մասին, վոր պիտի բերեր հարստությունը։

Սիլվերը թռչկոտելով, կաղալով առաջ եր գնում։ Նրա քթածակերը լայնանում եյին։ Նա խելագարի պես հայհոյում եր, յերբ ճանճերը նստում եյին նրա տաքացած, քրտնած յերեսին։ Նա կատաղորեն քաշում եր պարանը, մահացու ատելությամբ նայելով ինձ վրա։ Նա այլևս չեր աշխատում իր մտածմունքը ծածկել։ Ցես կարողանում եյի այդ կարդալ, ինչպես գրքի մեջ։ Վերջապես հայտնվելով ցանկալի վոսկուց յերկու քայլի վրա, նա ամեն բանի մասին մոռացավ — և՛ իր խոստումների, և՛ բժշկի նախազգուշությունների մասին։ Նա, ինարկե, հույս ուներ վերցնել գանձը, հետո գիշերով գտնել «Իսպանոլան», մեզ բոլորիս մորթել և ճանապարհ ընկնել։

Այս տագնապալի մտքերից ցնցված, յես դժվարությամբ եյի հասնում ծովահեններին և հաճախ սայթաքում եյի։ Այդ ժամանակ Սիլվերը ձգում եր պարանը, ինձ վրա արյունռուշտ հայացքներ նետելով... Դիկը յետևից պարում եր և աղոթքներ ու հայհոյանքներ մրմրթում։ Նրա ջերմն ուժեղանում եր։ Իմ աչքի առաջ ակամա պատկերացավ այն վողբերգությունը, վոր կատարվել եր այս տեղերում։ Իմ աչքի առաջ պատկերացավ կապտած դեմքով ավազակը, վորը մեռավ Սավանոնում, յերդելով և ոռմ պահանջելով։ Այստեղ նա իր ձեռքով վեց հոգու սպանեց։ Այս անդորը պուրակում մի ժամանակ նախամահյան աղաղակներ են տարածվել։ Ինձ թվում եր, վոր լսում եմ այն դժբախտների հառաչանքներն ու հեկեկանքները։

Թփուտներից դուրս յեկանք։

— Իմ յետևից, բարեկամներ, — գոչեց Մերրին։

Առջևից գնացողներն սկսեցին վազել։

Տասը յարդի չափ առաջ գնալով, նրանք հանկարծ կանգ առան և աղաղակեցին։ Սիլվերը, կատաղածի նման, սլանում եր։ Մի վայրկյանից հետո, մենք ել հանկարծ կանգ առանք։

Մեր առաջ մի մեծ փոս կար, վոր փորված եր, յերևի,

վաղուց, վորովհետև յեզրերն արդեն թափվել եյին, իսկ հատակին խոտ եր բուսել։ Փոսի մեջ տեսանք մի բահի կոթ և մի քանի արկղի տախտակ։ Տախտակներից մեկի վրա ջեռացրված յերկաթով փորված եր «Մորժ»—Ֆլինտին պատկանող նավի անունը։

Պարզ եր, վոր վորևե մեկը մեզանից առաջ գտել ու հափշտակել եր գանձը—յոթ հարյուր հազար ֆունտ ստերլինգն անհայտացել եր։

ԳԼՈՒԽ XXXIII

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՆԿՈՒՄԸ

Կարծում եմ, աշխարհի ստեղծագործությունից մինչև այսոր այս տեսակի մեծ հուսյերի հանկարծակի խորտակում չի յեղել։ Բոլոր վեցն էլ կանգնել եյին կայծակնահար յեղածի պես։ Առաջինը Սիլվերն սթափվեց։ Բոլոր հոգով նա ձգտում եր այդ փողերին։ Յեվ ահա մի վայրկյանում ամեն ինչ խորտակվեց։ Այնուամենայնիվ նա գլուխը չկորցրեց, իրեն տիրապետեց և կարողացավ փոխել իր ապագա գործողությունների պլանը, նախքան մյուսների հասկանալը, թե ինչ դժբախտություն ե պատահել իրենց։

— Ջիմ,— շշնջաց նա,— վերցրու և պատրաստ յեղիր։

Յեվ տվավ ինձ մի յերկփողանի տրբճանակ։

Միաժամանակ նա սկսեց հանգիստ շարժվել դեպի հյուսիս, այնպես վոր փոսը մնաց մեր յերկուսի և ավազակների միջև։ Հետո Սիլվերը նայեց ինձ և դլխով արավ, կարծես ասում եր. «դրությունը թեթև չե», և յես նրա հետ միանգամայն համաձայն եյի։ Այժմ նրա հայացքը նորից սիրալիր դարձավ։ Խոստովանում եմ, վոր այդ յերկերեսանիությունը վրդովեց ինձ։ Յես համբերել չկարողացա և շշնջացի։

— Այնպես վոր դուք նորից դավաճանեցիք ձերոնց։

Բայց նա ինձ պատասխանելու ժամանակ չունեցավ։ Ավազակները, գոռգոռալով և հայհոյանքով, թռան փոսի մեջ և ձեռքերով փորփրեցին, տախտակներն այս ու այն կողմը շպրտելով։ Մորգանը մի վոսկե դրամ գտավ։ Նա դրամը վերցրեց և սկսեց բոլորին հայհոյել։ Դրամը յերկու գինեաանոց եր։ Մի քանի վայրկյան դրամը ձեռքից-ձեռք եր անցնում։



— Ցերկու գինեյ,— մռնչաց Մերրին,— մեկնելով դրամը Սիլվերին։— Ա՞յս է քո յոթ հարյուր հաղարը։ Դու, կարծեմ, պայմաններ կապելու սիրահար ես։ Ահա թե ինչ է դուրս գալիս քո պայմաններից, փայտե գլուխ։

— Փորեցեք, տղերք, փորեցեք,— ասաց Սիլվերը սառն հեգնանքով,— գուցե յերկու-յերեք գետնընկույզ գտնեք, վորոնք խոզերի սիրելի կերակուրն են կազմում։

— Ցերկու-յերեք ընկույզ,— կատաղությամբ գոռաց Մերրին։— Ընկերներ, լսեցիք, թե ինչ ասաց։ Ցես ձեզ ասում եմ, վոր նա առաջուց գիտեր։ Նայեցեք նրա յերեսին։ Այնտեղ պարզ կերպով գրված է։

— Ե՜խ, Մերրի,— նկատեց Սիլվերը։— Դու, կարծեմ մտադիր ես կրկին նավապետ դառնալ։ Դու, ինչպես տեսնում եմ, պնդերես տղա յես։

Այս անգամ բոլորն ել Մերրիին կողմնակից եյին։ Ավազակները, կատաղությամբ նայելով մեզ վրա, սկսեցին փոսից դուրս գալ։ Ասենք, մեր բախտից, նրանք գտնվում եյին հակառակ կողմում։

Այդպես կանգնած եյինք մենք, յերկուսս հնգի դիմաց, և մեզ բաժանում եր փոսը։ Կողմերից վոչ մեկը սիրտ չեր անում առաջին զարկը տալ։ Սիլվերն անշարժ կանգնած եր։ Նա սառնարյուն կերպով ու հանգիստ հսկում եր թշնամիներին, իր հենակի վրա հենված։ Նա իսկապես համարձակ մարդ եր։

Վերջապես Մերրին վորոշեց իր կողմնակիցներին ճառով վոգեվորել։

— Ընկերներ,— ասաց նա,— նայեցեք, նրանք ընդամենը յերկու հոգի յեն. մեկը— ծեր հաշմանդամ, վորը մեզ բերել և այստեղ կործանելու, մյուսը— չան ձագ, վորի սիրտը վաղուց եմ ուզում կտրատել։ Ցեվ այժմ...

Նա ձեռքերն ու ձայնը բարձրացրեց, պատրաստվելով իր խումբը հարձակման տանելու։ Ցեվ հանկարծ— տրախկ, տրախկ, տրախկ— անտառում հրացաններ պայթեցին։ Մերրին գլխիվայր ընկավ ուղիղ փոսի մեջ։ Ճակատը փաթաթած մարդը հոլի նման պտտվեց և ընկավ նրա կողքին։ Նա բավական ժամանակ ցնցվում եր, սակայն արդեն մեռած եր։ Մնացած յերեք հոգին փախան։

Այդ վայրկյանին Ցերկարահասակ Ջոնն իր ատրճանակի յերկու փողով ել կրակեց դեպի Մերրին, վորը փորձում եր դուրս սողալ փոսից։ Մեռնելիս Մերրին նայեց իրեն սպանողի յերեսին։

— Ջորջ,— ասաց Սիլվերը,— այժմ, յես կարծում եմ, մեր հաշիվները վերջացան։

Մուսկատի ընկույզի թփուտներում մենք տեսանք բժշկին, Գրեյին և Բեն Գաննին։ Նրանց հրացանները ծխում եյին։

— Հառաջ,— գոչեց բժիշկը։— Շտապեցեք, տղերք։ Մենք պետք է նավակներից կտրենք նրանց։

Ցեվ մենք առաջ սլացանք, մինչև կուրծքներս թփուտի մեջ սուզվելով։

Մեզանից հետ չմնալու համար, Սիլվերն ուժասպառ յեղավ։ Նա այնպես եր աշխատում իր հենակով, վոր կարծես թե կրծքի մկաններն այս բոպեյիս պետք է մաս-մաս լինեն։ Բժշկի ասելով, առողջ մարդն ել այդպիսի աշխատանքի չեր դիմանա։ Ցերը հասանք զառիվայրին, նա մեզանից ամբողջ յերեսուն յարդ յետ մնաց և բոլորովին ուժասպառ յեղավ։

— Բժիշկ,— կանչեց նա,— նայեցեք, շտապելու կարիք չկա։

Իսկապես վոր շտապելու կարիք չկար։ Մենք բացատը դուրս յեկանք և տեսանք, վոր կենդանի մնացած յերեք ավազակները վազում են դեպի Բիզան-կայմ ժայռը։ Այդպիսով մենք արդեն գտնվում եյինք փախստականների և նավակների միջև և կարող եյինք հանգստանալ։ Ցերկարահասակ Ջոնը, յերեսի քրտինքը սրբելով, կամաց մոտեցավ մեզ։

— Սրտանց շնորհակալ եմ ձեզանից, բժիշկ,— ասաց նա։ — Դուք ժամանակին հասաք, և մեզ յերկուսիս ել ազատեցիք... Ա՜, այդ դու՞ յես, Բեն Գանն,— ավելացրեց նա։— Դու, ինչպես տեսնում եմ, կարիճ յերիտասարդ ես։

— Այո՛, յես Բեն Գանն եմ,— շփոթված պատասխանեց նախկին ծովահենը, Սիլվերի առջև ոձաձուկի պես գալարվելով։ — Ինչպե՞ս եք, պարոն Սիլվեր, կարծեմ վատ չեք,— հարցրեց նա յերկար լռությունից հետո։— Կարծում եմ, վատ չեք։

— Բեն, Բեն,— փնթփնթաց Սիլվերը,— մի հլա մտածիր, թե ինչ ոյին խաղացիր գլխիս։

Բժիշկը Գրեյին ուղարկեց, վոր ավազակների յետևից վազելիս դեն գցած քլունգը բերի։ Մինչև մենք առանց շտապելու իջնում եյինք զառիվայրից դեպի մեր նավակները, բժիշկը մի քանի խոսքով պատմեց, թե վերջին որերում ինչ է պատահել։ Սիլվերն ագահությամբ լսում եր յուրաքանչյուր խոսքը։ Կի-

սախելադար անապատական Բեն Գաննը պատմվածքի գլխավոր հերոսն եր։

Բժշկի ասելով, կղզու վրա յերկար, մենակ թափառումների ժամանակ, Բենը գտել է և՛ կմախքը, և՛ դանձը։ Նա յե գտարկել կմախքի գրպանները և հողի տակից հանել դանձը, նրա բահի կոթն ենք տեսել մենք փոսի մեջ։ Նա իր ուսերի վրա դրած փոխադրել է վողջ վոսկին բարձր սոճու տակից յերկդագաթ լեռան այրը, կղզու հյուսիս-արևելյան մասում։ Այս ծանր աշխատանքը, վոր յերկար ժամանակ քայլել է պահանջում, վերջացրել եր «Իսպանոլայի» գալուց միայն յերկու ամիս առաջ։

Այս բոլորը բժիշկն իմացել եր նրանից նրա հետ ունեցած առաջին իսկ տեսակցության ժամանակ, մեր ամրոցի վրա գրոհելու որը։ Հետևյալ առավոտ, տեսնելով, վոր նավն անհայտացել է, բժիշկը գնացել եր Սիլվերի մոտ, տվել եր քարտեզը, վորն այժմ վոչ մի նշանակություն չուներ և ամրոցն իր բոլոր պաշարեղենով հանձնել եր նրան, վորովհետև Բեն Գաննի այրում բավականաչափ աղած այծի միս կար, վոր պատրաստել եր Գաննը իր ձեռքով։ Այս հանգամանքի շնորհիվ, իմ բարեկամները հնարավորություն են ստացել, վտանգի չենթարկվելով, ամրոցից փոխադրվել յերկգլխանի սարը, մալարիայի ճահիճներից հեռու, և պահպանել դանձը։

— Իհարկե, յես նախատեսել եյի, սիրելի Ջիմ,— ավելացրեց բժիշկը,— վոր մեր գաղթը քեզ վատ ծառայություն կմատուցի, և այդ հանգամանքը շատ եր վշտացնում ինձ, բայց յես ամենից առաջ պետք է մտածեյի այն մարդկանց մասին, վորոնք իրենց պարտքը բարեխղճորեն կատարեցին։ Վերջապես դու յես մեղավոր, վոր մեզ հետ չեյիր գտնվում։

Բայց այն առավոտյան, յերբ նա ինձ տեսավ գերի ծովահենների մոտ, հասկացավ, վոր իմանալով դանձի անհայտացման մասին, նրանք ինձնից վրեժ կլուծեն։ Այդ պատճառով նա թողեց կալվածատիրոջը, վոր պահպանի նավապետին, վերցրեց իր հետ Գրեյին և Բեն Գաննին և կղզու միջով ուղղվեց դեպի մեծ սոճին։ Ճանապարհին, տեսնելով, վոր խումբն իրենից առաջ է անցել, նա Բեն Գաննին ուղարկեց առաջ, վորովհետև Բեն Գաննը չափազանց արագաշարժ վոտներ ուներ։ Նա իսկույն մտածեց ոգտվել իր նախկին ընկերների սնոտիապաշտությունից և նրանց այնպես վախեցրեց, վոր Գրեյն ու բժիշկը կարողացան թաքնվել սոճու մոտ, մինչև դանձ վորոնողների գալը։

—Ի՞նչ լավ եր,— ասաց Սիլվերը,— վոր Գոկինսն ինձ հետ եր։ Յեթե նա ինձ հետ չլիներ, դուք, բժիշկ, ձեր ունքն էլ չեյիք շարժի, յեթե ինձ մաս-մաս էլ անեյին։

— Իհարկե,— պատասխանեց բժիշկ Լիվսին ծիծաղելով։

Այդ ժամանակ մենք մոտեցանք նավակներին։ Նրանցից մեկը բժիշկն իսկույն քլունգով ջարդեց, վոր ավազակների ձեռքը չընկնի, իսկ մյուսի մեջ բոլորս տեղավորվեցինք և կղզու շուրջը պտտվելով, գնացինք դեպի Հյուսիսային ծովախորշը։

Մենք անցանք ութ կամ ինը մղոն։ Սիլվերը, չնայած իր չափազանց հոգնածության, մեզ հետ հավասար թիավարեց։ Մենք դուրս յեկանք նեղուցից դեպի բաց ծովը։ Ծովը խաղաղ եր։ Մենք անցանք կղզու հարավ-արևելյան կողմի դուրս ցցված մասը, վորը չորս որ առաջ բոլորապատել եր «Իսպանոլան»։

Անցնելով յերկգլխանի լեռան մոտով, մենք տեսանք Բեն Գաննի այրի մութ մուտքը և նրա մոտ մի մարդ, վոր հրացանի վրա հենված, կանգնած եր։ Դա կալվածատերն եր։ Մենք թաշկինակ թափահարեցինք և յերեք անգամ «ուռա» գոչեցինք, ընդվորում Սիլվերը բոլորից բարձր եր գոռում։

Ելի յերեք մղոն անցնելով, մենք մտանք Հյուսիսային ծովախորշը և տեսանք «Իսպանոլան»։ Նա առանց ղեկի ու առագաստների տարուբերվում եր ջրի վրա։ Մակընթացությունը նրան ծանծաղուտից հանել եր։ Յեթե այդ որը քամի լիներ, կամ յեթե Հյուսիսային ծովախորշում այնպիսի ուժեղ հոսանք լիներ, ինչպես Հարավայինում, մենք կարող եյինք միանգամայն զրկվել նավից։ Լավագույն դեպքում մենք նրա բեկորները կգտնելինք։ Սակայն, բարեբախտաբար, նավը վողջ եր, յեթե կոտոր՝ իջնակայմը չհաշվենք։ Մենք պահեստի խարիսխը ջրի մեջ գցեցինք։ Հետո նավակով ուղևորվեցինք դեպի Հարբած ծովախորշը— Բեն Գաննի գանձատան ամենամոտ կետը։ Այնտեղ ցած իջանք և Գրեյին նավն ուղարկեցինք, վոր դիշերվա ընթացքում հսկի։

Թեթև զառիվայրով այրը բարձրացանք։ Վերևում դիմավորեց մեզ կալվածատերը։ Նա ինձ հետ սիրալիր վերաբերվեց։ Իմ փախուստի մասին վոչ մի խոսք չասաց— չգովեց և

չհայհոյեց։ Իսկ յերբ Սիլվերը նրան քաղաքավարի կերպով զինվորական պատիվ տվեց, նա վրդովմունքից կարմրեց։

— Ջոն Սիլվեր,— ասաց նա,— դուք գարշելի անզգամ եք և խաբեբա։ Հրեշային խաբեբա։ Ինձ համոզեցիք չհետապնդել ձեզ, յես ել խոստացա։ Սակայն մեռելները չրաղացի քարի նման կախված են ձեր վզից։

—Սրտանց շնորհակալ եմ ձեզանից, պարոն,— պատասխանեց Յերկարահասակ Ջոնը, կրկին պատիվ տալով։

— Մի համարձակվեք ինձ շնորհակալություն հայտնել,— գոչեց կալվածատերը։— Ձեր պատճառով յես խախտում եմ իմ պարտքը։ Հեռացեք ինձանից։

Մենք այրը մտանք։ Այրն ընդարձակ եր և թարմ ոդով լիքը։ Գետնի տակից մաքուր ջրի աղբյուր եր բղխում և թափվում մի փոքրիկ լճի մեջ, վորը պատած եր խիտ ձարխոտերով։ Հատակն ավազոտ եր։ Բոցավառվող կրակի առաջ պառկած եր նավապետ Սմոլեթտը։ Իսկ հեռու անկյունում աղոտ փայլում եր վոսկե դրամների և ձուլածողերի մի հսկա դեզ։ Սա նավապետ Ֆլինտի գանձն եր, այն գանձը, վորի համար մենք այնպիսի յերկար, հոգնեցուցիչ ճանապարհ կտրեցինք, վորի պատճառով «Իսպանոլա» նավի անձնակազմից տասնյոթ հոգի մեռան։ Իսկ քանի՞ մարդկային կյանք, վորքան տանջանք ու արյուն արժեր այդ հարստությունը։ Քանի՞ փառավոր նավ եր կործանվել, վորքան քաջ մարդիկ եյին տանջվել, վորքան ոմբակոծություն նավերից, վորքան խայտառակություն, սուտ, անզթություններ։ Սակայն դեռևս կղզու վրա գտնվում եյին յերեք հոգի— Սիլվերը, ծեր Մորգանը և Բենը, վորոնք մի ժամանակ մասնակցել եյին այդ բոլոր սարսափելի չարագործություններին և այժմ ապարդյուն կերպով հույս ունեյին իրենց բաժինն ստանալու այդ հարստությունից։

—Մտիր, Ջիմ,— ասաց նավապետը։— Դու, քո կարծիքով, գուցե և վատ տղա չես, բայց խոսք եմ տալիս, վոր այլևս յերբեք քեզ ծովային ճանապարհորդության չեմ տանի, վորովհետև դու սիրվածների ցեղից ես. ամեն ինչ քո ուզածի պես ես անում... Ա՜, այդ դու՞ յես, Ջոն Սիլվեր։ Ի՞նչն և բերել քեզ մեզ մոտ։

— Վերադարձա, վոր պարտականություններս կատարեմ,— պատասխանեց Սիլվերը։

— Ա՜,— ասաց նավապետը։

Յեվ վոչ մի հնչյուն չավելացրեց։

Ի՜նչպես փառավոր ընթրեցի յես այդ յերեկո, շրջապատված իմ բոլոր բարեկամներով։ Ի՜նչ համեղ թվաց ինձ Բենի աղած այծի միսը, վորի վրայից խմում եյինք «Իսպանոլայից» բերած հին գինին։ Յերբեք դեռ մեզ նման ուրախ և յերջանիկ մարդիկ չեն յեղել։ Սիլվերը նստել եր բոլորից յետև, Լուսյից հեռու, սակայն չափազանց շատ եր ուտում, թափվելու եր թռչում, յերբ հարկավոր եր մի բան բերել, և մեզ հետ միասին ծիծաղում եր, յերբ կատակ եյինք անում,— մի խոսքով նորից սիրալիր, քաղաքավարի, պատրաստակամ խոհարար դարձավ, ինչպես եր մեր ճանապարհորդության ժամանակ։

ԳԼՈՒԽ XXXIV

ՅԵՎ ՎԵՐՋԻՆ

Հետևյալ առավոտյան վաղ մենք գործի անցանք։ Մինչև վը մի մղոն տարածություն եր։ Պետք և այնտեղ տանեյինք մեր բոլոր վոսկին և այնտեղից ել՝ «Իսպանոլան»—ծանր աշխատանք մի այդպիսի փոքրաթիվ մարդկանց խմբի համար։ Այն յերեք ավազակները, վորոնք դեռևս թափառում եյին կղզու վրա, մեզ քիչ եյին անհանգստացնում։ Բավական եր բլրի գլխին մի ժամապահ դնել և մենք կարող եյինք անակընկալ հարձակումից չվախենալ։ Բացի դրանից ել, մենք յենթադրում եյինք, վոր այդ մարդկանց սերը դեպի զինվորական գործադուլները, յերկար ժամանակով չքացել և։

Մենք անդադար աշխատում եյինք։ Գրեյն ու Բենը վոսկին նավակով նավն եյին տանում, իսկ մնացածները բերում եյին ծովափը։ Վոսկին շատ ծանր մետաղ և. յերկու ձույլ պարանով կապում եյինք և գցում ուսին— մի մարդը յերկու ձույլից ավելի չի կարող տանել։ Վորովհետև վոսկի տանելն իմ ուժերից վեր եր, այդ պատճառով ինձ թողել եյին այրում և կարգադրել, վոր փողերը լցնեմ պաքսիմատի տոպրակների մեջ։

Ինչպես Բիլլի Բոնսի սնդուկում, այստեղ ել զանազան տեսակի դրամներ կային, բայց, իհարկե, այստեղ ավելի շատ եր, քան այնտեղ։ Յես շատ եյի սիրում այդ փողերը տեսակավորել։ Անգլիական, ֆրանսիական, իսպանական, պորտուգալական,

գալական դրամներ, գինեյներ և լուիդորներ, դուբլոններ, մուադորներ և ցեխինններ, դրամներ վերջին հարյուր տարվա յեվրոպական բոլոր թագավորների պատկերներով, տարօրինակ արևելյան դրամներ, վորոնց վրա նկարված եր պարանի կապուկ, թե սարդի վոստայնի կտոր, կլոր դրամներ, քառանկյունի դրամներ, մեջտեղը ծակ դրամներ, վոր կարելի լինի վզից կախել— այս կոլեկցիայում հավաքված եյին դրամներ ամբողջ աշխարհից։ Այդ դրամներն աշնան տերևներից շատ եյին։ Դրանց հետ զբաղվելուց մեջքս ու մատերս ցավում եյին։

Որն անցնում եր որվա յեռևից, բայց մեր աշխատանքի վերջը չեր յերևում։ Ամեն յերեկո հարստության ահագին կույտեր եյին՝ ուղարկում նավը, բայց այդ կույտերից փոքր կույտեր չեյին մնում այրում։ Յեվ այդ ժամանակամիջոցում կենդանի մնացած ավազակների մասին վոչինչ չեյինք լսել։

Վերջապես— յեթե չեմ սխալվում յերրորդ գիշերը— յես ու բժիշկը բլուրը բարձրացանք և հանկարծ ներքևից, անթափանցելի խավարի միջից, քամին ինչ վոր աղաղակ, թե յերգ բերավ։ Պարզ լսել հնարավոր չեղավ։

— Ավազակներն են,— ասաց բժիշկը։

— Բոլորն ել հարբած են, պարոն,— յեռևից լսեցի Սիլվերի ձայնը

Սիլվերն ոգավում եր լրիվ աղատությամբ և, չնայած մեր սառնության, կրկին սկսեց մեզ հետ բարեկամաբար վարվել ինչպես արտոնյալ և բարեկամասեր ծառա։ Նա կարծես թ, չեր զգում ընդհանուր ատելությունը դեպի ինքը և աշխատում եր յուրաքանչյուրին ծառայություն մատուցել, վորպեսզի յուրաքանչյուրը նրանից շնորհակալ լինի։ Բայց մենք վարվում եյինք նրա հետ, ինչպես շան հետ։ Միայն յես և Բեն Գանները մի քիչ ավելի լավ եյինք վերաբերվում— Բեն Գանները դեռևս քիչ վախենում եր իր առաջվա բնակարանապետից, իսկ յես շնորհակալ եյի նրանից կյանքս աղատելու համար, թեև, իհարկե, չեյի կարողանում մոռանալ, թե ինչպես նա պատրաստվում եր նորից մատնել ինձ։ Բժիշկը բավական կոպիտ պատասխանեց Սիլվերի նկատողությանը.

— Գուցե, նրանք հիվանդ են ու զառանցում են։

— Ճիշտ է, պարոն,— ասաց Սիլվերը,— բայց ինձ ու ձեզ համար միանգամայն մեկ է։

— Ինձ թվում է, վոր դուք հաղիվ թե բողոքեք այն բանի դեմ, պարոն Սիլվեր, վոր յես ձեզ համարեմ ազնիվ, մտերիմարդ,— հեգնաբար նկատեց բժիշկը,— և յես գիտեմ, վոր իմ զգացմունքները ձեզ մի քիչ տարորինակ կթվան։ Իսկ յեթե իսկապես համոզված լինեյի, վոր նրանք հիվանդ են և զառանցանքի մեջ, յես, մինչև անդամ կյանքս ռիսկի յենթարկելով, կճանապարհվեյի նրանց մոտ, վոր բժշկական ոգնություն հասցնեմ։

— Ներեցեք, պարոն, դուք մեծ սխալ արած կլինեք,— առարկեց Սիլվերը։— Կկորցնեք ձեր թանկագին կյանքը և ուրիշ վոչինչ։ Այժմ յես ձեր կողմնակիցն եմ հոգով ու մարմնով և չեյի ուզենա, վոր մեր խումբը զրկվեր այնպիսի մարդուց, ինչպիսին դուք եք։ Ձե՞ վոր յես շատ բանով եմ ձեզ պարտական։ Իսկ այդ մարդիկ վոչ մի կերպ չեյին կարող պահել իրենց ազնիվ խոսքը։ Բացի դրանից, նրանք յերբեք և ձեր ազնիվ խոսքին ել չեյին հավատա։

— Դրա փոխարեն դուք շատ լավ եք կարողանում պահել ձեր խոսքը,— ասաց բժիշկը։— Նորերս այդ բանում կարելի յեր համոզվել։

Յերեք ծովահենների մասին այլևս համարյա թե վոչինչ չիմացանք։ Միայն մի անդամ հեռվից հրացանի կրակոց լսեցինք. վորոշեցինք, վոր նրանք վորսորդությամբ են զբաղվում։ Մեր մեջ խորհրդակցություն կայացավ և վորոշվեց մեզ հետ չտանել, այլ թողնել կղզու վրա։ Բեն Գանները այս վորոշումից չափազանց ուրախացավ։

Գրեյն ել այդ վորոշմանը հավանություն տվեց։ Մենք նրանց համար վառոդի ու գնդակի մեծ պաշար թողեցինք, մի կույտ աղած այծի միս, քիչ դեղորայք և այլ անհրաժեշտ իրեր, գործիքներ, հագուստեղեն, պահեստի առագաստ, և, բժշկի հառուկ ցանկությամբ, ծխախոտի բավական բաժին։

Այլևս կղզու մեջ անելիք չունեյինք։ Նավն արդեն բեռնավորված եր և՛ վոսկով, և՛ խմելու ջրով, և, համենայն դեպս, այծի աղած մսի մնացորդներով։ Վերջապես խարիսխը բարձրացրինք և Հյուսիսային ծովախորշից դուրս յեկանք։ Մեզ վրա ծածանվում եր այն դրոշակը, վորի տակ մենք կռվում եյինք, պաշտպանելով մեր ամրոցը ծովահեններից։

Այստեղ պարզվեց, վոր ավազակներն ավելի ուշադիր եյին մեզ հետևում, քան թե մենք առաջ կարծում եյինք, վորովհետև նեղուցով անցնելիս և կղզու հարավային ծայրին մոտենա-

վիս նրանց յերեքին ել տեսանք։ Նրանք ավազի վրա ծունկ եյին չոքել և աղերսանքով ձեռքերը դեպի մեզ պարզել։ Մեզ համար շատ դժվար եր նրանց անմարդաբնակ կղզու մեջ թողնելը, բայց ուրիշ յելք չկար։ Ո՞վ գիտե, նոր խռովություն չեյին բարձրացնի, յեթե վերցնեյինք մեզ հետ։ Այլև անգթություն ե հայրենիք տանել այդպիսի մարդկանց, վորոնց կախաղան ե սպառնում։ Բժիշկը ձայն տվեց նրանց և հայտնեց, վոր նրանց համար ուտելիք և վառոդ ենք թողել և սկսեց մանրամասն բացատրել, թե ինչպես պետք ե այդ պաշարեղենը գտնել։ Բայց նրանք մեր բոլորի անուններին տալիս եյին և աղաչում խղճալ իրենց և չթողնել, վոր մենակության մեջ մեռնեն։

Վերջում, տեսնելով, վոր նավը գնում ե, նրանցից մեկը — չգիտեմ վոը — վայրի աղաղակով վոտքի յելավ, վերցրեց իր հրացանը և կրակեց։ Գնդակը շառաչելով անցավ Սիլվերի գլխի վրայով և միջնակայմը ծակեց։

Մենք զգուշացանք և թաքնվեցինք։ Յերբ կրկին նայեցի, ծովահեններն արդեն չկային։ Իսկ կեսորին մոտիկ, վողջ Գանձերի կղզին ել անհայտացավ հորիզոնի յետևում, վորն ինձ աննկարագրելի ուրախություն պատճառեց։

Մենք այնքան քիչ եյինք, վոր պետք ե մեր ուժերից վեր աշխատանք կատարեյինք։ Նավապետը հրամաններ եր տալիս նավի յետևի կողմում, ներքնակի վրա պառկած։ Նա առողջանում եր, սակայն դեռևս հանգստություն եր պետք։ Մենք ուղղություն եյինք վերցրել դեպի Իսպանական Ամերիկայի ամենամոտիկ նավահանգիստը, վորպեսզի նոր նավաստիներ վարձենք. առանց նրանց մենք դժվար եյինք համարում ճանապարհորդել։ Քամին հաճախ իր ուղղությունը փոխում եր և մեր նավը ճանապարհից հանում, բացի դրանից յերկու անգամ սաստիկ փոթորիկ յեղավ և շատ տանջվեցինք մինչև Ամերիկա հասանք։

Արեգակն արդեն մայր եր մտել, յերբ վերջապես խարիսխ ձգեցինք մի գեղատեսիլ փակ նավահանգստում։ Մեզ շրջապատեցին նեգրերի, մուլատների և մեքսիկական հնդիկների նավակներ։ Այդ մարդիկ մեզ վաճառում եյին մրգեր ու բանջարեղեն և պատրաստ եյին ամեն բոպե ջուրը սուզվել նետած դրամները հանելու։ Բարեսիրտ դեմքերը, «գլխավորապես սև», հատարակածային համեղ մրգերը և, վոր գլխավորն ե, քաղաքում բռնկված կրակները,— այս բոլորն այնքան հրաշալի յեր,

այնքան տարբեր մռայլ, արյունոտված Գանձերի կղզուց։ Բժիշկն ու կալվածատերը վորոշեցին գիշերն անցկացնել քաղաքում։ Նրանք ինձ ել իրենց հետ տարան։ Ծովափին հանդիպեցինք անգլիական ռազմական նավի նավապետին և գնացինք նրա մոտ, նավը։ Այնտեղ շատ հաճելի կերպով անց կացրինք յերեկոն և արդեն արշալույսը բացվում եր, յերբ «Իսպանոլա» վերադարձանք։

Տախտակամածի վրա միայն մի մարդ կար — Բեն Գանը և, հենց վոր նավը բարձրացանք, նա սկսեց զզվել և մեղադրել իրեն սարսափելի հանցանքի մեջ, ամենավայրի շարժումներ անելով։ Պարզվեց, վոր Սիլվերը փախել ե։ Բենը խոստովանեց, վոր ինքն ոգնել ե նրան նավակ նստելիս, վորովհետև համոզված եր, վոր մեզ բոլորիս վտանգ ե սպառնում, «քանի վոր այդ մի վոտանի սատանան նավումն ե»։ Բայց նավի խոհարարը դատարկաձեռն չեր փախել։ Նա աննկատելի կերպով ջարդել եր միջնորմը և գողացե մի տոպրակ դրամ — յերեք թե չորս հարյուր գինեյ, վորոնք, անկասկած, հետագա թափառումների ժամանակ նրան պետք կգան։

Մենք բոլորս ուրախ եյինք, վոր այդքան եժան պրծանք նրանից։

Ցցանկանալով շատախոս լինել, կասեմ միայն, վոր մի քանի նոր նավաստիներ վերցնելով, մենք հաջողությամբ Բրիստոլ ժամանեցինք։

«Իսպանոլան» վերադարձավ ճիշտ այն ժամանակ, յերբ պարոն Բլենդլին արդեն սկսել եր մտածել ոգնության համար յերկրորդ նավն ուղարկել։ Նավի վողջ անձնակազմից միայն հինգ հոգի վերադարձան տուն։ «Ամեր, և սատանան քեզ մինչև վերջ կհասցնի»,— ահա մարգարեություն, վորը լրիվ կատարվեց մնացածների վերաբերյալ։ Ասենք «Իսպանոլան» ավելի յերջանիկ գտնվեց այն նավից, վորի մասին ծովահենները յերգում եյին.

Յոթանասուն հինգն ել չվերադարձան տուն.
Նրանք խեղդվեցին ծովի հորձանքում։

Յուրաքանչյուրը մեղանից գանձից իր բաժինն ստացավ։ Զոմանք հարստությունը խելացի կերպով գործադրեցին, իսկ մյուսները, ընդհակառակը, հիմար կերպով, իրենց խառնվածքին համապատասխան։ Նավապետ Սմոլետը ծովային ծառայությունից

թյունը թողեց։ Գրեյը ջանասիրությամբ սկսեց ուսումնասիրել ծովային գործը։ Այժմ նա զեկապետ է և մի ուրիշ մարդու հետ միասին մի հիանալի և լավ սարքավորված նավ ունի։ Ինչ վերաբերում է Բեն Գաննին, նա ստացավ իր հազար ֆունտը և բոլորը յերեք շաբաթվա,կամ ավելի ճիշտ, տասնիններորդ օրվա ընթացքում ծախսեց, վորովհետև քսաներորդ օրը նա մեզ մոտ յեկավ վորպես մուրացիկ։ Կալվածատերը Բենի հետ հենց այնպես վարվեց, ինչից Բենն այնքան վախենում եր. իր պուրակում դռնապանի պաշտոն տվեց։ Նա մինչև այժմ կենդանի յե, կովում և բարեկամանում է գյուղական յերեխաների հետ և կիրակի ու տոն օրերին շատ լավ յերգում է յեկեղեցական խմբում։

Սիլվերի մասին մենք այլևս նչ չլսեցինք։ Զզվելի մի վոտանի ծովագնացն ընդմիշտ հեռացավ իմ կյանքից։ Յերևի նա գրել է այն սևամորթ կնոջը և իր հաճույքի համար, Նավապետ Ֆլինտի հետ, վորևե տեղում ապրում է։ Գանձի մնացած մասը— ձույլ արծաթ և զենք— դեռևս այնտեղ են, վորտեղ թաղել է հանգուցյալ Ֆլինտը։ Ցեվ, իմ կարծիքով, թող մնա այնտեղ։ Այժմ ինձ, այդ անիծված կղզին գնալու համար, վոչ մի բանով չես հրապուրի։

Մինչև այժմ էլ գիշերները յերազում տեսնում եմ ափերին խփող ալեկոծությունն և յես անկողնից վեր եմ թռչում, լսելով Նավապետ Ֆլինտի խռպոտ ձայնը, վորը գոչում է։

— Պիաստրներ, պիաստրներ, պիաստրներ։

ՀԱՅԿ-ԱԶԳ ԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ցեր ծովահեները 5

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Նավի խոհարարը 47

ՅԵՐՐՈՐԴ ԱՍ

Իմ արկածները ցամաքի վրա 87

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

Ցցապաս 106

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Իմ արկածները ծովի վրա 139

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ

Նավապետ Սիլվերը 174

Գլխ. խմբագիր՝ Վ. Սարգսյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

Հրատարակչ. 3930
Գլավլիտի լիազոր. Կ—4520
Պատվեր 1326
Տիրաժ 4000
Թղթի չափը 62×94. 1/16
Տպագրական թերթում 38400 նիշ
Տպագրական մամուլ 14.
Հեղինակային մամուլ 10,5

Հանձնված է արտադրության 26 նոյեմբերի 1936 թ.
Սարքագրված է տպագրության 25 փետրվարի 1937 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0386311

156
1056
Ba 2040